ПОЛНЫЙ
РУССКО-АРМЯНСКІЙ СЛОВАРЬ

СОСТАВЛЕННЫЙ

ДОКТОРОМЪ ФИЛОСОФІИ

А. С. ДАГБАШЯНОМЪ.

ԼԻԱԿԱՏԱՐ

ԲԱՌԱՐԱՆ ՌՈՒՍԵՐԷՆԻՑ-ՀԱՅԵՐԷՆ

ԿԱԶՄԵՑ

Յ. ԴԱՂԲԱՇԵԱՆ

ТИФЛИСЪ. — ԹԻՖԼԻՍ

Скоропеч. Мнацакана Мартиросянца — *Արագ. տպար. Մն. Մարտիրոսեանցի*

(Первая часть словаря (А—З) напечатана въ типографіи Константина Мартиросянца.)

1906.

ՆԱԽԱԲԱՆ

Ռուսերէնից հայերէն լիակատար բառարանիս մէջ այբբենական կարգով զետեղել ենք ռուսերէն լեզուի լիակատար բառամթերքը։ Լիակատար բառամթերք ասելով մենք հասկացել ենք ոչ միայն ռուսերէն, այլ և այն բազմաթիւ օտար բառերը, որոնք արդէն ընդունուել և գործածական են դարձել ռուսերէնի մէջ։ Օտար բառերի մօտ նշանակուած է նոցա ծագումը, որով ընթերցողին միջոց է տրուում պարզ կերպով ըմբռնելու այն սերտ կապը, որ ռուսերէն լեզուն դարերի ընթացքում հաստատել է ուրիշ, գլխաւորապէս հարևան քաղաքակիրթ ազգերի լեզուների հետ։

Ամփոփելով բառարանիս մէջ ռուսերէնում գործածական բոլոր բառերը, մենք միևնոյն ժամանակ առաջ ենք բերել ամէն մի բառի բոլոր կարևոր նշանակութիւնները։ Այս բառարանի լիակատարութեան երկրորդ անհրաժեշտ պայմանն է։ Իւրաքանչիւր բառին կցել ենք անհրաժեշտ քերականական ցուցումները։ Բառարանս ունի լիակատար շեշտադրութիւն. եթէ շեշտը բառի փոփոխուելով փոխուում է, այդ ցոյց ենք տուել։ Բառի հոլովական խոտորումները ցոյց են տրուած։ Գրեթէ բոլոր բայերը խոնարհել ենք [1]) առաջ բերելով անկատար ձևի բայի ներկան [2]), հարկաւոր դէպքում նաև անցեալ անկատարն և հրամայականը, իսկ կատարեալ ձևի բայի ապառնին [2]), հարկաւոր դէպքում նաև անցեալ կատարեալն և հրա-

---

[1]) Աւելորդ ենք համարել խոնարհել օր. дѣлать, мѣнять, говѣть, высохнуть և նման բայերը, որոնց խոնարհումն ոչ մի դժուարութիւն չէ կարող առաջացնել (дѣлаю -ютъ; мѣняю -ютъ; говѣю -ютъ; высохну -нутъ)։ Սակայն հարկաւոր դէպքում միանուագ բայի անցեալը առաջ ենք բերել (օր. высохъ -хла, о).

[2]) Միայն եզակի առաջին և յոգնակի երրորդ դէմքերը, որոնց օգնութեամբ, ինչպէս յայտնի է, շատ հեշտ է կազմել միւս դէմքերը (յոգն. երրորդ դէմքի ю-ն և у-ն փոխելով е-ի, իսկ а-ն և я-ն՝ и-ի։

մայականը։ Հարկաւոր դէպքում բայի խնդրառութիւնը նշանակուած է։ Իւրաքանչիւր նախդրից յետոյ նշանակուած է նորա հոլովառութիւնը։ Ռուսերէնի ընթերցանութիւնը հեշտացնելու համար բառարանում զետեղել ենք այս կամ այն բառի դժուար ձևերը, ցոյց տալով թէ որտեղ պիտի որոնել նորանց բացատրութիւնը։ Կենդանաբանական, բուսաբանական, հանքաբանական և բժշկական բառերից յետոյ առաջ ենք բերել նոցա լատինական տէրմինները, որովհետև այդ արդի գիտութեան պահանջներից մինն է համարուում։

Բացի այս բոլորից իւրաքանչիւր բառին հետևում են նորան վերաբերող ոճաբանական օրինակները։ Երբեմն ռուսերէն բառի դիմաց դրած հայերէն թարգմանական բառերն ունենում են մի քանի, նոյն իսկ փոխաբերական նշանակութիւններ։ Այստեղից ընթերցողի համար առաջանում է մթութիւն, որ միանգամայն վերանում է առաջ բերած ռուսերէն կտրուկ օրինակներով. Տեղ խնայելու համար միայն ռուսերէն դժուար օրինակներն ենք հայերէն թարգմանել, որովհետև հեշտերն ընթերցողը ինքը կարող է թարգմանական բառերի օգնութեամբ թարգմանել։ Որոշ դէպքերում թարգմանական բառերից յետոյ անհրաժեշտ համարեցինք հանրագիտական բացատրութիւն եւս առաջ բերել՝ բառի իմաստն կամ գործածութիւնը լաւ պարզաբանելու համար։

Բառարանագրական գործի դժուարութիւնը ընթերցող հասարակութեանը լաւ յայտնի է։ Այստեղ կըցանկանայի խօսել յատկապէս այն առանձին դժուարութեան մասին, որին հանդիպում է ռուսերէնից հայերէն բառարան կազմողը։ Դժուարութեան պատճառը արդի աշխարհաբառի պարզ և անզարգացած դրութիւնն է։ Լեզուն ժողովրդի կեանքի աստիճանացոյցն է. որքան մի ժողովրդի կեանքը բարդ և բազմակողմանի է, այնքան էլ նորա լեզուն տեսնում ենք բարգաւաճուած ու զարգացած և ընդհակառակն։ Արդ՝ ռուս ազգը աշխարհիս ամենամեծ և քաղաքակիրթ ազգերից մէկն է։ Նորա կեանքը բարդ և բազմակողմանի է և այդ բարդութիւնն և բազմակողմանիութիւնն արտայայտուել են և արտայայտուում են նորա լեզուով, որովհետև նորա լեզուն գործ է ածուում և՛ ժողովրդի մէջ, և՛ պետական բոլոր հիմնարկութիւններում, և՛ գիտութեան ու արուեստի բոլոր ճիւղերում։ Լեզուի այս բազմադիմի գործածութիւնը նըպաստել է նորա զարգացմանն և կանոնաւորութեանը. ռուս ազգը հետզհետէ իւր հարևան ազգերից փոխ է առել բազմաթիւ բառեր և դարձուածքներ, որոնք այնպէս գործածական են դարձել, որոնք ռսի ականջին ամենևին խորթ չեն հնչում։ Ընդհակառակն, ինչպէս հայ ազգի կեանքն պարզ է և անբարգաւաճ, այնպէս էլ նորա լեզուն մնացել է

պարզ և անզարգացած։ Ուստի և ռուսերէն լեզուի լիակատար գանձը հայացնելու դէպքում բառարան կազմողը պատահում է մեծամեծ դժուարութիւնների։ Օրինակ՝ անհամեմատ դիւրին է կազմել ռուսերէնից գերմաներէն, ֆրանսերէն կամ անգլիերէն, քան թէ ռուսերէնից հայերէն բառարան, որովհետև յիշեալ ազգերի կեանքն նոյնքան բազմակողմանի և լեզուն նոյնքան զարգացած է, որքան և ռուսերէնը։ Արդ՝ մեր գործի ընթացքում մենք աշխատել ենք հայացնել այն բոլորն, ինչ որ հնարաւոր էր հայացնել։ Բայց պատահեցան բառեր, որոնց հայացման խնդիրն աւելի լաւ համարեցինք ապագային թողնել, քան թէ բառեր թխել։ Յաճախ դիմել ենք ժողովրդական լեզուին և գաւառաբարբառներին, որովհետև կան ռուսերէն բառեր, որոնց համապատասխան հայերէն գրական խօսք չկայ, բայց ժողովրդական և գաւառական խօսք կայ։ Այսպիսի դէպքերում ժողովրդական և գաւառական բառերից չենք խորշել։ Յաճախ գրական բառերից յետոյ դրել ենք ռամկականն և գաւառականը, ցանկանալով ընթերցողի գործը դիւրացնել, որովհետև կան ընթերցողներ, որոնց ռամկական և գաւառական բառերն աւելի հասկանալի են, քան թէ գրական բառերը։

Մեր գործը կազմելիս բազմաթիւ բառարաններ քրքրելուց գերադասեցինք արդի ռուսերէնի և հայերէնի բառարանագիտական ուսումնասիրութիւնը։ Երեք տարի նուիրեցինք այդ նախապատրաստական աշխատանքին, զուգընթացաբար կարդալով արդի ռուս և հայ գրականութիւնն և մեր գործի համար նիւթեր հաւաքելով։ Ապա բառարանը կազմելուն ձեռնարկելով, շարունակեցինք և շարունակում ենք նոյն ճանապարհով ընթանալ։ Այսպիսով մեր բառարանն աւելի կենդանի և ինքնուրոյն դուրս եկաւ, քան այն բառարանները, որոնց կազմողները աշխատում են շատ բառարաններ քրքրել։

Այս տաժանելի և պատասխանատու գործին մենք ձեռնամուխ եղանք համեմատաբար երիտասարդ հասակում՝ մեր անձնական ոյժերով և միջոցներով։ Աշխատակիցներ ունենալու համար հարկաւոր էին ահագին միջոցներ, որ մենք չունէինք, այնպէս որ մենք ենք բառարանիս և՛ կազմողը, և՛ տպագրողը, և՛ սրբագրողը և՛ հրատարակիչը։ Քաղցր պարտականութիւն եմ համարում իմ սրտագին շնորհակալութիւնը յայտնել պ. Յովհաննէս Սպենդիարեանին, որ իմ ծանր գործում ինձ խրախուսել և աջակցել է։ Այստեղ ես չեմ կարող չարտայայտել իմ խորին կսկիծը և վիշտը մի անձի վաղաժամ մահուան համար, որը բառարանիս գործում մեծ մասնակցութիւն է ունեցել։ Այդ անմոռանալի անձը Լևոն Խան-Աղեանն է. սկզբում Խան-Աղեանին ես միայն ճանաչում էի նորա «Գիւղատնտեսա-

կան գործքներ և մեքենաներ» գնկեցին գրքով և, ինչպէս մի քանի մարդկանց, Լ. Խան-Աղեանին ես այցելեցի և խորհուրդ հարցրի բառարանիս մասին։ Բանից դուրս եկաւ, որ Լ. Խան-Աղեանը ոչ միայն բառարանագրական գործին սիրահար էր, այլ և առաջ ինքը ձեռնամուխ էր եղել ռուսերէնից հայերէն բառարան կազմելուն։ Իմ բառարանի առաջին տպագրական թերթը տեսնելով նա այնպէս հաւանեց, որ խոստացաւ սրբագրութեան մէջ օգնել և ինձ պարտաւորեցրեց բոլոր սրբագրական թերթերն էլ իրան տանել։ Այդ օրից Խան-Աղեան անձնազոհ աշխատակից է հանդիսացել իմ բառարանին, հետաքրքրուել է նորանով ինչպէս իւր սեպհական գործով. բառարանի ամեն մի յաջողութիւնը նորան անկեղծ ուրախութիւն էր պատճառում, որովհետև Լ. Խան-Աղեանը վերին աստիճանի ազնիւ սրտի և բնաւորութեան տէր մարդ էր։ Նա սրբագրութեան ժամանակ արել է միշտ իւր գնահատելի նկատողութիւնները։ Միայն ամառները անկարելի էր լինում բառարանիս բոլոր սրբագրական թերթերն էլ ուղարկել Լ. Խան-Աղեանին, որովհետև Լ. Խան-Աղեանն ապրում էր Ջալալօղլու մօտ գտնուող իւր սեպհական կալուածքում և պօստը միշտ չէր հասցնում ծրարները։ Եւ ահա յանկարծ ինձ հասնում է նորա անակնկալ մահուան գոյժը։ Հանգիստ ոսկերացդ, ով ազնիւ բարեկամ։ Դու վաղաժամ փոխուելով յաւիտեանս 'ի սուգ համակեցիր քո ազնիւ ընտանիքն և բարեկամներին, սակայն քո յիշատակը յաւիտեան անմոռաց կը մնայ մեր սրտերում։

Աղբիւրների նկատմամբ մենք հետևել ենք Պլինիոս Կրտսերի խօսքին, թէ „multum, non multa“ և լատիններէն առածին, թէ „multa nocent“. Մեր ձեռնարկած գործը տատիկ ընդարձակ, տաժանելի և հազնմաչ էր։ Ուստի և յուսահատութիւնից վախենալով, մենք վճռեցինք օգտուել միայն միքանի ամենանորագոյն և ամենաընտիր աղբիւրներից, որոնք և այստեղ առաջ ենք բերում. Словарь русскаго языка, составленный вторымъ отдѣленіемъ Императорской Академіи наукъ, выпуски I—VII (А Закрѣплять), С. Петербургъ, 1891—1900. Русско-нѣмецкій словарь И. Я. Павловскаго, изданіе третье, Рига 1900 г. Полный русско-французскій словарь, состовленный Н. П. Макаровымъ, изданіе девятое, С. Петербургъ 1900 г. Справочный словарь ореографическій, этимологическій и толковый русскаго литературнаго языка, составленный подъ редакціею А. Н. Чудинова, С. Петербургъ 1901 г. Կենդանաբանութիւն, Բուսաբանութիւն և Հանքաբանութիւն 'ի Հ. Գաբրիէլ վ.-է Մէնէվիշեան, Վիեննա 1897 թ. և բաղ-

անթիւ ուրիշ մանր երկեր, որոնք աւելորդ ենք համարում այստեղ առաջ բերել։ Բառարանիս մէջ առաջ բերած ռուսերէն օրինակներն վերցրել ենք գլխաւորապէս Ակադէմիական, Մակարովի և Պավլօվսկու բառարաններից։ Սակայն ռուս հեղինակներից ևս օրինակներ կան առաջ բերուած։ Աչքի առաջ ենք ունեցել նաև հետևեալ բառարանները. Բառարան 'ի ռուսաց լեզուէ 'ի հայ, աշխատասիրեալ 'ի Գաբրիէլէ Երևցփոխեանց, Տփխիս, 'ի 1854 ամի։ Բառարան ֆրանսերէնից հայերէն պ. Նորայր Բիւզանդացու, Կ. Պօլիս 1885 ամի։ Բառագիրք գերմաներէն-հայերէն, աշխատասիրեաց Հ. Աւետիք վ. Կոյլու, Վիեննա 1889 թ. Շատ սակաւ կարդացել ենք նաև պ. Աբիսողոմ Յովհաննիսեանի Ռուսերէնից հայերէն բառարանը, որովհետև այս բառարանի սխալները ոչ միայն անհանդուրժելի, այլ և անթիւ անհամար են։ Մեր օգտուելը վերոյիշեալ բառարաններից գլխաւորապէս կայացել է նրանում, որ մեր բառարանն ինքնուրոյն կազմելուց յետոյ մի մի անգամ կարդացել ենք յիշուած բառարաններն և այս կամ այն բառը աւելացրել ենք։

Մինչև այսօր այսպիսի բարդ և դժուար տեխնիկայով և այսպիսի հսկայական ծաւալով ռուսերէնից հայերէն բառարան տպուած չէ։ Ցաւալով պէտք է ասել, որ սկզբից չկարողացանք նախատեսել գործի բարդութիւնն և բառարանիս առաջին երեք պրակները չտպուեցան այնպէս, ինչպէս մեզ ցանկալի էր։ Սակայն հետևելով «Լաւ է ուշ, քան երբէք» առածին, մենք ուզղել ենք տպագրութեան տեխնիկական թերութիւնն, այնպէս որ չորրորդ և հետևեալ պրակների տիպը աքանչելի է։ Այսօր չորրորդ պրակի հետ մեր բաժանորդներին ուղարկելով բառարանիս նախաբանը, խորհուրդ ենք տալիս առաջին երեք պրակները միասին կազմել տալ։ Իսկ հետևեալ պրակները, որոնց թուղթն ևս ուրիշ է, առանձին պիտի կազմել տալ։

Ց. Դաղբաշեան

Թիֆլիս, 1-ն օգոստոսի 1903 թ.։

Համառօտութիւնների եւ պայմանական նշանների ցուցակն ու բացատրութիւնը։		Списокъ сокращеній и условныхъ знаковъ и ихъ объясненіе.
ա.	Արական, արական սեռի։	Мужескій, мужескаго рода.
ալգ.	Ալգեբրական բառ։	Слово алгебраическое.
ած.	Ածական անուն։	Имя прилагательное.
աստբ.	Աստուածաբանական բառ։	Слово, употребительное въ языкѣ богослововъ.
ած. ստց.	Ածական ստացական։	Имя прилагательное притяжательное.
ամրոցկ.	Ամրոցական բառ։	Слово, употребительное въ фортификаціи.
այգեգ. այգգ.	Այգեգործական բառ։	Слово, употребительное въ языкѣ садоводовъ.
(անգլ.)	Անգլիերէն բառ։	Слово англійское.
անգործծ.	Անգործածական բառ։	Слово неупотребительное.
անդրդ.	Անդրադարձական բայ։	Глаголъ возвратный. [номъ числѣ.
անեզ.	Անեզական բառ։	Слово, употребляемое только во множествен-
անհ.	Անհոլովելի։	Имя существительное несклоняемое.
անյոգ. անյգ.	Անյոգնական բառ։	Слово, употребляемое только въ единственномъ
անշ.	Անշունչ առարկայ։	Предметъ неодушевленный. [числѣ.
անասնբժ.	Անասնաբուժական բառ։	Слово, употребительное въ сочиненіяхъ по ве-
անց.	Անցեալ ժամանակ։	Прошедшее время глагола. [теринаріи.
աշխ.	Աշխարհագրական բառ։	Слово, употребительное въ сочиненіяхъ по
ապառն.	Ապառնի ժամանակ։	Будущее время глагола. [географіи.
(առած.)	Առած։	Поговорка.
առհ.	Առհասարակ։	Вообще.
առասպ.	Առասպելաբանական (դիցաբանական) բառ։	Слово, употребительное въ сочиненіяхъ по ми-еологіи.
աստղբ.	Աստղաբաշխական բառ։	Слово, употребительное въ астрономіи.
ատաղձգ.	Ատաղձագործական բառ։	Слово, употребительное въ плотничьемъ ре-
(արաբ.)	Արաբերէն բառ։	Слово арабское. [меслѣ.
արտս.	Արտասանւում է։	Произносится.
արհեստ.	Արհեստագիտական բառ։	Слово, употребительное въ технологіи.
աւետ.	Աւետարանական բառ։	Слово, употребительное въ Евангеліи.
բաղդտ.	Բաղդատական աստիճան։	Сравнительная степень.
բայմս. բյ. մս.	Բայամասնիկ։	Глагольная частица.
բանաստ. բնստ.	Բանաստեղծական բառ։	Слово, употребительное въ поэтическихъ про-
բացս. մսն.	Բացասական մասնիկով։	Съ отрицаніемъ (не). [изведеніяхъ.
բժ.	Բժշկական բառ։	Слово медицинское. [глагола).
բյ. ած.	Բայ-ածական։	Причастіе (прилагательное, произведенное отъ
բյ. մ.	Բայ-մակբայ։	Дѣепричастіе (отглагольное нарѣчіе).
բնախ.	Բնախօսական բառ։	Слово, употребительное въ физіологіи. [таникѣ.
բս.	Բուսաբանական բառ։	Слово, употребительное въ сочиненіяхъ по бо-
գեղարւ.	Գեղարուեստական բառ։	Слово, относящееся къ художеству, къ искус-
գերադրկ.	Գերադրական աստիճան։	Превосходная степень. [ству.
(գերմ.)	Գերմաներէն բառ։	Слово нѣмецкое.
գիւղատ.	Գիւղատնտեսական բառ։	Слово сельско-хозяйственное. [водствѣ.
գործրնկ.	Գործարանական բառ։	Слово, употребительное въ фабричномъ произ-
գործիակ. հոլ.	Գործիական հոլով, գործ. հոլովով։	Предложный падежъ, съ предложнымъ падежомъ
գռեհկ.	Գռեհկական բառ։	Слово непристойное, неприличное.
(գր.)	Գրաբար բառ։	Слово древне-армянское.
գաւռկ.	Գաւառական բառ։	Областное слово.

դատ. բժ.	Դատաստանական-բժշկական բառ:	Слово судебно-медицинское.
դարբն.	Դարբնոցային բառ:	Слово, употребительное въ кузнечномъ ремеслѣ.
(դարձւ.)	Դարձուածք:	Оборотъ рѣчи.
դեղգ.	Դեղագործական բառ:	Слово аптекарское.
դերձկ.	Դերձակական բառ:	Слово, употребительное въ портняжномъ мастерствѣ.
դերն.	Դերանուն:	Мѣстоименіе.
դերն. անձն.	Դերանուն անձնական:	Мѣстоименіе личное.
դերն. ցուցկ.	Դերանուն ցուցական:	Мѣстоименіе указательное.
դերն. յարբ.	Դերանուն յարաբերական:	Мѣстоименіе притяжательное.
դմզ.	Դիմազուրկ:	Безличный глаголъ, употребляющійся безлично.
դիպլոմտ.	Դիպլոմատիական բառ:	Слово, употребительное въ языкѣ дипломатовъ, въ дипломатическихъ сношеніяхъ.
դիւնգ.	Դիւանագիտական բառ:	(same as above)
դպրոցկ.	Դպրոցական բառ, դարձուածք:	Школьное выраженіе, на языкѣ школьниковъ.
դրակ.	Դրական աստիճան:	Положительная степень.
(եբր.)	Եբրայերէն բառ:	Слово еврейское.
եզ.	Եզակի թիւ:	Единственное число.
եկղ	Եկեղեցական բառ:	Слово церковное.
եկ. սլ.	Եկեղեցական-սլաւոնական բառ:	Слово церковно-славянское.
երժ.	Երաժշտական բառ:	Слово музыкальное.
երկթղ.	Երկաթուղիական բառ:	Слово, употребительное въ желѣзнодорожномъ дѣлѣ.
երկրբ.	Երկրաբանական բառ:	Слово, употребительное въ геологіи.
երկրչփ.	Երկրաչափական բառ:	Слово, употребительное въ сочиненіяхъ по геометріи.
թատր.	Թատրոնական բառ:	Слово, относящееся до театра.
թղթխ.	Թղթախաղական բառ:	Слово, относящееся къ карточной игрѣ.
թռչնբ.	Թռչնաբանական բառ:	Слово, употребителное въ сочиненіяхъ по орнитологіи.
(թուրք.)	Թուրքերէն բառ:	Слово тюркское.
թւբ.	Թուաբանական բառ:	Слово, употребительное въ ариѳметикѣ.
թւկ. ան.	Թուական անուն:	Имя числительное.
թւկ. դաս.	Թուական դասական:	Числительное порядковое.
թւկ. քնկ.	Թուական քանակական:	Числительное количественное.
թւկ. հաւ.	Թուական հաւաքական:	Числительное собирательное.
ժողովրդ.	Ժողովրդական բառ:	Реченіе народное.
ժողովրդ. բանհ.	Ժողովրդական բանհիւսական բ.	Народно-поэтическое слово.
ի.	Իգական, իգական սեռի:	Женскій родъ, женскаго рода.
(իսպ.)	Իսպաներէն բառ:	Испанское слово.
(իտ.)	Իտալերէն բառ:	Италіанское слово.
իրւբ.	Իրաւաբանական բառ:	Слово юридическое.
լեզւբ.	Լեզուաբանական բառ:	Слово, употребительное въ филологическихъ наукахъ
(լեհ.)	Լեհերէն բառ:	Польское слово.
լեռնգ.	Լեռնագործական բառ:	Слово, употребительное въ горномъ дѣлѣ.
լսնկ.	Լուսանկարչական բառ:	Слово, употребляющееся въ сочиненіяхъ, относящихся до фотографическаго искусства.
(լտ.)	Լատիներէն բառ:	Слово латинское.
ծննդբ.	Ծննդաբանական բառ:	Слово, употребительное въ сочиненіяхъ по генеологіи.
ծովգ.	Ծովագնացական բառ:	Слово морское.
ծովմ.	Ծովամարտական բառ:	Слово, относящееся къ морскому дѣлу.
կենսխ.	Կենսախօսական բառ:	Слово, употребительное въ біологіи.
կզմխ.	Կազմախօսական բառ:	Слово, употребительное въ анатоміи.
կմ	կամ	Или.
կնդ.	Կենդանաբանական բառ:	Слово, употребительное въ зоологіи
կշեգ.	Կաշեգործական բառ:	Слово, употребительное въ сочиненіяхъ по кожевенному производству.
կոչկ.	Կոչական հոլով:	Звательный падежъ.
կովկ.	Կովկասում գործածական բառ:	Слово, употребляющееся жителями на Кавказѣ.
կր.	Կրաւորական բայ:	Страдательный залогъ.
կօշկկ.	Կօշկակարական բառ:	Слово, употребительное въ сапожномъ мастерствѣ.
հարւ.	Հարաւում գործածական բառ:	Слово, употребляющееся на югѣ.
հեգն.	Հեգնական բառ. հեգնօրէն:	Ироническое слово; иронически.
հեռգր.	Հեռագրական բառ:	Слово, употребительное въ телеграфномъ дѣлѣ.
հկռկր.	Հակառակը:	Противоположность.
հմմ.	Համեմատիր:	Сравни.
հյց. հյց.	Հայցական:	Винительный.
հյց. հոլ.	Հայցական հոլով, հայցական հոլովով:	Винительный падежъ, съ винительнымъ падежомъ.
հոգբժ.	Հոգեբուժական բառ:	Слово, употребительное въ сочиненіяхъ по психіатріи.
հիւս.	Հիւսիսում գործածական բառ:	Слово, употребляющееся на сѣверѣ.

հնէաբ.	Հնէաբանական բառ։	Слово, употребительное въ сочиненіяхъ по палеонтологіи.
հնց.	Հնացած բառ։	Слово устарѣлое.
հնք.	Հանքաբանական բառ։	Слово, употребительное въ сочиненіяхъ по минералогіи.
հշւպ.	Հաշուապահական բառ։	Слово, употребительное въ бухгалтеріи.
հոգբ.	Հոգեբանական բառ։	Слово, употребительное въ сочиненіяхъ по психологіи.
(հոլ.)	Հոլանդական բառ։	Слово голландское.
հոր.	ա, հասարակ սեռի. բ, հասարակ բայ։	а) общаго рода (имя существительное или прилагательное); б) общій глаголъ.
հրետն.	Հրետանիական բառ։	Слово, употребительное въ артиллеріи.
հրամ., հրամյկ.	Հրամայական։	Повелительное, повелительное наклоненіе.
հւք.	Հաւաքական բառ։	Собирательное.
ձյնխ.	Ձայնախօսական բառ։	Слово, употребляющееся въ фонетикѣ.
ճրտս.	Ճարտասանական բառ։	Слово, употребительное въ риторикѣ.
ճրտրգ.	Ճարտարագիտական բառ։	Слово, употребительное въ сочиненіяхъ по инженерному искусству.
մ.	Մակբայ։	Нарѣчіе.
մաթմ.	Մաթեմատիկական բառ։	Слово математическое.
մաթմ. աշխ.	Մաթեմատիկական աշխարհագրական բառ։	Слово, употребительное въ сочиненіяхъ по математической географіи.
մանկբ.	Մանկաբարձական բառ։	Слово, относящееся къ акушерскому искусству.
մանկկ.	Մանկական բառ։	Слово, употребляемое дѣтьми.
մարդխ.	Մարդախօսական բառ։	Слово, употребительное въ сочиненіяхъ по антропологіи.
մեղմ.	Մեղմական բառ։	Смягчительное слово.
մեղւբ.	Մեղուաբուծական բառ։	Слово, употребительное въ пчеловодствѣ.
մետղգ.	Մետաղագործական բառ։	Слово, употребительное въ металлургіи.
մեքենգ.	Մեքենագիտական բառ։	Слово, употребительное въ сочиненіяхъ по механикѣ.
մնւ.	Մանաւանդ։	Особенно.
(մոնգ.)	Մոնղոլերէն բառ։	Слово монгольское.
մուրհկ.	Մուրհակային իրաւունք։	Вексельное право.
մջ.	Միջարկութիւն։	Междометіе.
մսն.	Մասնիկ։	Частица.
յ.	Յոգնակի թիւ։	Множественное число.
յտ. ան.	Յատուկ անուն։	Имя собственное.
(յն.)	Յունարէն բառ։	Слово греческое.
յւել.	Յաւելական բառ։	Слово увеличительное.
ն.	Ներգործական բայ։	Дѣйствительный глаголъ.
նահ., նհ.	Նահանգ։	Губернія.
ներկ.	Ներկայ ժամանակ։	Настоящее время.
նխդ.	Նախդիր։	Предлогъ.
նխտ.	Նախատական բառ. նախատական մտքով։	Унизительное слово; унизительно.
նկրչ.	Նկարչական բառ։	Слово, употребительное въ сочиненіяхъ, касающихся живописи.
նորբ.	Նորաբանութիւն։	Неологизмъ.
Նոր. կտ.	Նոր Կտակարան։	Новый Завѣтъ.
նւզ.	Նուազական բառ։	Уменьшительное слово.
շ.	Շաղկապ։	Союзъ.
շնչւոր.	Շնչաւոր առարկայ։	Одушевленный предметъ.
որս.	Որսորդական բառ։	Слово, употребляемое охотниками.
(ունգ.)	Ունգարերէն, մաջառերէն։	Слово мадьярское.
չ.	ա, չէզոքական բայ. բ, չէզոք (միջին) սեռի գոյական կամ ածական։	а) средній глаголъ; б) средняго рода имя существительное или прилагательное.
պատմ., պտմ.	Պատմական բառ։	Слово, употребительное въ историческихъ сочиненіяхъ.
(պրսկ.)	Պարսկերէն բառ։	Слово персидское.
պօստ.	Պօստային բառ։	Слово, употребляемое въ почтовыхъ сношеніяхъ, на почтѣ.
ռազմգ. ռզմ.	Ռազմագիտական բառ։	Слово военное.
ռմկ.	Ռամկական բառ. ռամկաբար։	Слово простонародное; у простонародія.
Սիբ. սիբ.	Սիբիրական, Սիբիրում գործածական բառ։	Слово сибирское, употребительное у жителей Сибири.
սեռկ. հոլ.	Սեռական հոլով. սեռակ. հոլովով։	Родительный падежъ; съ родительнымъ падежомъ.
սկւ. գործծ.	Սակաւ գործածական բառ։	Слово малоупотребительное.
սահմ., սհմ.	Սահմանական եղանակ։	Изъявительное наклоненіе.
սովրբ.	Սովորաբար։	Обыкновенно.

սպ. ծով.	*Սպիտակ ծովի ափերում գործածական բառ։*	Слово, употребительное въ языкѣ обитателей сѣверной Россіи, живущихъ по Бѣлому морю.
սպ. ռուս.	*Սպիտակ ռուսերէն բառ։*	Слово бѣлорусское.
վիրբ.	*Վիրաբուժական բառ։*	Слово, употребительное въ сочиненіяхъ по хирургіи.
վճռ.	*Վաճառականական բառ։*	Слово торговое.
Վոլգ.	*Վոլգայի ափերում գործածական բառ։*	Слово, употребительное въ языкѣ жителей Приволжья, мѣстностей по Волгѣ и ея притокамъ.
տ.	*Տես։*	Смотри.
տեղգր.	*Տեղագրական բառ։*	Слово топографическое.
տեղկ.	*Տեղական բառ։*	Слово мѣстное.
(*տճ.*), (*տճկ.*)	*Տաճկերէն բառ։*	Турецкое слово.
(*տճ. հ., տճկ. հյ.*)	*Տաճկահայերէն բառ։*	Слово турецко-армянское.
տղչփ.	*Տաղաչափական բառ։*	Слово, употребительное въ стихосложеніи.
տպգր.	*Տպագրական բառ։*	Слово типографское.
տրմբ.	*Տրամաբանական բառ։*	Логическій терминъ.
տրկ. հոլ.	*Տրական հոլով, տրակ. հոլովով։*	Дательный падежъ; съ дательнымъ падежомъ.
փիլ.	*Փիլիսոփայական բառ։*	Слово философское.
փղքշ.	*Փաղաքշական, փաղաքշաբար։*	Слово ласкательное; ласкательно.
փոխբ.	*Փոխաբերական մտքով։*	Въ переносномъ смыслѣ.
փոխդ.	*Փոխադարձական բայ։*	Взаимный глаголъ.
փոխնկ.	*Փոխանակ։*	Вмѣсто.
փորգ.	*Փորագրական բառ։*	Слово, употребительное въ граверномъ, гравировальномъ искусствѣ.
փոքր. ռուս.	*Փոքր ռուսերէն բառ։*	Слово малорусское.
քերկ.	*Քերականական բառ։*	Слово грамматическое.
քիմ.	*Քիմիական բառ։*	Слово, употребительное въ сочиненіяхъ по химіи.
քղքկ.	*Քաղաքական գրութեանց մէջ գործածական բառ։*	Слово, употребляющееся въ политическихъ наукахъ.
քնդկգ.	*Քանդակագործական բառ։*	Слово, употребительное въ ваятельномъ искусствѣ.
ևլն	*և այլն։*	И такъ далѣе, и тому подобное.
օդբ.	*Օդերևութաբանական բառ։*	Слово, употребительное въ метеорологіи.
օժն. բյ.	*Օժանդակ, էական բայ։*	Вспомогательный глаголъ.
օր.	*Օրինակ։*	Напримѣръ.
ֆիզ.	*Ֆիզիքական բառ։*	Слово, употребительное въ физикѣ.
(*ֆր.*)	*Ֆրանսերէն բառ։*	Слово французское.

---

* *Բառի փոխաբերական նշանակութիւնը ցոյց է տուած աստղանիշով (*)։*

Переносное значеніе слова отмѣчено звѣздочкою (*).

** *ցոյց են տալիս, որ բայը գործողութեան թէ անկատար և թէ կատարեալ ձևի նշանակութիւն ունի։*

** показываютъ, что глаголъ соединяетъ въ себѣ смыслъ какъ несовершеннаго, такъ и совершеннаго вида.

' ' *ցոյց են տալիս, որ նոցա մէջ դրած խօսքերը և դարձուածքները ռամկական և կամ գաւառական են։*

' ' показываютъ, что слова и выраженія, заключенныя въ нихъ, простонародныя, или же областныя.

' ' *Եթէ բառը երկու կերպ է արտասանւում,* *օր.* библіóтека *և* библіотéка, *այն ժամանակ շեշտը երկու վանկերի վերայ և դրւում է։*

Если слово произносится двояко, напр. **библíотека и библіотéка**, то знакъ ставится на обоихъ ударяемыхъ слогахъ.

[ ] *Լոկ բացատրական նշանակութիւն ունեցող բառերը գրւած են անկիւնաւոր փակագծերի մէջ։*

Слова, имѣющія лишь объяснительное значеніе, заключены въ угловатыхъ скобкахъ.

| *Բաժանում է միևնոյն խմբի բառերի ընդհանուր մասը, որի հետ միանում են հետևեալ բառերի մասերը, որոնց առաջ դրւած է հորիզոնական հաստ գծիկ (-)։*

| Отдѣляетъ общую всѣмъ словамъ одной группы часть, къ которой присоединяются части послѣдующихъ словъ, отдѣленныхъ горизонтальною жирною черточкою (-).

Օր. եր. 80 *պէտք է կարդալ.*

Напр. стр. 80 должно читать.

Букси́рный *ած. իր յետևից քարշող, տանող, ձգող.* б. пароходъ *ցռկանաւ, որ իր յետևից պարանով կապած նաւր կամ ուրիշ բան քարշում տանում է.* **буксирова́ніе** *չ. իր յետևից քարշելը, տանելը (ցռկանաւի մասին).* **букси́рова́ть** (-си́ру́ю -ютъ) отбукси́рова́ть *ն.* (*հոլ.*) *քարշել, տանել, վարել (նաւով մի ուրիշ նաւ կամ ծանրութիւն, որ դորա յետևից պարանով կապած է).* б. кора́бль, — ба́ржу; **буксирова́ться** (-си́ру́юсь -си́рю́тся) отбукси́рова́ться *անոր. և չը. ցռկանաւից քարշուիլ, տանուիլ, վարուիլ.* **буксиро́вка** *ի. ա.* Букси́рова́ніе; **букси́ръ**...

А.

А, а, ձայնաւոր է և չեշտի՝ տակ՝ հնչւում է ինչպէս հայոց ա տառը. իսկ а-ն առանց չեշտի անորոշ արտասանութիւն ունի։ Մանաւանդ նկատելի է, որ а-ն առանց չեշտի շշակներից (ж, ч, ш, щ) յետոյ բառի սկզբի և միջի վանկում հնչւում է գրեթէ ինչպէս е. օր. жалѣть (жел—), щадить (ще—). несчастливый (—счестя—); իսկ բայերի յոգն. 3 դէմքում հնչւում է ինչպէս у: օր. держать (—жуть). слышать (—шуть) тащать (—щуть).

А. I. շ. այլ, իսկ, բայց. не вертись, а говори правду—այլ ասա ճշմարտութիւնը. я знаю, что я говорю, а ты не лги— իսկ դու սուտ մի խօսիր. а то այլապէս, եթէ ոչ. не смѣйте итти за мной, а то я разсержусь— եթէ ոչ ես կը բարկանամ. а не և ոչ թէ. хозяинъ я, а не ты —և ոչ թէ դու. а вѣдь չէ՞ որ. а вѣдь я его видалъ гдѣ-то! II. ձշ. արտայայտում է 1, հարցում. хорошо вѣдь и это? А?— չէ՞, այնպէս չէ՞ а? это вы?—այդ դո՞ւք էք, հա՞. 2, վիշտ, բարկութիւն, զայրոյթ, զուշակութիւն. а! теперь вижу мою погибель ա՜հ, այժմ տեսնում եմ իմ կորուստը. а! больно! а мнѣ не больно? ահա՜, քեզ ցա՞ւ է պատճառում, հապա ինձ չէ՞ պատճառում. а! теперь понимаю ահա՜, հիմայ հասկանում եմ. а! вы военный! ահա՜, դուք ուրեմն զինուորակա՞ն էք. 3, կոչին ուժի կէտ է տալիս. дѣдушка! а, дѣдушка! պապիկ, ա՜յ պապիկ։

Аа ձշ. արտայայտում է յանդիմանութիւն, հեգնութիւն, սպառնալիք. аа! впередъ не станешь лгать հասկացա՞ր է, տեսա՞ր, այլ ևս սուտ չես խօսիլ։

Аароновa борода տ. Аронова борода։

Аба ի. արաբ. 1, հաստ ասլիտակ մահուդ. 2, այդ մահուդից կարած պատմուճաններ։

Абажуръ ա. (ֆր.) աբաժուռ. 1, լուսակալ, լուսարգել, լուսամփոփ (հովանոցի նման ծածկոց, որ դնելով լամպերի վերայ՝ լոյսը անդրադարձնում են ստորեւայի վերայ). 2, ճարտարապ. առանձին կազմութեամբ պատուհան, որ ներսակը պաշտպանում է արեգակի կիզիչ ճառագայթներից, անձրևից, անցուդարձ անձանց հետաքրքրութիւնից և միևնոյն ժամանակ ներսակին օդ և լոյս է մատակարարում։

Абаза ի. 1, հնտ. Կովկասի հիւսիսում բնակւող աբազաց ցեղը. 2, Սև ծովի վերայ խառաշամանչ, վտանգաւոր արևելեան քամի։ [դրամ։

Абазъ ա. աբազ (20 կոպէկանոց արծաթէ

Абака ի. (լտ.) աբակոս. 1, սալով կամ փայտով ծածկուած հաշւետախտակ, որի վերայ հին ժամանակներում երկրաչափական պատկերներ էին նկարում և զանազան հաշիւներ էին անում. 2, մի տեսակ հաշուեգործիք, գործածական արևմտեան Եւրոպայում. 3, ճարտարապ. քառանկիւնի սալը, որ անմիջապէս սիւնի գլխին է դրւում։

Абасъ տ. абазъ։

Аб|батикъ Նւզ. տ. Аббатъ; **-батиса** ի. աբբայուհի, կաթոլիկ կուսանաց մայրապետը. **-батскій** ած. աբբայի, աբբայական. **-батство** չ. աբբայութիւն. 1, կաթոլիկ վանք իւր կալուածներով. 2, աբբայութիւն, վանահայրութիւն. **-батъ** ա. (իտ.) 1, աբբահայր, կաթոլիկ վանքի վանահայր. հմմ. 'Авва; 2, աբբայ (լոկ պատուանուն յորջորջում կաթոլիկ եկեղեցու հոգևորականի)։

Аб|дикаціонный актъ հրաժարագիր (իշխանութ.) **-дикація** ի. (լտ.) հրաժարական,—րում (իշխանութիւնից)։

Абевега ի. այբբեն, այբբենական ցուցակ, ցանկ։

Аберрація ի. I Ֆիզ. միևնոյն կէտից դուրս եկած ճառագայթների ֆօկուսների շեղումը, խոտորումը միմեանցից. 2, աստղ. լոյսի շեղումը, խոտորումը շնորհիւ այն հանգամանքի, որ ա, երկիրս արեգակի շուրջը պտտում է, կանգնած չէ, և բ, աստղի լոյսի հեռադիտակի մի ծայրից մինչև միւսը հասնելը ժամանակ է անցնում, ուստի և մենք աստղը տեսնում ենք ոչ թէ իւր իսկական տեղում, այլ խոտորուած, շեղուած երկրիս շարժման ուղղութեամբ։

'Абзацъ ա. (գիրմ.) 1, պարբերութիւն, նոր տող. 2, պատի մէջ ներս պրծած տեղը, խորշը։

Абинный ած. արաբ ասլիտակ մահուդից. а—ая епанча.

Абиссі|нецъ,нца, ա. **-нка** ի. Հաբէշցի, Եթովպացի այր, կին **-нскій** ած. Հաբէշի, Եթովպիայի։

Абитуріентъ ա. (լտ.) շրջանաւարտ, ընթացաւարտ, ուսումնաւարտ (միջնակարգ ուսումնարանի)։

Аблакатъ ռմկ. տ. Адвокатъ.

Аболиціонистъ ա. (լտ.) աբոլիցիօնիստ. 1, պատմ. նա, որ ձգտում էր Հիւս. Ամերիկայի Միացեալ Նահանգներում ստրկութիւնը ոչնչացնելու. 2, առհասարակ նա, որ ձգտում է փոխելու որ և է օրէնք (օր. մահուան պատիժը), սովորութիւն և այլն։

Або|нементный ած. կանխավարձի. **-нементъ** ա. (ֆր.) աբոնիմէնտ, կանխավարձ, կանխավարձելը (օր. թատրոնական աթոռի, օթեակի, որի համար որոշ գեղջ է լինում.) **-нентъ** ա, կանխավարձող, բաժանորդ. **-нированіе** չ. կանխավարձելը, բաժանորդ գրուելը, նախօրօք բռնելը. **-нировать,** (-нирую - ютъ) ն. կանխավարձել, որոշ գեղջով նախօրօք վարձել, բռնել (տեղ թատրոնում և այլն); **-ся**** 1, անդր. կանխավարձել, կանխագրուել, որոշ գեղջով կանխօրէն

բաժանորդ, մամուլին գրուել. а. на театръ, на концертъ, на газету; 2, փ. կանխավարձուել, որոշ գնով, նախօրօք վարձով առնել. -нировна ի. կանխավարձելը, —ձուելը, կանխավարձում:

Абордажный ած. կափամարտ. а—ое сраженіе կափամարտ (որի ժամանակ թշնամի նաւերը նաւր մրմեանց կափում, ճանկում են). **-дажъ** ա. կափամարտ (ծովի վերայ). **-дировать**** (-рую-ютъ) ն. (ֆր.) ծովմ. թշնամու մարտանաւը կափելով ճակատամարտ տալ:

Аборигены ա. յ. բուն բնիկներ, մի երկրի նախնական բնակիչները, 'բնաշխք':

Абортивный ած. վիժեցուցիչ, վիժում, վաղահաս ծնունդ առաջացնող. а-ое средство, **-тъ** ա. (լտ.) բժ. ղատու. վիժում, վիժուած:

Абракадабра ի. աբրակադաբրա (կախարդական խօսք, բանդագուշանք, որ գրելով թղթի կտորի վերայ, կրում էին մարմնի վերայ, հաւատալով որ նա մարդուն այլ և այլ ցաւերից, մանաւանդ ջերմախտից պաշտպանում է):

Абревіатура ի. (լտ.) 1, կրճատում, յապաւում (գրելու ժամանակ խօսքերը). 2, երաժշտական նոտաների մէջ գործածական յապաւման նշան:

Абрекъ ա. աբրեկ (կովկասեան երդուեալ, քինախնդիր լեռնաբնակ):

Абрикосный, -рикосовый ած. ծիրանի, — նից. **-рикосовка** ի. ծիրանից պատրաստած օշարակը. **-рикосъ** ա. բս. Prunus armeniaca ա, ծիրան, բ, ծիրանենի: [նկար յատակագիծ:

'Абрисъ ա. (հոլ.) շրջագիծ, ուրուագիծ, ուրուա-

Абсентеизмъ ա. (անգլ.) մշտական բացակայութիւն հայրենիքից կամ կալուածից, հայրենատմացութիւն: [բաւստած ոգելից ըմպելիք:

Абсентъ ա. (ֆր.) օշինդրօղի, օշինդրից պատ-

Абсиды ա. Апсида.

Абсолютизмъ ա. 1, (ֆր.) բացարձակ, անպայման լինելը. 2, անսահման, միահեծան, բացարձակ իշխանութիւն. ինքնակալութիւն: 3, փիլ. անսահմանափականութիւն, անսահմանափակութեան վարդապետութիւն **-лютистъ** ա. (ֆր.) 1, բացարձակ պահանջներ անող. որ ոչ մի բացառութիւն, զիջում չէ անում: 2, անսահման, միահեծան, բացարձակ իշխանութեան կողմնակից. **-лютность** ի. անպայմանականութիւն, կատարելութիւն. բացարձակ լինելը: **-лютный** ած. (լտ.) բացարձակ, անպայման, բացարձակ, կատարեալ. а—ая высота мѣста տեղ.աշխ. մի տեղի բարձրութիւնը ծովի մակերևոյթից. а. вѣсъ բուն, իսկական քաշը, կշիռը. հակառակը ա. удѣльный вѣсъ; а—ое большинство голосовъ въ коллегіальныхъ собраніяхъ— գերակշիռ հակառակ կողմի վերայ թէկուզ մէկ ձայնով: **-лютъ** ա. փիլ. ամենից անկախ, ինքնուրոյն, ինքնեզը, ամեն երևոյթների սկզբնապատճառը:

Абстрактный ած. (լտ.) վերացական, մտաւոր. **-ктъ** ա. 1, վերացական առարկայ, վեր. գաղափար. 2, նրժ. երաժշտական գործիքի, երգեհոնի մէջ խուփ, որի բացուելով օդը խողովակներն է մտնում. **-кція** ի. աբստրակցիա. 1, առարկայի յատկութեանց, յատկանիշների վերացականացնելը, ընդհանրացնելը 2, վերացականութիւն:

Абсурдъ ա. (լտ.) անհեթեթութիւն, անտեղի, անճոռհ բան, խօսք:

Абулія ի. (յն.) 1, անկամութիւն, կամքի, կամեցողութեան բացակայութիւնը. 2, հոգեբժ. կամազրկութիւն, կամենալու կարողութիւնից զրկուելը:

'Абцугъ ա. (գերմ.) 1, թղթխ. խաղաթղթի աջուձախ բաժանելու ժամանակ իւրաքանչիւր զոյգը. 2,* съ перваго абцуга հէնց սկզբից, ըսկզբից և եթ, առաջին քայլից:

Абшидъ ա. (գերմ.) 1, հրաժարական, արձակում պաշտօնից. 2, արձակման, պաշտօնաթողութեան գիր, վկայական. **-шнитъ** ա. (գերմ.) ա. Ретраншементъ.

Абызъ ա. (թաթ.) աբիզ, թաթարական մոլլա:

Авангардный ած. առաջապահ, առաջնապահ զօրքի. а—ое сраженіе, **-гардъ** ա. (ֆր.) ռազմ. 1, առաջապահ, առաջնապահ զօրք, ջոկատ, որ գլխաւոր զօրաբանակը թշնամու անակնկալ յարձակումներից պաշտպանում և նորա մասին տեղեկութիւններ է հաղորդում, 2, նաւատորմիղի առաջ գտնուող նաւերը, **-зала** ի. **-залъ** ա. (ֆր.) նախադահլիճ. **-постный** ած. առաջակայ շոկատի. а— ая цѣпь առաջակայ պահապանների, ժամապահների շղթան, շարքը. **-портъ** ա. նաւածոց, նախանաւահանգիստ: **-постъ** ա. (ֆր.) 1, ռազմ. առաջակայ զօրք, ջոկատ, պարեկազունդ, որ բանակատեղը թշնամու անակնկալ յարձակումներից պաշտպանում է. 2, աճ. գլխաւոր տեղ, նախապայր. **-сировать** (-рую -ютъ) ն. կանխօրէն վճարել, ընծաներել. **-совый** ած. ավանսի, կանխավճարի. а—ыя деньги. **-сцена** ի. (ֆր.) թատր. նախաբեմ, բեմի առաջի մասը, վարագոյրի և օրկէստրի մէջ գտնուող տարածութիւնը: **-съ** ա. (ֆր.) ավանս 1, կանխավճար, կանխադրամ. 2, авансы յ. հաշտութեան, բարեկամութեան, մտերմութեան առաջին քայլերը:

Авантажный ած. յարգ, առաւելութիւն ունեցողական. а. видъ, а—ая наружность; **-тажъ** ա.(ֆր.) առաւելութիւն, յարգ, յարգանք, գերազանցութիւն. շահ, օգուտ:

Авантюриновый ած. ավանտուրինի. а. блескъ; **-новый** ած. ավանտուրինի, —նից. а—ая табакерка, — печать; **-нъ** ա. (ֆր.) 1, արհեստ. ավանտուրին արուեստական քարը: 2, հնք. ավանտուրին հանքը, կուարցը, սպեկտայծը:

Авантюристъ ա.(ֆր.) **-тюристка** ի. արկածախնդիր —դրուհի, բաղդախնդիր, դրուհի:

Аварійный ած. ծովային արկածի, զժբաղդութեան, վնասի. а—ыя деньги:— **рія** ի. (իտ.) ծվզ. I. 1, ծովային արկած, ծովի վերայ կամ նաւահանգստում նաւին կամ նորա բեռանը հասած վնասը, զենը, կորուստը. 2, վնասուած նաւի տեղափոխելու ժամանակ կրած վնասները, կորուստը: II, (գերմ.) այն մասը, որ նաւահանգիստը մտնող նաւերից վերցնում են:

'Авва ա. (արմ.) հայր, աբբահայր, վանահայր. Богъ послалъ въ сердца ваши Духа Сына Своего, вопіющаго: 'Авва, 'Отче! —որ աղաղակէ աբբա, Հայր (Թուղթ առ Գաղատացիս. 4, 7):

Аввакумовщина ի. Ցովակիմեան աղանդը, ռուս եկեղեցու ռասկոլի մի ճիւղը:

Авгитовый ած. հրատեսայ. а. камень; **-гитъ** ա. հնք. augite, հրատ:

Авгуръ ա.(լտ.) հաւահարց, հաւահմայ, հաւատէտ, (հին Հռովմէացիների քրմերը, որոնք թռչուններ ձայնից և թռչելու եղանակից գուշակութիւններ էին անում). * խաբեբայ, կեղծ մարդ:

Августинецъ, нца ա. **-нка** ի. Օգոստինեան վարդապետ, օգոս. կոյս. **-нскій** ած. Օգոստինեան:

'Августовскій ած. օգոստոս ամսի. а—ая книжка журнала; **-стъ** ա. (լտ.) օգոստոս, հին հռոմ

նուաստրդ ամէնը. **-стѣйшій** ած. օգոստափառ (մակդիր, որ տրւում է արքայական տան անդամներին). А. Покровитель.

Авдиторъ ա. Аудиторъ.

Авдотька է. 1, կնդ. Oedicnemus crepitans, մեծ, կարմրատ ճահճային կտցար, 2, կնդ. Upupa Epops, յոպոպ, 3. յանճն. յ. Авдотьки բս. Trollius europaeus, ձգկի:

Авéрсъ ա. (լտ.) մետալի կամ դրամի առաջին (պատկերազարդ) երեսը. հակառակը ա. Ревéрсъ.

Аверьянъ ա. ա. Валерьяна.

Авáнсъ ա. (ֆր.) 1, գիտակեղէնին վառ, կենդանի գոյն տալը. 2, հայերու համար ամալ՚գամա պատրաստելու անաղեայ թերթերի սրբելը, մաքրելը սնդիկով:

Авизо ա. անփ. (իտ.) Ծնգ. բանբեր, համբաւաբեր. տեղեկատու նաւ (նաւատորմի մէջ, որքանաւոր է, ծառայում է հրամանատարի պատուէրները, կարգադրութիւնները հաղորդելու).-**зъ** ա. Адвизъ.

Авось I. Հ. կարելի է, թերևս. 2, իբր գոյ. չ. և ա., պատահմունք, բաղդ, դէպք. авось-либо ա. Авось; **-ка** հոլ. **-никъ** ա. թեթևամիտ, անյաջող, 'բօշ' մարդ. նա որ յաճախ իւր յոյսը դէպքի, պատահմունքի վերայ է դնում կամ յաճախ авось բառը գործ է ածում. авосьники бѣдокуры (առծ.) 'բօշ' մարդիկ դժբաղդութիւն են բերում. **-вичать** չ. յոյսը դէպքի, պատահմունքի վերայ դնել, 'բօշութիւն' անել:

Аврамово дерево բս. Vitex agnus castus, կուսութեան, ողջախոհութեան կմ Աբրահամեան ծառ (2—3 մէտր բարձրութեամբ թուփ, որի վաւն, պղպեղահամ սերմերը, ինչպէս ասում են, մարդուս սեռական տենչը զսպում, ամոքում են):

Аврáлить (-лю -лятъ) չ. համբութեամբ, բոլոր ուժերով գործ կատարել. **-лъ** ա. (անգլ.) ծվզ. համուր, բոլոր ուժերով կատարուող գործ, նաւի վերայ այնպիսի գործ, վարժութիւն, որին բոլոր նաւաստիներն էլ մասնակցում են. **-льный** ած. 1 համուր, ընդհանուր, հասարակաց. а—ая работа նաւի վերայ ընդհանուրի ձեռքով կատարուող գործը. 2, հեգն. անհանգիստ, երերուն, դանդաչան:

Аврамьевщина է. Աբրահամեան աղանդը (Աբրահամ վարդապետի անունով), որը հաւատում է նեսի զալստեանը մարմնաւոր կերպարանքով:

Аврáнъ ա. բս. Centaurea jacea, կարմիր տերեփուկը. а. дикій ա. Благодáть Б.

Аврикула է. բս. Primula auricula, արջականջ, ընտրրուկ. **-пигмéнтъ** ա. Аурипигмéнтъ.

Аврора (լտ.) արշալոյս, արևածագ, 'ծէգ':

Аврынъ ա. բս. Lemna, ջրաշար. **-сéнь** ա. Овсéнь.

Аускультантъ ա. (լտ.) Ծնգ. կրտսեր անդամ ուսումնական և դատական ընկերութեանց:

Австерія է. (լեհ.) հիւրանոց, ակմբանոց, ժողովարան, որ Պետրոս Մեծը հիմնում էր, որպէսզի նոցա մէջ առւս հասարակութիւնը ծանօթանայ եւրոպական կենցաղին: |(լտ.) հարաւային:

Австралійскій ած. աւստրալիական. **-льный** ած.

Австріецъ, ріяца ա. **-рійка** է. աւստրիացի, — րուհի **-рійскій** ած. աւստրիական. **-рíякъ**, **-рíячка** ա. Австріецъ, -рійка.

Автобіографическій ած. ինքնակենսագրական. **-біографія** է. (յն.) ինքնակենսագրութիւն. **-графическій** ած. նոյնագրութեան, նոյն գրութեան վերարտադրութեան. а—ая бумага; **-графія** է. (յն.) 1, նմանահանութիւն, նոյնագրութիւն, հեղինակի գրութեան ճիշտ վերարտադրութիւնը. 2, միևնոյն գրութեան մի քանի օրինակը արագ ստանալու միջոցը, եղանակը. **-графный** ա. Автографическій; **-графъ** ա. 1, ինքնագիր, սեփհական ձեռք. 2, հեղինակի իսկ, հարազատ ձեռագիրը. բուն բնագիր. 3, ինքնագիր, ինքնիրան գրող, ընդօրինակող, կաղապարող մեքենայ:

Автодафé ա. аутодафé.

Автодидактическій ած. ինքնուս. **-дидáктъ** ա. (յն.) ինքնուս. **-кефáльный** ած. (յն.) ինքնագլուխ. а—ая цéрковь; **-крáтія** է. (յն.) ինքնակալութիւն, անսահման, միահեծան ինքնապետութիւն. **-крáтъ** ա. ինքնակալ, միահեծան, անսահման միապետ, ինքնապետ. **-матизмъ** ա. ինքնաշարժութիւն, մեքենայաբար շարժուելու ընդունակութիւնը. **-матическій**, **-мáтный** ած. ինքնաշարժ, ինքնաբերական, մեքենայական. **-мáтъ** ա. (յն.) ինքնաշարժ մեքենայ (մարդու կամ կենդանու կերպարանքով): **-мобиль** ա. (յն.-լտ.) ինքնաշարժ նորաձևար կառք մի:

Автомедонъ ա. կատկ. կառապան, կառավար:

Автомолитъ ա. Ծնք. Automolit, աւտօմոլիտ, ցինկային շպինել:

Автономія է. (յն.) ինքնավարութիւն, ինքնօրինութիւն, ինքնուրոյն վարչութիւն. 2, փիլ. կամքի ազատ ընտրութիւնը, որոշումը, ազատութիւնը. **-номный** ած. ինքնուրոյն, ինքնավար, ինքնօրէն. **-псія** ա. Аутопсія.

Авторитéтный ած. հեղինակութիւն, կշիռ ունեցող, ազդու, ազդեցիկ. а. голосъ; **-тъ** ա. 1, հեղինակութիւն, ազդեցութիւն, նշանակութիւն, 2; հեղինակութիւն ունեցող, հեղինակաւոր անձ:

'**Авторскій** ած. հեղինակի. á—oe прáво, вознаграждéніе; **-рство** չ. հեղինակութիւն. **-рствовать**, (-ствую, -ютъ) չ. հեղինակել, շարադրել. **-ръ** հոլ. 1, հեղինակ, բանաստեղծ, գրող այր, կին. 2, մի բանի սկզբնապատճառ, հեղինակ:

Автохтóны ա. Аборигéны. |դայ, տէր, մեծաւոր:

Агá I. Ձ. ահա, ահա թէ ինչ. II. ա. (թրք.) ա-

Агáва է. բս. Agave americana, ամերիկական ագաւին, պերճածաղիկը (ավերարար հարիւրամեան հալուէ): |կերպարար:

Агальматолитъ ա. Ծնք. agalmatolithe, պատ-

Агáны է. յ. (յն.) ագապ, սիրոյ սեղան, որ տալքում էին նախնի քրիստոնեաները:

Агáрикъ ա. (լտ.) ագարիկոնը, ծալքաւոր սունկը:

Агаряне, -янъ ա. յ. հագարացիք, առհ. մահմետականներ:

Агáтный ակատէ, ակատակերպ. **-товый** ած. ակատէ, ակատից, а. сосудъ; **-тъ** ա. Ծնք. agate, ակատ, «свѣтлые чёрные глазá настоящій а.»

'**Аггелъ** ա. եկղ. չար ոգի, դև:

'**Агéнтскій** ագենտի, գործակալի, -վարի á—ая контóра; **-тство** չ. **-тýра** է. (գերմ.) ագենտութիւն գործակալութիւն. **-тъ** ա. (գերմ.) ագէնտ. 1, լիազօր, հաւատարմատար, գործակալ, -կատար. 2, որ և է տէրութեան դիպլօմատիական, պատերազմական կամ վաճառականական գործերի ներկայացուցիչը մի այլ պետութեան արքունիքում:

Агитáторъ ա. (լտ.) ագիտատոր. 1, յօդուած որ և է գաղափարի պայքար մղող, հասարակութիւնը պատրաստող. 2, խռովարար, ազմկիչ, գրգռիչ. **-тáція** է. (լտ.) ագիտացիա, 1, պայքար, պայքար մղելը յօգուտ որ և է գաղափարի, ձեռնարկութեան. 2, խռովարարութիւն. **-тировать** (-рую, -ютъ) չ. (լտ.) պայքար մղել[ով հասարակու-

թիւնը յօգուտ մի և է գաղափարի, գործի նախապատրաստել]։

Агіасма ի.(յն.) եկղ. 1, а. великая ջրօրհնէքին (Աստուածայայտնութեան տօնին կամ նախատօնակին) օրհնած ջուրը. 2, մանկանց մկրտութեան համար օրհնած ջուրը։

Агіо|біографія ի. (յն.) սրբերի կենսագրութիւնը, վարք սրբոց. **-графія** ի. (յն.) սրբագրութիւն. խրատական գրուածք. **-логія** ի. (յն.) սրբախօսութիւն, սրբերի մասին գիտութիւն, տեղեկութիւններ։

'Аглицкій հնց. ռմկ. տ. 'Англійскій.

Агломератъ ա. 1, հնք. agglomérat, շեղջաքար, կուտակաքար. 2, ռւհ. այլազան մասերից բաղկացած կոյտ, կուտակում, շեղջ։

'Аг|нецъ. нца ա. եկ. ս. 1, գառ. 2, պատարագի հացից հանած քառանկիւնի օրհնած նշխարը 'А. Божій Գառն Աստուծոյ (Յիսուս) 'А. непорочный տ. Авраамово дерево: **-ница** ի. հկ. ս. 1, էգ գառ, որոջ. 2, եկղ. այսպէս կոչւում են Աստուածածինը և նահատակ կոյսերը։

'Агнцевы вѣтви ի. յ. վարսաւոր կամ բաբելոնական կամ պաղեստինեան, Երուսաղէմեան ուռենու (Salix babylonica) ոստերը, ճիւղերը։

Агонія ի. (յն.) մահուան ճգնաժամ, մահուան տագնապ, հոգեվարք։

Агра|мантный,-мантовый ած. երիզագործի. **-мантъ** ա.(ֆր.) երիզագործ. ցանցակերպ հիւսուածք, ժապաւէն, որ իբրև զարդարանք կարում են կանանց զգեստի փէշերին, վարագոյրների եզրներին և այլն։

Агра|рій ա. (գերմ.) ագրարիէր (Գերմանիայում այն քաղաքական կուսակցութեան անդամը, որ պաշտպանում է հողատէրերի և գիւղատնտեսների շահերը). **-рный** ած. հողատիրական, կալուածատիրական. գիւղատնտեսական. а. вопросъ, —строй.

Аграфъ ա. (ֆր.) ագրաֆ. 1, կարթ, ճարմանդ, շիգգ, ճանկ, գլխարկի կոկարդը. 2, ճրտրւ. Թաղի, կամարի միջին քարը, որով նա պարփակւում է։

Агрегатъ ա. (լտ.) շեղջ, կիտուածք, կուտակութիւն, խառնուածք, կազմուածք։

Агрессивный ած.(լտ.) յարձակողական,նուաճողական. а—ая политика.

Агрикуль|тура ի. (լտ.) երկրագործութիւն, հողագործութիւն. **-турный** ած. երկրագործական, հողագործական. а—ая техника.

Агро|номическій ած. հողագիտական,—գործական. **-номія** ի. (յն.) հողագիտութիւն, հողագործական ուսումը, գիտութիւնը. **-номъ** ա. ագրոնոմ. 1, հողագէտ, ուսեալ հողագործ, երկրագործ. 2, ուսեալ, փորձուած գիւղատնտես։

Агу|-леньки, -нечки, -нюшки ձյ. ագու агу, не плачь.

Адажіо, (իտ.) երժ.1,Տ. հանգիստ,կամաց,մեղմ. 2, ածհ. պիէսան, որ հանգիստ և աղղու եղանակով երգելու է։

Ада|мантовый ած. 1, ադամանդէ. а — ая твёрдость; 2,*խիստ կարծր,անողորմելի а—ое сердце; **-мантъ** հնք, adamas, ադամանդ, այմաստ։

Адамашка ի. հնց. դամասկոսեան մետաքսէ կերպաս, որ առաջ ներածւում էր Ռուսիա։

Ада|миты ա. յ. Ադամեանք, Ադամորդիք (միջակեան աղանդաւորներ, որոնք ցանկանում էին նախահօր դրախտային անմեղութիւնը վերականգնել. ցաւակեաց, հանրակին էին և ժխտում էին եկեղեցին և իւր ծէսերը). **-мовщина** ի.տ.Адамова кость; **-мовъ, а, о,** ած. Ադամի, Ադամա—(մակդիր, որով այլ և այլ արուեստագիտական անուններ են կազմւում, օր.) Адамова борода, 1, բս. Asclepias, մետաքսաբոյսր (խոտ). 2, բս. Centaurea scabiosa, բոսոր տերեփուկը կամ նաշտար։ Адамова голова 1,Ադամագլուխ (գագաթի նկարը վերան երկու խաչաձև ոսկորներով, օր. խաչելութեան նկարում). 2, բս. Cypripedium calceolus, մուղածաղիկը։ Адамова кость հիւսիս. Ադամոսկր կոչուած քարացած ծառը։ Адамова смоква բս. Musa paradisiaca կամ Ficus indica, մուզը (մօզ,Ադամախնձոր)՝ Адамово дерево բս. Catalpa bignonioides, սիկառածառը։ Адамово яблоко 1, բս. Citrus limetta, քաղցրահամ կիտրոնը, ոես և Адамова смоква: 2, բս. Pyrus malus paradisiaca դրախտախնձորին։ 3, կզմխ. Cartilago thyreoidea խուչափուշի վերին, դուրս պրծած մասը։

Адансонія ի. տ. Баобабъ.

Адатъ ա. ադաթ, կովկասեան լեռնաբնակների հնաւանդ սովորութիւնները, որոնք օրէնքի նշանակութիւն են ստացել։

Адвербіальный ած. (լտ.) քերկ. մակբայական. а-ое реченіе.

Ад|визный ած. ծանուցագրի, հաղորդագրի. **-визъ** ա.(իտ.) վճռկ. ծանուցագիր, հաղորդագիր, (որ մուրհակը կամ ապրանքը արդէն ճանապարհուած է։)

Адво|катишко ա. նխտ. սոդոմելի փաստաբան. «а. былъ дрянной, и всѣ поводы кассаціи упустилъ.» **-катскій** ած. փաստաբանի.—նական **-катство.** փաստաբանութիւն **-катствовать,(-ствую.-ютъ)** չ. փաստաբանութիւն անել, փաստաբանութեամբ պարապել. **-катура** ի. (գերմ.) 1. տ. Адвокатство; 2,հիմնարկութիւն,որ էական գործերը պաշտպանելու,իսկ քաղաքական գործերի համար բարեխօսելու. **-катъ** ա. (գերմ.) ադվոկատ, փաստաբան.

Аделаида ի. բաց կապոյտ գոյն,կապոյտ մանուշակի գոյն։

Аденологія ի. բժ. խլախօսութիւն, գեղձագիտութիւն, -բանութիւն։

Адептъ ա. (լտ.) 1, կատարելութեան, -յաջողութեան հասած ալքիմիկոս. 2, ով և է վարդապետութեան գիտակ, աշակերտ, հետևող։

А|дехъ ա. -диге ածհ. չերքէզ (տեղական յորջորջում)։

Адина|мическій ած. անուժութեան, անզօրութեան, թուլութեան, ուժասպառութեան. **-мія** ի. (յն.) 1, անզօրութիւն, ուժասպառութիւն,թուլութիւն. 2. բժ. անուժութիւն, կատարեալ ուժասպառութիւն, որ պահանջում է դրգռիչ միջոցներ։

Администра|тивный ած. (ֆր.) կառավարչական, վարչական. а—ая власть կառավ., վարչ. (և ոչ դատաստանական) իշխանութիւն. а—ая машина; выслать кого въ а—омъ порядкѣ, а—ымъ порядкомъ աքսորել մէկին վարչական (և ոչ դատաստանական) ճանապարհով. **-торскій** ած. կառավարչական, վարչական. а — ыя способности; **-торъ** ա. (լտ.) 1, ռմհ. կառավարիչ, վարիչ, վարչական անձ. 2, կառավարութիւնից կարգուած պաշտօնեայ, մատակարար, յանձնարարիչ, որին յանձնուած է ով և է կալուածական գործ. 3, արքունի կալուածների կառավարիչ (հիւսիս արևմտեան, հարաւ արևմտեան և բալթեան նահանգներում). 4. իրւբ. վաճառականական տան խճճուած գործերը կարգադրելու համար նշանակուած վարչութեան անդամը.

-ціонный ած. վարչութեան, կառավարչութեան. -ція է. (լա.) 1, առհ. կառավարչութիւն, վարչութիւն. 2, ակլսնական մարմին (մասնաւորապէս գաւառական կամ երկաթուղային) վարչութիւն. 3, իրւք. ոստիկան կազմակերպութիւն. համապարփակութիւն, կազմակերպութիւն, ոստիկանութիւն. 4 աւանդին հրամայական (կառավարչական) ձեռնարկութիւն, որ բնական է կարգադրում է վաճառական ընկերութեան գործերը։

Адмиралтейскій ած. ծովային վարչութեան, а. флагъ; а-ая игла Պետերբուրգի ծովային վարչութեան շինութեան վերայ գտնուող սրածայր սիւնը. -ралтейство չ., 1, ծովային գրասենեակ, որ նաւատորմին վերաբերեալ բոլոր գործերը կառավարում են, նաւերը շինում կամ կարգաւորում են. 2, ծովային, նաւատորմային վարչութիւն. адмиралтействъ-коллегія ծովային, նաւատորմի վարչութիւն (Պետրոս Մեծի ժամանակ). адмиралтействъ-совѣтъ ծովային վարչութեան խորհրդարան-ралтейцъ ա. Պետ. մարտանաւերի շինութեան գլխաւոր վերակացուն (Պետրոս Մեծի օրով). -ралъ ա. (հոլ).1, ծովակալ. նաւատորմի հրամանատար. ծովային զօրքերի սպարապետ. 2, կնդ. Vanessa Atalanta, ծովակալ թիթեռ. 3, կնդ. Conus admiralis, ծովակալ խեցին. -ральскій ած. ծովակալի. а. чинъ; а. часъ կանկ. ճաշից առաջ ժամ, ժամանակ. -ральство չ. ծովակալութիւն. -ральша է. ծովակալի կինը։

Адонай ա. (եբր.) Ադոնայի, Ադոնիա, Տէր (Աստուծոյ անունը). «А. есть имя сотворившаго міръ».

Адовъ, а, о ած. տ. Адъ.

Адонисъ ա. բս. Adonis, ադոնիս, Ադոնիսի ծաղիկը, աստանդային աշխէ (խոտ գորտնուկներից Ranunculaceae).

Адресатъ ա. (գերմ.) նա, որի անունով նամակը կամ մի այլ թուղթ, պատուէր հասցէագրած է. -росный ած. հասցէի. հասցէա—.а. столъ հասցէատուն, ուր կարելի է մի քաղաքում գտնուող բոլոր մարդկանց հասցէները իմանալ. а—ая книга հասցէամատեան. а. билетъ (առաջ) վկայագիր, որ տրւում էր մանաւոր ծառայողներին և արհեստաւորներին.-росованіе չ. հասցէագրելը. ցոյց տալը. -росовать ** (-сую-ютъ) ն. 1, что куда կամ кому հասցէագրել, նամակը. պատուէրը, մաքրեալ վրայ ուղարկ հասցէն գրել. ուղղել. 2, кого куда կամ къ кому մէկին մի հասցէ, հանապարհ յայտնել. ցոյց տալ. մէկին մի տեղ, մի մարդու մօտ առաջնորդել.-ся** 1, անդր. къ кому կամ куда, գառնալ, դիմել մէկին կամ մի տեղ. 2, կր. հասցէագրուել, ուղղուել. письма адресуются въ контору; -ресъ ա. (ֆր.) ադրէս. 1, հասցէ. 2, մաքրեալի վրայ այն անձի անուան մակագրութիւնը, որին պատուաստը պէտք է գրաւել վճարէ. 3, ուղերձ, ձօն. շնորհակալութեան, շնորհաւորութեան, ցաւակցութեան թուղթ. խնդրագիր, որ շատ տօնախմբութիւններով մէկին ուղարկւում է. адресъ-календарь հասցէամատեան (անէութեան բոլոր հիմնարկութեանց, պաշտօնեաներ)։

Адріанопольскій ած. Ադրիանօպոլսի. а—ая краска, а. цвѣтъ ամենահաստատուն և սիրուն կարմիր ներկը, որ տորոնից ստացւում է և որով ներկում են բամբակեայ թելերն և գործուածքը։

Адскій ած. (թատ.) բուխարական և պարակա-

կան կիսամետաղական գործուածք, ճոթ։

'Адскій ճ. ինչպէս դժոխքում, սոսկալի, զարհուրելի կերպով.-дскій ած. դժոխային, սանդարամետական, զարհուրելի, անտանելի. а—ія силы,—муки, а—ая работа,—скука. 'А—ая машина, դժոխային մեքենայ, սոսկալի, բանկուող նիւթերով լցրած ու, գործիք. բ, նաւ: 'Адскій камень քիմ. Lapis infernalis, դժոխաքար, խարիչ քար։

Адуляръ ա. հնք. adulaire ադուլար(ադուլարիա). թափանցիկ. բիւրեղացեալ դաշտային սպաթ]ը։

Адъ. ա. 1, դժոխք, սանդարամետ. 2, դժոխային ոյժեր. 3, դժոխային տանջանքներ, չարչարանքներ. 4, չփոթութեանց, խառնակու թեանց վայր, տեղ; 'Адовъ, а, о ած. դժոխային- адовы силы, а—о отродье.

Адъюнктскій ած. ադիւնկտի.-нктство չ. ադիւնկտութիւն. -нктура է. ադիւնկտի պաշտօնը, ծառայութիւնը. -нктъ ա. (լա.) ադիւնկտ. 1, ակադեմիաներում և բարձրագոյն ուսումնարաններում կրտսեր ուսումնական. (առաջ) ակադեմիկոսի կամ պրոֆեսորի օգնականը. 2, բողոքական պաստորի օգնականը։

Адъютантскій ած. ադիւտանտի. а-ая должность: -ютантъ ա. (գերմ.) ադիւտանտ. սպայ, որ մեծաւորի այլեայլ պատուէրներն կատարում է. полковой, баталіонный а.; генералъ-а. և флигель- а. գեներալ և սպայ, որոնք կայսեր թիկնապահներն են, անմիջապէս նորան ծառայում են. -юторъ ա. (լա.) օգնական։

Адэкватный ած. փիլ. ճիշտ համապատասխան (համապատասխանութիւն, գաղափար). -кватъ ա. (լա.) փիլ. ադէքվատ, ճշտութիւն, ճշգրտութիւն, համապատասխանութիւն (առարկաների գաղափարների)։

Адюльтеръ ա. (ֆր.) 1, ցոփութիւն, շնութիւն, ամուսնական հաւատարմութեան խախտումը. 2, ցոփ, շնացող. անհաւատարիմ ամուսին։

'Ажіо չ. անհ. (ֆր.) աժիօ (այն գումարը, յաւելումը, որ վճարում են տարբեր տեսակ դրամները, արժեթղթերը միմեանց հետ փոխելիս).-жіотажъ ա.(ֆր.) դրամաճարդ. որ հիմնուում է դրամաթղթերի կուրսի փոփոխութեան վերայ. առհ. մեծ գործերի սպեկուլ, սակարկութիւն. -жіотёръ ա. դրամաճարդով զբաղուող, մեծ գործեր անող, ծախող։

'Ажно չ. ռմկ. այնպէս որ, մինչև անգամ։

Ажурный ած. ծակծկուած, ծակոտկէն, ցանցակերպ, նօսր, թափանցիկ. а — ое шитьё, а—ые чулки:-ръ ա. անհ. (ֆր.) 1, անգին քարերի ոսկով և արծաթով այնպէս շրջանակելը, որ միայն նոցա եզրերն են ներփակւում մետաղից. 2, առհ. թափանցիկ, նօսր, բարակ, ցանցառ գործ. чулки, перчатки а.

Ажъ տ. 'Ажно.

Азалія է. բս. Azalea, լեռնավարդ։

Азартность է. կրակոտութիւն, տաքարիւնութիւն, յանդգնութիւն. -тный ած. 1, պատահական, պատահմունքից, բաղդից կ [illegible] ած. играть въ а—ыя игры բաղդախաղ [illegible] ուիլ. 2, կրակոտ, տաքարիւն, յանդուգն [illegible]. -тъ ա. (ֆր.) խանդ, կրակոտութիւն, տաքո[illegible]ութիւն, բորբոքում, որոմտութիւն, յուզմունք։

Азбестъ տ. Асбестъ.

'Азбука է. 1, այբբեն, ալփաբեթ. [illegible] այբբե-

նարան, տետրակ. 3, * մի և է գիտութեան, արուեստի տարրերը.-ко́вникъ ա. հին ռուս դպրութեան մէջ մենական բառարան, մնգ. եկեղեցական, որի մէջ բառերը այբբենական կարգով դասաւորուած և բացատրուած էին. -чка նուզ. տ. 'Азбука: -чный ած. այբբենական, սկզբնական, *տարրական։

Ази|му́тный ած. ազիմուտի,-տային, **-му́тъ** ա.(տրր). ազիմուտ. 1, հորիզոնի այն մասը կամ աղեղը, որ գտնւում է մի և է աստղի բարձրութեան և միջօրէի մէջ. 2, աստղ. աստղի բարձրութեան և միջօրէի միջի անկիւնը, =0—360°։

А|зiáтецъ, тца ա.,**-зiáтка** ի. ասիացի, ասիուհի. **-зiáтскiй** ած. ասիական,* վայրենի, բիրտ, կոպիտ. **-зiáтчина** ի. 1, ասիականութիւն, ասիական, բիրտ սովորութիւն, վարք ու բարք. 2, տ. Азiáтъ 2;- **-зiáтъ** ա. 1, տ. Азiáтецъ; 2, նխտ. բիրտ, կոպիտ, անկիրթ մարդ.**-зiйскiй** ընստ. տ. Азiáтскiй.

Азо́|тистый ած. ազօտեայ, բորակածին պարունակող. **- ти́ческiй, - тновáтый. - тный, - товый** ած. բորակածնային, բորակային. азо́тная кислота́; 'Թէզապ' -тъ ա. (ֆր.) քիմ. բորակածին, մահածին։

Азу́ръ ա. 1, կապոյտ դեղ, ներկ 2, հնք. Lapislazuli, լազուարթ (լաճվարտ, լաժուարդ)։

Азъ, á ա. 1, ազ, այբ. եկեղ. սլաւոնական այբբենի առաջին տառը, *սկիզբ, տարերք. азá въ глазá не знáетъ ոչնչէն ոչինչ չէ հասկանում. твердить, повторять азы́ — տարերքը, տարրական գիտելիքը կրկնել 2. եկ. սլ. դէրն. ես (գործ է ածւում կատակով, օր. и азъ грѣшный, — многогрѣшный. [վերարկուն]։

Азя́мъ ա. ազեամ, ռուս գիւղացու ամառուայ

Ай ա. անհ. (Ау-ի անունով) փրփրացող, եռա-

Айдъ ա. դժոխք, սանդարամետք։ [ցող գինի։

'Аиръ ա. բս. Acorus calamus, խունկեղէգը (Ակիր?)։

'Аи|стникъ ա. բս. Pelargonium, Պել'արգոնը. **-стовый** ած. արագլի.а. носъ տ. 'Аистникъ; **-сть** ա. կնդ. Ciconia, արագիլ, 'լագլագ' бѣлый а. Cic. alba, սպիտակ արագիլ (տառեղ)։

Ай 1,ա.կնդ. Bradypus tridactylus, այր, ծոյլ, յամրուտկը։ II. ձգ. այ, վայ այ, ահ. ай, ай, ай, что надѣлали! **Ай-ай** տ. Руконо́жка.

'Айва́. ի. բս. Cydonia vulgaris, սերկեւիլ և սերկևլենի .**-во́вый** ած. սերկևիլի,—լից. айво́вое варе́нье. [հեռացիր։

Айда́ ձգ. (թուրք.) հայդա՜, հէյդա՜, դնա՜ք. դնա

Айде́сскiй ած. դժոխքի, - խային, սանդարամետի, — մետային։

Айма́къ, á ա. հորևան, արիւնակից ցեղ, ազգ։

Айра́нъ ա. (Թաթ.) խնոցու թանը (իւղը զովացուցիչ ըմպելիք). մածնաթան, աղուի։

Выкругливать, -**круглить** (-глю -глять), -**круглять** ն. կլորացնել, կլորացնելով շինել. -**ся** 1, ներգ. ռմկ. լցուել, 'տագել', գէրանալ. 2, կր. կլորացուել, կլոր ձևով շինուել. -**кружальникъ** ա. մի տեսակ գոյլեկոս (բուրդու), որով տախտակեց կլոր շրջանակը են կտրում (կողերը որոնում գագաթները են կտրում). -**кружать**, -**кружить** (-жу -жать) ն. 1, կլորացնել, կլոր ձև տալ. в. дно въ бочку տակառի համար [կլոր] յատակ շինել. в. крышку на кадку կուժի համար [կլոր] բոլոր շինել. *выкружилъ всю залу танцуя պարելիս պտոյտելով էլ սեղ չմնաց, որ չը շրջէր. 2,* պտտուելով, պարյա գալով ձեռք բերել, շահել. кружился по баламъ, да и выкружилъ себѣ жену; 3, շ. ուղիղ ճանապարհից շեղուելով ավելորդ տարածութիւն անցնել. онъ выкружилъ цѣлыхъ десять верстъ; -**ся** 1, ներգ. այս կամ այն կողմ շրջելուց, դէս ու դէն ընկնելուց դադարել, լռշանալ, զգաստանալ. 2, կլորացուել. -**круживаніе** շ. կլորացնելը. -**круживать, ся**, -**кружить** (-жу -жать), **ся** ա. Выкружать, ся; -**кружка** է. 1, կլորացնելը, կլոր շինելը. 2, կլորացրած, կլոր շինած բեր. -**кружки**, сѣй ա. յ. ծրտրջ. կլորացրած տեղ, կտոր։

Выкрутасы ա. յ. ռմկ. 1, սովորելներ նախշ, զարդուածք ճակաշէնք կարոյ. 2, ղձուոր և աղաւաղ չարժուածոր պարը ժամանակ. выдѣлывать в.; 3,* հնարքներ, հնարամացութիւն, բարձրաճախութիւն. սորեռեթունք. говорить съ выкрутасами; -**крутить** (-чу -тить), **ся** ա. Выкручивать, ся; -**крутка** է. -**кручиваніе** շ. 1, ոլորելով հիւսելը, ոլորելով շարժելը, խլելը. 2,* թափելը, ազատելը. -**кручивать**, -**крутить** ն. 1, ոլորելով պարզ հիւսել. в. канатъ, верёвку; выкрутилъ силою изъ рукъ его винтовку—ոլորելով խլեց, շարժեց. 2,* ջանք անելով արդարացնել, ազատել, թափել դժբաղդութիւններից. сколько ни старались, но не могли его в.; -**ся** 1, կր. հիւսուել. 2, ներգ. աշխատել ազատուել, թափուել, դուրս գալ նեղ դրութիւնից։

Выкрываніе շ. բոլորովին, իսպառ ծածկելը. -**крывать** -**крыть** (-крою -ють) ն. բոլորովին, իսպառ ծածկել. в. домъ листовымъ желѣзомъ; в. холстъ сплошнымъ слоемъ краски; -**ся** կր. բոլորովին ծածկուել, գոցուել. -**крышка** է. ա. Выкрываніе.

Выкрючивать, -**крючить** (-чу -чать) ն. կարթով հանել, դուրս բերել, որսալ։ [валить, ся.

Выкувыркнуть, ся ա. Выпрокинуть, ся և Вы-

Выкуковать (-кую -ютъ) ն. «կկու» կանչելով գուշակել. кукушка выкуковала мнѣ сто лѣтъ жить.

Выкуксить (-кшу -ксять) ն. глаза աչքերը տրորել, 'աղալել'։

Выкунѣть շ. սուշտակուրուել. մազը փոխել (կզան և նման մուշտակաւորների մասին)։

Выкупатель ա. -**купательница** է. փրկիչ. ազատող, թափող այր, կին. -**купать**, -**купить** ն. 1, ազատել, թափել (դրամով). в. деревню, вещи; 2, դոյլական, պայմանական կալուածքը յետ գնել, սորից ձեռք բերել. 3, գերութիւնից, բանտարկութիւնից փրկել, ազատել, թափել. в. плѣнныхъ; 4, բոլորը, ամբողջը գնել, առնել. на рынкѣ весь хлѣбъ выкупили; -**купать, ся** ա. Купать, ся; -**купаться**, -**купиться** 1, ներգ. փրկանքով ազատուել. выкупился изъ плѣна; 2, կր. գնուել, առնուել (ամբողջովին). всѣ товары выкупились; -**купить** (-плю -пить), **ся** ա. Выкупать, ся; -**купка** է. ա. Выкупъ; -**купной** ած. 1, որ կարելի է ազատել, թափել (դրամով). 2, թափուած, ազատուած, յետ գնուած. в—ое имѣніе; 3, յետ գնելու, փրկելու, ազատելու [համար նշանակուած]. в—ыя деньги; в—ое право ժառանգների իրաւունքը, որդէն ծախուած կամ գրաւ դրած հայրենական կալուածքը յետ գնելու. в—ая запись Տնգ. թուղթ ծախած կամ գրաւ դրած կալուածքը յետ գնելու. в—ое положеніе օրէնքներ, որոնք որոշում են, թէ ինչ պայմանով հողատէրերից ազատագրուած ուսո գիւղացիք կաւակցութեան ավելցուցեամբ պէտք է բոնից համար հողաբաժիններ ձեռք բերեն (բերս սոպհակառութիւն). в—ыя свидѣтельства պետական տոկոսաբեր թղթեր, որոնք ստացծուցան գիւղացիներին հողատէրերից դուրս գալու ժամանակ, որոնց միջոցաւ գիւղացին հարկատուութիւն է ստացել երեն յանձնուած (բայց ոչ սեփական) հողաբաժինների բերք սոպհականութիւն գնելու. -**купщикъ**, -**купщица** ա. Выкупатель, -ница; -**купъ** ա. 1, յետ գնելը, ազատելը. թափել. внести деньги на в. заложенныхъ деревень; в. плѣнныхъ. 2, իրաւ. հայրենական, պայմանական կալուածքի յետ գնելու իրաւունքը. 3, փրկանք, դրամագին։

Выкуриваніе շ. 1, ծուխ, մուխ անելով դուրս քշելը, վռնդելը, խրկելը. 2, քաշելը, թորելը (օղու). 2, քաշելով, ծխելով սպառելը. -**куривать**, -**курить** (-рю -рять) ն. 1, ծուխ, մուխ անելով դուրս քշել, վռնդել, հալածել, խրկել. в. пчелъ изъ улья, лису изъ норы; в. гостя քաղաքավարի կերպով հիւրին 'ճանապարհ' գնել, տեղից տրտմել. 2, քաշել, թորել. в. вино, дёготь, смо-

лу́; изъ че́тверти хлѣ́ба вы́курилъ пять вёдеръ вина́ *մի չետվերտ հացից 5 վեդրօ արաղ քաշեց.* **3,** *քաշելով, ծխելով սպառել.* в. тру́бку; в. всѣ папиро́сы; **-ся** *կր.* **1,** *դուրս քշուիլ, վռնդուիլ (ծխով, մխով).* **2,** *քաշուիլ, թորուիլ.* **3,** *ծխուիլ, սպառուիլ.* **-курка** *ի.* **1,** *տ.* Выку́риваніе; **2,** *քաշած, թորած օղու եւ՛ քանակութիւնը.* велика́ ли у васъ в. вина́?

Выкурнуть *չ.* *ծովգ.* *երևան գալ, լողալով հորիզոնի վերայ երևալ, դուրս գալ։*

Вы́кусывать, -кусить (-шу -сить) *ն.* *կրծել, կծոտելով ուտել.* **-ся** *կր.* *կրծուիլ, կծոտուելով ուտուիլ.* **-кушать** *ն.* *վայելել, անուշ անել, ճաշակել (ըմպելիք կամ խմելիք).* вы́кушайте рю́мку вина́.

Вылавиро́вывать, -лавировать *չ.* *ծովգ.* *հակառակ քամու ժամանակ աջ ու ձախ նաւելով դուրս գալ.* **ճարպկութեամբ նեղ դրութիւնից դուրս գալ, ազատուիլ, թափուիլ։*

Вылавливаніе *չ.* *որսալը.* **-лавливать, -ловить** *ն.* **1,** *որսալ, որսալով սպառել.* в. ры́бу изъ пру́да; в. звѣрей въ лѣсу́; **2,** *ծովգ.* *ծածուկ տարքած ականները (լաղմաները) որսնելով գտնել.* **-ся** *կր.* *որսացուիլ. սպառուիլ։*

Вылазить (-жу -зить) *ն.* *խուզարկել, որոնել.* всѣ углы́ вы́лазилъ; **-ла́зить** (-жу -зять) *չ.* *ռմկ.* *տ.* Вылѣзать; **-лазка** *ի.* **1,** *դէպի դուրս յարձակում, գրոհ, գործ տալը (պաշարեալներից).* сдѣлать сильную в—у; **2,*** *յարձակում, կծու խօսք, վիրաւորանք.* -(вы́)**ла́зный** *ած.* *դուրս գալու, ելնելու.* вы́лазная кали́тка; *ռզմգ.* *ամրոցի պատնէշի մէջ դռնակ, որից յարձակում են գործում.* вы́ла́зная ша́хта *լեռնգ.* *այն անցքը, որով բանուորները հանքի բովից դուրս են գալիս.* **-лазъ** *ա.* **1,** *պատի մէջ (ցածր կամ ծածուկ) ծակ, անց, որով դուրս են գալիս.* **2,** *Ռնգ.* *ազատ անցք, ճանապարհ։*

Вылакиро́вывать, -лакировать (-рую -ютъ) *ն.* *լաքայ քսել, լաքայով ծածկել։*

Выла́мываніе *չ.* **1,** *կոտրելով հանելը.* **2,** *կոտրելով տանելը, շահելը.* **3,** *խախտելը, դուրս գցելը (անդամի).* **-ла́мывать, -ломать, -ломять 1,** *կոտրելով, խորտակելով հանել, շորթել.* в. плиту́; в. ворота́; **2,** *կոտրելով շահել, ստանալ.* в. себѣ трость изъ бамбу́ковъ; **3,** *խախտել դուրս գցել (անդամի խաղը).* в. ру́ку, но́гу; **-ся 1,** *կր.* *կոտրուելով հանուիլ, շորթուիլ.* ка́мни выла́мываются ра́зными ору́діями; **2,** *անդր.* *կոտրուիլ, կոտրտուիլ, բրդուիլ.* зу́бья у гре́бня вы́ломились.

Выла́щиваніе *չ.* *փայլ տալը, պլպլացնելը.* **-ла́щивать, -лощить** *ն.* *փայլ տալ, փայլեցնել, պլպլացնել.* в. полотно́ стекло́мъ; в. рогъ хвощомъ; **-ся** *կր.* *պլպլացնուիլ, փայլ ստանալ.* крашени́на хорошо́ вы́лощилась.

Вы́лганный *բյ.* *ած.* *կեղծուպատիր ճանապարհներով ստացած, շահած.* в—ая во́тчина *անց.* *քսութեամբ ստացած հողաբաժին.* **-лгать** (-лгу -гутъ) *տ.* Вылыгать.

Вылега́ть, -лечь *չ.* *շուռ գալ, պառկել (արտի մասին).* **-лега́ться** *տ.* Вылёживаться 4; **-леглый** *ած.* *շուռ եկած, պառկած (արտ, խոտհարք)։*

Вы́легчить (-чу -чать) *տ.* Легчи́ть 3; **-лежалый** *ած.* *նստած, երկար ժամանակ մնացած [ուտելի և լաւացած կամ վատացած].* вы́лежалыя сига́ры вкусне́е и арома́тнѣе свѣжихъ; **-лежать** (-жу -жать) **1,** *չ.* *երկար ժամանակ պառկել, պառկած անցկացնել.* вы́лежалъ шесть недѣль въ горя́чкѣ; **2,** *ն.* *իրան համար նստած, ձեռքերը ծալած շահել, վաստակել.* онъ вы́лежалъ на боку́ награ́ду; **-ся** *տ.* Вылёживаться; **-лёживать** *ն.* *սկւ.* *զործծ.* *տ.* Вы́лежать 2; **-лёживаться, -лежаться** *անդր.* **1,** *երկար մնալուց համը, հոտը կամ գոյնը կորցնել, փչանալ.* **2.** *երկար մնալով հասունանալ, չորանալ, համ հոտ ձեռք բերել.* я́блоки, сига́ры должны́ в.; **3,** (*չարագրութեանց մասին*) *գրած, պատրաստ մի տը ժամանակ մնալ, նորից աչքի անցկացնելու համար.* **4,** *պառկած մնալով բոլորովին հանգստանալ, յոգնածութիւնը մոռանալ.* **5,** *վերստանալ իր նախկին գոյնը, երանգը.* голубо́е пла́тье вы́блекшее вы́лежалось.

Вы́лелѣять 1, *տ.* Лелѣять; **2,** *գրգելով, գգուելով սնուցանել, մեծացնել.* **-лестить** (-щу -стять), **ся** *տ.* Вылеща́ть, ся *և* Вылёщивать, ся.

Вылета́ніе *չ.* *դուրս թռչելը, դուրս փախչելը.* **-лета́ть, -летѣть** *չ.* *դուրս թռչել, դուրս փախչել.* пти́ца вы́летѣла изъ клѣтки, изъ-за куста́; *в. въ трубу́ *սնանկանալ, անանկանալ.* в. изъ головы́ *մտքից ընկնել.* вы́летѣло ядро́ изъ пу́шки; **-летъ** *ա.* **1,** *դուրս թռչելը.* в. молоды́хъ птицъ изъ гнѣзда; **2,** *թռիչք, թռչողութիւն.* ядро́ на в -ѣ *գնդակը վայր ընկնելու վրայ է.* на в. *տալով միջից անցած.* пу́ля прошла́ на в.; **-летѣть** (-лечу -тятъ) *տ.* Вылета́ть.

Вы́лечь (*անց.* вы́легъ, -гла, о) *տ.* Вылега́ть.

Вылеща́ть, -лестить *ն.* *շողոքորթելով կորզել, ստանալ.* онъ вы́лестилъ у меня рѣдкую моне́ту; **-ся** *կր.* *շողոքորթութեամբ կորզուիլ, ստացուիլ.* **-лёщиваніе** *չ.* *շողոքորթելով ստանալը, կորզելը.* **-лёщивать, ся** *տ.* Вылеща́ть, ся.

Выливаніе *չ.* **1,** *դուրս ածելը, դուրս թափելը.* **2,** *արւեստ.* *ձուլելը, ածելը.* в. распла́вленнаго мета́лла въ фо́рмы; **-лива́ть, -лить** *ն.* **1,** *դուրս ածել, դուրս թափել.* в. во́ду изъ бо́чки; *в. своё весе́лье въ звуки *իր ուրախութիւնը երգով, հնչիւններով արտայայտել.* **2,** *ձուլել, ածել.* в. ко́локолъ; пу́шку; **3,*** сусликовъ, хомяковъ — *բունը ջուր ածելով դուրս հանել, խրկել.* **-ся 1,** *անդր.* *դուրս թափուիլ, արտահոսիլ.* вино́ вы́лилось изъ буты́лки; рѣки выливаются изъ берего́въ; эти строки́ *вы́лились изъ души́ *այս տողերը հոգուց են բղխել.* **2,** *կր.* *ձուլուիլ, ածուիլ.* ко́локолъ хорошо́ вы́лился; **-ливка** *ի.* *ածելը, ձուլելը.* в. ста́ли въ фо́рмы.

Вы́лизанный *բյ.* *ած.* *լիզած, լիզելով հանած, մաքրած.* в. рису́нокъ *սրբուած, խնամք, անկենդան նկար.* **-ли́зываніе** *չ.* *լիզելը, լիզելով հանելը, մաքրելը.* **-ли́зывать, -лизать** *ն.* *լիզելով մաքրել, հանել.* в. таре́лку; в. соръ изъ гла́за; **-ся** *կր.* *լիզելով մաքրուիլ, հանուիլ.*

Выли́ниваніе *չ.* **1,** *կաշին կամ փետուրը փոխելը, ձգելը.* **2,** *խունանալը, գոյնը ձգելը.* **-ли́нивать, -линять** *չ.* **1,** *կաշին կամ փետուրը փոխել, ձգել. թափել (մազը, բուրդը, փետուրը).* **2,** *խունանալ, գոյնը ձգել, կորցնել.* ткань вы́линяла; **-линялый** *ած.* *ընկած, թափուած.* в—ые пе́рья; **2,** *խունացած, գոյնը ձգած.* в. воротни́къ.

Вы́литчикъ *ա.* *բանուոր մի թղթի գործարան-*

հեղուած. -литый բյ. ած. 1, ածած, ձուլած. 2.* խիստ նման. онъ—вылитый отецъ նա հայրն իսկն է, հօր քիթըն է թափել. -лить (-лью -ютъ), ся ա. Выливать, ся.

Вылицевать (-цую -ютъ) ն. 1, երեսը շինել, յօրինել. в. стѣну; 2, յղկել, կոկել, մաքրել. 3, շուռ տալ. в. платье.

Выловить (-влю -вятъ), ся ա. Вылавливать, ся.

Выложить (-жу -жатъ) ա. Выкладывать.

Вылокать ա. Локать.

Выломать, ся, -ломить (-млю -мятъ), ся ա. Выламывать, ся; -ломка ի. -ломъ ա. 1, դուրս հանելը, քանդելը. 2, կոտրելով, խորտակելով հանելը, շարժելը. 3, խախտելը, դուրս գցելը (անդամը):

Вылощить (-щу -щатъ), ся ա. Лощить, ся և Вылащивать, ся.

Вылудить (-жу -дятъ), ся ա. Лудить, ся և Вылуживать, ся; -лудка ի. -луживание ւ. կլայեկելը. -луживать, -лудить ն. անագել, կլայեկել "կլեկել". в. мѣдную посуду; -ся էր. կլայեկուիլ:

Вылукавить (-влю -вятъ) ն. խորամանկութեամբ ձեռք բերել, ստանալ, կորզել:

Вылупание ւ. կեղևից, բնից հանելը, կճպելը, կլպելը, մաքրելը. -лупать, -лупить ն. կեղևից, բնից հանել, կճպել, փռճկել, կլպել, մաքրել. "вылупить глаза ռմկ. աչքերը չռել, դուրս գցել. -ся անէր. 1, կեղևը, կճեպը գցել, ձուր գցել, կեղևից, բնից, պատեանից դուրս գալ. 2, ձուից դուրս գալ. цыплята вылупаются; 3, էր. կեղևից, պատեանից հանուիլ, փռճկուիլ, կճպուիլ, կլպուիլ. -лупить (-плю -пятъ), ся ա. Вылупать, ся և Вылуплять, ся; -лупка ի. 1, կեղևը, պատեանը ձգելը, կեղևից, պատեանից դուրս գալը. в. орѣховъ; в. цыплятъ ճուտերի ձուից դուրս գալը. -лупливание, -лупливать, ся, -луплять, ся ա. Вылупание, -пать, ся; -лупокъ, пка ա. հէնց նոր ձուից դուրս եկած ճտերը. կամկ. ժանիկ:

Вылущать, -лущить ն. 1, կճպել, կճեպը հանել, փռճկել. в. горохъ; 2, վիրբ. ասանձին երկանեալով խողից ոսկրը հանել. -ся 1, անէր. կճեպը, կեղևը ձգել, դուրս գալ, спѣлые орѣхи иногда сами собою вылущаются; 2, էր. կճպուիլ, փռճկուիլ, կլպուիլ. -(вы)лущение ւ. 1, կճեպը. կեղևը, պատիճը հանելը. 2, վիրբ. Luxatio, ոսկրախախտութիւն (աչքից). -лущивание ա. Вылущение; -лущивать, ся, -лущить (-щу -щатъ), ся ա. Вылущать, ся.

Вылыгание ւ. կեղծ ու պատիր ճանապարհով, քծնութեամբ շահելը, ստանալը. -лыгать, -лгать ն. Տզ. կեղծ ու պատիր ճանապարհով, քծնութեամբ ստանալ, շահել, ձեռք բերել. -лыганный ած. Տզ. կեղծ ու պատիր միջոցներով, խաբեբայութեամբ ստացած, շահած:

Вылысить (-шу -сятъ) ն. ճաղատ դարձնել. .. кому голову մէկի գլուխն ածիլել, սափրել. -ся անէր. 1, իւր գլուխն ածիլել, սափրել. 2, իւր գլխի մազերն յետ սանտրելով, գլխի ճաղատութիւնը ծածկել. -лысѣть ւ. ճաղատ դառնալ, գլխի մազերից զրկուիլ, հերատուիլ:

Выльюя ւ. բս. Ipomaea purpurea, ձագարածաղիկ (պատատուկներից):

Вылѣзание ւ. 1, դուրս գալը. 2, թափուիլը (մազերի). -лѣзать, -лѣзть ւ. 1, դուրս գալ, դուրս ելնել. в. изъ ямы; *вылѣзть въ люди կոնկ. մարդ դառնալ. 2, ընկնել, թափուիլ, "վայր գալ". волосы вылѣзаютъ послѣ горячки; весь мѣхъ вылѣзъ; -лѣзлый ած. թափուած (մազի, բրդի մասին). -лѣзть (-лѣзу -зутъ; անց. вылѣзъ, -зла, о) ա. Вылѣзать.

Вылѣпить (-плю -пятъ), ся ա. Вылѣплять, ся և Вылѣпливать, ся; -лѣпка ի. -лѣпливание ւ. կաղապարելը, շինելը, յօրինելը (մոմից, կաւից, գամբից ևն). -лѣпливать, -лѣпить ն. կաղապարել, ծեփելով շինել, յօրինել. в. изображение изъ глины, изъ воску; -ся 1, էր. կաղապարուիլ, շինուիլ, յօրինուիլ (մոմից, կաւից, գամբից ևն). 2,* անէր. աղտոտուիլ, կեղտոտուիլ, ապականուիլ. вылѣпился въ грязь, въ краску; -лѣплять, ся ա. Вылѣпливать, ся; -лѣпокъ, пка ա. մոմից, կաւից, գամբից ևն կաղապարած իր, պատկեր:

Вылѣчивание ւ. բուժելը, բժշկելը. -лѣчивать, -лѣчить ն. բուժել, բժշկել, առողջացնել. в. больного отъ лихорадки; -ся 1, անէր. բժշկուիլ, ապաքինուիլ, առողջանալ. онъ совершенно вылѣчился; *թողնել մոլորութիւնը, մոլութիւնը, դադարել, հեռանալ մոլորութիւնից, վատ սովորութիւնից. в. отъ любви դադարել սիրահարութիւնից. 2, էր. բժշկուիլ, ապաքինուիլ. -лѣчить (-чу -чатъ), ся ա. Лѣчить, ся և Вылѣчивать, ся; -лѣчка ի. բուժելը, բժշկելը. за в—у доктору заплачено.

Выляпать ն. 1, վատ, անճաշակ կերպով կաղապարել, յօրինել, շինել. 2,* ապանց ծածկելու, ապանց քաշուելու երեսն սալ, յայտնել:

Вымаживать, -мазживать, -мозжить ն. աշխատել ձեռք բերել, ժտել, աղաչել, պաղատել, տքնելով:

Вымазать (-жу -жутъ), ся ա. Вымазывать, ся; -мазка ի. -мазывание ւ. 1, զնդելը, ներկելը, ծեփելը. 2, եզելը, իւղ, ճարպ քսելը. -мазывать. -мазать ն. 1, զնդել, ներկել, ծեփել, քսել (գր.). в. кровлю краскою; 2, իւղ, ճարպ քսել, եզել, նաւթել. в. грудь козьимъ саломъ; 3, բոլոր գեղը, ներկը, իւղը սպառել. онъ вымазалъ цѣлую баклагу дегтя; 4,* մէկին սևցնել, մէկի բարի անունը բծաւորել, աղարտել, մէկի վարկը ձգել. в. грязью; -ся 1, անէր. զեղուիլ, ներկուիլ, շաղաղուիլ. 2, էր. զեղուիլ, ներկուիլ, ծեփուիլ. 3, էր. եզուիլ, նաւթուիլ:

Вымаиивать, -макать ն. 1, թաթախելով շինել, յօրինել, պատրաստել. сколько сегодня вымакалъ свѣчей? 2, թաթախելով սպառել. в. всѣ чернила; -маклачивать, -маклачить (-чу -чатъ) ն. խաբեբայութեամբ, աչքակապութեամբ ստանալ, շահել:

Вымалёвывание ւ. անճաշակ, անճաշակ կերպով ներկելը. -малёвывать, -малевать (-люю -ютъ) ն. անճաշակ, անճաշակ կերպով ներկել. ярко вымалевалъ свой заборъ; -ся էր. անճաշակ, անճաշակ կերպով ներկուիլ:

Вымаливание ւ. աղաչելով, պաղատելով ստանալը. -маливать, -молить ն. աղաչելով, պաղատելով ստանալ. насилу вымолилъ себѣ уголокъ: -ся էր. աղաչանքով, պաղատանքով ստացուիլ, ձեռքել. милостыня и слезами не всегда вымаливается.

Вымалывание ւ. 1, աղալը (որոշ չափով). 2, աղալով զատելը, վաստակելը. -малывать, -молоть ն. 1, աղալով որոշ չափ ալիւր ստանալ].

изъ осьми́ны ржи вы́мололъ полторы́ осьми́ны муки́; 2, *աղալով գտնել, վաստակել, աշխատել.* вы́мололъ въ су́тки полти́ну. 3, *ռմկ.* '*գուրս տալ', անզգուշաբար յայտնել.* вы́мололъ всю подного́тную; **-ся** 1, *անդբ. շատ աղալուց բռնանալ, փչանալ, մաշուիլ.* жерново́й ка́мень вы́мололся; 2, *կր. աղացուիլ.* на ме́льницѣ вы́малывается ежедне́вно 20 четверте́й ржи; изъ четверика́ ржи вы́малывается пудъ муки́ *մի չափ ցորենից հանւում է մի փութ ալիւր կամ գուրս գալիս։*

Вы|ма́никваніе *ը. խայծով և այլ խաբուսիկ միջոցներով հրապուրելով դուրս բերելը, գրաւելը.* 2. *շահելը, ստանալը (խորամանկութեամբ, շողոքորթելով).* **-ма́нивать, -манить** (-ню -нятъ) *ն.* 1, *խայծով և այլ խաբուսիկ միջոցներով հրապուրելով դուրս բերել, գրաւել.* в. медвѣ́дя изъ берло́ги; 2, *խորամանկութեամբ, խաբեբայութեամբ կամ շողոքորթելով կորզել, ստանալ, շահել.* вы́манилъ у него́ всѣ де́ньги; **-ся** *կր.* 1, *խորամանկութեամբ, հրապուրանքով դուրս բերուիլ.* 2, *խորամանկութեամբ, խաբեբայութեամբ կորզուիլ, ստացուիլ.* **-манка** *ի. տ.* Выма́ниваніе.

Вы́марать, ся *տ.* Вы́марывать, ся.

Вы|ма́риваніе *ը. սպանելը, կոտորելը, ջնջելը.* **սովալլուկ անելը.* **-ма́ривать, -морить** *ն.* 1, *ոչնչացնել, ջնջել, բնաջինջ անել, կոտորել, սպանել (սովով, ցրտով ևն).* осаждённыхъ вы́морили го́лодомъ *պաշարուածներին սովալլուկ, սովամահ արին.* в. тарака́новъ; 2,* *քաղցնել, վատ կերակրել, քաղցած թողնել.* **-ся** *կր. ջնջուիլ, բնաջինջ անուիլ, կոտորուիլ, սովալլուկ, սովամահ արուիլ։*

Вы|марка *ի.* **-ма́рываніе** *ը.* 1, *կեղտոտելը.* 2, *ջնջելը (գրածի).* **-ма́рывать, -марать** *ն.* 1, *կեղտոտել, աղտոտել.* в. пла́тье черни́лами; 2, *ջնջել, ոչնչացնել (գրածը).* в. статью́ изъ сочине́нія; **-ся** *անդբ. և կր. աղտոտուիլ, կեղտոտուիլ, աղտեղուիլ.* в. дёгтемъ.

Вы|ма́сливаніе *ը. իւղոտելը, կեղտոտելը.* **-ма́сливать, -маслить** (-лю -лятъ) *ն. իւղոտել, ճարպոտել, կեղտոտել.* в. пла́тье; **-ся** *անդբ. և կր. իւղոտուիլ, ճարպոտուիլ, կեղտոտուիլ.* онъ весь вы́маслился.

Вы|матерѣть, -маторѣть *ը. կատարելապէս հա-* [*սունանալ, արբունքի հասնել։*]

Вы|ма́тываніе *ը.* 1, *յետ կծկելը, կծկելով յետ անելը.* 2, *աշխատելով գտնելը, աշխատելը.* 3,* *հիմնալը, տեղեկանալը.* 4, *վաստակեցնելը, սպանելը.* 5, *վատնելը.* **-ма́тывать,** вы́мотать *ն.* 1, *յետ կծկել, կծկելով յետ անել, վերցնել.* 2, *յետ կծկելով գտնել, աշխատել.* 3,* *իմանալ, տեղեկանալ.* я изъ него́ всё вы́мотаю; 4,* *քշելով տանջել, վաստակեցնել, սպանել.* ло́шадь вы́мотана; онъ мнѣ всю ду́шу вы́моталъ *հոգիս հանեց նա.* 5, *վատնել.* онъ вы́моталъ всё своё имѣ́ніе; **-ся** *կր. յետ կծկուիլ, կծկուելով աշխատուիլ. իմացուիլ. տանջուիլ, չարչարուիլ, վատնուիլ։*

Вы|ма́хивать, -махать, -махнуть *ն.* 1, *թափ տալ, թափ տալով, թօթափելով դուրս հանել.* в. пыль изъ пла́тья; 2, *շատ շարժելուց թուլացնել, անկարացնել.* броса́я ка́мни, вы́махалъ ру́ку; го́лубь вы́махалъ кры́лья отъ до́лгаго лета́нія; **-ся** 1, *շատ շարժուելուց թուլանալ.* я до того́ маха́лъ, что у меня́ вы́махалась рука́; *ռմկ. պարզել, վաստակել, 'բէզարել'.* ло́шадь совсѣ́мъ вы́махалась; 2, *կր. թափ տրուիլ, թօթափուիլ. թուլացնուիլ։*

Вы|ма́чиваніе *ը.* 1, *թացելը, թրջելը.* 2, *թրջելը, թացելով փափկացնելը, պատրաստելը, չիլելը.* **-ма́чивать, -мочить** *ն.* 1, *թացել, թրջել.* дождь всего́ меня́ вы́мочилъ; 2, *թրջել, թացելով չիլել, պատրաստել (օր. աղային, կաշիները բաղադրութիւններ հեղուկներով). թացելով փափկացնել, կակղացնել.* в. ко́жи; в. коренну́ю ры́бу *տապակի պաժ ձուկը փորը ինչ աղանը, աղից մաքրել.* **-ся** 1, *անդբ. թրջուիլ, թացուիլ.* весь вы́мочился на дождѣ́; 2, *մեղել, չոել.* 3, *կր. պատրաստուիլ (թրջուելով), փափկանալ, կակղել.* солони́на хорошо́ вы́мочилась.

Вы|ма́щиваніе *ը. սալայատակելը, քարելը, խճելը, տախտակելը.* **-вать,** вы́мостить *ն. սալայատակել, քարել, խճել, տախտակել.* в. у́лицу торца́ми; в. доро́гу ка́мнемъ; **-ся** *կր. սալայատակուիլ, քարուիլ, խճուիլ, տախտակուիլ։*

Вымбо́вна *ի.* (*ծով.*) *ծովգ. լծակ, որով խարիսխաճան ճախարակը* (шпиль) *պտտեցնում են։*

Вы|межевать (-жую -ютъ), **ся** *տ.* Вымежёвывать, ся; **-межевка** *ի.* **-межёвываніе** *ը. հողաբաժինը մի կալուածքից կտրելը և միւսին կցելը.* **-межёвывать, -межевать** *ն. հողաբաժինը մի կալուածքից կտրելով միւսին տալ, միւսի հետ կցել.* в. зе́мли въ казённое вѣ́домство; **-ся** *կր. մի կալուածքից կտրուելով միւսի հետ կցուիլ* [*յայտնուիլ։*]

Вымелькнуть *ը. յանկարծ երևան գալ, երևալ,*

Вымелѣть *ը. բոլորովին բարեկել, նուազել, ծանծաղանալ* (*գետի, լճի մասին*)։

Вымену́ха *ի. բս.* Viola hirta, *կուշտաներկ մանուշակը։*

Вы́мереть (-мру -мрутъ; *անց.* вы́меръ -рла, о) *տ.* Вымира́ть.

Вы|мерза́ніе *ը.* 1, *սառչելը, սառուց կտրուելը.* 2, *ցրտատար լինելը.* **-мерза́ть, -мерзнуть** *ը.* 1, *սառչել, պաղել, սառուց կտրուել.* вода́ въ пру́дѣ вы́мерзла до дна; пи́во вы́мерзло; 2, *ցրտատար լինել.* въ жесто́кую зи́му вымерза́етъ мно́го дере́вьевъ; **-мерзлый** *ած.* 1, *սառած, սառուց կտրուած.* в—ое пи́во; 2, *ցրտատար, ցրտահար.* в. кустъ; **-мерзнуть** (-мерзъ. -зла. о) *տ.* Вымерза́ть.

Вы|мерлый *ած.* **-мершій** *բյ. ած. հանգած, մարած, անճետ եղած.* в. родъ.

Вы|мести (-мету -тутъ; *անց.* вы́мелъ, -ла. о). **-местись** *տ.* Выметать, ся.

Выместить (-щу -стятъ), **ся** *տ.* Вымеща́ть, ся.

Вы|мета́ніе *ը. աւլելը, աւլել քաշելով սրբելը, մաքրելը.* **-мета́ть, -мести** *ն. աւլել, աւել քաշելով սրբել, մաքրել.* в. соръ изъ поко́я; в. ко́мнату; **-метать** *տ.* Вымётывать; **-мета́ться, -местись** *կր. աւլուիլ, աւլով սրբուիլ, մաքրուիլ, դուրս ածուիլ.* соръ вымета́ется вонъ; **-метаться** *տ.* Вымётываться; **-метка** *ի.* 1, *տ.* Вымётываніе; 2, *շորի վերայ նաշխի, նկարի տեղը նշանակելը.* 3, *կաճակների ծակերի կամ շարի ե-վերջը կարելը.* 4, *հաշուելը, համարելը, 'գցելը'.* в. на счётахъ; 5, *տ.* Вы́мѣтка; **-метки** *տ. յ.* 1, *աւլուածք, աղբ, աւլով հաւաքած աղբ.* 2, *բշտիկներ, խոցեր, դուրս տուած տեղեր կաշուի վրայ.* **-метной** кряжъ *ուղիղ քշած, գիծուցկուն և ընտիր գերան.* **-метнуть, ся** *տ.* Вымёты-

вать, ся 1; **-метчикъ** ա. բանուոր մի թղթի գործարանում. **-метъ** ա. ալյած ցին ձգած բան. **-мётываніе** չ. 1, դուրս ածելը, դուրս թափելը. 2, կարելը. 3, հաշուելը. 4, դուրս տալը, յայտնուիլը. **-мётывать** ն. 1, (вы́метать, -тнуть) դուրս ածել, դուրս թափել, դուրս շպրտել. в. каме́нья изъ ба́рки; *в. ружьёмъ հրացանով այլ և այլ շարժումներ, այլ և այլ վարժութիւններ անել. 2, (вы́метать) կարել (կոճակներ, թելերի համար կարած անցքերը, զգեստի եզերքը ելն). в. пе́тли у пла́тья; 3, հաշուել, համարել, 'գցել'. в. на счётахъ; 4, չ. դէմք. 'դուրս տալ', երևալ, յայտնուիլ. у него́ вы́метало на лицѣ́ и на рука́хъ նորա երեսն և ձեռքերը դուրս են տուել. **-мётываться** 1, տ. Выбра́сываться 2; 2. (вы́метаться, -тнуться) 'վայր տալ', լակոտներ ձգել. су́ка вы́металась շանը 'վայր է տուել', լակոտներ է ձգել. 3, բացուիլ, դուրս գալ, ծաղկիլ. листо́чки уже́ вымётываются; 4, չք. դուրս ածուիլ, դուրս թափուիլ. 5.* չք. (вы́метаться) կարուիլ. пе́тли вымётываются.

Вы́мечко չ. 1, նւզ. տ. Вы́мя; 2, բս. Orchis maculata, բծաւոր խոլորձ։

Вымеща́ть, -местить ն. что на (въ) комъ-ли́бо վրէժխնդիր լինել, բարկութիւնը մէկի վերայ թափել. **-ся** չք. լուծուիլ (վրէժի մասին), թափուիլ մէկի վերայ (բարկութեան մասին)։

Выминáніе չ. 1, կակղացնելը, փափկացնելը. 2, կոխոտելը, տանտապ անելը. **-мина́ть**, -мять ն. 1, կակղացնել, փափկացնել (ճխլտելով, տրորելով). в. гли́ну, пеньку́, шку́ру; 2, տրորել, կոխոտել, տանտապ անել. ло́шади вы́мяли весь лугъ; **-ся** չք. տրորուիլ, շաղախուիլ. гли́на не ско́ро вымина́ется; **-минка** ի. տ. Выминáніе; вы́минки յ. տրորած, 'աղաղած' բանի մնացորդը։

Вымира́ніе չ. անճետ լինելը, հանգչելը, մարելը. **-мира́ть**, -мереть չ. անճետ լինել, ազգովին մեռնել, վերջանալ, մարել, հանգչել. въ э́томъ дому́ всѣ лю́ди вы́мерли; э́тотъ знамени́тый родъ совсѣ́мъ вы́меръ.

Вы́мистая ած. մեծ կրծով, կաթնաշատ. в. коро́ва; **-мище** յեն. տ. Вы́мя.

Вы́мкнуть տ. Вымыка́ть II.

Вы́мну տ. Вы́мнуть և Вы́мять; **-мнуть**, **-мѣть**, зав—, չ. ռմկ. կրծակալիլ, կուրծը կաթնով լցնել. коро́ва завы́мнѣла.

Вымога́ніе չ. զոռով կամ ժտելով կորզելը, ստանալը, կեղեքելը. **-мога́тель** ա. **-мога́тельница** ի. զոռով կամ ժտելով ստացող, կորզող այր, կին. կեղեքիչ. **-мога́тельство** չ. հարստահարութիւն, կեղեքում. **-мога́ть**, -мочь ն. что у кого́ զոռով կամ ժտելով, 'երես վայր բերելով' ըստանալ, կորզել, շորթել. в. согла́сіе, призна̀ніе; в. у кого́ де́ньги.

Вы́мозжить (-жу -жать) տ. Выма̀зживать.

Вы́моина ի. ջրի փոս։

Вымока́ніе չ. 1, թացուիլը, թրջուիլը, ջուր կտրելը. 2, թրմելը, թրջուելով ազատութիւնը, թթուութիւնը, կծուութիւնն ելն կորցնելը. **-мока́ть**, -мокнуть չ. 1, թացուիլ, թրջուիլ, ջուր կտրել. весь вы́мокъ отъ дождя́; 2, թրմիլ, թրջուած մնալով կորցնել ազատութիւնը, թթուութիւնը, կծուութիւնն ելն. солони́на вы́мокла; я́блоки вы́мокли; 3, թրջուելով կակղել, փափկանալ. лёнъ, пенька́ вы́мокли; 4, ջրից, թացութիւնից փտիլ, հատիլ, փչանալ, ոչնչանալ. о́зими э́тотъ годъ кой-гдѣ́ вы́мокли; **-мо́клый** ած. 1, թացուած, թրջուած, թրմած. 2, թրմելուց ազատուած, թթուութիւնը, կծուութիւնը կորցրած, կակղած, փափկացած. **-мокнуть** (անց. вы́мокъ, -кла, о) տ. Вымока́ть.

Вы́молачиваніе չ. կալ(լ)սելը. **-мола́чивать**, -молотить ն. 1, կալ(լ)սել. 2, կալ(լ)սելով դադել, աշխատել, վաստակել. **-ся** չք. կալ(լ)սուիլ։

Вы́молвить (-влю -вятъ) ն. ռմկ. 1, ասել, արտասանել. 2, պայմանաւորուելիս պահանջել. вы́молвилъ онъ пла́ту за тро́ихъ երեք մարդու վարձ, 'հախ', պահանջեց. **-моленецъ**, нца ա. **-моленка** ի. Աստծուց խնդրած, աղերսած զաւակ, ուստր, դուստր. **-молить** (-лю -лятъ), **ся** տ. Вымоля́ть, ся և Выма̀ливать, ся.

Вы́молотить (-чу -тятъ), **ся** տ. Вымола̀чивать, ся; **-молотка** ի. կալ(լ)սել պրծնելը. вы́молотки յ. 1, կալից մնացած աղբը, 'քղզար', մղեղը, խզուռը. 2, կալ(լ)սած հացահատիկի մի մասը, որ իբրև վարձատրութիւն տալիս են կալ(լ)սողին. **-молотъ** ա. 1, տ. Вы́молотка; 2, տ. Умоло́тъ; **-молоть** (-мелю -лютъ), **ся** տ. Выма́лывать, ся; **-молъ** ա. որոշ ժամանակամիջոցում կամ որոշ քանակութեամբ հացահատիկից աղացած ալիւրը. ско́лько у васъ в—а въ су́тки?

Вымоля́ть, ся տ. Выма́ливать, ся.

Вымора́живаніе չ. սառցնելը, սառցնելով մաքրելը. սառցնելով կոտորելը, ջնջելը. **-мора́живать**, -морозить ն. 1, սառցնել. в. вино́, пи́во; в. бѣльё ճերմակեղէնը ցուրտ ժամանակ դուրսը փռելով չորացնել. 2, ցրտի միջոցաւ մաքրել, ախտահանել. в. поко́и; 3, ցրտի միջոցաւ ջնջել, ոչնչացնել, կոտորել. в. тарака̀новъ въ поко́яхъ; **-ся** չք. 1, սառցնուիլ. 2, սառցնուելով մաքրուիլ, ախտահանուիլ. 3, կոտորուիլ, ջնջուիլ (ցրտի միջոցաւ)։

Вы́морить (-рю -рятъ), **ся** տ. Выма́ривать, ся.

Вы́морозить (-жу -зятъ), **ся** տ. Вымора́живать, ся; **-морозокъ** зка ա. ցրտատար, ցրտահար բոյս. вы́морозки յ. ոգելից ըմպելիքներ, որոնց ջրային մասերը սառել են, ուստի որանք աւելի ևս թնդացել են. ви́нные, пивны́е в.

Вы́мороченный ած. անժառանգ մնացած. в—ое имѣ́ніе; **-моръ** ա. մահացնելը, ոչնչելը, կոտորելը։

Вы́мостить (-щу -стятъ), **ся** տ. Выма̀щивать, ся; **-мостка** ի. քարելը, խճելը. տախտակելը. **-мотать, ся** տ. Выма́тывать, ся; **-мочить** (-чу -чатъ), **ся** տ. Выма́чивать, ся, **-мочка** ի. 1, տ. Выма̀чиваніе; 2, արտերի մէջ խոնաւութիւնից փչացած, փտած տեղ. на поля́хъ мно́го вы́мочекъ.

Вы́мочь (-могу -гутъ; անց. вы́могъ -гла, о) տ. Вымога́ть.

Вы́мою տ. Вы́мыть.

Вы́мпелфалъ ա. (հոլ.) ծովգ. վիմպելը բարձրացնելու, քաշելու պարան. **-пелъ** ա. (հոլ.) ծովգ. վիմպել (ժապաւէնաձև դրօշակ, որ ծովարշաւի սկզբում բարձրացնում, իսկ վերջում իջեցնում են). **-пельный** ած. վիմպելի, -լային։

Вымýдривать, **-мудрить** (-рю -рятъ), **-мудря́ть** ն. ռմկ. հնարիմացութեամբ կամ խորամանկութեամբ շահել, ստանալ, ձեռք բերել. յօգուտ իւր հնարել, հնարք գտնել։

Вы‖мура́вливать, **-муравить** (-влю -вятъ) ն. *նաշխել, փայլատներկել, զարդարել (կաւեղէնը)։*

Вы‖му́сливаніе գ. *Թքոտելը. Թացելով, Թրջելով կեղտոտելը.* **-му́сливать**, **-муслить** (-лю -лятъ) ն. *ռմկ.* **1**, *Թքոտել, փչնքոտել.* **2**, *Թացելով, Թրջելով աղտոտել, կեղտոտել.* смотри́, какъ ты вы́муслилъ свой сюрту́къ; **-ся** **1**, *անդր. Թքոտուել, փչնքոտուել.* оботри́ ребёнка; онъ весь вы́муслился; **2**, *Թաց բանով աղտոտուել, կեղտոտուել.* **3**, *չզ. Թքոտուել, փչնքոտուել, Թացուելով աղտոտուել, կեղտոտուել։*

Вы‖му́чиваніе գ. *զոռով, տանջելով շորթելը, կորզելը.* **-му́чивать**, **-мучить** (-чу -чатъ) ն. **1**, что изъ (у) кого *զոռով, բռնանալով, տանջելով կամ ազերսելով ստանալ, շորթել, կորզել, դուրս քաշել.* вы́мучилъ у нея согла̀сіе на бракъ; **2**, в. изъ себя́ сочине́ніе, мысль *մեծ ջանքով շարադրութիւն արտադրել, մի միտք ծնել.* **3**, кого́ *մէկին տանջել, մէկի հոգին հանել շարունակ խնդրելով, ազերսելով.* **-ся** *չզ. ստացուել, շորթուել, կորզուել (զոռով)։*

Вы́муштровать (-рую -руютъ) ն. *ռմկ. խստութեամբ կրթել, վարժել, հրահանգել։*

Вы́мчать (-мчу -мчатъ) ն. *արագապէս դուրս բերել, դուրս հանել, շորթել.* конь вы́мчалъ его́ изъ рѣки́; **-ся** *անդր. սլանալով դուրս գալ, դուրս Թռչել։*

Вы́мшить (-мшу -мшатъ), **ся** *տ.* Мши́ть, ся.

Вы‖мыва́ніе գ. **1**, *լուանալը.* **2**, *հեղեղելը, ողողելը, փորելը, քանդելը.* **-мыва́ть**, -мыть ն. **1**, *լուանալ.* в. бѣльё; в. го́лову, ру́ки; *вы́мыть кому́ го́лову *մէկին խստիւ յանդիմանել, «ներկել», շշպրել.* **2**, *հեղեղել, ողողել, փորել, քանդել.* наводне́ніемъ вы́мыло бе́регъ; **-ся** **1**, *անդր. լուացուել.* в. холо̀дною водо́ю; **2**, *չզ. ջրից դուրս գցուել, դուրս Թափուել. դուրս ածուել.* по берегу вымыва̀ются стари́нныя ве́щи; **-мывно́й** *ած. ջրից ողողուած, հեղեղուած, փորուած.* в. овра̀гъ; в. песо́къ.

Вы‖мыка́ніе գ. *կապանքի Թելերի անօսրացումը.* **-мыкать** ն. **I**. **1**, вы́мыка́ть ն. *կապանքի Թելերը անօսրացնել.* **2**. вы́мыкать го́ре *ցաւը, վիշտը, կսկիծը տանել, կրել.* **3**, գ. вы́мыкать по всѣму́ свѣ́ту *Թափառել, ամբողջ աշխարհը շրջել.* **II**. вымыка́ть, -мкнуть ն. *ականջից հանել (գինդերի մասին).* в. се́рьгу изъ у́ха; **-ся** *չզ. անօսրացնուել (կապանքի Թելերի մասին)։*

Вы‖мы́ливаніе գ. **1**, *սապնելը, օճառելը.* **2**, *քափ-քրտինք կտրեցնելը.* **-мы́ливать**, **-мылить** (-лю -лятъ) ն. **1**, *սապնել, օճառել.* в. бѣльё; **2**, (*ձիու մասին*) *քափ-քրտինք կտրեցնել, փրփրեցնել.* уси́льною ѣздо́ю вы́мылилъ лошаде́й; *в. кому го́лову *մէկին յանդիմանել, շշպրել, «ներկել».* **-ся** *չզ. սապնուել, օճառուել.* **-мылки**, ковъ *ա. յ.* և **-локъ** *ի. յ. սապնաջուր, սապնաջրի ականույք։*

Вы́‖мыселъ сла *տ.* Вы́мыслъ; **-мыслить** (-шлю -слятъ), **ся** *տ.* Вымышля́ть, ся; **-мыслъ** *ա. մտացածին, հնարովի բան, բարուրանք, կեղծիք։*

Вы́мыть (-мою -ютъ), **ся** *տ.* Вымыва́ть, ся.

Вы‖мышле́ніе գ. **1**, *հնարելը, գտնելը, ճարտարելը.* **2**, *յերիւրելը.* **-мышленникъ** *ա.* **1**, (**вы́мышленница** *ի.*) *հնարող, ճարտարող այր, կին.* **2**, *հնց. ճարտարագէտ.* **-мышля́ть**, -мыслить ն. **1**, *հնարել, ճարտարել, գտնել.* **2**, *յերիւրել. ստել, կեղծել.* **-ся** *չզ. հնարուել, յերիւրուել։*

Вы́мѣлить (-лю -лятъ) ն. *կաւճել, կաւճով բոլորտակայնել։*

Вы‖мѣ́ниваніе գ. *փոխելը.* **-мѣ́нивать**, **-мѣнять** (-ню -нятъ), -мѣнять ն. *փոխել.* в. о́бразъ, свѣчу́ *եկղ. սուրբ պատկեր, մոմ գնել.* **-ся** *չզ. փոխուել.* **-мѣнъ** *ա. փոխելը.* **-мѣня́ть, ся** *տ.* Вымѣ́нивать, ся.

Вы‖мѣ́риваніе գ. *չափելը.* **-мѣ́ривать**, -мѣрить ն. *չափել.* в. рожь, пшени́цу; в. по́ле; в. термо́метромъ температу́ру больно́го; **-ся** **1**. *չզ. չափուել.* глубина́ въ рѣка́хъ и моря́хъ вымѣ́ряется ло́томъ; **2**, *անդր. չափուել.* в. съ кѣмъ-нибу́дь ро́стомъ; **-мѣрить** (-рю -рятъ) ն. *տ.* Вымѣря́ть, ся և Вымѣ́ривать, ся; **-мѣронъ**, рка *ա. մնացորդ, չափելիս աւելորդ մնացածը.* в. по́ля, луга; **-мѣря́ть, ся** *տ.* Вымѣ́ривать, ся.

Вы́‖мѣсить (-шу -сятъ), **ся** *տ.* Вымѣ́шивать, ся I; **-мѣсна** *ի.* **-мѣсъ** *ա. հունցել տրծնելը։*

Вы́‖мѣтить (-чу -тятъ) *տ.* Вымѣча́ть; **-мѣтка** *ի. քաղուածք գրքից, ձեռագրից. ամփոփ. համառօտ հաշիւ.* **-мѣча́ть**, -мѣтить ն. **1**, *նշանագրել, վրան նշան դնել.* в. платки́; **2**, *քաղել, հանել (գրքից, ձեռագրից). Թերթի ափին գրել, նկատել։*

Вы́‖мѣшать, ся *տ.* Вымѣ́шивать, ся II; **-мѣ́шиваніе** գ. *հունցելը.* **-мѣ́шивать** ն. **I** вымѣ́шивать, -мѣсить ն. *հունցել.* **-ся** *չզ. հունցուել.* **II**. вымѣ́шивать, -мѣшать *խառնել, զանգել, շաղախել, Թրել.* в. пивно́й зато́ръ; **-ся** *չզ. խառնուել, զանգուել, շաղախուել, Թրուել.* и́звесть вымѣ́шивается съ песко́мъ.

Вы́мя, мени գ. *կուրծ.* соба́чье, су́чье в. *բժ. կանանց ստինքերում մի տեսակ ելունդներ.* **խոցեր.** в ы м е н а́, вы́менъ *յ. բս.* Potentilla intermedia *միջնային մատնունին (հկօրի, աղպատ)։*

Вы‖мягчить (-чу -чатъ), **ся** *տ.* Мягчи́ть, ся; **-мяклый** *ած. Թրմած, Թացելով կակղացրած, փափկացրած։*

Вы́мять (-мну -мнутъ; *անց.* вы́млъ -ла, о), **ся** *տ.* Вымина́ть, ся.

Вы‖на́шивальщикъ *ա. որս. բազէակիր, բազէներին և նման որսացողներին վարժեցնող.* **-на́шиваніе** գ. **1**, *դուրս տանելը, դուրս բերելը.* **2**, *մաշելը (շորի, ոտնամանի).* **-на́шивать** ն. **1**, *դուրս տանել, դուրս բերել (երեխան երեխան).* вспотѣ́вшаго ребёнка нерѣ́дко вына́шивали на хо́лодъ, и оттого́ простуди́ли; **2**, (вы́носить) *մաշել.* в. кафта́нъ, сапоги́; **3**, *քարշելով դուրս հանել, դուրս բերել.* ло́шади мои вына́шивали экипа́жъ и не изъ тако́й грязи,—и не на таку́ю го́ру; **4**, *որս. բազէներին և նման որսացողներին վարժեցնել, ընտելացնել որսի.* в. кре́чета, со́кола, я́стреба; **5**, *դիեցնել, խնամել, մեծացնել (մանկանց).* я у нихъ вына́шиваю пя́таго; **6**. в. въ утро́бѣ *արգանդում կրել.* **-на́шиваться**, -носи́ться **1**, *անդր. մաշուել, հնանալ.* сукно̀ вына̀шивается; **2**, *որս. վարժուել, ընտելանալ որսալու.* ло́вчія пти́цы вына́шиваются по заря́мъ; **3**, *չզ. դուրս տանուել, դուրս հանուել.* мѣха̀ вына́шиваются лѣ́томъ на во́здухъ.

Вы́‖нести, **-несть** (-су -сутъ; *անց.* вы́несъ -сла, -сло), **-нестись** *տ.* Выноси́ть ся.

Вы‖низать (-жу -жутъ), **ся** *տ.* Вынизывать, ся; **-низна** *ի.* **-ни́зываніе** գ. *յեռելը, շարելը.* **-ни́зывать**, -низать ն. *յեռել, շարել. ուլունքներ, մարգարիտներ շարելով զարդարել, մարգարտելուզել.*

в. жемчугомъ ризу на образъ; **-ся** չբ. *զարդարուիլ, մարգարտազարդուիլ*։

Вынике́ніе ը. *երևալը, յայտնուիլը*. **-никать, -никнуть** (*անց.* выникъ -кла, о) չ. *երևալ, յայտնուիլ*։

Выниманіе ը. *դուրս հանելը, դուրս քաշելը*. **-нимать**, -нять, -нуть ն. 1, *դուրս քաշել, դուրս հանել, վերցնել*. в. платье изъ сундука; в. занозу изъ ноги; 2, *բաց չափի կարել* (*ձևելիս*). в. воротъ въ рубахѣ *շապկի ճիտը կարել, հանել*. 3.* *բանել, ձերբակալել*. в. бѣглаго; *գրաւել, բանել*. в. изъ лавки контрабандные товары; вынуть изъ обращенія монету стараго чекана, кредитные билеты—*շրջանառութիւնից հանել, ձգել*. 4. *եկղ.* *հացի միջից օրհնած մասը* (*նշխարը*) *հանել, վերցնել յարգութեան կամ 'ի յիշատակ մէկի*. 5, в. жребій *վիճակ հանել*. **-ся** չբ. *դուրս քաշուիլ, դուրս հանուիլ*։

Выносить (-шу́ -сятъ), -нести, -несть ն. 1, *դուրս տանել, դուրս բերել*. в. пожитки изъ дому; *не в. изъ избы copy *տանը կատարուած շարիքը, վէճը ևն տնից դուրս չտանել, դուրսը չպատմել*. онъ вынесъ всё, что мы говорили *նա հրապարակ հանեց ամէնը, ինչ որ մենք խօսում էինք*. в. вердиктъ, приговоръ *իրւր.* *դատավճիռ, դատակնիք հանել, կայացնել*. раскричался, хоть святыхъ вонъ выноси! *սաստիկ կատաղաբար էր աղաղակում, գոռում*. 2,* *կրել, տանել, համբերել, հանդուրժել, դիմանալ. տոկալ*. в. болѣзнь, операцію; в. жаръ, холодъ; 3. *ծովգ.* *քամու առաջ քաշել, պարզել* (*առագաստը*). 4, *դուրս բերել, դուրս հանել* (*նեղ դրութիւնից*). лошади завязли было съ повозкою, но коренная вынесла *քիչ էր մնում, որ ձիաները սայլի հետ ցեխի մէջ թաղուէին, բայց միջնակ ձին դուրս հանեց*. десятка вынесла *Թղթխ.* *տասնոցը տարաւ*. 5, *ջրհղ.* *ափ հանել, դուրս գցել, դուրս նետել*. брёвна вынесло водою на берегъ; 6,* выносить голосомъ *ձայն քաշել, ձայն պահել*. 7, выносить на поля рукописи или книги примѣчанія или ссылки *ձեռագրի կամ գրքի ափերին նշանագրութիւններ, ծանօթութիւններ անել*։

Выносить (-шу -сятъ), **ся** т. Вынашивать, ся 2.

Выноситься (-ношу́сь -носятся), -нестися 1, *անդր.* *դուրս գալ, դուրս ելնել*. в. отъ пожару изъ дому: 2, չբ. *դուրս տարուիլ. դուրս բերուիլ, դուրս կրուիլ*. **-носка** ի. 1, *դուրս տանելը, դուրս հանելը*. 2, *նշանագրութիւն, ծանօթութիւն, դիտողութիւն* (*ձեռագրի տակ աստղանիշով կամ լուսանցքում*). **-носливый** ած. *տոկուն, դիմացկուն*. в—ая лошадь; **-носной**, -(вы)**носный** ած. 1, *դուրս բերելու ժամանակ գործածական*. в. подсвѣчникъ въ церкви; выносныя рѣчи *բամբասանքներ, զրպարտութիւններ*. выносный мѣхъ *տմուր, դիմացկուն մորթի*. выносной годъ *առատ տարի*. выносной мальчикъ *կամ* в ы н о с н о й, ого т. *կառքի առջև ձիու վերայ նստած երեխան*. в—ая лошадь *միմեանց յետևից լծած ձիաներից առաջինը*. 2, *առաջ գցած, առաջ քաշած*. в—ыя лошади *խնդանօթին լծած ձիաների առաջին զոյգը*. 3, *սարգարանող, մեկնական, բացատրական*. выносная статья; 4, в—ая бизань *ծովգ.* *պարիկ նաւերի յետևի մասում ժամանակաւոր կայմի վերայ առագաստ*. **-носокъ**, ска т. 1, *մաշած, հին շոր*. 2, *որս.* *վարժեցրած բազէ կամ այլ որսացող թռչուն*. 3, *այլանդակ, պոռտիկ հաւի ձու* (*որ հաւը դնում է ձուից կորսւելու ժամանակ*). **-носъ** т. 1, т. Выноска 1; продажа питей на в. *խմիչքների արտավաճառում*. бери въ гору на в. *աշխատիր մի շնչում սար բարձրանալ*. 2. *ննջեցեալի յուղարկաւորութիւնը տնից եկեղեցի*. быть на в—ѣ *յուղարկաւորութեանը ներկայ գտնուիլ*. 3, *միմեանց յետևից լծած ձիաների առաջին զոյգը*. запрячь на в. вороныхъ *սև ձիաներն առջևից լծել*. 4, *սահանք* (*մեք.* *ջրաղացի նաւի*). **-ношеніе** ը. *դուրս տանելը, դուրս հանելը, դուրս բերելը*. **-ношенный** ած. 1, *մաշուած*. в. плащъ; 2, *վարժեցրած*. в. соколъ.

Вынтараты ն. *հակառակ, ներհակ. 'թարս'.* «да и всё въ домѣ в. пошло».

Вынтрепъ т. Стень-вынтрепъ.

Вынуждать, -нудить (-жу -дятъ) ն. 1, кого *ստիպել, հարկադրել, բռնադատել*. 2, что у кого *կամ* отъ кого-либо *զոռով, ստիպմամբ մէկից մի բան, մի խօսք դուրս քաշել. մէկին մի բան տալ տալ*. в. у кого -либо обѣщаніе, согласіе; **-нужденіе** ը. *ստիպելը, հարկադրելը, բռնադատելը. ստիպմամբ ստանալը, դուրս քաշելը*։

Вынутіе ը. *դուրս քաշելը, դուրս հանելը*. **-нуть, ся** т. Вынимать, ся.

Выныривать -нырнуть չ. 1, *ջրից դուրս գալ, դուրս լողալ*. утка вынырнула изъ воды; 2,* *յանկարծ երևալ. յայտնուիլ, երևան գալ*. 3,* *ռմկ.* *նորից հրապարակ դուրս գալ, նորից ասպարէզում յայտնուիլ*. этотъ писака опять вынырнулъ: **-ныряніе** ը. 1, *ջրից դուրս գալը, դուրս լողալը*. 2,* *յանկարծ յայտնուիլը, երևալը. երևան գալը*. **-нырять** т. Выныривать.

Вынѣживаніе ը. *գրգելը, գգուելը. գրգելով, գգուելով մեծացնելը*. **-нѣживать, -нѣжить** (-жу жатъ) ն. *գրգել, գգուել. գրգելով, գգուելով մեծացնել*. в. дитя; **-ся** չբ. *գրգուիլ, գգուիլ, գգուելով, գրգուելով մեծանուիլ*։

Вынюхиваніе ը. *քաշելով սպառելը* (*քթախոտը*). **-нюхивать, -нюхать** ն. 1, *քաշելով սպառել, վերջացնել*. вынюхалъ цѣлую табакерку табаку; 2.* *հոտառութեամբ իմանալ, տեղեկանալ, հասկանալ, գլխի ընկնել*. онъ вынюхалъ всё, что было говорено у сосѣдей; вынюхалъ тайну по намёку: **-ся** չբ. *քաշուիլ, սպառուիլ* (*քթախոտի մասին*)։

Вынянчить, ся т. Нянчить, ся.

Вынятіе т. Вынутіе; **-нять, ся** т. Вынуть, ся.

Выорать (-рю -рютъ) ն. *սկւ. գործ.* 1, *վարել, հերկել պրծնել*. в. поле; 2, *վարելիս գտնել, հանել*. в. древнюю монету; 3, *վար անելով դատել, աշխատել*. выоралъ полтину; **-ся** 1, չբ. *սկւ. գործծ.* *վարուիլ, հերկուիլ վերջանալ*. 2, *անդր.* *վարը պրծնել*. мужики наши выорались.

Выострить (-рю -рятъ), **ся** т. Вывастривать, ся.

Выпаде́ніе ը. *վայր ընկնելը, վայր թափուելը, դուրս ընկնելը, դուրս թափուելը*. **-падать**, -пасть չ. 1, *վայր ընկնել, վայր թափուել. դուրս ընկնել, դուրս թափուել*. зубы, волосы выпадаютъ; выпали гвозди изъ шины; 2, *գալ, տեղալ* (*անձրևի, ձիւնի մասին*). выпало много снѣгу; 3, (*անասունների մասին*) *կոտորուիլ, սատկել, սատկոտել*. весь скотъ выпалъ; 4,* *պատահել*. у этого писателя выпадаютъ иногда счастливыя выраженія; на долю его выпало *նորան վիճակուեց*. -(вы)**паденіе** ը. **-падка** ի. т. Выпадъ; **-падокъ**, дка т. 1, *անսովոր.* *հիւանդութիւն մի*

ձիու սմբակի. նա պալար ձիու չէ քում. 2, *բժ.* Sequester, *ոսկրակերի ժամանակ ընկած ոսկրուկր.* 3, *հիւանդութիւն մի հնդկահաւի դատականում* (на кострецѣ); 4, *բս.* Achilllea millefolium, *հազարատերեւուկը.* -**падочная** трава *բս.* Aster amellus, *ծիրանեգոյն աստղածաղիկը և ուրիշ բոյսեր.* -**падъ** *ա.* 1. *արտաթափում, արտահոսում.* 2. *ա.* Выпаданіе; -**падываніе**, -**падывать** *ա.* Выпаданіе -дать.

Вы|пáживать, -**пазить** (-жу -зить) *ն.* *փորել, ակօսել.* в. столбъ, бáлку *սիւնի, գերանի վերայ ակօս փորել.* -**ся** *էր.* *փորուել. ակօսուել.* -**пазка** *է.* *փորելը, ակօսելը։*

Вы|паиваніе *չ.* I. *Ջրելը, Ջրելով սպառելը.* II. *զօդած տեղը (կապը) լուծելով հանելը.* -**пáивать** I. выпáивать, -поить *ն.* 1, *Ջրելով սպառել.* в. всё пóйло; 2, *Ջրել, Ջուր տալ, Ջուր խմցնել. կաթ տալ, դիեցնել.* в. телёнка; -**ся** *էր.* 1, *սպառուել (Ջրելիս).* 2, *Ջրուել. դիեցնուել.* II. выпáивать, -паять *ն.* *զօդը (կապը) լուծելով հանել.* -**ся** *էր.* *լուծուելով հանուել (զօդած բանի մասին)։*

Вы|пáлзываніе *չ.* *սողալով, սողոսկելով դուրս գալը.* -**пáлзывать**, -ползти, -ползть *չ.* 1, *սողալով, սողոսկելով դուրս գալ.* 2. *հազիւ հազ, դժուար, քարշ գալով դուրս գալ.* больнóй éле выползъ изъ кóмнаты; *онъ выползъ въ люди *նա կամաց կամաց մարդ դարձաւ.* 3, *անկանելի կերպով ընկնել. թափուել.* выползли вóлосы, брóви, рѣсницы.

Вы|пáливаніе *չ.* 1, *այրելը, խանձելը.* 2. *ձգելը, արձակելը. արտաքսելը (հրացանի, հրանոթի).* -**пáливать**, -**палить** (-лю -лить) *ն.* 1, *այրել, խանձել.* в. нѝву; 2, *ձգել, արձակել, արտաքսել (հրացանը, հրանօթը).* в. изъ пушки *թնդանօթ ձգել.* 3, *ռմկ.* *յանկարծ, միանգամից ասել.* выпалилъ всё, что на душѣ было: -**палка** *է.* 1, *ա.* Выпáливаніе; 2, *հրացանի, հրազէնի արձակումը, արտաքսը.* 3, *ռմկ.** *խիստ յանդիմանութիւն, նախատինք.* задáть комý в—у *մէկին խստիւ յանդիմանել, նախատել.* -**палъ** *ա.* *հրացանի, հրազէնի արձակումը, արտաքսը։*

Вы|пáлываніе *չ.* *քաղհանելը, քաղհան տալը.* -**пáлывать**, -полоть *ն.* *քաղհանել, քաղհան տալ.* в. гряду; -**ся** I, *անդ.* *քաղհանել պրծնելը.* мы выпололись: 2, *էր.* *քաղհանուել։*

Вы|пáриваніе *չ.* 1, *գոլորշու միջոցաւ մաքրելը.* в. лѣса *փայտը Ջրի մէջ եփելով կակղացնելը.* в. жидкости; 2. *եփելը, գոլորշիացնելով խտացնելը.* 3, *գոլորշիով, բուղով լոգացնելը.* -**пáривательный** *ած.* *եփելու, գոլորշիով մաքրելու, պատրաստելու.* в—ая чáша; -**пáривать**, -**парить** (-рю -рить) *ն.* 1, *եփելով, գոլորշու միջոցաւ վատ հոտը, ծծերը հանել, մաքրել, գոլել.* в. бóчку *բուղի միջոցաւ տակառի վատ հոտը հեռացնել.* в. бѣльё; 2, *բժ.* *եփելով, գոլորշիացնելով թանձրացնել, խտացնել.* в. растворъ до густоты сирóпа; 3. *գոլորշիով, բուղով լոգացնել (սաստկան բաղանիքում).* онъ всѣхъ выпарилъ въ бáнѣ; -**ся** I. *անդ.* *լոգանալ (գոլորշիով, բաղանիքում).* 2, *էր.* *մաքրուել, գոլել (գոլորշու միջոցաւ). եփուել, խտացնուել (գոլորշիացնուելով).* -**парка** *է.* *ա.* Выпáриваніе; -**парный** *ած.* *գոլորշիացնելու.* в. котёлъ.

Вы|пáрхиваніе *չ.* *դուրս թռչելը, դուրս գալով սաւառնելը, ճախրելը.* -**пáрхивать**, -порхнуть *ն.* *դուրս թռչել, դուրս գալով սաւառնել, ճախրել։*

Вы|пáрываніе *չ.* *կարը քանդելով հանելը.* -**пáрывать**, -пороть *ն.* 1, *կարը քանդելով հանել.* в. клиньья, подкладку изъ плáтья; 2, в. черéва *փորոտիքը դուրս ածել.* 3,* вы́пороть когó *ռմկ.* *մէկին խիստ ծեծել, թակել, քօթակել.* -**ся** 1, *անդ.* *վայր ընկնել (կարը քանդուելուց).* выпоролся кармáнъ; 2, *էր.* *հանուել (կարը քանդելով), դուրս ածուել (փորոտիքի մասին)։*

Вы|пасáть, ся *ա.* Выпáсывать, ся; -**паска** *է.* *ա.* Выпáсываніе; отдáть степь подъ в—у *արօտատեղը արածացնելու տալ.* -**пасти** (-пасу -сутъ; *անց.* вы́пасъ -сла, о) *ա.* Выпáсывать.

Вы́пасть (-паду -дутъ; *անց.* вы́палъ -ла, о) *ա.* Выпадáть.

Вы́|пасъ *ա.* *արածացնելը.* отдáть лугá подъ в.; -**пáсываніе** *չ.* *արածացնելը.* -**пáсывать**, -пасти *ն.* 1, *տասարարածութեամբ դրամ վաստակել, աշխատել.* городскóй пастýхъ выпáсываетъ въ лѣто до ста рублéй; 2, *արածացնել.* в. скотъ; в. лугá; -**пáсываться** *էր.* *արածացնուել։*

Вы́|пахать (-пашу -шутъ), **ся** *ա.* Выпáхивать, ся; -**пáхиваніе** *չ.* *վարելը, հերկելը.* -**пáхивать**, -пахать *ն.* 1, *վարել, հերկել, գործել, մշակել (հողը).* 2, *վարելով դադել, աշխատել.* 3, *հողը չարունակ վարելով ուժասպառ դարձնել, հալից գցել.* 4, *վարելիս մի բան հանել, դուրս գցել.* вы́пахалъ кладъ, кáмни; 5, *հւս.* *ավլել, սրբել, մաքրել.* вы́паши избý: -**ся** 1, *անդ.* (*հողի մասին*) *ուժասպառուել. հալից ընկնել.* пóле вы́пахалось: 2, *էր.* *վարուել, հերկուել, մշակուել։*

Вы́пачкать, ся *ա.* Пáчкать, ся.

Вы́|пашка *է.* *վարելը, հերկելը.* -**пашъ** *ա.* *հողի ուժասպառութիւնը (չարունակ վարելուց).* -**пашь** *է.* *ուժասպառուած վարելահող. խամացած, պըղծուած վարելահող։*

Вы́паять, ся *ա.* Выпáивать, ся II.

Вы|пекáніе *չ.* 1, *թխելը, եփելը (հացը).* 2, *որոշ քանակութեամբ թխելը.* -**пекáть**, -печь *ն.* 1, *թխել, եփել (հաց).* 2, *որոշ քանակութեամբ թխել.* -**ся** *անդ.* *թխուել.* хлѣбы вы́пеклись: -**пекъ** *ա.* 1, *ա.* Выпекáніе; 2, *թխած հացի քանակութիւնը.* в. хлѣба; спóрая мукá даётъ бóлѣе в—а.

Вы|перéживаніе *չ.* *վազելիս, գնալիս մէկի առաջը կտրելը, մէկին յաղթելը.* -**перéживать**, -**перéдить** (-жу -дить) *ն.* *վազելիս, գնալիս մէկի առաջը կտրել, մէկին յաղթել.* онъ вы́передилъ его на бѣгý.

Вы́переть (-пру -прутъ), **ся** *ա.* Выпирáть. ся.

Вы́пестрить (-рю -рить) *ա.* Пестрить.

Вы|печатать, ся *ա.* Выпечáтывать, ся; -**печатка** *է.* -**печáтываніе** *չ.* *տպելը. արտատպելը.* -**печáтывать**, -печатать *ն.* *տպել. դրոշմել. արտատպել.* в. картѝну; -**ся** 1, *անդ.* *մաշուել. սըրբուել (մամուլի տակ յաճախ գործածուելուց).* бýквы вы́печатались; доскá вы́печаталась; 2, *էր.* *տպուել. արտատպուել.* бýквы чѝсто вы́печатались.

Вы́|печка *է.* *թխելը, որոշ քանակութեամբ թխել պրծնելը.* -**печь** (-пеку -печешь -пекутъ; *անց.* вы́пекъ -кла. о), **ся** *ա.* Выпекáть. ся.

Вы|пивáла *ա.* *ռմկ.* *խմող, հարբող, «կենծող».* -**пивáніе** *չ.* 1, *խմել պրծնելը.* 2. *խմելը, հարբելը, «կենծելը».* -**пивáть**, -пить *ն.* 1. *խմել, քամել, պարպել.* в. стакáнъ пива;

2, *խմել, հարբել, ՙգինեմոլ՚*. онъ выпиваетъ; -ся *չէզ. խմուել*. в. изъ ума *շատ խմելուց, հարբեցողութիւնից խելքը կորցնել*. -пивка *է*. 1, *խմել պրծնելը. հարբելը, ՙգինեմոլ՚*. 2, *չափ, քանակութիւն մի անգամից խմելու (ըմպանակ, բաժակ, գաւ ևն)*. заработалъ только на одну в—у; 3, *կերուխում, քէֆ*. устроить в—у; пойти на в—у.

Выпиливаніе *չ*. 1, *սղոցելով չինելը, յօրինելը*. 2, *սղոցելու վարժանքը*. 3, *սղոցելով վաստակելը, աշխատանքը*. -пиливать, -пилить (-лю -лятъ) *ն*. 1, *սղոցելով չինել, յօրինել*. в. доски, узоры; 2, *սղոցելու, վարժ անել, վարժացնել*. 3, *սղոցելով, սղոց քաշելով աշխատել, վաստակել*. онъ выпилилъ въ лѣто довольно много денегъ; -ся 1. *անդր. մաշուել, փչանալ, բթանալ (շատ գործածութիւնից)*. пила выпилилась; 2, *էզ. սղոցուել, սղոցուելով չինուել, յօրինուել*. -пилка *է*. 1, *սղոցելը, սղոցելով չինելը, յօրինելը*. 2, *սղոցած տեղ, ծակ*. 3, *սղոցուածք*:

Выпираніе *չ*. *դուրս հանելը, չարթելը, դուրս գցելը*. -пирать, -переть *ն*. *դուրս հանել, դուրս գցել. դուրս չարթել, չարթել*. льдомъ выперло сваю; выперло дно у бочки *տակառի յատակը դուրս է պրծել*. *выперли изъ службы *ռմկ. պաշտօնից վանել, արտաքսել են*. -ся 1, *անդր. իր տեղից դուրս գալ, դուրս պրծնել*. доска выперлась; 2, *էզ. հանուել, դուրս գցուել, դուրս չարթուել*:

Выписать (-шу -шутъ), ся *տ*. Выписывать, ся; -писка *է*. 1, *պատուիրելը, պարպրելը*. в. товаровъ; 2, *քաղուածք, բանաքաղութիւն, արտագրութիւն*. дѣлать в—и изъ лѣтописей; составить в—у изъ судебнаго дѣла; 3, *ապաքինուած հիւանդների արձակումը հիւանդանոցից*. в. больныхъ изъ лазарета; эти больные уже на в—ѣ *այս հիւանդները արդէն արձակուելու վրայ են*. -пискной *ած*. 1, *պարպրելով ստացուած, պարպրած*. в—ые товары; 2, *քաղած, քաղուած*. -писочка *է*. *Նւզ. Թիէթէ քաղուածք, բանաքաղութիւն*. -писчикъ *ա*. *բանաքաղ, քաղուածքներ անող*. -писываніе *չ*. 1, *արտագրելը, դուրս գրելը, քաղելը*. 2, *պարպրելը, պատուիրելը*. -писывать, -писать *ն*. 1, *արտագրել, դուրս գրել. քաղել, քաղուածք, բանաքաղութիւն անել. քաղուածօրէն արտագրել, մէջբերել*. в. лучшія мѣста изъ Гомера; в. содержаніе книги, дѣла; 2, *պատուիրել, պարպրել*. в. иностранныя книги; 3,* *արձակել, արտաքսել, վանել*. в. учениковъ за неуспѣшностію изъ училища; в. больныхъ изъ госпиталя *արդէն ապաքինուած հիւանդներին հիւանդանոցից արձակել*. 4, *լիովին, ամբողջովին արտագրել, դուրս գրել*. в. полный титулъ, в. всѣ званія какого-нибудь лица; -ся 1, *անդր. դուրս գալ, արձակուել*. в. изъ крестьянства, изъ купечества; выписался изъ больницы; 2,* *բնիկել, գրելու տաղանդից, բնութեանցութիւնից զրկուել*. этотъ драматическій писатель на старости лѣтъ выписался; 3,* *ձեռքը փչացնել, սխալ վատ գրել*. 4,* *ձեռքը լաւացնել, սխալ գեղեցիկ գրել*. 5, *էզ. արտագրուել, քաղուել. պատուիրուել, պարպրուել*. -пись *է*. 1, *բնօրինակութիւն, պատճէն գործք*. 2, *ռմկ. քաղուածք, բանաքաղութիւն*:

Выпить (-пью -пьютъ), ся *տ*. Выпивать, ся.

Выпихать, ся *տ*. Выпихивать, ся; -пихиваніе *չ*. *դուրս գցելը, արտաքսելը, վանելը*. -пихивать, -пихать, -пихнуть *ն*. 1, *դուրս գցել, արտաքսել, վանել, խրկել*. в. изъ комнаты; 2,* *պաշտօնից արտաքսել, դուրս գցել*. -ся *էզ. դուրս գցուել, արտաքսուել, վանուել*: [Կր:

Выплавикъ *ա*. *բս*. Polyporus. *արեւթեմի, լուցա*-

Выплавить (-влю -вятъ), ся *տ*. Выплавливать, ся, -плавка *է*. 1, *հալելը*. в. металловъ *հանքանիւթերից հալեցի միջոցաւ մետաղներ ստանալը*. 2, *հալուելէն ստացած մետաղը, ձուլած առարկան*. -плавливаніе *չ*. *հալելը*. -плавливать, -плавить, -плавлять *ն*. *հալել, հալելով մաքրել, զտել (մետաղը հանածոյից)*. -ся *էզ. հալուել, հալուելով մաքրուել*. -плавной *ած*. *հալած, ձուլածոյ*. -плавокъ, вка *ա*. 1, *հալուելից ստացած մետաղը*. 2, *պղպջաւոր ծակի բնի ստորին մասից (պատուաստած ակերից նետքի) քլած ճիւղը*. 3, *անկենդ ձու*. -плавъ *ա*. *հալելը, հալելով մաքրելը, զտելը*. в. металла.

Выплакать (-чу -чутъ) *ն*. 1, *լալով, աղաչելով ստանալ, ձեռք, ակրաել*. в. пособіе; 2, *լալով փչացնել*. в. глаза; в. своё горе *լալով իր վիշտը մոռանալ կամ ամոքել*. -ся *անդր*. 1, *լալուց փչանալ, բթանալ, խաւարել*. выплакались ясныя очи; 2, *զայրաթլ լալուց*:

Вы|пластывать, -пластать *ն*. *շերտ շերտ բաժանել, կտրատել*. в. рыбу *ձուկը միջից (բստ երկարութեան) կտրել, երկու մասի բաժանել*. в. железо *երկաթից թերթեր քաշել*:

Выплата *տ*. Уплата; заказывать платье на в—у *շոր պատուիրել զինը մաս մաս վճարելու պայմանով*. -платить (-чу -тятъ), ся *տ*. Выплачивать, ся; -плачиваніе *չ*. I. *վճարելը, հատուցանելը*. II, *կարկատելը, կարկատան զցելը*. -плачивать, -платить *ն*. I. *վճարել, հատուցանել (պարտքը, մաս մաս կամ միանուագ)*. II. *կարկատել, կարկատան զցել շորի վերայ*. в. сюртукъ; -плачиваться, -платиться 1, *անդր. պարտքը վճարել, հատուցանել պրծնել, պարտքից ազատուել*. отъ большого долга не скоро можно в.; 2, *էզ. վճարուել, հատուցանուել*. -плачу *տ*. Выплакать *և* Выплатить.

Вы|плащиваніе *չ*. *տափակացնելը, տափակ քաշելը (մետաղը)*. -плащивать, -площить *ն*. *տափակացնել, տափակ քաշել (մետաղը)*. -ся *էզ. տափակացնուել, տափակ քաշուել (մետաղի մասին)*:

Выплевать (-плюю -ютъ), ся *տ*. Выплёвывать, ся; -плевокъ, вка *ա*. *մրանգամից թքածը*. -плёвываніе *չ*. *թքելը, դուրս թքելը*. -плёвывать, -плевать, -плюнуть *ն*. *թքել, դուրս թքել, ժայթքել բերանից*. в. косточку; -ся *էզ. թքուել, դուրս թքուել, ժայթքուել*. густая мокрота нелегко выплёвывается.

Вы|плескать (-щу -щутъ), ся *տ*. Выплёскивать, ся; -плесни *ա. յ*. *դուրս ցայտած, դուրս թափած, դուրս ածած բան*. -плёскиваніе *չ*. *դուրս ցայտեցնելը, դուրս թափելը, դուրս ածելը*. -плёскивать, -плескать. -плеснуть *ն*. *դուրս ցայտեցնել, դուրս թափել, դուրս ածել*. -ся *անդր. և էզ. դուրս թափուել, դուրս ցայտել, դուրս ածուել (ճօճուելուց)*. изъ ведра выплескалось много воды.

Вы|плести, -плесть (-ту -тутъ; *անց*. выплелъ, а о), ся *տ*. Выплетать, ся; -плетаніе *չ*. 1, *հանելը, լուծելը (հիւսածը քանդելով)*. 2, *հիւսելը, հիւսելով չինելը, յօրինելը*. -плетать, -плести,

Доминúровать (-рую -ютъ) չ. (ֆր.) իշխել, գերիշխել. доминúрующее положéніе ռզմ. գերիշխող դրութիւն (Թշնամու վերայ)։

Доминó ա. անհ. (լտ.) դոմինօ. 1, դիմակահանդէսային երկար զգեստ, վերարկու. 2, նա, որ այս զգեստը հագել է. 3, (доминó կմ доминó-лотó) դոմինօ (խաղ մի)։

Домирáть չ. մեղւբ. հանգչել, մարել. «домирáющій, обезмáточившійся ýлей».

Домúшечко չ. փոքր. ռմկ. տնակ. **-мúшко** ա. Նւաստ. ողորմելի տուն. **-мúще** ա. յւեղ. մի ահագին, վիթխարի տուն։

Домкнýть ա. Домыкáть.

Домкрáтъ ա. (հոլ.) հանդբերձանք (снарядъ), որով ծանրութիւններ են բարձրացնում, մեւզ. որով տները բարձրացնելով իջնում (տեղաւորում) են։

Дóмна է. մեծ հնոց, հալոց, որով երկաթի հանածոյից Թուջ են ստանում. **-мница** է. Նւզ. պստիկ հալոց, հնոց, որով հանածոյից երկաթ [են ստանում։

Домнý, -мнýть ա. Домя́ть.

Домоблюститель ա. եկղ. տնտղան, տնտես։

Домовúкъ, á ա. ռմկ. տ. Домовóй.

Домовúна է. ռմկ. կոճղից շինած (փորած) դագաղ, նաւ։

Домовúтость է. տնտեսութիւն, տնտեսասիրութիւն. անխնայութիւն. **-вúтый** ած. տնտեսէր, տնտեսասէր, տնտես. ունեւոր. домовúтые, ыхъ յ. հոգ. փեսայի ծնողները. **-вúще** չ. 1, Նոց. կլքուած, բնակավայր. 2, ռմկ. դագաղ, նաւ.

Домовладúна ա. տուն, գերդաստանի գլուխը, ծնողները. **-владѣлецъ, льца** ա. տան տէր. **-владѣлица** է. տան տիրուհի. **-владѣльческій** ած. տան տիրոջ։

Домовникъ, á ա. **-вница** է. սկւ. զործծկ. ուրիշների բացակայութեան ժամանակ տանը կեցող, տնպահ, տանը նստելու սիրահար այր, կին. **-(в)óдка** չ. 1, տանտիկին. 2, ռմկ. մի և է տարբեր կերակուր պատրաստելու համար հարկանի կանչուած կինարմատ. 3, ա. Домовóдка.

Домовóдчанье չ. տնպահութիւն անելը. **-вóдить** չ. միշտ տանը նստել, տնպահութիւն անելը, տանը պահել. **-вóдство** չ. տնպահութիւն, տնտեսութիւն. տան կառավարութիւնը. **-вóдъ** ա. տան տէր, տնտես, տան կառավարիչ. **-вóдка** է. տանտիրուհի, տանտիկին, տան տիրուհի։

До|мовóй ած. տ. Домóвый; д. рукáвъ փողոցի մեծ խողովակից տանը ջուր մատակարարող խողովակը. домовóй, óго ա. տնային, տնաբնակ ոգի, «փէրի» (ըստ ժողովրդ. հաւատալեաց). домовáя, óй է. կերակուր եփող կինարմատ (գիւղական անունով). **-мóвый** ած. տնային, ընտանեկան, տանու. տանը, տան մօտ գտնուող. д—ая цéрковь, д. священникъ.

Домо|гáтельство չ. 1, Թեկնածութիւն. միտում, ձգտում, նկրտում. 2, Թախանձագին խնդիր. **-гáться** չ. 1, (чегó) Թեկնածել. ձգտել, նկրտել ձեռք բերելու. д. мѣста; 2, Թախանձել։

Домо|дѣланный, -дѣльный ած. տանը շինած, տանը պատրաստած. д—ая колáска, — одéжда; **-дѣльщина** է. տանը շինած, պատրաստած, կտաւ, [կտորիս, տնական իրեր։

Домóй Տ. տ. Домъ.

До|мокáніе չ. բոլորովին Թրջուելը, Թրմուելը. **-мокáть, -мóкнуть** (անց. домóкъ -кла, о) չ. բոլորովին Թրջուել, Թրմուել. я́блоки домокáютъ.

Домóкъ, мкá Նւզ. ա. Дóмикъ; жить своúмъ домкóмъ տնուորել։

Домо|лáчиваніе չ. կա(լ)սել պրծնելը. **-лáчивать, -лотúть** ն. կա(լ)սել պրծնել. **-ся** եր. կա(լ)սուել վերջանալ։

Домóлвить (-влю -вятъ) ն. ասել պրծնել։

До|молотúть (-лочý -лóтятъ), **ся** ա. Домолáчивать, ся; **-молóтка** է. կալը վերջացնելը, կա(լ)սել պրծնելը. **-молóтный** ած. կալավերջի տօնի, ուրախութեան. **-молóтъ** ա. կալավերջին սարքած տօնը, ուրախութիւնը. **-молóть** (-мелю́ -мéлютъ), **ся** ա. Домáлывать, ся.

Домолчáться (-лчýсь -лчáтся) չ. до чегó այնքան լռել, լռութիւն պահպանել, որ անհամբերութեան, անախորժութեան հանդիպել։

Домóлъ ա. աղացած աղուն։

Домопра|вúтель ա. **-вúтельница** է. տան կառավարիչ, -վարչուհի, տանտէր, տանտիկին, տնային գործերի յանձնաձիչ. **-вúтельство, -влéніе** չ. տնավարութիւն. տան կառավարութիւն, տնտեսութիւն, տանտիկնութիւն։

Доморúть (-рю́ -мóрятъ) ն. սովամահ անել. խիստ երկար քաղցած պահել. շատ երկար սպասել տալ։

Домо|рóстокъ, стка ա. տանը մեծացած, ընդոծին, ձեռնասուն. **-рóщенна** Հոք. տանը մեծացած, ձեռնասուն կենդանի. **-рóщенный** ած. 1, տնաբոյծ, տանը ծնած, բուծած (կենդանի). д—ыя ýтки; 2,* հասարակ, ոչ պատուական, ոչ ընտիր, արժան. д—ая мýзыка.

Домо|сúдчивый ած. տնանիստ, որ հակուած է տանը նստելու կամ որը նստատում է տանը նստելու. д—ое занятіе.

Домо|стúть (-щý -стя́тъ), **ся** ա. Домáщивать, ся, **-стка** է. խճել պրծնելը, քարել պրծնելը։

Домо|стрóитель ա. **-стрóительница** է. Նոց. տնտես, -ուհի, տանտէր, տան տիկին. **-стрóительный** ած. տնտեսութեան. **-стрóительство** չ. 1, տնտեսութիւն. 2, աստուածային տնտեսութիւն, նախախնամութիւն. **-стрóй** ա. տնտեսութիւն. տնօրէնութիւն (XVI. դարու յայտնի շարադրութեան վերտառութիւնը)։

Домо|сѣдка է. միշտ տանը նստող, նստակեաց կինարմատ. **-сѣдничать** չ. միշտ տանը նստել, տանից դուրս չգնալ. **-сѣдный** ած. միշտ տանը նստող, նստակեաց. նստակեցութեան. **-сѣдство** չ. միշտ տանը նստելը, մնալու էր, սովորութիւն,

հակում. նստակեցութիւն. **-сѣдъ** ա. միշտ տանը նստող, նստակեաց մարդ. онъ большой д.

Домотать, ся տ. Доматывать, ся.

Домо|тканина ի. տանը գործած կտաւ, հաստ բրդէ քաթան. **-тканный** ած. տանը գործած, պատրաստած. **-устройство** չ. օրինաւոր, պատշաճաւոր տնտեսութիւն. **-хозяинъ** ա. (յ. домохозяева, -зяевъ) 1, (**домохозяйка** ի.) տ. Домовладѣлецъ, -дѣлица; 2, տան տէրը, կառավարիչը։

Домочадецъ, дца ա. տանը սնուցած և դաստիարակուած, ձեռնասուն, ընդոծին. եւ տանու [ծառայ։

Домочекъ, чка նվզ. տ. Домокъ.

До|мочить (-мочу -мочатъ), **ся** տ. Домачивать, ся.

До|мошенничать չ. այնքան սրիկայութիւն, խաբեբայութիւն անել, որ. **-мою** տ. Домыть.

Дом|ра ի. (Թուրք.) հնց. գոմաս, տափական բալալայկա. **-рачей** ա. հմուտ տրքունի գոմահար (XVI. դարում)։

Домудрствовать (-ствую -ютъ) չ. այնքան իմաստակութիւն անել, խելքին զօռ տալ, որ։

До|мучивать, -мучить (-чу -чатъ) այնքան չարչարել, տանջել, որ. հոգին հանել. **-ся** անդր. և չզ. խիստ չարչարուել, տանջուել, նահատակուել։

Домчать (-мчу -мчатъ) ն. արագ տանել, հասցնել. **-ся** անդր. արագ գնալ, սլանալ, տեղ հասնել, սուրալ։ [մի։

Домшкоутъ ա. (Փր.-հոլ.) տափակատակ նաւ

Домъ ա. I. (*նսրբոյկ.* въ домѣ, на дому; յ. домы, овъ և дома, овъ) 1, տուն, բնակարան. звать кого къ себѣ на д. մէկին իր տունը հրաւիրել. принимать у себя на дому իր տանը, բնակարանում ընդունել. царскій д. արքունիք. воспитательный д. ապօրինի զաւակների ընդունելութեան տուն. желтый д. գժատուն, գժանոց, յիմարանոց. въѣзжій д. (գիւղերում) պաշտօնական անձերի իջեւան. Божій д. Աստուծոյ տուն, եկեղեցի. питейный д. խմիչքների կրպակ. д. терпимости տ. Бордакъ; торговый д. վաճառատուն. 2, տուն, ընտանիք, գերդաստան. собраться всѣмъ д—омъ; выдали дочь въ богатый д.; принять зятя къ себѣ въ д.; обзавестись своимъ д—омъ տնաւորուել. 3, տուն, ընտանիք, հարստութիւն, ազգ. Императорскій, Королевскій Д.; Д. Романовыхъ. Дома մ. տանը. онъ всё сидитъ д.; его нѣтъ д.; въ гостяхъ—хорошо, а дома—лучше (առծ.). *у него не все дома նորա խելքը տեղը չէ, նորա խելքը պակաս է։ Домой մ. (դէպի) տուն, հայրենիք, մայրենիք, пойдёмъ д.; солдатъ по выслугѣ лѣтъ отправился домой. II. (պորտուգ.) դօմ (պատուանուն, տիտղոս, որ Պորտուգալիայում նշանաւոր մարդկանց տրւում է)։

До|мываніе չ. լուանալ պրծնելը. **-мывать, -мыть** ն. լուանալ պրծնել. **-ся** 1, անդր. լուացուել պրծնել. 2, չզ. լուացուել վերջանալ։

До|мыкать I. (домыкать) տ. Домыкивать; II. (домыкать, -мкнуть) 1, չ. մօտենալ, կպչել, հպուել. лѣвое крыло роты домкнуло до лѣсу ռոտայի ձախ թեւը մինչև անտառ ձգուեցաւ. 2, փակել, կողպել. домкни замокъ; **-мыкаться** չ. իր տառապալից, թշուառ կեանքը վերջացնել, անցկացնել պրծնել. **-мыкивать, -мыкать** ն. 1, կտաւատի թելերը (թեզանը) անօրացնել, գերձոն չինել. կանեփի մազմզուկները հանել, պատրաստել. 2, մի կերպ ապրել, անցկացնել, վերջացնել. домыкать вѣкъ.

До|мысливать, ся, -мыслить (-шлю -слятъ). **ся** տ. Домышлять, ся; **-мыслъ** ա. եզրակացութիւն, խելամուտ լինելը, հասկանալը. мыслей много, а домысла нѣтъ.

Домытарить (-рю -рятъ), **ся** չ. до чего *ռմկ.* այնքան տառապել, տանջուել, որ. իր ամբողջ կեանքը տառապանքներով, զրկանքներով, չարքաշութեամբ անցկացնել։

Домытиться չ. կաշին (կաշուի գոյնը, մազը) փոխել. ձգել, փետրաթափուել պրծնել։

Домыть (-мою -моютъ), **ся** տ. Домывать, ся.

До|мышленіе չ. մտածելը, խորհելը. **-мышлять,** мыслить ն. *սկւ. գործձ.* մտածել, խորհել. **-ся** չ. մտածելով, խորհելով հասու լինել, գլխի ընկնել, հասկանալ։

До|мѣриваніе չ. չափել պրծնելը. **-мѣривать, -мѣрить** (-рю -рятъ) ն. 1. չափել պրծնել. д. овёсъ; д. холстъ; 2, չափելով պակասը, պակասորդը լրացնել. досыпь ржи, домѣрь до четверти; **-ся** չզ. չափուել վերջանալ. **-мѣрка** ի. **-мѣръ** ա. լրացում (չափի), չափը լրացնելը. **-мѣрять, ся** տ. Домѣривать, ся.

До|мѣсить (-шу -мѣсятъ), **ся** տ. Домѣшивать, ся.

До|мѣчать, -мѣтить (-чу -мѣтятъ) ն. նշանագրել պրծնել. д. бѣльё; **-мѣчиваніе** չ. նշանագրել պրծնելը (ճերմակեղէնը). **-мѣчивать** տ. Домѣчать.

Домѣ|шать, ся տ. Домѣшивать, ся; **-шиваніе** չ. 1, հունցել պրծնելը. 2, շաղախել պրծնելը. **-мѣшивать,** -мѣсить, -мѣшать ն. 1, հունցել պրծնել. домѣсить хлѣбы; 2, շաղախել պրծնել. домѣшать творило извёстки; **-ся** չզ. հունցուել պրծնել, շաղախուել վերջանալ։

Домять (-мну -мнутъ; *անց.* домялъ, -ла, о), **ся** տ. Доминать, ся.

Доначальный ած. *եկղ.* յառաջ քան սկզբնաւորութիւնը։

До|нашиваніе չ. մաշելը. **-нашивать,** -носить ն. 1, կրել պրծնել. д. кучу щебня; 2, ցորոշ ժամանակ կրել. д. младенца въ утробѣ; 3, մաշել պրծնել. д. платье, обувь; **-ся** չզ. 1, կրուել վերջանալ. 2, մաշուել պրծնել (հագնելիքի մասին)։

До|нельзя մ. չ'անկարելիութիւն, ցվերջին, ծայրայեղ աստիճան. онъ глупъ д.; заколачивай гвоздь вплотную, донельзя.

До|несеніе չ. 1, տանելը, կրել[ով հասցնել]ը. 2, զեկուցում, զեկուցագիր (ստորադրեալից բարձրագոյնին). послать д.; **-нести, -несть** (-несу -сутъ; *անց.* донёсъ, -сла, о), **-нестись** տ. Доносить, ся. [ный бассейнъ.

До|нецкій ած. Դոնեց գետի. д. каменноуголь-

Донецъ, нца ա. I. (սովորբ. յ. донцы, овъ) 1, Դոն գետի բնակիչ, Դոնեան զորանահանգի բնակիչ. 2, տ. Донской казакъ: 3, մի տեսակ Դոնեան ձի. II. *ատղձգ.* գործիք մի, որով 45° անկիւններ են կտրում։

Дон|жуанство չ. դոնժուանութիւն, ցոփակեցութիւն, իգամոլութիւն. **-жуанствовать** (-ствую -ютъ) չ. դոնժուանութիւն անել, ցոփակեցութիւն անել. **-жуанъ**=Донъ-Жуанъ (տ. Донъ).

До|низываніе չ. շարել պրծնելը (օր. ուլունքները). **-низывать, -низать** (-нижу -нижутъ) ն. շարել պրծնել (օր. ուլունքները). **-ся** չզ. շարուել վերջանալ։

До|ниманіе չ. հաւաքելը, ժողովելը (պարտքերը). **-нимать, -нять** ն. 1, հաւաքել, ժողովել պրծնել (պարտքի մնացած մասերը, հար-

կը, մարդը). д. недоимку; **2,** *յարձակումներով, ամէն տեսակ միջոցներով հալածել, նեղացնել. *խիստ անհանգիստ անել, հանգստութիւն չտալ.* **-ся** *չ. հուսահատել, ձանձրանալ, քաղցել (աղաչանքներից մասին)։*

Донка *է.* **1**, *մերոնք. գործիք, որով չաղատանքը ջրով լցնում են.* **2**, *Դոնեան ցորեան մի։*

Донкихо́тскій *Դոնքիշոտի, -ական.* **-хо́тство** *չ. դոնքիշոտութիւն.* **-хо́тствовать** (-ствую -ютъ) *չ. դոնքիշոտութիւն անել.* **-шо́тскій** *տ.* Донкихо́тскій; **-шо́тствовать** *Նյզ. տ.* Донкихо́тствовать.

До́нна *է.* (*իտ.*) *դոննա, տիկին, տիրուհի (տիտղոս իտալական բարձրազգի դասակարգի տիկիններին)։*

До́нниковый *ած. կոտնգանի (մեղրածուծի).* д. ко́рень; д. пла́стырь *կոտնգանի արմատից պատրաստած սպեղանի, 'մելիոտ'.* **-никъ** *ա.* **I.** *բս.* Melilotus, *կոտնգան (մեղրածուծ), մեղր հոտաւէտ, սպիտակ կոտնգան* (Mel. albus officinalis) (*սպառնեաց այս անունը կրում են ուրիշ բոյսեր էլ*). **II. 1,** *յատակաշերտ (անմիջապէս վարելահողի տակ գտնուող շերտը, խաւը).* тутъ д. — гли́на, песо́къ, хрящъ; **2,** *գետի յատակին նստած տաղտուկը.* **3,** *յատակակարթ (տանձին տեսակ ձուկ որսալու կարթ, որի կեռը գետի յատակին է իջնում).* **4,** *յատակատախտակ (որից տակառի, տաշտակի ևն յատակները են շինում)։*

До́нный *ած.* **I.** (*տ.* дно) **1,** *յատակի, -կային. յատակի վերայ գտնուող.* д—ыя ры́бы; д—ая у́дочка; до́нная ми́на *գետի. յատակի վերայ. հողի տակ տարած ականը.* **II.** *տ.* До́нниковый; до́нная трава́ *տ.* До́нникъ I.

Доноси́тель *ա.* **-си́тельница** *է.* *տ.* Доно́счикъ, -счица; **-си́тельный** *ակւ. գործծ. տ.* Доно́сный.

Доноси́ть **I.** доноси́ть (-шу́ -но́сятъ—*ապառնի*), **ся** *տ.* Дона́шивать, ся; **II.** доноси́ть (-шу́ -но́сятъ—*ներկայ*), донести́ 1,*ն.* [*մինչածը*] *կրել տանել, տեղ հասցնել.* д. кирпиче́й къ строе́нію; **2,** *ն.* **և** *չ.* о чёмъ *մի բանի մասին *զեկուցանել. հաղորդել, հաղորդագրել, տեղեկացնել. տեղեկագրել.* д. о случи́вшихся происше́ствіяхъ; **3,** д. на кого́-либо въ чёмъ либо *մէկին որ և է բանում ամբաստանել, մեղադրել. մէկի մասին չարախօսել, ամբաստանութիւն, մատնութիւն գրել.* д. на кого́-либо въ злоупотребле́ніи; **-ся**, донести́сь **1,** *անդր. գալ, հասնել.* до меня́ доноси́лось э́хо не́сколькихъ голосо́въ: **2,** *չ. կրուել. գեկուցանուել.* **-сный** *ած. ամբաստանութեան, -նական.* д—ыя статьи.

Доно́сокъ, ска *ա. ռսկ.* **I,** *տ.* Дона́шиваніе; отда́ть ста́рую оде́жду въ д. слугѣ; **2,** *մաշուած. կիսամաշ, թերմաշ ևն.* э́то не но́вое пла́тье, а д.; **3,** *գերեզմանի երկանում արգանդում կրած և իր ժամանակին ծնած մանուկ* (*յանկա* не *բառը. մատնիկի հետ, տ.* Недоно́сокъ).

Доно́счикъ, чка *Նւզ. տ.* Доно́сокъ 3; **-счикъ** *ա.* **-счица** *է. ամբաստանիչ, մատնիչ, չարախօս այր, կին.* доно́счику пе́рвый кнутъ (*առծ.*)

Доно́съ *ա.* **I,** *ամբաստանութիւն, մեղադրութիւն, մատնութիւն.* сдѣ́лать на кого́-либо д.; **2,** *գաղտնի ամբաստանութիւն, չարախօսութիւն, մատնութիւն* (*բանաւոր կամ գրաւոր*)։

Донесе́ніе *ակւ. գործծ. տ.* Донесе́ніе 2; посла́ть д. въ Сена́тъ; **-но́шенный** *բյ. ած.* **1,** *մաշած, մաշուած.* **2,** *կրած* (*արգանդում*). ребёнокъ не доно́шенъ ма́терью.

Донско́й *ած. Դոնի, Դոնեան.* о́бласть во́йска д—о́го; д—іе каза́ки; д—о́е каза́чье во́йско; донско́е (*են-* вино́), о́го *չ. Դոնի զօրանոց հանգում պատրաստուող փրփրուան գինի։*

До́нце *չ. Նւզ.* **1,** *պատիկ տեղի* (*օր. բաժակի*) *յատակը, տակը.* у рю́мки отби́лось д.; **2,** *մանուածքատախտակ.* **3,** *ատղձգ. դրուագատախտակ.* **-чатый** *ած. յատակաւոր, յատակով, յատակ ունեցող։* [шко́утъ).

Донъ *ա. ոհհ.* (*իսպ.* *իտ.* don) *տէր* (*պատուաւոր տիտղոս Իսպանիայում՝ թագաւորներին, Իսպանիայում և Իտալիայում՝ հոգեւորականներին*). Донъ-Жуа́нъ, донъ-Жуа́нъ *Դոն-Ժուան. *կնամոլ, իգամոլ ոմն.* Донъ-Кихо́тъ *Դոն-Քիշոտ. *երազներով, ցնորքներով տարուող զառանցաւոր։*

Донки́нъ *Ն.* (*մաղ.*) *ժամ, մինչև այժմ, մինչև հիմա։*

Доныря́ть, -ныря́ть *չ. խորասուզուել, որոշ խորութեամբ ընկղմուել ջրի մէջ.* д. до дна рѣки́, до уто́пшаго; **-ныря́ться** *չ.* до чего́ -либо *այնչափ խորասուզուել, ջրի մէջ ընկղմուել, որ փորձանքի հանդիպել։*

До́ньшко *չ. Նւզ. պատիկ յատակ, յատակուկ, տակ.* **-нье́, ья́** *չ. հաւ. փայտէ անօթների յատակացու տախտակներ։*

До́нья *է.* (*իսպ.*) *տիրուհի, ազնուական տիկին։*

Доню́хивать, -ню́хать *ն. քաշել, զործ անել տրծնել* (*որոշ քանակութեամբ և կամ ամբողջ քթախոտը*). **-ся** *չ. այնքան* [*քթախոտ*] *քաշել, քիթն առնել, որ.* до того́ доню́хался, что на́чалъ чиха́ть; **հասատութեամբ խմանալ, գտնել։*

Доня́ньчить (-чу -чатъ) *ն. սնուցանել պրծնել, մեծացնել պրծնել (մանկանը).* **-ся** *չ.* съ кѣмъ, до чего́ *մէկին գգուել, մէկի վերայ այնքան զուրգուրալ, որ. մէկին խիստ զգուելով, մէկի վերայ խիստ գուրգուրալով, երես տալ, փչացնել։*

Доня́ть (дойму́ -йму́тъ), **ся** *տ.* Донима́ть, ся.

Дооблачный *ած. բանաստ. բարձր, բարձրագէշ, ամպերին հասնող.* д—ая сосна́.

Дообѣ́дать *տ.* Дообѣ́дывать; **-обѣ́дываніе** *չ. ճաշել պրծնելը. [ընդմիջուած] ճաշը վերջացնելը.* **-обѣ́дывать**, -обѣ́дать *ն. ճաշել պրծնել, [ընդմիջուած] ճաշը վերջացնել։*

Доора́ніе *չ. հերկել վերջացնելը, վարել պրծնելը.* **-ора́нный** *բյ. ած. հերկուած, վարուած վերջացած.* **-ора́ть** (-рю́ -орю́тъ) *տ.* Добрывать; **-ора́ться** (-рю́сь -ру́тся) *չ.* до чего́ *այնքան տաղտկել, բղաւել, որ.* **-о́рывать**, -ора́ть *ն. վարել, հերկել պրծնել. վարել, հերկել մ', մինչև* д. до са́мой межи́.

Дооспри́ть (рю́ -ря́тъ) *ն. սրել պրծնել. այնքան սրել, որ. խիստ սրել.* до того́ доостри́лъ ножъ, что съ бри́твою поспо́ритъ!

Допа́иваніе *չ.* **I.** *ջրել, ջուր տալ պրծնելը. հարբեցնելը.* **II.** *զոդել պրծնելը, կպցնել պրծնելը.* **-паивать I.** (допа́ивать, -по́ить) *ն.* **1,** *ջրել, ջուր տալ պրծնել.* д. теля́тъ; **2,** *այնքան խմեցնել որ, հարբեցնել.* д. до́пьяна; **II.** (допа́ивать, -пая́ть) *ն. զոդել պրծնել, կպցնել պրծնել (մետաղեղէններ մի ուրիշ գիրանալ մետաղով).* **-ся** *չ. զոդուել վերջանալ, կպցնուել պրծնուել.* **-па́йка** *է. տ.* Допа́иваніе II.

Допа́лзываніе *չ.* **1,** *սողալով որոշ կէտի, տարածքի հասնելը.* **2,** *սողալով, ստորաքարշութեամբ ցանկացածը ստանալը, շահելը.* **-па́лзы-**

вать, -ползти́ չ. 1, սողալով որոշ կէտի, տար-կայի հասնել. 2,* սողալով, ստորաքարշութեամբ ցանկացածը ստանալ, շահել, ձեռք բերել։

Допа́ливаніе չ. 1, խանձել պրծնելը (խոզը). 2, վերջացնելը (հրացանաձգութիւնը, թնդանօ-թաձգութիւնը). **-па́ливать, -пали́ть** (-лю́ -ля́тъ) 1, ն. խանձել պրծնել. д. свинью; 2, չ. հրացա-նաձգութիւնը, թնդանօթաձգութիւնը վերջաց-նել. **-ся** 1, չ. *ռմկ.* այնքան շարունակել հրա-ցանաձգութիւնը, թնդանօթաձգութիւնը, որ. допали́лись до того́, что по́роху не ста́ло; 2, էր. խանձուել վերջանալ (մորթած խոզի մասին)։

Допа́лываніе չ. քաղհանել պրծնելը. **-па́лывать, -поло́ть** ն. քաղհանքը պրծնել, քաղհան տալ պրծնել. **-ся** էր. քաղհանուել, քաղհան տրուել վերջանալ. всѣ гряды́ допо́ло́лись.

Допа́риваніе չ. խաշելը. խաշել պրծնելը. **-па́ривать, -па́рить** (-рю -рятъ) ն. խաշել, խաշել պրծնել. д. рѣ́пу; **-ся** 1, անդր. այնքան երկար մնալ գոլորշիների, բաղի մէջ, այնքան քրտնել, տա-քանալ, որ. до того́ допа́рился, что едва́ могъ вы́йти изъ ба́ни. 2, էր. խաշուել։

Допа́рываніе չ. քանդել պրծնելը (կարը). **-па́рывать, -поро́ть** ն. քանդել պրծնել (կարը)։

Допаха́ть (-пашу́ -па́шутъ), **ся** տ. Допа́хивать, ся; **-па́хиваніе** չ. հերկելը, վարել պրծնելը. **-па́хивать, -паха́ть** ն. հերկել, վարել պրծնել. **-ся** էր. հերկուել, վարուել վերջանալ։

Допа́ч|кивать, -кать ն. բոլորովին աղտոտել, կեղտոտել. **-ся** էր. բոլորովին աղտոտուել, կեղտո-[տուել։

Допа́шка ի. հերկելը, վարել պրծնելը։

Допая́ть, ся տ. Допа́ивать, ся II.

Допека́ніе չ. 1, թխելը, թխել պրծնելը. 2, յան-դիմանելը, անարգելը, նախատելը. **-пека́ть, пе́чь** 1, ն. թխել, թխել պրծնել. куха́рка до-пекла́ всѣ пироги́; 2, թխելով սպառել, հա-տացնել. изъ ку́ля допека́ю послѣ́дніе хлѣ́бы; 3, ն. և չ. յաճախ յանդիմանել, անարգել, նա-խատել. նեղացնել, նեղ անել ձգել, 'հոգին հա-նել'. **-ся** էր. թխուել պրծնել. хлѣ́бы уже́ до-пекли́сь.

До́пель|кюмель տ. (գերմ.) մի տեսակ քաղցր անիսոնի օղի համեմունքներով։ [ցոր։

До́пельшнепъ տ. (գերմ.) *Թռչնբ.* մի տեսակ կրա-

Допере́ть (-пру́ -пру́тъ; *անց.* до́перъ, -перла́, о), **ся** տ. Допира́ть, ся; **-пе́ртый** (до́пертъ, -та́, о) բյ. ած. լաւ, բոլորովին փակած։

Допетро́вскій ած. ցՊետրոսեան, Պետրոս Մե-ծից առաջ. д—ія времена́; д—ая Русь.

Допеча́таніе չ. **-печа́тка** ի. **-печа́тываніе** չ. տպե-լը, տպագրել պրծնելը. **-печа́тывать, -печа́-тать** ն. տպել պրծնել, տպագրել պրծնել. **-ся** էր. տպուել, տպագրուել վերջանալ. моя́ кни́га до-печа́тывается.

Допечённый (-ёнъ -ена́, о́) բյ. ած. բոլորովին թխուած վերջացած. 2, հալից ընկած, հոգին բերանը եկած. **-пе́чь** (-пеку́ -печёшь -пеку́тъ; *անց.* допёкъ -кла́, о́) տ. Допека́ть, ся.

Допива́ніе չ. խմելը, խմել պրծնելը. **-пива́ть, -пи́ть** ն. խմել. խմել վերջացնել (մնացածը), դատարկել. д. буты́лку пи́ва; **-ся** 1, չ. անչափ օգելից ըմպելիքներ գործածելով վնասուել, այնքան խմել, որ. онъ допи́лся до бѣ́лой го-ря́чки այնքան խմել է, որ խելքը կորցրել է. *ռմկ.* допи́лся до чо́ртиковъ կմ до зелёнаго змія այնքան խմել է, որ գինու տիկ է դարձել. 2, էր. խմուել վերջանալ, սպառուել. ма́ртов-ское пи́во о́сенью допива́ется.

Допи́ливаніе չ. **-пи́лка** ի. սղոցելը, 'խէրխելը', սղոցել պրծնելը. **-пи́ливать, -пили́ть** (-лю́ -ля́тъ) ն. սղոցել, 'խէրխել', սղոցել, 'խէրխել 'պրծնել։

Допика́ть ն. кого́ до чего́ մէկին այնքան հա-րուածներ տալ, տրորել, որ։

Допира́ть, -пере́ть ն. բոլորովին, լաւ փակել, գոցել (օր. դուռը). допри́ дверь; **-ся** անդր. և էր. բոլորովին փակուել, գոցուել. дверь раз-бу́хла, и отъ того́ не допира́ется.

Допирова́ть (-ру́ю -ютъ) չ. խնջոյքը, խրախճա-նութիւնը, կերուխումը վերջացնել. պրծնել. **-ся** չ. այնքան խնջոյքներ սարքել, կերուխում անել, որ. կերուխումի, խնջոյքների վրայ ծախսեր անելով քայքայուել, սնանկանալ. пирова́лъ о́чень ча́сто и допирова́лся до разоре́нія.

Дописа́ть (-шу́ -пи́шутъ), **ся** տ. Допи́сывать, ся; **-пи́ска** ի. **-пи́сываніе** չ. 1, գրելը, գրել պրծ-նելը. 2, նկարելը. նկարել վերջացնելը. **-пи́сы-вать, -писа́ть** ն. 1, գրել վերջացնել. спѣшу́ д. письмо́; 2, նկարել, նկարել պրծնել. живопи́-сецъ допи́сываетъ карти́ну; **-ся** 1, անդր. այն-քան գրել, որ մի և է փորձանքի, անհամեմատութեան հանդիպել, այնքան գրել մինչև որ. онъ допи-са́лся до поте́ри зрѣ́нія; 2, էր. *ա,* գրուել վեր-ջանալ. *բ,* նկարուել վերջանալ։

Допи́тіе չ. խմելը, դատարկել պրծնելը. **-пито́й, -пи́тый** բյ. ած. խմած պրծած, քամած, դատարկած. **-пи́ть** (-пью́ -пью́тъ; *անց.* допи́лъ, а́, о), **ся** տ. Допива́ть, ся.

Допи́хивать, -ха́ть, -хну́ть ն. հրելով ներս մտցնել, ներս կոխել, ներս խցկել, ներս տանել. **-ся** էր. հրուելով ներս մտցնուել, ներս կո-խուել, ներս խցկուել. ներս տարուել.

Допла́вить (-влю -вятъ), **ся** տ. Допла́вливать, ся; **-пла́вливаніе** չ. հալելը, հալել պրծնելը. **-пла́вливать, -пла́вить** (-влю -вятъ) ն. հալել, հա-լել պրծնել. д. мѣдь; **-ся** էր. հալուել վերջանալ։

Допла́|кать (-пла́чу -пла́чутъ), **-кивать** ն. և չ. լալ, լաց լինելով սպառել (արտասուքը), լացը վերջացնել. այնքան լաց լինել, որ. допла́киваю свои́ послѣ́днія слёзы и бо́льше объ э́томъ не бу́ду пла́кать; **-ся** չ. 1, տ. Допла́кать; бѣ́дная вдова́ допла́калась до чахо́тки; 2, այնքան լաց լինել, որ ցանկացածը ստանալ. наконе́цъ онъ допла́кался до того́, что ему́ да́ли мѣ́сто.

Допла́та ի. 1, վճարում, հատուցում. д. до́лга; 2. յաւելում. յաւելավճար, լրացուցիչ վճար. **-плати́ть** (-чу́ -пла́тятъ), **ся** տ. Допла́чивать, ся; **-пла́тный, -пла́точный** ած. դեռ ևս վճարելի, հա-տուցանելի, հատանելի. д—ыя де́ньги; **-пла́чи-ваніе** չ. 1, վճարելը, հատուցանելը (մնացորդը). **-пла́чивать, -плати́ть** ն. 1, վճարել, հատուցա-նել պրծնել (մնացորդը). 2, կարկատել պրծնել (զգեստը). **-ся** էր. 1, վճարուել. հատուցանուել վերջանալ. 2, կարկատուել վերջանալ. **-плачу́** տ. Доплати́ть; **-пла́чу** տ. Допла́кать.

Доплёвывать, -плева́ть (-плюю́, -плюю́тъ), **-плю́нуть** չ. 1, թքել պրծնել. 2, որոշ տեղ թքել, թուքը գցել, հասցնել։

Доплёскивать, -плеска́ть (-щу́ -плещутъ), **-плес-ну́ть** 1, չ. դադարել ցայտեցնելուց, շաղ տա-լուց, ճղփելուց. 2, ն. ճղփել, շաղ տալ պրծնել (հեղուկը). 3, ն. до чего́ որոշ տեղ հեղուկը ճըղ-փել, ցայտեցնելով, շաղ տալով հասցնել։

Доплескъ ա. ճղփիւն, ալիքի, կոհակի ցայտումը, զարկը. д—и достигаютъ до уступа скалы; **-плеснуть** ա. Доплёскивать.

Доплесть, -плести (-плету -етутъ; *անց.* доплёлъ -ла, о) **-плестися, -плестись** ա. Доплетать, ся.

Доплетаніе չ. հիւսել վերջացնելը. **-плетать,** -плесть, -плести ն. հիւսել վերջացնել. д. кружево; д. косу; **-плетаться,** -плестися, -плестись 1, չ. *հասցնել հաղ. զուռով քարշ գալ, քարշ գալով տեղ հասնել. 2, չր. հիւսուել:

Доплутоваться (-туюсь -ются) չ. այնքան սրիկայութիւն, խաբերայութիւններ անել, որ կորստի մատնուել:

Доплывать, -плыть չ. լողալ ց', մինչև. լողալով հասնել. д. до противоположнаго берега; **-плытіе** չ. լողալով հասնելը. **-плыть** (-плыву -вутъ; *անց.* доплылъ -ла, о) ա. Доплывать.

Доплюнуть ա. Доплёвывать.

Доплясать (пляшу -пляшутъ), **ся** ա. Доплясывать, ся; **-плясываніе** չ. պարելը, կաքաւելը, պարել, կաքաւել վերջացնելը. **-плясывать,** -плясать չ. պարել, կաքաւել վերջացնել, պարը, կաքաւը վերջացնել. **-ся** չ. այնքան պարել, այնքան կաքաւել, որ. до того доплясались, что ноги заболѣли.

Доподлинный ած. ճշմարիտ, ճշգրիտ, իսկական, ոչ մտացածին. д. случай; доподлинно մ. ճիշտ. ստոյգ կերպով, հաստատապէս. я объ этомъ д. знаю.

Допоить (-пою -поятъ) ա. Допаивать I.

Дополаскивать, -лоскать ն. ողողել վերջացնել. д. бѣльё; **-ся** չր. ողողուել վերջանալ:

Доползать 1, (доползать), -лзти (-лзу -лзутъ; *անց.* доползъ -зла, о) ա. Допалзывать; 2, (доползать), **ся** չ. այնքան սողալ որ:

Дополна մ. 1, մինչև լցնելը, լիովին. 2, *ռմկ.* զարդարայօրէն, մանրամասնաբար. **-полненіе** չ. 1, լրացնելը, լրում. въ дополненіе 'ի լրումն. 2, լրացում, յաւելուած. д. къ книгѣ; *քեր.* լրացուցիչ. д. прямое, косвенное; **-полненный** ած. լրացրած. изданіе исправленное и д—ое; **-полнитель** ա. **-полнительница** ի. մի բան լրացնող այր, կին. **-полнительный** ած. լրացուցիչ. д—ая статья; д. платёжъ; дополнительно մ. 'ի լրումն:

Дополнить (-ню -нятъ), **ся** ա. Дополнять, ся; **-полнка** ի. 1, ա. Дополненіе 1; 2, յաւելում, լրացում (մնաց. պակասած, գումարի համար գինու):

Дополночный, -луночный ած. մինչև կէս գիշեր պատահող, կատարուող, տևող:

Дополнять, -полнить լրացնել, աւելացնել. -ся չր. լրացուել, աւելացուել:

Дополоскать (-лощу -лощутъ), **ся** ա. Дополаскивать, ся.

Дополоть (-лю -полютъ; *անց.* дополол -ла, о), **ся** ա. Допалывать, ся; **-лощу** ա. Дополоскать.

Дополуденный ած. ցերեկը պատահող, եղող. տևող. д—ое время.

Дополусмерти մ. կիսամահ, մինչև կիսամահ լինելը. поймавъ вора, избили его д.

Дополучать, -лучить ն. ստանալ (մնացորդը, պակասորդը). **-полученіе** չ. ա. Дополучка; **-получить** (-чу -лучатъ) ա. Дополучать; **-получка** ի. ստանալ վերջնելը (պակասը, մնացորդը):

Допороть (-рю -порютъ) ա. Допарывать.

Допоститься (-щусь -стятся) անդր. 1, պահքը, պասը վերջացնել. 2, խիստ պահեցողութեամբ իւր առողջութեանը վնասել, ուժասպառիլ, հալից ընկնել:

Допотопный ած, 1, ջրհեղեղեան, մինչև ջրհեղեղ եղած, պատահած. д—ая религія եկղ. նահապետների կրօնը Ադամից ցՆոյ. д—ыя животныя անհետ եղած կենդանիներ, որոնց կմախքները գետնի տակ են գտնւում. 2, խիստ հին. 3,* հնատարազ, հնաոճ, փտած, հնացած:

Допотчивать (-чую -чуютъ) ն. 1, հիւրասիրել, մեծարել վերջնել. 2, մինչև անչափ հիւրասիրել, ուտեցնել և խմեցնել. **-ся** անդր. աւելորդ հիւրասիրութիւն վայելել:

Допотѣть չ. քրտնել վերջնել, քրտինքը հանել, այնքան քրտնել, որ. **-пою** ա. Допѣть.

Доппелькюммель ա. Допелькюмель.

Доправа ի. *ռմկ.* 1, ուղղելը, սրբագրել վերջնելը. *պահանջելը, ստանալը, գանձելը (պարտքը, տուգանքը և լն.) 2, պահանջ, պահանջած, ստացած, գանձած բան. **-править** (-влю -вятъ) **ся** ա. Доправлять, ся; **-правна** ի. **-правливаніе** չ. ուղղելը, սրբագրել վերջնելը. *պահանջելը, ստանալը, գանձել վերջնելը (պարտքը, տուգանքը). **-правливать, ся** ա. Доправлять, ся; **-правлять,** -править ն. 1, ուղղել, սրբագրել վերջնել. д. опечатки въ корректурномъ листѣ; 2,* պահանջել, ստանալ, գանձել (տուգանքը, պարտքը և այլն.). д. долгъ; д. съ кого всё, беззаконно имъ взятое; **-ся** չր. 1, ուղղուել, սրբագրուել. 2, պահանջուել, ստացուել, գանձուել. **-правочный** ած. պահանջելի, ստանալի, գանձելի. **-правщикъ** ա. **-правщица** ի. պահանջող, ստացող, գանձող այր, կին:

Допраздничный ած. տօնից առաջ եղող, պատահող. д. гулянка; **-здновать** (-ную -ютъ) ն. և չ. տօնել վերջնել. **-ся** չ. այնքան տօն, ուրախութիւն անել, որ փողերի, անհամութեան հանգչել. допраздновался до того, что ничего въ карманѣ не осталось.

Допрашиваніе չ. հարցուփորձ անելը. **-прашиватель** ա. **-прашивательница** ի. հարցուփորձ անող, հարցուփորձող այր, կին. **-прашивать,** -просить ն. հարցուփորձ անել, հարցուփորձել. д. преступниковъ; д. свидѣтелей; **-ся** 1, չ. հարցուփորձ անելով աշխատել մի բան իմանալ, տեղեկանալ. «они допрашивались, не недовольны ли мы чѣмъ-либо»; 2, ն. և չ. ժամելով, շատ խնդրելով, թախանձելով ստանալ. насилу допросились на ночлегъ; его не допросишься снести на почту письма նորան որքան էլ խնդրես, աղաչես, չի համաձայնուիլ կեն. 2, չր. հարցուփորձուիլ, հարցուփորձի ենթարկուիլ:

Допреже, -прежь մ. *ռմկ.* 1, առաջուց, առաջ, նախորօք, նախ. 2, առաջ, մինչև հիմա, մինչև այժմ:

Допроваживать, -вадить (-важу -вадятъ) ն. *ռմկ.* ճանապարհ դնել, ուղեկցել մինչև նշանակեալ տեղը:

Допродать (-дамъ -дашь -дастъ. -дадимъ -дадутъ) ն. բոլորովին ծախել, վաճառել վերջնել. онъ остаётся здѣсь ещё на день, чтобы д. товаръ.

Допроказничать, -зить (-жу -зятъ) չ. այնչափ չարութիւն, չարաճճիութիւն, խեռութիւն, 'միմոսութիւններ' անել, որ փորձանքի անհամութեան հանդիպել:

Допросецъ, спца ա. *փոքր.* թեթև հարցուփորձ.

-проси́ть (-шу́ -о́сятъ), ся *տ.* Допра́шивать, ся; -про́сный *ած.* հարցափորձի, հարցափորձական. д—ыя статьи կամ д—ые пу́нкты քննիչի կամ դատաւորի առաջարկած հարցերը. -про́счикъ *ա.* 1, (допро́счица *ի.*) *տ.* Допра́шиватель, -тельница; 2, հարցնող, հարց տուող. -про́съ *ա.* հարց ու փորձ (*միւղ.* դատաստանական ճանապարհով). сдѣлать д. уличённому въ кра́жѣ; снять съ престу́пника д.

Допру́живать *չ.* կապել պրծնել (օր. պատնէշը)։

Допры́гать *չ.* դադարել թռչկոտելուց. ցորչ տեղ թռչել, ցատկել. -ся *չ.* այնքան թռչկոտել, որ փորձանքի, անախորժութեան հանդիպել. *д. до бѣды́ արագ, անխոհուն քայլերով (գործերով) դժբաղդութեան մէջ ընկնել. -пры́гивать, -прыгну́ть *չ.* թռչելով, ցատկելով հասնել, թռչել ց', մինչև. съ разбѣ́га допрыгну́лъ до стѣны́.

Допры́скать, ся *տ.* Допры́скивать, ся: -пры́скиваніе *չ.* ցայտեցնելով հասցնելը. ցայտեցնելը, սրսկելը ց', մինչև. -пры́скивать 1, *չ.* (допры́снуть) ցայտելով հասնել մինչև. 2, *ն.* (допры́скать) սրսկել պրծնել. д. бѣльё; -ся *չէ.* սրսկուել վերջանալ։

До́прыски *ա.* *յ.* որ և է կողմից ցայտող կաթիլներ. -пры́снуть, ся *տ.* Допры́скивать, ся.

Допрѣва́ть, -прѣ́ть *չ.* 1, եփուելով, խաշուելով փափկանալ. рѣ́па допрѣва́етъ въ печи́; 2, *քրտինքից խաշուել, տաքանալ, թուլանալ, ուժասպառել. въ жа̀ркой ко́мнатѣ допрѣ́лъ до того́, что весь измо́къ; -прѣ́лый *ած.* լաւ խաշուած, փափկացած։

Допряда́ть, ся *տ.* Допря́дывать, ся; -пря́дка *ի.* մանել պրծնելը. -прядывать I. (допря́дывать, -пряда́ть, -прясть *ն.* մանել պրծնել, նիւթել (գր.) պրծնել. -ся *չէ.* մանուել վերջանալ. II. (допря́дывать, -пря́нуть) *չ.* թռչել, թռչելով հասնել (զօռով, ջանքով)։

До́пряма *մ.* 1, մինչև բոլորովին ուղղելը, դզելը, գրատելը. д. вы́править что-либо; 2, *ճղ.* ճշմարտի, ճշտի, ուղղութեամբ, առանց այլայլութեան։

Допря́нуть *տ.* Допря́дывать II; -пря́сть (-яду́ -ду́тъ; *անց.* допря́лъ -ла, о) *տ.* Допря́дывать I.

Допуска́емость *ի.* թոյլատրելի լինելը, թոյլատրելիութիւն. -пуска́ніе *չ.* 1, թոյլ տալը, թոյլատրելը. 2, ենթադրելը. -пуска́ть, -пусти́ть *ն.* 1, թոյլատրել, թոյլ տալ. д. къ экза́мену թոյլ տալ քննուելու. д. къ исправле́нію до́лжности; онъ допусти́лъ обману́ть себя́ նա թոյլ տուեց, որ իրան խաբեն. д. безпоря́дки թոյլ տալ, որ խառնակութիւններ առաջանան. 2, թոյլ տալ ներս մտնելու. 3, ենթադրել. допу́стимъ, что э́то такъ; но что же изъ э́того слѣ́дуетъ? ենթադրենք, դիցուք թէ այդ այդպէս է եւն. -ся *չէ.* թոյլ տրուել, թոյլատրուել. -пускно́й *ած.* թոյլատրելի, -տրած. д—ые това̀ры.

До́пускъ *ա.* 1, *տ.* Допуска́ніе; 2, *հնստն.* թոյլատրելի տարբերութիւն սովորական չափից. -пусти́тельный *ած.* թոյլատրելի. -пусти́ть (-щу́ -пу́стятъ), ся *տ.* Допуска́ть, ся и Допуща́ть, ся; -пуща́ть, ся *ռմկ.* *տ.* Допуска́ть, ся; -пуще́ніе *չ.* թոյլ տալը, թոյլատրելը. -пу́щенникъ *ա.* եկուոր, օտար հողի վերայ հողատիրոջ թոյլտուութեամբ բնակուած։

Допыта́ть, ся *տ.* Допы́тывать, ся; -пы́тливость *ի.* հետախուզելու, քննելու, իմանալու անձն, ցանկութիւն. -пы́тливый *ած.* որ սիրում է քննել, իմանալ, տեղեկանալ. հարցասէր. -пы́тываніе *չ.* հարց ու փորձ անելը, աշխատելը իմանալ. ему́, ви́димо, о́чень не нра́вилось э́то д.; -пы́тывать, -пыта́ть 1, *չ.* отъ кого́ о чёмъ հարց ու փորձ անելով կամ սպառնալով աշխատել տեղեկանալ, իմանալ, խօսք դուրս քաշել. 2, տանջել պրծնել. 3, հարցափորձ անելով, տանջելով, խոշտանգելով բացել, տեղեկանալ, իմանալ. -ся *տ.* Допы́тывать; съ трудо́мъ допыта́лся, гдѣ онъ укрыва́ется; о чёмъ не ска̀зываютъ, о томъ не допы́тывайся (*առ.*)։

Допью́ *տ.* Допи́ть; -(о́)пьяна *մ.* մինչև հարբելը, գինովնալը. вчера́ напоили меня́ д.

Допѣва́ніе *չ.* երգել պրծնելը. -пѣва́ть, -пѣ́ть (-пою́ -ю́тъ) *ն.* երգել պրծնել. д. пѣ́сню; -ся 1. *չէ.* երգուել վերջանալ. не вся́кая пѣ́сня до конца́ допѣва́ется; 2, до чего́ այնքան երգել, որ. երգել ց', մինչև. д. до хрипоты́, до потѐри го́лоса.

Дорабо́тать, ся *տ.* Дорабо́тывать, ся; -бо́тка *ի.* աշխատանքը վերջացնելը. -бо́тный *ած.* *սկւ. գործ.* ց'աշխատանք, աշխատանքից առաջ եղող. -бо́тываніе *չ.* աշխատանքը վերջացնելը. -бо́тывать, бо́тать *ն.* աշխատանքը վերջացնել, պրծնել. -ся 1, *չ.* այնքան աշխատել, այնքան բանել, որ. онъ дорабо́тался до того́, что слёгъ въ посте́ль; 2, *չէ.* արուել, կատարուել (աշխատանքի մասին)։

Дора́внивать, -ровня́ть *ն.* հարթել, դզել. -ся *չէ.* հարթուել, դզուել։

Дора́да *ի.* *Կնդ.* ոսկէ ծածանը։

Дорадо́ровый *ած.* *սկւ. գործ.* ոսկէ, ոսկեհուռ։

Доразви́тый *բյ.* *ած.* զարգացրած. -разви́ть (-зовью́ -зовью́тъ) *ն.* բոլորովին, կատարելապէս զարգացնել։

Дораста́ніе *չ.* աճելը, մեծանալը. -раста́ть, -расти́ (-сту́ -стёшь -сту́тъ; *անց.* доро́съ -росла́, о́) *չ.* 1. հասակն առնել, աճել, մեծանալ պրծնել. де́рево начина́етъ д.; 2, հասակով. 'բոյով' մէկին հաւասարուել. онъ ещё не доро́съ до своего́ бра́та նա դեռ իր եղբօր պէս 'բոյ' չէ քաշել. -расти́ть (-ращу́ -ра́стятъ), ся *տ.* Дора́щивать, ся.

Дорасхо́довать (-дую -ютъ) *ն.* ծախսել, 'մրսխել' պրծնել։

Дораща́ть, ся *տ.* Дора́щивать, ся; -ра́щиваніе *չ.* մեծացնելը, չափահաս դարձնելը. -ра́щивать, -раща́ть, -расти́ть *ն.* մեծացնել, չափահաս դարձնել. бра̀жку слива́й, не доква́шивай, а дѣ́вушку отдава́й, не дора́щивай (*առ.*) -ся *չէ.* մեծացնուել, չափահաս դարձնուել.

Дорва́ть (-рву́ -рву́тъ), ся *տ.* Дорыва́ть, ся II.

Дордѣ́ть *տ.* Вы́рдѣть.

Доревѣ́ть (-ву́ -ву́тъ) *չ.* *ռմկ.* աղաղակել, ճչալ, լալ, բղաւել պրծնել. այնքան աղաղակել, ճչալ, բղաւել, լալ, ոռնալ, որ։

Дорефо́рменный *ած.* որ և իցէ վերանորոգութիւնից առաջ եղած, եղող. ռուս գիւղացիներին ճորտութիւնից ազատուելուց և դատաստանական վերանորոգութիւնից առաջ. д. быть ру́сскаго простонаро́дья.

Дори́змъ *ա.* (յն.) դորական բարբառի առանձնայատկութիւնը։

Дорисова́ть (-су́ю -ю́тъ), ся *տ.* Дорисо́вывать, ся; -со́вка *ի.* -со́вываніе *չ.* նկարել պրծնելը. -со́вывать, -сова́ть (-су́ю -ю́тъ) *ն.* նկարել պրծնել, նաշխել պրծնել, նկարագրել պրծնել. -ся 1, *չէ.* նկարուել վերջանալ. 2, *дорисова́ться ա-

ցուցամոլութիւն անելով ծաղրի առարկայ դառ-նալ։

Дорическій *ած.* *դորական.* д. діалектъ. [նալ։

Дормёзъ *ա.* (*ֆր.*) *Տնց.* *քնակառք* (*ճանապար-հորդական կառք, որ քնելու յարմարութիւն ունի*)։ [*խորահան նկդակիկ*։

Дорникъ *ա.* (*յն.*) *Եկղ.* 1, *նշխարատուփ.* 2. *նըշ-*

Доровнять, ся *ա.* Доравнивать, ся.

Дорога *ի.* 1, *ճանապարհ, ճամբայ, ուղի.* желѣзная д. *երկաթուղի.* конно-желѣзная д. *ձիուղի.* проложить, провести д—у *ճանապարհ, ուղի անցկացնել.* сбиться съ д—и *ճանապար-հից շեղուել, մոլորուել.* своротить съ д—и *ճա-նապարհից յետ դարձնել.* попасть, выбраться на д—у *ճանապարհը գտնել, ճանապարհ գուրս գալ.* столбовая д. *ճանապարհ, որի ափին վերս-տայոյց սիւնականներ են շարած.* шоссейная д. *խճուղի.* военная д. *պատերազմական ճանա-պարհ, ռազմուղի.* туда ему и д. *Նորա «հարկն է», հարկաւոր չէ ափսոսալ, որ նա գնաց, հե-ռացաւ.* зайти къ кому-либо по д—ѣ *ճանա-պարհին, գնալիս մէկին հանդիպել, այցելել.* не дорога *հարկ չէ, հարկաւոր չէ.* ему запала къ намъ д. *նա մեր տան ճանապարհը մոռացել է, դադարել է մեզ այցելելուց.* *итти прямою дорогою *ուղիղ, ճշմարիտ ճանապարհով ընթա-նալ, առանց խարամանկութեան, նենգութեան վարուել.* *пресѣчь кому д—у *մէկի ճանապար-հը կտրել, մէկին խոչընդոտ հանդիսանալ.* не знай къ намъ д—и *այլ ևս մեզ մօտ ոտք չը դնես, չգաս.* скатертью д! *ճանապարհը բաց է, ուր կուզես, գնա* (*ևս բարի ճանապարհ*). отрѣзать непріятелю д—у *թշնամու ճանապարհը կտրել, փակել, կապել*։ Дорогою *ն.* *կմ* на дорогѣ *ճանապարհին, ճանապարհորդելիս. գնալիս.* 2, *վաճառանի յատակի միջին մա-սը, գանն տանջից սկսած.* 3,* *ճանապար-հորդութիւն, ուղեգնացութիւն.* собираться въ д—у; отдохнуть съ д—и; быть въ д—ѣ *ճանա-պարհորդութեան մէջ գտնուել* 4,* *ճանապարհ, միջոց նպատակին հասնելու.* выбрать надежную дорогу къ исполненію своего намѣренія; 5, *ձկնորսական մեծ թակը, մեկ. որը ծայրին* блесна 1 *ունի, կանկառձկներ որսալու համար*։ Дороги, огъ *յ.* *ռմկ.* *Ցարգգող*։

Дорожки, огъ *ի. յ.* *ռմկ.* *Տնց.* 1, *սափական, շերտաւոր մետաքսէ կերպաս մի.* 2, *շերտեր, նախշեր գիպակեղէնների վերայ* -гильный *ած.* *այս կերպասի.*

Дорого *ն.* *ա.* Дорогой; -роговатый *ած.* *փոքր ինչ թանկ.* -роговизна *ի.* *թանկութիւն.* недородъ хлѣба производитъ во всёмъ д—у; д. книгъ не позволяетъ мнѣ и думать о покупкѣ; -роговщина *ա.* Дороговизна.

Дорогой (дорогъ -га, о; *բաղդատ.* дороже, *գերադր.* дражайшій) 1, *թանկ, թանկագին, մե-ծագին.* д—ія вещи; время дорого: не надобно его терять; 2,* *թանկագին, «ազնիւ», սիրելի, հաճելի.* д. гость, д. другъ; мнѣ дорогъ твой совѣтъ. Дорого *ն.* *թանկ, թանկ գնով.* д. да мило, дёшево да гнило (*առծ.*). онъ *д. платитъ за невоздержность своего языка; -рогонькій (-онекъ -онька, о) *ած.* *փոքր ինչ թանկ.* этотъ товаръ дорогонекъ. Дорогонько, гохонько *ն.* *փոքր ինչ թանկ, թանկ գնով*։

Дорогою *ն.* *ճանապարհին,* *տ.* Дорога.

Дородиться (-жусь -дится) *չ.* 1, *Տնց.* *իր* ծնունդով կամ բնածին ձիրքերով գերազանց, գերադաս հանդիսանալ, առաւելութիւն ունե-նալ. 2, *առատութեամբ բուսնել.* *առատ պտուղ տալ.* хлѣбъ не дородился и потому вздорожалъ *հացը լաւ չեկաւ, ուստի և թանկացաւ*։

Дородность *ի.* *մարմնեղութիւն, «առուգու-թիւն», գէրութիւն.* -дный *ած.* *մարմնեղ, գէր, «առուգ», լիք.* -дство *չ.* 1, *տ.* Дородность; 2, *Տնց.* *քաջութիւն, արիութիւն, կորով*։

Дорожать, взд—, под—, *չ.* *թանկանալ*։

Дороже *բաղդ.* *ած.* *և* *ն.* *աւելի թանկ, թան-կագին.* время всего д.

Дороженый *բյ.* *ած.* *տկոսած, վրան տկոսներ քաշած.* д. тесъ; -роженье *չ.* *թանկ, բարձր գնա-հատութիւն* (*իր ունեցածի*). *ժլատութիւն, խնա-յողութիւն.* -роженье *չ.* *ճանապարհներ, ուղի-ներ անցկացնելը.* -роженька *ի.* *Նւզ.* *պստիկ ճանապարհ, ուղի.* -рожить (-жу -жать), прод—*ն.* *տկոսներ քաշել, տկոսել* (*օր. տախտա-կը*). -ся *յչ.* *տկոսուել, փորուել.* доски, употребляемыя для кровель, дорожатся во всю длину.

Дорожить (-жу -жать), взд—, *չ.* кѣмъ *կմ* чѣмъ-либо 1, *թանկ, բարձր գնահատել.* онъ очень дорожитъ своею работою, своимъ мѣстомъ; 2, *թանկ գնահատել, չվատնել.* всякій долженъ д временемъ; -ся *չ.* 1, *թանկ, բարձր գին պա-հանջել.* 2, чѣмъ *թանկ, բարձր գնահատել*։

Дорожка *ի.* *Նւզ.* 1, *պստիկ ճանապարհ, շա-ւիղ, «կածան».* 2,* *ճանապարհորդութիւն, ուղե-գնացութիւն.* выпить на д—у; 3, *շերտ* (*գուլ-պաների վերայ*). 4, *գործուածքի վերայ տար-բեր գոյնով շերտ.* голубыя д—и по бѣлому полю; 5, *տանիքի տախտակների վերայ քաշած ա-կօսը* (*անձրևաջրի համար*). 6, *տ.* Дорога 5.

Дорожникъ *ա.* 1, *ակօսնաչափ*(?), *հիւսի խա-րարուցը* (*ռանդան*)՝ *տախտակների վերայ ա-կօսներ քաշելու համար. նման գործիք պատ-րաստողների.* 2, *մի տեսակ գուր, որ գործ է ածում նաև ելն խծուծողը.* 3, *ուղեցոյց* (*գիրք*). почтовый д.; 4, *ճանապարհի համար թխած նպարեղէն*։

Дорожничекъ, чка *Նւզ.* *տ.* Дорожникъ 3—4; -жный *ած.* *ճանապարհի, ճանապարհա—, ճա-նապարհորդական.* д—ая пыль; д—ыя записки; д. человѣкъ *ճանապարհորդ, ուղեգնաց.* д—ая коляска *ուղեկառք.* д-ое платье *ճանապար-հորդական զգեստ*։ дорожные, ыхъ *յ.* *ճա-նապարհորդներ, ուղեգնացներ.* -жчатый *ած.* *շեր-տաւոր.* д—ые чулки.

Дорослый *ած.* *սկւ.* *զործծ.* *մեծացած, չափա-հաս.* -растать *տ.* Дорастать.

Дорою *տ.* Дорыть. [*նարկութիւնների մէջ*)։

Дортуаръ *ա.* (*ֆր.*) *ննջարան* (*կրթական հիմ-*

Дорубать, -рубить (-блю -бятъ) *ն.* *կտրել պրծնել, բեկանել պրծնել.* -ся 1, *չ.* *կտրելով հասնել.* 2, *յչ.* *կտրուել վերջանալ.* -рубна *ի.* *կտրել պրծնելը.* -рубливать, ся *տ.* Дорубать, ся; -ругаться *չ.* *ռմկ.* *գադարել հայհոյելուց, հայհոյել պրծնել*։

Дорушать *ն.* *ռմկ.* *կտրել, կտրատել, կտորել.* дорушай этотъ хлѣбъ; -ся *յչ.* *կտրուել, կըտ-րատուել, կտորուել վերջանալ.* -рушивать, -рушить (-шу -шать) -рушать *ն.* *կտորել, կտրտել, կտորել, բեկանել պրծնել.* *բոլորովին քայքա-յել, կործանել*։

Доръ *ա.* 1, *Տնց.* *նոր բացած վարելահող, խամ հող. ազարակատեղ.* 2, *փափուկ փայտից կտրած*

(ճղած) բարակ տախտակ, որ գործադրւում է տանիքների վերայ, տ. Драни́ца; 3, գւռկ. պատի ծեփի տակից կպցրած պարիկ տախտակուկներ, տաշեղներ։

Дорывать I. (дорыва́ть, -ры́ть) ն. փորել պրծնել, պեղել պրծնել. д. коло́дезь; -ся 1, չ. փորելով, պեղելով հասնել. доры́лись до рудно́й жи́лы; д. до кла́да; 2, էր. փորուիլ վերջանալ. я́ма дорыва́ется; II. (дорыва́ть, -рва́ть) ն. քաղել, փետել, պոկոտել. д. траву́; -ся 1, անդր. ռմկ. *до кого́ աշխատել, ձգտել մէկին պատժել, մէկից վրէժ առնել, ատամները մէկի վերայ կրճտեցնել. онъ давно́ до него́ дорыва́ется; д. до чего́ մի բանի վերայ ընկնել. дорва́лся до но́выхъ плодо́въ; 2, էր. քաղուիլ, փետուիլ, պոկոտուիլ վերջանալ. послѣ́днія я́годы дорыва́ются.

Дорыскать (-ры́щу -ры́щутъ и -ры́скаю -аютъ), ся չ. այնքան վազել, վազվզել, մինչև որ յոգնիլ կամ անհամբերութեան հանդիպիլ։

Дорытіе չ. փորել պրծնելը. -ры́ть (-ро́ю -ютъ), ся տ. Дорыва́ть, ся.

Дорѣзать (-рѣ́жу -жутъ), ся, -рѣза́ть (-за́ю -ютъ), ся տ. Дорѣ́зывать, ся.

Дорѣзвиться (-влю́сь -вя́тся) չ. այնքան խաղալ, այնքան խնդալ, որ մրկէ անհամբերութեան հանդիպիլ։

Дорѣзка ի. -рѣзъ տ. -рѣзываніе չ. 1, կտրել պրծնելը, մորթել պրծնելը. -рѣзывать, -рѣза́ть, ն. 1, կտրել, կտրատել, կոտորել պրծնել. д. хлѣбъ; 2, փորագրել պրծնել. д. ландка́рту; 3, մորթել պրծնել (կիսադանակ, կիսամորթ կենդանուն). д. бара́на.

Доса́да ի. նեղութիւն, սրտնեղութիւն, տրտմութիւն, անախորժութիւն, անբաւականութիւն, ձանձրոյթ. сноси́ть терпѣли́во д—ы; причиня́ть кому-либо д—ы; -ди́тель տ. -ди́тельница ի. նեղութիւն, տրտմութիւն, տհաճութիւն, անախորժութիւն, ձանձրոյթ պատճառող այր, կին. -ди́тельность ի. տխրալիութիւն, անախորժելիութիւն. -ди́тельный ած. տխրութիւն, անբաւականութիւն պատճառող, անախորժելի, ձանձրալի. д—ые посту́пки; -ди́тельство չ. սկւ. գործծ. անբաւականութիւն, տհաճութիւն, անախորժ բան։

Досади́ть I. (-сажу́ -садя́тъ) տ. Досажда́ть; II. (-сажу́ -са́дятъ), ся տ. Доса́живать, ся; -са́дка ի. 1, տնկել պրծնելը. 2, տնկելով լրացնելը. -са́дливый ած. 1, տ. Досади́тельный; 2, տհաճ, անբաւական, գրգռուած. -садно́й ած. տնկելու, տնկելի. д—ыя дере́вья; -са́дный ած. սրտմտեցուցիչ, ձանձրալի, անախորժ. д—ыя рѣчи; доса́дно 1, ած. չ. мнѣ д. ես տխուր, տրտում, անբաւական եմ, ես ձանձրութիւն եմ զգում. 2, ն. սրտմտութեամբ, տխրութեամբ, տհաճութեամբ. са́дованіе չ. նեղանալը, վշտանալը, բարկանալը. -са́довать չ. на кого́-либо, на что մէկի, մի բանի վերայ նեղանալ, տրտմիլ, վշտանալ, բարկանալ. д. на подчинённыхъ за ихъ неиспра́вность; -са́дчикъ, -са́дчица տ. Досади́тель, -ница; -сажа́ть տ. Досажда́ть и Доса́живать; -сажда́ть, -сади́ть չ. кому́-либо մէկին ձանձրացնել, տաղտկացնել, նեղացնել, տհաճութիւն, անբաւականութիւն պատճառել, մէկի 'գլուխն տանել', բարկացնել. онъ безпреста́нно досажда́етъ мнѣ свои́ми про́сьбами; -сажде́ніе չ. ձանձրացնելը, տաղտկացնելը, նեղացնելը, տհաճութիւն, անախորժութիւն պատճառելը. -саже́ніе չ. սկւ. գործծ. տ. Доса́дка; -са́живаніе չ. 1, տնկել պրծնելը. 2, տնկելով լրացնելը. -са́живать, -сажа́ть, -сади́ть ն. 1, տնկել պրծնել. д. дере́вья; 2, տնկելով լրացնել. д. гряду.

Доса́ливаніе չ. աղել պրծնելը, աղ անել պրծնելը. -са́ливать, -соли́ть ն. աղել պրծնել, աղ անել պրծնել. д. мя́со; -ся 1, անդր. 'աղ առնել', աղուել պրծնել. мя́со досоли́лось; 2, էր. աղուիլ. աղ դրուիլ վերջանալ. остальна́я ры́ба доса́ливается.

Доса́сываніе չ. ծծելը, ծծել պրծնելը. -са́сывать, -соса́ть ն. ծծել, ծծել պրծնել. *д. тру́бку չիբուխ քաշել. -ся էր. ծծուիլ վերջանալ։

Досбира́ть ն. հաւաքել, ժողովել պրծնել։

Досве́рливаніе չ. գայլիկոնով, 'բուրգուով' ծակել պրծնելը. -ливать, -ли́ть (-лю́ -све́рлятъ) ն. գայլիկոնել պրծնել, գայլիկոնով, 'բուրգուով' ծակել պրծնել, բոլորովին ծակել. -ся էր. գայլիկոնով, 'բուրղուով' բոլորովին ծակուիլ։

Досви́стывать, -свиста́ть (-свищу́ -сви́щешь, սկւ. сви́стишь, -сви́щутъ, սկւ. свиста́ть) սուլել պրծնել, շւացնել պրծնել, դադարել սուլելուց, շւացնելուց. -ся էր. այնքան սուլել, այնքան շւեցնել, որ։

Досе́ль ռմկ. -се́лѣ, -се́лева ռմկ. ն. 1, մինչև այժմ, մինչև հիմա, մինչև այսօր կամ ցայժմ, ցայսօր. досе́лѣ объ э́томъ ничего́ не́ было слы́шно; 2, ռմկ. ցայս վայր, մինչև այստեղ. прочтено́ досе́лѣ.

Досерди́ть (-ржу́ -се́рдятъ) 1, ն. кого́ до чего́ մէկին այնքան բարկացնել, գրգռել, որ. 2, չ. (որ և досерди́ться) այնքան բարկանալ, որ։

Доси́дки տ. յ. օղու, կպրէ տակը, տկնուպրը. -си́денъ, дка տ. ձուից ուշ դուրս եկած ճուտ. -сидѣ́ть (-сижу́ -дя́тъ), ся տ. Доси́живать, ся; -си́женный բյ. ած. ձուից հանած. д. цыплёнокъ; -си́живаніе չ. 1, նստած անցկացնելը (որոշեալ ժամանակը). 2, քաշել, գալ պրծնելը. 3, թուխս գալ պրծնելը. -си́живать, -сидѣ́ть (-жу́ -дя́тъ) 1, նստած անցկացնել (որոշ ժամանակամիջոց). 2, գալ, քաշել պրծնել (օղի). 3, թուխս գալ պրծնել, թուխս գալով ճուտեր հանել. ку́рица досидѣ́ла цыплёнка; -ся 1, չ. սկւ. գործծ. այնքան նստել, որ. онъ до того́ досидѣ́лся въ гостя́хъ, что не зна́ли, какъ его́ вы́проводить; 2, էր. ա, գալուիլ, քաշուիլ. вино́ доси́живается; բ, ձուից հանուիլ, դուրս բերուիլ. цыпля́та доси́живаются; -сижу́ տ. Досидѣ́ть.

Доска́ ի. (յ. до́ски -со́къ) տախտակ (փայտեայ, քարեայ, մետաղեայ). распили́ть бревно́ на д—и; *ста́вить кого́-либо съ кѣмъ на одну́ д—у մի մարդու միւսին հաւասար, համապատիւ համարել. какъ *д. худо́й, высо́хшій խիստ նիհար, վտիտ. до *гробово́й д—й ցմահ. прочита́ть кни́гу отъ д—й до д—й գիրքը ծայրէ ծայր, սկզբից մինչև վերջ կարդալ. вырѣзна́я д. կաղապարային տախտակ. винтова́льная, винторѣ́зная д. պտուտակներ կտրելու տախտակ. про́волочная д. լարաքաշ, նուրթուլ քաշելու տախտակ. кла́сная д. դասարանական գրատախտակ։

Доска́бливаніе չ. քերել պրծնելը. -ска́бливать, -скобли́ть ն. քերել պրծնել. տաշել պրծնել.

-ся 1, չ. այնքան քերել, տաշել որ. 2, կր. քերուիլ, տաշուիլ վերջանալ։

Досказу́ ա. Досказа́ть; -**сказа́ть** (-скажу́ -жутъ), **ся** ա. Доска́зывать. ся; -**ска́зываніе** չ. պատմել վերջնելը. ասել վերջնելը. -**ска́зывать**, -**сказа́ть** ն. պատմել վերջնել, ասել վերջնել. д. ска́зку; -**ся** կր. պատմուիլ. ասուիլ վերջանալ։

Доскака́ть (-чу́ -ска́чутъ) ա. Доска́кивать; -**ся** չ. ռմկ. до чего́ այնքան վազվզել, թռչկոտել, որ փորձանքի, գժպհի պատահարի հանդիպել. ма́льчикъ доскака́лся до того́, что вывихнулъ себѣ но́гу; -**ска́киваніе** չ. թռչկոտելով վազելով հասնելը. -**ска́кивать**, -**скакну́ть**, -**скочи́ть** չ. վազելով, թռչկոտելով, ցատկոտելով հասնել. доскочи́ть до назна́ченной черты́. [տուփ։

До́скаинъ ա. Տնզ. -**нецъ**, **нца** Նւզ. պատիկ արկղ,

Досуча́ть ա. Досучи́ть.

Доскобли́ть (-блю́ -о́блятъ), **ся** ա. Доска́бли-[вать, ся.

Доскона́льный ած. խոկ, խոկական, վաւերական, ճշմարիտ, հարազատ. ճիշտ, ճշգրիտ։ **Доскона́льно** Տ. ճշտիւ, ճիշտ, ճշմարիտ կերպով, հիմնաւորապէս. մանրամասնօրէն, պարզապէսօրէն. д. о чёмъ-либо разспроси́ть.

Доскочи́ть (-чу́ -о́чатъ) ա. Доска́кивать.

Доскреба́ть, -скре́сть ն. քերելով մաքրել. -**ся** 1, չ. այնքան քերել, որ. քերելով հասնել. 2, կր. քերուիլ, քերուելով մաքրուիլ. -**скрёбки** ա. յ. քերածք. -**скребсти́сь** ա. Доскре́сться: -**скрёбывать**, -**скре́сть** (-ебу́ -бу́тъ; անց. доскрёбъ -бла́, б) ն. քերել, *ապտել. -**ся** 1, չ. քերելով հասնել. 2. կր. քերուիլ վերջանալ։

Доскучи́ть չ. զզուելի ձանձրութեամբ անցկացնել։

Досла́ть (-шлю́ -шлю́тъ). **ся** ա. Досыла́ть, ся.

Досла́щивать ն. բոլ հարկին քաղցրացնել, քաղցր դարձնել։

Досло́вный ած. բառացի, բառ առ բառ. д. перево́дъ. Досло́вно Տ. բառացի կերպով, բառ առ բառ. это мѣ́сто досло́вно заи́мствовано у тако́го-то а́втора.

Дослу́живаніе չ. 1, որոշ ժամանակ ծառայել վերջնելը. 2, եկղ. պաշտօնը, պատարագը վերջացնելը. -**слу́живать**, -**служи́ть** (-жу́ -у́жатъ) ն. 1, որոշ ժամանակ ծառայել վերջնել, ծառայել մինչև. д. до пенсіо́на; д. уро́чныя лѣта́; 2, եկղ. պաշտօնը. պատարագը վերջացնել, մատուցանել վերջնել. д. зау́треню; -**ся** 1. չ. до чего́ կամ чего́ ծառայելով հասնել, ստանալ. ձեռք բերել. д. ю больши́хъ чино́въ, д. генера́льскаго чи́на; 2. այնքան ծառայել, որ. 3, կր. մատուցուիլ. обѣ́дня дослу́живается.

Дослу́шать. **ся** ա. Дослу́шивать, ся; -**слу́шиваніе** չ. ցվերջ լսելը, լսել վերջնելը. -**слу́шивать**, -**слу́шать** ն. ցվերջ լսել, լսել վերջնել. д. про́повѣдь; д. дѣла́; д. конце́ртъ; -**ся** կր. լսուիլ, մինչև վերջը լսուիլ. уро́ки дослу́шиваются со внима́ніемъ; -**слы́шать** (-шу -шатъ) ն. պարզ կերպով, ճիշտ կերպով լսել, իմանալ (գրեթէ միշտ не բացս. մասնիկով. օր.) я не дослы́шалъ, что вы мнѣ приказа́ли сдѣ́лать; -**слы́шливый** ած. ռմկ. գործծ. ծանր ականջ, անվրէպ լսելիք ունեցող, լաւ լսող։

Дослѣди́ть (-жу́ -дя́тъ) ա. Дослѣ́живать; -**слѣди́ться** չ. до чего́ քննելով, խորհելով հասու լինել, միջամտութ լինել մի բանի. -**слѣ́дованіе** ա. Дослѣ́дываніе; -**слѣ́довать** (-дую -ютъ), **ся** ա. Дослѣ́дывать, ся; -**слѣ́дываніе** չ. լրացուցիչ քննութիւն, հետախուզութիւն. -**слѣ́дывать**, -**довать** 1, ն. լրացուցիչ քննութիւն կատարել, նորանոր տեղեկութիւններով քննութիւնը լրացնել. 2, հետևել, գնալ, հասնել ց', մինչև. -**ся** կր. բոլորովին քննուիլ, հետախուզուիլ, լրացուիլ. -**слѣ́живать**, -**слѣди́ть** չ. հետքով գնալով հասնել, տեղ հասնել։

Досма́ливать, -**смоли́ть** ն. ձիւթել, կպրել պրծնել. -**ся** կր. ձիւթուիլ, կպրուիլ վերջանալ։

Досма́триваніе չ. 1, ցվերջ նայելը, տեսնելը. 2. հսկում, հսկողութիւն. 3, նկատելը. -**сма́тривать**, -**смотрѣ́ть** ն. և չ. 1, ցվերջ նայել, տեսնել. онъ вы́шелъ изъ теа́тра. не досмотрѣ́въ пье́сы; 2. д. за кѣмъ, за чѣмъ մէկի, մի բանի վերայ հսկել. за молоды́мъ человѣ́комъ на́добно ещё д.; 3, նկատել, տեսնել, ‘բարբառուրդ անել‘. въ э́томъ мѣ́стѣ я не досмотрѣ́лъ опеча́токъ; 4, ստուգել, վաւերացնել. д. това́ры; -**ся** կր. խուզարկուիլ, քննուիլ, ստուգուիլ. весь бага́жъ у новоприбы́вшихъ досма́триваются при переѣ́здѣ за грани́цу.

Досмоле́ніе չ. ձիւթել, կպրել պրծնելը. -**смоли́ть** (-лю́ -ля́тъ), **ся** ա. Досма́ливать, ся.

Досмо́трщикъ ա. վերակացու, վերահսկող, մաք. մաքսատան. -**смо́трщица** ի. 1, վերակացուհի, վերահսկողի կինը. 2, վերահսկողուհի, որ և է բանի վերայ հսկող կինարմատ։

Досмо́тръ ա. հսկողութիւն, վերահսկողութիւն. на э́той тамо́жнѣ д. о́чень стро́гій; -**смотрѣ́ть** (-трю́ -тря́тъ), **ся** ա. Досма́тривать. ся.

Досмѣя́ться (-смѣю́сь -ю́тся) 1, до чего́ այնքան ծիծաղել, խնդալ, որ. д. до слёзъ; 2, դադարել ծիծաղելուց, խնդալուց։

Доснасти́ть (-щу́ -стя́тъ), -**щивать** ն. սարքել պրծնել, պատրաստել, կազմել պրծնել։

Доснова́ть (-ную́ -ю́тъ). -**но́вывать** ն. գործուածքի առէջքը (осно́ва) պատրաստել։

Досова́ть (-сую́ -ю́тъ), -**со́вывать**, -**су́нуть** ն. խցել, խցկել, մի բանի մէջ կոխել պրծնել. բոլորովին, ամբողջէս խցել, խցկել, կոխել. -**ся** կր. խցուիլ, խցկուիլ. բոլորովին կոխուիլ վերջանալ։

Досоздава́ть, -**созда́ть** ն. ստեղծել, բոլորովին շինել, կերտել, յօրինել պրծնել։

Досолённый բյ. ած. աղած, աղ դրած, աղ արած. -**со́ливаніе** ա. Доса́ливаніе; -**со́ливать**, **ся**. -**соли́ть** (-лю́ -со́лятъ), **ся** ա. Доса́ливать, ся; -**со́лъ** ա. ռմկ. գործծ. աղել պրծնելը, աղ անել պրծնելը։

Дососа́ть (-сосу́ -су́тъ), **ся** ա. Доса́сывать, ся.

Досо́хнуть ա. Досыха́ть.

Досочини́ть (-ню́ -ня́тъ), -**сочиня́ть** ն. հնարելով, յօրինելով աւելացնել, լրացնել։

Доспа́ть (-сплю́ -спя́тъ), **ся** ա. Досыпа́ть, ся I.

Доспле́тничаться չ. այնքան բամբասել, շարախօսել. որ։

Доспо́риться (-рю́сь -ря́тся) 1, ռմկ. до чего́ այնքան վիճել, վիճաբանել, որ անհամութեան հանդիպել. 2, չ. վէճը, վիճաբանութիւնը վերջացնել, պրծնել։

Доспра́шивать, -**спроси́ть** (-шу́ -о́сятъ) ն. հարցնել պրծնել. -**ся** չ. чего́ у кого́ հարցնելով, հարցուփորձ անելով մէկից մի բան իմանալ, տեղեկանալ։

Доспѣва́ніе չ. հասնիլը, հասունանալը. -**спѣва́ть**, -**спѣ́ть** 1, չ. հասնիլ, հասունանալ. доспѣва́ютъ хлѣба́ արտերը հասնում են. плоды́ доспѣ́ли;

2, հասնել, վրայ հասնել. 3, Ն. ռմկ. ճարել, գտանել, պատրաստել. 4, որս. доспѣть звѣря գազանի յետևից հասնել, գազանին կալնուլ. 5. Չ. ռմկ. խուճապաւ, շտապ ժողովուել, հաւաքուել. -спѣлость Է. հասունութիւն. -спѣлый ած. հասած, հասունցած. -спѣть ա. Доспѣвать; -спѣться Չ. ռմկ. պատահել. տաշ գալ:

Доспѣхъ ա. (յաճխ. յ. доспѣхи) զինավառութիւն, սպառազինութիւն. -спѣшникъ ա. 1. ակմ. զործծ. զինավառուած մարտիկ, զօրական. 2, ռմկ. զործաւոր, արհեստաւոր, վարպետ. -спѣшный ած. 1, ռմկ. զինավառուած, սպառազինուած. 2, զինավառութեան, սպառազինութեան. 3, ռմկ. կազմ, պատրաստ, պատրաստական. փութաջան:

Досрóчный ած. ցպայմանաժամ, պայմանաժամից առաջ [հատուցուող, տրուող ևլն]. д. взносъ податéй.

Доссóриться (-рюсь -рятся) փոխ. до чегó այնքան վիճել. վիճաբանել. կռուել (խօսքով). որ:

Заточáть, -точи́ть *ъ.* 1, *սրածել, սուրացնել, ծայրը սուր շինել (գործիքներ)*. 2, *բանտարկել, բանտում, աքսոր մէջ պահել*. з. въ монастырь *վանք, կուսանոց մտցնել*. -точéніе *չ.* 1, *սրածելը, սուրացնելը*. *բանտարկութիւն, աքսոր*. 2, *սրածարանք, սրածագործ*. -точи́тель *ա.* -точи́тельница *ի.* *սրածող, սուրացնող այր, կին*. -точи́ть (-чу́ -чать) I. *ա.* Заточáть; II. *սկսել սրել, յղկել (գր.)*

Затошни́ть (—, -и́тъ) *ъ.* -ся *չ.* *անձն.* *սկսել խառնել (սրտի մասին)*. меня́ затошни́ло *կամ* мнѣ затошни́лось *սիրտս խառնում է*:

Затрáва *ի.* *որսալը, կանչելը (բարակներին վրան հո՛ս անելով)*. -трави́ть (-влю́ -вять) *ա.* Трави́ть 2 & Затрáвливать; -трáвка *ի.* *հրացանի հրանոթի վառօդանցը (՛աղզօթու ծակը՛)*. -травлéніе, -трáвливаніе *չ.* *որս. բարակներով հետամուտ լինելը. որսալը*. -трáвливать, -трави́ть *ъ.* *որս.* 1, *բարակներին բաց թողնել հո՛ս անել*. 2, *բարակներով հետամուտ լինելով որսալ, կալնել*:

Затрáвочникъ *ա.* *հրետ.* *թնդանոթի վառօդանցքը (՛աղզօթու ծակը՛) մաքրելու ձողիկ*. -вый, -вочный *ած.* 1, *վառօդանցքի (՛աղզօթու ծակի՛)*. з. пóрохъ.

Затрапéзникъ *ա.* 1, *ա.* Затрапéзъ; 2, (затрапéзница *ի.*) *սեղանակից այր, կին*. -трапéзничать *չ.* *սկսել ճաշել, ընթրել*. -трапéзный *ած.* *կոշտակերպաւոր, չերտակտաւ*. -трапéзъ *ա.* *կոշտ, չերտաւոր կտաւ, զորձուածք*:

Затрáта *ի.* *ծախս, մսխ*. на этотъ домъ онъ сдѣлалъ большія з—ы; -трáтить (-áчу -тать) *ա.* Затрáчивать; -трáчиваніе *չ.* *ծախսելը, ծախս, մսխ անելը*. -трáчивать, -трáтить *ъ.* на когó, на что *մէկի, մի բանի վերայ ծախսել, մսխել, ծախսեր անել*:

Затрепетáть (-пещу́ -пéщутъ) *չ.* *սկսել դողալ, գզզզալ*. -ся *չ.* *սկսել թրփահարուել, շարժուել. տատանուել, դողալ*:

Затрепыхáться *չ.* *թրփալ (թրփալ, թրփթալ, թրթփալ), ձայն ու սարք, թևերը ձգել*. «онá (*նա՛ մէջքը կոտրած ձին*) затрепыхáлась на землѣ у егó ногъ, какъ подстрѣленная пти́ца».

Затрещáть (-щу́ -щáть) *չ.* *սկսել ճարճել, ճռճռել, պատռել (ճայթյում, աղմուկ հանելով)*. -трéщина *ի.* *խիստ ապտակ, ՛սիլլայ՛, ՛շափալակ՛. բաղցր սաստիկ հարուած*. дать з—у *մի լաւ հասցնել*:

Затрóгиваніе *չ.* 1, *շօշափելը, շարժելը, դիպչելը*. 2, *ծաղրելը, վիրաւորելը*. -трóгивать, -трóнуть *ъ.* 1, *սկսել շարժել, շօշափել, դիպչել*. 2, *ծաղրել, դզզել, վիրաւորել*:

Затруби́ть (-блю́ -би́ть) *չ.* *սկսել փողհարել, ածել*. *з. о чёмъ *մի բան տարածել, սկսել մի բան աղաղակել, ամէնքին պատմել, յայտնել*:

Затрудне́ніе *չ.* *դժուարութիւն, արգելք, խոչընդոտ*. встрѣчáть з—ія *դժուարութիւններ, խոչընդոտութիւններ հանդիպել*. находи́ться въ з—іи *ա.* Затрудня́ться; -ди́тельность *ի.* *դըժուարութիւն, ծանրութիւն*. -ди́тельный *ած.* *դըժուար, դժուարին, ծանր. անյարմար*. з-ое положéніе: -дня́ть, -дни́ть (-ню́ -ня́ть) *ъ.* что *մի բան դժուարացնել. մի բանի արգելք. խոչընդոտ հանդիսանալ*. -ся *անդր.* *դժուարանալ, տարակուսել*:

Затрýсить (-шу -сять) *չ.* *սկսել վախել, վախենալ, երկչոտել*. -си́ть (-шу́ -си́ть), -шивать *ъ.* *վրան ածել, թափել, շաղ տալ (օր. ալյուր)*, *ծածկել*:

Затрясти́, -ть (-трясу́ -сýтъ; *անց.* затря́съ, слá, ó) *ъ.* 1, *սկսել թափահարել. ժամ տալ*. 2, *թափահարելով ուժից զցել, հարստահարել*. 3,* *վատնել, ծախսել*. мнóго онъ дéнегъ затря́съ на это; -сти́сь *չ.* *դողալ, ցնցուել*:

Затужи́ть (-жу́ -жáть) *չ.* *սկսել թախծել, տխրել, սգալ*:

Затумáниваніе *չ.* *մըգապատելը*. -тумáнивать, -тумáнить (-ню -нять) *ъ.* 1, *մըգապատել, մէգով, մշուշով պատել*. 2,* *մթնեցնել, պղտորել, խճճել*. -ся *չ.* *մըգապատուել, մառախլապատ դառնալ*:

Затупи́ть (-плю́ -пять), ся *ա.* Затупля́ть, ся; -туплéніе *չ.* *բթացնելը*. -тупля́ть, -тупи́ть *ъ.* *բթացնել*. -тупѣ́ть *ա.* Тупѣ́ть.

Затухáніе *չ.* *հանգչելը, մարելը*. -тухáть, -тýхнуть *չ.* 1, *հանգչել, մարել*. 2, *սկսել փչանալ (ձկան, ձուների մասին)*. -тýхлый *ած.* 1, *հանգած, մարած*. 2, *փչացած, ապականուած*:

Затушáть, -ши́ть *ъ.* *հանգցնել, մարել*. -ся *չ.* *հանգչել, մարել*. -шевáть (-шу́ю -ютъ) *ա.* Затушёвывать; -шевáніе, -шёвываніе *չ.* *վերատուշելը. վրայից տուշելը*. -шёвывать, -шевáть *ъ.* *վերատուշել, վրայից տուշել, վերատուշել (նկարը)*:

Затушéніе *չ.* *հանգցնելը, մարելը*. -туши́ть, ся *ա.* Туши́ть, ся.

Зáтхлость *ի.* *հոտածութիւն, նեխածութիւն, փչացում*. -тхлый *ած.* *հոտած, նեխած, փչացած (խոնաւ և խեղդուած օդից)*:

Затыкáніе *չ.* *կալնելը, խցելը, գոցելը*. з. прóбкою *խցանելը*. -тыкáть, -ткнýть *ъ.* *կալնել, խցել, գոցել, փակել*. з. прóбкою *խցանել, խցանով գոցել*. *з. комý глóтку *մէկի բերանը կապել, մէկին լռեցնել, սաստել*. з. зá поясъ *՛ծախսել տանել՛, ասան անգամ ՛ինքը գնել-հանել, յաղթել*:

Заты́локъ, лка *ա.* -лочекъ, чка *նւզ.* *ծոծրակ, ՛ծրծորակը՛*. почёсывать з. *ականջը քորել, դժուարանալ, անտարբերութիւն ցոյց տալ*. -лочный *ած.* *ծոծրակի, ՛ծրծորակի՛*. -льникъ *ա.* *ծոծրակակալ, ծոծրակապատ (սաղաւարտի)*. -льный *ած.* 1, *ա.* Затылочный; 2, *յետևի, քամակի, յետևում, քամակում գտնուող*. з—ое вóйско *յետապահ զօրք*: [*ուղ անգ, վայր*:

Затылье *չ.* *ցանկի, շարքի յետևում գտնի-*

Затычка *ի.* *խցան, փակիչ, կալնիչ*:

Затѣвáніе *չ.* 1, *սկսելը, ձեռնարկելը*. 2,* *որոճալը, հնարելը*. -тѣвáть, -тѣ́ять *ъ.* 1, *սկսել, ձեռնարկել*. 2, *որոճալ, հնարել, նիւթել*. -ся *անձն.* *յղացուել, նիւթուել, պատրաստուել, անուել*. что тамъ затѣвáется *այնտեղ ինչ է որ անում, ինչ բաներ են անում*:

Затѣ́я, ѣй *ի. ջ.* *յղացումը*. *նիւթում, հնարք*. это ли́шнія з—и *զուր ավելորդ բաներ են*. -тѣ́йливость *ի.* *հնարամտութիւն*. -тѣ́йливый *ած.* 1, *հնարամիտ, ճարտարամիտ*. 2, *ծիծաղաշարժ, հնարավարժ*. з—ое дитя́; -тѣ́йникъ *ա.* -тѣ́йница *ի.* *հնարամիտ, նորանոր բաներ գտնելու ընդունակ, ծիծաղաշարժ, ՛մասխարայ՛ այր, կին*. -тѣ́йничать *չ.* *որոճալ, այլ և այլ մտքեր անել, այլ և այլ բաներ նիւթել*. -тѣ́йный *ած.* 1, *պա-*

հանչկոտ, շատ պահանջներ անող. 2, գլխաւմով, նպատակով տրած, տած եղն. з—ое слово խոսքմաց, խորունկ խօսք. -тѣйщикъ ա. -тѣйщица ի. հնարագէտ, խորհմատ այր, կին։

Затѣмъ մ. ապա, գորանից յետոյ, հաւկ ուրեմն, հաւկ յետոյ։

За|тѣнѣніе, -тѣниваніе չ. 1, ստուերաւորելը, մթացնելը. -тѣнивать, -тѣнять, -нить (-ню -нятъ) ն. 1, ստուերաւորել, ստուերապատել, մթացնել. 2, ստուեր տալ։

Затѣ|сненіе չ. սեղմելը, հուպ տալը, ճմլելը. -снять, -снить (-ню -нятъ) ն. սեղմել, սխմել, հուպ տալ, ճմլել. խիստ ճնշել, նեղացնել։

За|тѣя ի. (*սովորբ. յ.*) տ. Затѣи; -тѣять, ся տ. Затѣвать, ся. [վնկալ։

Затявкать ն. սկսել հաջել, կաղկանձել, վընկ-

За|тягиваніе չ. 1, պրկելը, պինդ կապելը. 2, ներս քաշելը, ներս ծծելը (ծխախոտի ծուխը). 3, սկսելը (երգը). 4, ձգձգելը, ուշացնելը (գործը). -тягивать, -тянуть ն. 1, սկսել քա(ր)շել. ձգել. 2, պրկել, պինդ կապել. 3, ներս քաշել, ներս առնել, ներս ծծել (օր. ծխախոտի ծուխը). насосъ хорошо затягиваетъ; 4, սկսել (երգը). 5, ձգձգել, ուշացնել. 6, փխբ. քաշել, հաւաքել, ծածկել, գոցել. затягиваетъ рану վէրքը սպաքինուում է. -ся 1, անդր. կապուել. 2, չ. ծածկուել, գոցուել, սպաքինուել (վէրքի մասին). 3, չ. ձգձգուել, ուշանալ, յետանալ։

За|тяжка ի. 1, տ. Затягиваніе; 2, կապիչ, թել, փոկ (մի բան կապելու, պրկելու). 3, ձգձգում, յապաղում. *արգելք, խոչընդոտութիւն. дѣло пошло на з—у գործը ձգձգուեց, ուշացաւ. -тяжной ած. 1, քաշուող, հաւաքուող, կապուող. քաշած, հաւաքած, կապած. з—ая петля; 2, ձգձգուող, ուշացող, 'ջանջալ'։

Затянуть, ся տ. Затягивать, ся.

Заугольный ած. անկիւնի յետևում գտնուող։

Заулокъ, лка ա. փակ, կողմնակի փողոց։

Зауминичать չ. [սկսել] խելքի գօռ տալ, իմաստակութիւն անել. -ся չ. խելքին խիստ գօռ տալ, իմաստակութիւնը ծայրայեղ աստիճանի հասցնել։

Зау|нывно մ. թախծալից կերպով, վշտագին, տխրութեամբ. -нывность ի. տխրութիւն, տրտմութիւն, վշտագնութիւն. -нывный ած. տխուր, տրտում, վշտագին, թախծալից, աղէխորով։

Заупокойный ած. հոգեհանգստութեան. з—ая молитва; з—ая обѣдня. [տանալ։

Заупорствовать (-ствую -ютъ) չ. յամառել, խըռ-

Заупрямиться (-млюсь -мятся) չ. յամառել, կամակորել, կամակորութիւն անել։

Заура|лье չ. Անդրուրալ[եան երկիր]. -льскій ած. անդրուրալեան։ [գռալ (փորի մասին)։

Заурчать (-рчу -рчатъ) չ. սկսել գռռալ, գռ-

Зау|рядный ած. փոխանակող, փոխարինող, ժամանակաւոր. սովորական. з. писатель միջակ, սովորական գրող. з. человѣкъ շատ սովորական, պարզամիտ մարդ. -рядъ մ. ժամանակ առ ժամանակ, փոխանակաբար. սովորաբար, սովորական կերպով։ [դնգի չուրջը)։

Заусеница ի. քցիմ (պատռուած մորթուկ ե-

За|утра մ. *ռմկ.* վաղը, վաղ առաւօտեան, տ. Завтра; -утренній ած. առաւօտեան ժամերգութեան, պաշտօնի. з—яя служба տ. Заутреня; з—яя молитва առաւօտեան աղօթք. -утреня ի. առաւօտեան ժամերգութիւն, առաւ. պաշտօն։

Зау|тюживаніе չ. արդուկելը. -тюживать, -тюжить (-жу -жатъ) ն. արդուկել, 'ութիւել'։

Зау|чивать, -чить (-чу -чатъ) ն. 1, что մի բան բերանացի, անգիր սովորել. 2, кого մէկին շատ սովորեցնելով յոգնեցնել, շշմեցնել, ապուշ դարձնել։

За|ушать, -ушить ն. ապտակել, 'սիլլայ' տալ. -ушекъ, шка ա. ականջի արմատին, պարուած մազը. -ушеніе չ. ապտակելը, 'սիլլայ' տալը. -ушина ի. ապտակ, 'սիլլայ'. -ушить (-шу -шатъ) տ. Заушать; -ушица, -ушница ի. ուռեցք ականջազեղձի. -ушный ած. ականջի յետևում գտնուող։

Зафальшивить (-влю -вятъ) չ. սկսել սխալ երգել կամ ածել։ [լիսոփայութիւն(ներ) անել

Зафилософствовать (-ствую -ютъ) չ. սկսել փի-

Зафрантить (-чу -тятъ) չ. սկսել պճնասիրութիւն անել, պճնամոլել։

Зафрах|тованіе չ. վարձելը (նաւը՝ բարձելու նպատակով). -товать (-тую -ютъ) ն. վարձել, բռնել (նաւը՝ բարձելու նպատակով)։

Зафыркать չ. [սկսել] փնչել (ձիու մասին)։

За|хаживаніе չ. այցելելը, մէկի մօտ մտնելը (անցնելիս). -хаживать չ. այցելել, մտնել մէկի մօտ (անցնելիս)։

За|хаивать, -хаять ն. 1, սկսել յանդիմանել. 2, кого մէկին լու շշպրել, ցեխը կոխել, պախարակել. 3, что փնովել, վատաբանել, պարսաւել։

Захандрить (-рю -рятъ) չ. սկսել սևամաղձել, անփարատելի տխրութեան, տրտմութեան անձնատուր լինել։ [կեղծաւորութիւն անել։

Заханжить (-жу -жатъ) չ. սկսել քսութիւն,

За|хапаніе չ. գրփելը, խլելը, յափշտակելը. -хапать տ. Захапывать; -хапываніе տ. Захапаніе; -хапывать, -хапать ն. գրփել, խլել, յափշտակել։

За|харкивать, -харкать 1, չ. սկսել թքել, բերանից թուք, խուխ դուրս թքել. 2, ն. թքոտել, թքով, խուխով կեղտոտել. -ся 1, չ. շարունակ թքել, խխել. 2, անդր. իրեն իրան թքոտել, կեղ-

Захаять տ. Захаивать. [տոտել։

За|хваливаніе չ. շափազանց գովելը, ներբողելը. -хваливать, -хвалить (-лю -лятъ) ն. չափազանց գովել, ներբողել։

Захвастать չ. սկսել պարծենալ, մեծամտել. -ся չ. չափազանցել մեծ մեծ խօսելուց, մեծ մեծ 'բրդելուց', պարծենալուց։

За|хватать ն. 1, սկսել բռնել, ջամփել. 2, յաճախ բռնելով կեղտոտել. -ся չ. 1, աշխատել բռնել, ջամփել. 2, чѣмъ շատ վերցնել։

Захватить (-хвачу -тятъ) տ. Захватывать.

За|хватъ ա. 1, անիրաւաբար առնելը, գրփելը. յափշտակելը. 2, աւարառութիւն, յափշտակութիւն. կողոպուտ. -хватываніе չ. 1, բռնելը. 2, բռնելը, կանգնեցնելը, դադարեցնելը (օր. արիւնը). 3, անիրաւաբար յափշտակելը, կողոպտելը. -хватывать, -хватить ն. 1, բռնել, կալնել, ճանկել (օր. գազին, փախստականին). колесо захватило у него полу անիւը նորա փէշը ճանկեց, բռնեց. простудишься и *захватишь лихорадку կը մրսես և կը դողացնես. 2, բռնել, գրաւել. յափշտակել. զօռով վերցնել. не захватывай чужой земли, а паши свою; непріятель захватилъ обозъ; 3, բռնել, կանգնեցնել, դադարեցնել (օր. արեան հոսումը). у меня духъ захватываетъ

շունչը բանուած, կտրուած է. 4, բանել, վրայ հասնել, վրայ տալ. дождь и бу́ря меня́ за- [хвати́ли.

Захваче́ніе ջ. բանելը, վերցնելը։

Захворáніе ջ. հիւանդանալ, տկարանալ[ըսկսել]ը. -хворáть չ. [սկսել] հիւանդանալ, տկարանալ, հիւանդութիւն, տկարութիւն քաշել։

Захéривать, -рить (-рю -рять) ն. ջնջել, խազել (X տառի ձևով)։

Захилéлый ած. թուլացած, հալից ընկած. -хилéть չ. թուլանալ, հալից ընկնել։ [մաքել։

Захирéть չ. սկսել թուլանալ, չորանալ, ցա-

Захитри́ть (-рю́ -ря́ть) չ. սկսել խորամանկել, խորամանկութիւն անել։ [ծաղել։

Захихи́кать չ. [սկսել] 'փսս փսս անել', ծի-

Захлебáть ն. սկսել ուտել, 'հուռ անել' (հեղուկեղէնը՝ գդալով)։

Захлебну́ть, ся տ. Захлёбывать, ся; -хлёбываніе ջ. վրայից, վրան խմելը. -хлёбывать, -хлебну́ть ն. վրան, վրայից խմել. з. что водо́ю մի բանի վրայից ջուր խմել (օր. դառն համը կտրելու համար). -ся չ. խեղդուել, շնչասպառուել (ագահաբար, անզգոյշ կերպով խմելուց). з. смѣ́хомъ ծիծաղից թուլանալ։

Захлесну́ть տ. Захлёстывать; хлестáть (-хлещу́ -хлéщутъ) ն. ցմահ մտրակել, մտրակելով սպանել. -хлёстка ի. կապ, հանգոյց. -хлёстываніе ջ. 1, մտրակով խփելը. 2, վերևից զարկելը, խփելը, վրան թափուելը. -хлёстывать, -хлесну́ть ն. 1, մտրակով խփել, մտրակել. 2, վերևից զարկել, խփել, վրան թափուել, ատկովն անել. во́лны захлесну́ли ло́дку. [կլտալ։

Захлипáть, -ывать չ. [սկսել] հեկեկալ, հեծ-

Захло́пать չ. [սկսել] խփել, զարկել. սկսել ականջները խլշացնել (իշի մասին), շխկել (մտրակը). з. въ ладо́ши սկսել ծափ տալ. -хло́пка ի. փակիչ, կալնիչ, ծածկիչ. -хло́пнуть, ся տ. Захло́пывать, ся.

Захлопотáть (-почу́ -по́чутъ) չ. սկսել հոգալ, հոգս քաշել. ся չ. խիստ հոգալ, մտատանջուել. խառնուել, շաղուել, գլուխը կորցնել (շատ հոգսերից, շատ գործերից)։

Захло́пываніе ջ. շրխկացնելը, ուժգին, արագագէս փակելը, 'չխ անելը' (օր. պատուհանը). -хло́пывать, -хло́пнуть ն. շրխկացնել, ուժգին, արագագէս փակել, 'չխ անել' (օր. դուռը, պատուհանը), խուփ անել, խփել (օր. մը և է անօթի խուփը). -ся անդր. շրխկալ, ուժգին խփուել, փակուել, 'չխ ըլել' (օր. դռան մասին)։

Захлю́пать, -хлю́стать ն. թացել, ցեխոտել, կեղտոտել (շորերը՝ գնալիս). -ся անդր. թացուել, ցեխոտուել, իր շորերը թացել, ցեխոտել։

Захны́кать չ. սկսել հեկեկալ, հեծկլտալ։

Заходи́ть (-хожу́ -хо́дятъ), зайти́ չ. 1, къ кому́, куда́ մէկի մօտ, մի տեղ մտնել (անցնելիս), այցելել. зайди́те ко мнѣ на мину́тку; 2, հեռու գնալ. մի բանի մէջ, մի բանի խորքերը մտնել. холе́ра зашла́ въ Россі́ю изъ 'Азіи; ссо́ра ихъ зашла́ сли́шкомъ далеко́ и примире́ніе врядъ-ли уже́ возмо́жно; 3, մօտից, մօտովն անց կենալով քամակին ընկնել. з. въ тылъ непрія́телю; 4, о нёмъ зашла́ рѣчь նորա մասին խօսք վայր ընկաւ. -ся չ. չորանալ, փայլանալ, անզգայանալ (օր. ցրտից՝ անդամների մասին)։

Захо́дъ ա. 1, տ. Захожде́ніе; 2, նեղ անցք. -хожде́ніе ջ. 1, մայր մտնելը (լուսատուների). з. со́лнца; 2, Заха́живаніе; -хо́жій ած. 1, հեռու անցից, օտար երկրից եկած. 2, անցնելիս մտած. [տունը, տնտեսութիւնը կառավարել։

Захозя́йничать չ. սկսել տնտեսութիւն անել,

Захолáживаніе ջ. սառեցնելը, պաղեցնելը, հովացնելը. -лáживать, -лоди́ть (-ложу́ -ди́тъ) ն. սառեցնել, պաղեցնել, հովացնել. -лодѣ́ть չ. սառել, պաղել, հովանալ։

Захолу́стье ջ. յետ ընկած, խուլ տեղ, անկիւն։

Захотѣ́ть (-хочу́ -хо́чешь -хотя́тъ) ն. что, чего́ սկսել ուզել, փափագել, ցանկանալ. -ся դէմք. ցանկանալ, փափագել. ему́ захотѣ́лось ѣсть; ему́ захотѣ́лось домо́й.

Захохотáть (-хочу́ -хо́чутъ) չ. սկսել հռհռալ. -ся չ. ծիծաղելուց, հռհռալուց թուլանալ, 'մեռնել'. -хочу́ տ. Захотѣ́ть.

Захрабри́ться (-рю́сь -ря́тся) չ. իր քաջութիւնը ցոյց տալ, սկսել խիզախել, համարձակել։

Захрапѣ́ть (-плю́ -пя́тъ) չ. սկսել խռմփալ, խռռացնել։

Захребе́тникъ ա. 1, 'մսաղաղ ուտող' (անհոգ, անգործակ, անասուն գիւղացի). 2, ձրիակեր, պորտաբոյծ, պնակալէզ. 3, վարձկան մշակ, բանուոր. 4, հացկատակ, պարապ-սարապ թրև եկող։

Захребе́тный ած. 1, լեռներին, լեռնապարի յետևում գտնուող. 2, քամակում գտնուող։

Захрипѣ́ть (-плю́ -пя́тъ) չ. սկսել խռպոտել, խռպոտ ձայն ստանալ։

Захромáть չ. սկսել կաղալ։

Захрустѣ́ть (-щу́ -стя́тъ) չ. սկսել ճրթճրթալ։

Захрю́кать չ. սկսել խռնչել, գնչել (խոզի մասին)։

Захуле́ніе ջ. բասրելը, պարսաւելը. -хули́ть (-хулю́ -ху́лятъ) ն. [սկսել] բասրել, պարսաւել, կշտամբել. 2, բոլորովին բասրել, պարսաւել, կշտամբել։

Захѣ́ривать, -рить տ. Захе́ривать, -рить.

Заца́паніе ջ. գրփելը, յափշտակելը. -ца́пать ն. գրփել, յափշտակել, գուլթել։

Зацара́пать ն. սկսել ճանկել, ճանկռտել։

Заца́рствовать (-ствую -ютъ) չ. սկսել իշխել, թագաւորութիւն անել։

Зацвѣ́лый բյ. ած. բորբոսած. -цвѣсти́, -цвѣ́сть (-цвѣту́ -ту́тъ; անց. зацвѣ́лъ ла, о) Зацвѣта́ть; -цвѣта́ніе ջ. 1, ծաղկելը. 2, բորբոսնելը. -цвѣта́ть, -цвѣсти́, -цвѣ́сть չ. 1, սկսել ծաղկել, փթթել. 2, սկսել բորբոսնել, բորբոսնակալել։

Зацеремо́ниться (-ню́сь -ня́тся) չ. սկսել քաշուել, ամաչկոտութիւն անել։

Зацѣлова́ть (-лу́ю -ю́тъ) ն. առատօրէն, շատ անգամ համբուրել, պաչել, պաչպչորել. -ся անդր. անընդհատ միմեանց համբուրել, պաչել, պաչպչորել։

Зацѣ́па ի. 1, կեռ, ճանկ ևն (որից օր. աննօթի փէշը բռնուած է). 2,* կռուարար մարդ. -цѣпи́ть (-плю́ -цѣ́пятъ), ся տ. Зацѣпля́ть, ся; -цѣ́пка նւզ. տ. Зацѣ́па; -цѣпле́ніе ջ. բռնելը, ճանկելը. -цѣпля́ть, -цѣпи́ть ն. 1, чѣмъ за что մի բանով մի բանից բռնուել. ճանկուել. 2, кого́ մէկին գրգռել, աշխատել կռւի բռնել. մէկի հետ ծանօթանալ, կպչել. -ся անդր. բռնուել, ճանկուել, արգելուել (օր. կեռից, սրինի մէջ ցցած մեխից ևն). -цѣ́пчивый ած. կռուարար, ամբարիշտ. -цѣ́пъ ա. կեռ, կարթ, ճանկ, մեխ, ճիրան, տռամ ևն. տ. Зацѣ́па; з а ц ѣ п ы յ. անասունի մէջին կարիչ[ատամ]ները։

Зача́врѣлый բյ. ած. օդի և լոյսի պակասու-թիւնից թօշնած, աժգոյն. -врѣть չ. չէզ. օդի և լոյսի պակասութիւնից թօշնել, թառամել, թորշոմել, աժգոյն դառնալ։

Зача́внвать չ. նմնմացնել (ուտելիս)։

Зача́ліеніе, -ливаніе չ. կապելը. -ливать, -лить (-лю -лять) ն. за что մի բանից կապել. з. сýдно за свáю նաւը ցցից [պարանով] կապել։

Зачаровáть (-рýю -ютъ) ա. Зачарóвывать: **-рóвываніе** չ. կախարդելը, հմայելը, թովելը **-рóвывать,-ровáть** ն. կախարդել, հմայել, դիւթել, թովել. -родѣйствовать (-ствую -ютъ) չ. սկսել կախարդութիւններ, հմայութիւններ, 'չարութ-ւթիւններ' անել։

Зачасти́ть (-щý -стя́тъ) ա. Зачащáть.

Зачастýю մ. յաճախ, յաճախակի։

Зача́тіе չ. 1, սկիզբ, սկզբնաւորութիւն. 2, յղ-ղութիւն. безсѣменное, непорóчное з. եկղ. ան-սերմն, անարատ յղութիւն. -ча́токъ, тка ա. բո-կիզբ, սկզբնաւորութիւն. սաղմ. -ча́точный ած. սկզբնական, *սաղմնական, նախ. -ча́ть (-чнý -чнýтъ), ся ա. Зачинáть, ся.

Зача́хлость ի. ծիւրութիւն, վտիտութիւն. -чáхлый ած. ծիւրած, քամուած, մաշուած, չո-րացած, թորշոմած. -чáхнуть չ. ծիւրել, քա-մուել, մաշուել, չորանալ, ցամաքել։

Зача́щáть, -сти́ть չ. [սկսել] յաճախ կրկնել, յաճախել. онъ къ намъ зачасти́лъ նա մեզ մօտ յաճախ, շուտ-շուտ է գալիս. дождь зачасти́лъ անձրևը վարարեց։ [հաղորդանալ, գաղտնանալ։

Зачвáниться (-нюсь -нятся) չ. սկսել փքուել,

Зачёрпываніе չ. խագելը, ջնջելը (գրածը). -ни-вать, -нýть ն. խազել, ջնջել (գրածը)։

Зачерне́ніе, -че́рниваніе չ. 1, սևացնելը, սև ներ-կելը. 2, պղտորելը, կեղտոտելը. -чéрнивать, -чер-ни́ть (-ню́ -нятъ) ն. 1, սեւացնել, սև ներկել. 2, պղտորել, կեղտոտել. 3, *սևացնել, ամբաստա-նել. -ся անց. սևանալ, կեղտոտուել. -чернѣлый բյ. ած. սևացած. -чернѣть չ. սկսել սևանալ. -ся չ. հեռուից սևին տալ։

Зачерну́ть ա. Зачёрпывать: -чéрпываніе չ. [ջուր, հեղուկներէն] հանելը. -чéрпывать, -чер-пнýть ն. [ջուր, հեղուկներէն] հանել, քաշել։

Зачерстве́лость ի. չորութիւն, պնդութիւն. բրտութիւն. -ствѣлый ած. չորացած, կարծրա-ցած, պնդացած (հին հացի մասին). բիրտ, բըր-տացած (մարդը ու բարքի մասին). -ствѣть չ. չո-րանալ, կարծրանալ, պնդանալ (թխած հացի մասին). *բրտանալ, կոպտանալ։

Зачерти́ть (-рчý -ртя́тъ) ա. Зачéрчивать; -чéр-чиваніе չ. գծելը, գծանշանելը. -чéрчивать, -чер-ти́ть ն. 1, սկսել նկարել. 2, գծել, գծանշանել, գծով նշան դնել։

Зачеса́ніе չ. յետ սան(ա)րելը (մազերը). -чесáть (-чешý -чéшутъ), ся ա. Зачёсывать, ся.

Зачéсть (-чтý -чтýтъ: *անց.* зачёлъ -члá, ó) ա. Зачитáть I.

Зачёсываніе չ. յետ սան(ա)րելը (մազերը). -чёсывать, -чесáть ն. 1, սկսել սան(ա)րել. սկսել քորել. з. гóлову, заты́локъ. գլուխը, ծոծրակը [անճարութեան, տարակուսանքով] քորել. 2, յետ սան(ա)րել (մազերը). -ся անց. յետ սան(ա)րել (իր մազերը)։

Зачётный ած. 'ի հաշիւ տուած կամ ընդունած։

Зачётъ ա. հաշիւ, հաշւառութիւն. въ з. (կամ взачётъ) жáлованія емý вы́дано сто рублéй 'ի հաշիւ ռոճկի նորան տրուած է 100 ռ.

Зачáврѣть ա. Зачáврѣть.

Зачинáніе չ. 1, սկսելը. 2, սկիզբ, սկզբնաւո-րութիւն. -чинáть, -чáть ն. 1, սկսել, սկիզբ դը-նել. 2, բեղմնաւորուել, յղանալ. -ся չ. սկսել, սկիզբը դնել։

Зачине́ніе, -чи́ниваніе չ. կարկելը, կարկատելը, կոխելը (օր. չորի ծակ տեղը). -чи́нивать, -чини́ть (-ню́ -нятъ), -чинять ն. կարել, կարկատել, կո-խել (օր. չորի ծակ տեղը կամ ոտքին բանի պա-ռուածքը), լցնել (գուլպայի ծակ տեղը). -чи́нка ի. ա. Зачинéніе.

Зачи́нщикъ ա. -чи́нщица ի. մի բան սկսող, ըս-կզբնապատճառ. խռովարար, խռովարար այր, կին. -чи́нъ ա. սկիզբ, սկզբնաւորութիւն։

Зачиня́ть ա. Зачи́нивать. [փակել։

Зачири́кать, -рикáть չ. [սկսել] ծլվլալ, ծըլ-

Зачисле́ніе չ. ընդունելը, հաշուելը, հաշուի մէջ տանելը. з. по áрміи զօրաբանակի մէջ ըն-դունելը. -числя́ть, -числи́ть (-слю -слятъ) ն. հա-շուել, հաշուի, համարի մէջ տանել, ընդունել. з. по áрміи զօրաբանակի մէջ ընդունել. з. въ запáсъ պահեստի մէջ ընդունել. з. на слýжбу պաշտօնի, ծառայութեան մէջ ընդունել. з. въ ополчéніе զաւառքի շարքը գրել։

За́чнето մ. ռմկ. 1, մարդու. 2, կանխիկ դրա-մով, 'նաղդ' փողով։

Зачитáть ն. I. (зачитáть, -чи́тывать, -чéсть) հաշուել, հաշուի առնել, հաշուի մէջ առնել, փոխարէն 'գլուխ գալ'. з. въ уплáту վճար հա-շուել, վճար համարել. з. óтпускъ въ срокъ слýжбы արձակուրդը ծառայութեան ժամանա-կի վերայ հաշուել. -ся չ. սխալ հաշուել, հաշուե-լիս, հաշուի մէջ սխալ անել. II. (зачитáть, -чи́-тывать) ն. 1, սկսել կարդալ, ընթեռնուլ. 2, կար-դալիս կեղտոտել (գիրքը). 3, իւրացնել, չվերա-դարձնել (ուրիշի գիրքը). -ся անց. խիստ եր-կար կարդալ, ընթերցանութեան մէջ ընկղմուել, կարդալիս ամէն բան մոռանալ, 'հաց ուտելը մոռանալ'. -чи́тываніе չ. 1, հաշուելը, հաշուի մէջ առնելը. 2, իւրացնելը, սեփհականացնելը (ու-րիշի գիրքը). -чи́тывать, ся ա. Зачитáть, ся I, II.

Зачихáть չ. սկսել փռնգտալ, 'փռշտալ'. -ся չ. երկար, անդադար փռնգտալ, փռշտալ։

Зачмóкать չ. [սկսել] ճմճմացնել (ուտելիս, [ծծելիս)։

Зачнý ա. Зачáть.

Зачýмить (-млю́ -мятъ), -млять ն. վարակել (ժանտախտով, համաճարակով), ախտաւորել։

Зачýять ա. Почýять.

Зачѣмъ մ. ինչի, ինչու, ինչու համար։

Зашáмнать չ. սկսել թոթովել, պէս խօսել, բա-ռերն անհասկանալի կերպով արտասանել (ատա-մների պակասութեան պատճառով)։

Зашагáть չ. [սկսել] քայլել. մեծ մեծ քայլե-րով գնալ, ման գալ։

Зашáливать, -ли́ть (-лю́ -лятъ) չ. սկսել չա-րութիւն, չարաճճիութիւն անել, սկսել աանձար-ձակութիւն անել. -ся չ. չար, սաստիկ չարու-թիւն, անկարգութիւն անել, չարութիւնից, ան-ձարձակութիւնից չդադարել։

Зашáрить չ. սկսել փնտռել, որոնել (շօշափե-լով)։ [աղմուկ հանել։

Зашáркать չ. սկսել ոտքերով քսքսացնել,

Зашатáть, ся ա. Зашáтывать, ся; -тываніе չ.

շարժել, ‘ժամ տալ‘, թափահարել[սկսել]ը. -тывать, -тать ն. սկսել շարժել, ‘ժամ տալ‘, թափահարել. -ся անդր. սկսել դէս ու դէն ընկնել, երերալ. թափահարուել:

Зашвы́риваніе չ. ձգելը, շպրտելը. -ривать,-рну́ть ն. ձգել, շպրտել. -ра́ніе, -ря́ть, ся տ. Зашвырива́ть, ся.

Зазелене́ніе չ. շարժել կամ շարժուել սկսելը. -вели́ть (-лю́ -ля́ть) ն. սկսել շարժել, ‘ժամ տալ‘. -ся անդր. սկսել շարժուել, ‘ժամ գալ‘:

Заше́екъ. ше́йка տ. 1, վզակոթ. уда́рить по заше́йку վզակոթին տալ. 2, պատրկ ծովածոց, ծովախորշ. -ше́нна ի. անասունի վզակոթ. -шей Տ. (ասվորը. въ за́шей) տ. Ва́шей; -ше́йный ած. վզակոթի, վզի յետևում գտնուող:

Зашелести́ть (-лещу́ -стя́ть) չ. սկսել խշշալ, սօսափիւն արձակել. «толпа́ *зашелести́ла и она́ть зати́хла».

Зашелуди́вать (-вяю -вать) ն. քոսոտել, քասով վարակել. -вѣлый ած. քոսոտած, քասով, քորով վարակուած. -вѣть չ. քոսոտուել, քասով, քորով վարակուել:

Заше́лъ, -шла́, о տ. Зайти́.

Зашенели́ть չ. սկսել թխթխկի պէս, անհամաչափ կերպով խօսել:

Зашептаніе, -шепта́ть (-шепчу́ -ше́пчуть) տ. Заше́птываніе, -тывать; -ше́птываніе չ. թովելը, կախարդելը. -ше́птывать, -шепта́ть 1, չ. սկսել քչփչալ. փսփսալ. 2, ն. թովել, հմայութեամբ կանգնեցնել (օր. արիւնը):

Зашерша́вѣть չ. բսամնել, փշաքաղուել, ‘բիզ բիզ‘ կանգնել:

Зашиба́ніе չ. 1, վնասելը, վիրաւորելը. 2, փող գողելը. -шиба́ть, -шиби́ть ն. 1, հարուածել, վիրաւորել. վնասել. з. но́гу ոտը վնասել, ճմլել. его́ де́ревомъ заши́бло до́ смерти ծառից նա մահացու հարուած է ստացել. его́ заши́бло съ одного́ стака́на մի բաժակ գինուց նա հարբեց. я заши́бъ па́ру у́токъ ես մի ջուխտ բադ սպանեցի. 2, з. копе́йку փող աշխատել. 3, ‘խմել‘, հարբել. дѣло зна́етъ, да зашиба́етъ; -ся անդր. վիրաւորուել, վնասուել. ռմկ. *մեղանչել:

Заши́бка ի. տ. Заши́бъ; -шиби́ть (-блю́ -бя́ть), ся տ. Зашиба́ть, ся; -ши́бъ տ. ջարդուած, ճըմլուած, վնասուած տեղ:

Зашива́ніе չ. կարելը. -шива́ть, -ши́ть ն. կարել, կարկատել. -ши́вка ի. 1, կարելը, կարկատելը. 2, կարած, կարկատած տեղ: [լել:

Заши́кать չ. սկսել սուս (шш) արտաբերել, սուս-

Зашипѣ́ть (-плю́ -пя́ть) չ. սկսել ֆշշալ, (գինու մասին) եռալ, փրփրել, փրփրակալել:

Заши́ть (-шью́ -шью́тъ) տ. Зашива́ть.

Зашлифова́ть (-фу́ю -ютъ) տ. Зашлифо́вывать. -фо́вываніе չ. յղկելը, ողորկելը. -фо́вывать, -фова́ть ն. 1, սկսել յղկել, ողորկել. 2, յղկել, ողորկել, կոկել (քարեղէնը):

Зашмы́гать չ. սկսել մասնաւորութեամբ դէս ու դէն ընկնել, վազվզել: [вать

Зашнурова́ніе, -рова́ть տ. Заснурова́ніе, -ро

Зашнуфова́ть (-гу́ю -ютъ), -го́вывать ն. 1, իւղապատել (նաւապատակի մէջը ծածկելով ու մէջ ջը իւղի կտորներ գնելով). 2,* кого́ մէկին խայթել, ծակը. ‘անաղ‘ անելով գցանել:

Зашпи́ливаніе չ. ամրացնելը (ասեղով, գնդասեղով. -шпи́ливать, -шпи́лить (-лю -лять) ն. ամրացնել (ասեղով, գնդասեղով):

Заштатный ած. շտատից դուրս:

Заштопаніе չ. կարելը, լցնելը (գուլպաների ծակերը). -што́пать տ. Заштопывать; -што́пка ի. -што́пываніе չ. տ. Заштопаніе; -што́пывать, -што́пать ն. կարելով լցնել, կարկատել (օր. գուլպաների ծակերը):

Заштукату́риваніе չ. ծեփելը, սուաղելը, բաթել (պատը). -ту́ривать, -ту́рить (-рю -рять) ն. սուաղել, ծեփել, բաթել (պատերը). -ту́рка ի. 1, տ. Заштукату́реніе; 2, ծեփած տեղ. 3, ծեփ, շաղախ:

Зашумѣ́ть (-млю́ -мя́ть) չ. սկսել աղմուկ հանել, աղմուկ բարձրացնել, խշշալ. вдругъ зашумѣ́ло յանկարծ աղմուկ լսուեց. самова́ръ зашумѣ́лъ ինքնաեռը սկսել է խշշալ. въ уша́хъ зашумѣ́ло ականջներս խշշում են. у него́ отъ вина́ въ головѣ́ зашумѣ́ло գինուն նորա գլուխն է ընկել, գինուց նորա կատարը տաքացել է:

Зашути́ть (-шучу́ -шу́тять) տ. Зашу́чивать; -шу́чиваніе չ. կատակ, հանաք անելը. -шу́чивать, -шути́ть չ. սկսել կատակ(ներ), հանաք(ներ) անել: [տ. Заши́ть.

Зашушу́кать չ. սկսել փսփսալ, քչփչալ. -шью

Защебе́нивать, -бе́нить (-ню -нять) ն. խճով, խճաքարով լցնել. -бе́нка ի. 1, խճով, խճաքարով լցնելը. 2, խճով, խճաքարով լցրած տեղ:

Защебета́ть (-бечу́ -бе́чуть) 1, չ. [սկսել] ծըլվլալ, ճռճռալ (թռչունի մասին). 2, ն. ծլվլացով, ճռռոցով գլուխ տանել, յոգնեցնել:

Защеголя́ть չ. սկսել պճնամոլութիւն անել:

Защекота́ть (-кочу́ -ко́чуть) ն. 1, սկսել խըտտել. 2, խտտել տենելով ապանել, հոգին հանել. 3, չ. սկսել կանչել (կաշաղակի մասին):

Защёлка ի. [ընկնող, ‘տրտռւոց‘] փակիչ. заперѣ́ть дверь з—ою; -щёлкать տ. Защёлкивать 1; -щелкать ն. սկսել քթին խփել, զարկել. -щёлкиваніе չ. I. տրխկացնելը, չրթելը. II. փակելը, զարկելը. -щёлкивать I. (защёлкивать, -щёлкать) չ. чѣмъ սկսել տրխկացնել (լեզուն ատամներին, կամ բութ մատը մի ձեռքերին հպելով), սկսել չրթել (մատերով). սկսել գնդկել, երգել (սոխակի մասին). II. (защёлкивать, -щёлкнуть) ն. [ընկնող, ‘տրտռւոց‘ փակիչով] փակել, զարկել:

Защеми́ть (-млю́ -мя́ть) տ. Щеми́ть, Защёмливать և Защемля́ть; -мле́ніе, -мливаніе չ. կըմշտելը, ճմլելը. -мливать, -ми́ть, -мля́ть ն. կմըշտել, ճմլել, ջարդել. онъ защеми́лъ па́лецъ две́рьми́ կմ въ дверя́хъ դռան արանքում նա իր մատը ճմլեց. защеми́ло въ ногѣ́ ոտքս ծակեց. защеми́ло се́рдце կմ на се́рдцѣ սիրտ(ս) նեղացաւ, խիստ վշտացրեց, ճմլուեց. «но тутъ у І—а защеми́ло на се́рдцѣ».

Защепа́ть (плю -ще́плютъ) ն. սկսել տաշեղներ հանել, ճղքել, կոտրել. -ще́пина ի. չեղ ճեղքուածք, ճղուածք, ճղած, ճեղքած տեղ. -ще́пистый ած. ճեղքուածքներով, ճղուածքներով. -щепи́ть (-плю́ -пя́ть) տ. Защепливать և Защепля́ть; -ще́пка ի. 1, տ. Защепина; 2, կապ, փական (դրքի). -ще́пливаніе չ. ճղելը, ճեղքել[ով հանելը]. -ще́пливать, -щепи́ть, -щепля́ть ն. ճղել, ճեղքել[ով հանել, օր. տաշեղներ կամ խարտաշուքներ՝ տաշեղներ]:

Защёнъ տ. ձիու սանրակի ապջին մասը:

Защёчный ած. այտի (թշի) յետևում գտնուող‘

Защипа́ніе չ. փետել, կծկել, ճմլել սկսելը·

կմշտելը, ճմլթելը. -щипа́ть, ся ա. Защи́пывать. ся I և II; -щи́пка ի. ա. Защипа́ніе և Защи́пъ.

Защи́пъ ա. կմշտած, ճմլած տեղ. -щи́пываніе չ. փետել սկսելը. կմշտել սկսելը. -щи́пывать ն. I. (защи́пывать, -па́ть) 1, սկսել փետել. սկսել կըմշտել, ճմլթել. 2, քըքըրել (կտուցով), խիստ կըծել, խայթել, կցահատելով ստանել, հոգին հանել. -ся անդր. միմեանց կմշտել, ճմլթել, քըքըրել (կտուցով). II. (защи́пывать, -щипа́ть -щипну́ть) հուպ տալ, կմշտել (օր. գամթայի, նռպուքի ափը):

Защи́та ի. պաշտպանութիւն. -ти́тель ա. -ти́тельница ի. պաշտպանող, պաշտպան այր, կին. -ти́тельный ած. պաշտպանողական. з—ая рѣчь; -ти́ть (-щу́ -тя́тъ). ся ա. Защища́ть, ся; -тни́къ ա. -тница ի. պաշտպան այր, կին. -ща́ть, -ти́ть ն. պաշտպանել. з. своё пра́во; з. себя́ зако́нными сре́дствами; -ся անդր. պաշտպանուիլ. -ще́ніе չ. պաշտպանելը, պաշտպանութիւն:

Защу́риваніе չ. հուպ տալը, կուչ ածելը (աչքի կոպերը). կկոցել, խփել (աչքերը). -щу́ривать, -рить ն. հուպ տալ, կուչ ածել (աչքի կոպերը), կկոցել, խփել (աչքերը): [պատիկ ելուզներ:

Заѣ́да ի. բերանի անկիւններում բշտիկներ,

Заѣда́ніе չ. 1, խիստ խածնելը, պատառատելը (շների). 2, վրայից ուտելը. -ѣда́ть, -ѣсть ն. 1, что чѣмъ մի բան միւսի վրայից ուտել. з. го́лодъ մի կերպ քաղցը յագեցնել. 2, յօշոտել, պատառատել (շների մասին). 3,* ուտել, մաշել (թունդ, ուտիչ հեղուկեղէնի մասին). 4, իւրացնել, 'ուտել'. онъ заѣ́лъ у меня́ семь рубле́й; -ся 1, անդր. միմեանց խածատել, կծոտել (շների մասին). 2, չ. լափել, լափելով կշտանալ (գազանների մասին). -ѣде́ніе ա. Заѣда́ніе.

Заѣ́дки, докъ ի. յ. քաղցրեղէններ, քաղցր ըմպարեղէն ել:

Заѣ́ду ա. Заѣ́хать; -ѣ́здить (-ѣ́зжу -ѣ́здятъ) ա. Заѣ́зживать; -ѣ́здъ ա. 1, [ձիով, կառքով] մէկի մօտ մտնելը, իջեւանելը. 2, 'շափ', 'շափ գնելը' (ձիարշաւների ժամանակ), վազ, մրցարշաւ. въ пе́рвый з. пошли́ вороно́й съ сѣ́рымъ; -ѣзжа́ніе չ. 1, ա. Заѣ́здъ 1; -ѣзжа́ть, -ѣ́хать չ. 1, з. къ кому́ [ձի հեծած, կառքով] մէկի մօտ գնալ, մտնել, իջնել (անցնելիս). 2, գնալ, ընթանալ (այս ինչ կողմը). 3, [ձի հեծած, կառքով] մոլորուելով ուրիշ տեղ գնալ, ուրիշ տեղ (օր. ճահճի մէջ, անտառի մէջ) ընկնել. 4, յափշտակել, իւրացնել. з. въ чужо́й карма́нъ ուրիշի գրպանը յափշտակել. -ѣ́зживаніе չ. յաճախ հեծնելով կամ խիստ քշելով հոգին հանելը, ըսպանելը. -ѣ́зживать, -ѣ́здить ն. յաճախ հեծնելով կամ խիստ քշելով հոգին հանել, սպանել (ձիուն). -ѣ́зжій ած. 1, իջեւանելու, իջնելու. з. домъ. з. дворъ իջեւան. 2, եկուոր, ուրիշ տեղից եկած. з. иноземе́цъ.

Заѣ́сть (заѣ́мъ -ѣ́шь -ѣ́стъ; -ѣди́мъ -ѣдя́тъ) ա. Заѣда́ть. [ѣзжа́ть.

Заѣ́хать (-ѣ́ду -дутъ; հրամ. заѣзжа́й) ա. За-

Заэконо́мить (-млю -мятъ), -мничать չ. սկսել խնայել, անտեսել, խնայողութեամբ, անտեսութեամբ ապրել:

Заяви́тель ա. -ви́тельница ի. մի բան յայտնող, յայտարարող, մի բան ցոյց տուող, ներկայացնող այր, կին. -ви́ть (-влю́ -вятъ) ա. Заявля́ть, -вля́ть; -вка ի. -вле́ніе չ. 1, ցոյց տալը, ներկայացնելը. 2, յայտարարութիւն, ազդ. -влива́ніе չ. յայտարարելը. -влива́ть, -вля́ть, -ви́ть ն. 1, յայտնել, յայտարարել. 2, ցոյց տալ, ներկայացնել. з. ве́ксель, тре́бованіе.

Зая́ловѣлая корова ամուլ, 'շոր' կով, կով, որ այլեւս հորթ չէ բերում:

Заясни́ть չ. սկսել պարզուիլ, պայծառանալ. -ся չ. պարզ երեւալ, փայլել:

За́яцъ (արմտ. заецъ), за́йца ա. նապաստակ. Lepus, նապաստակ, 'ալպաստրակ'. гна́ться за двумя́ за́йцами (առծ.) մի ձեռքով երկու ձմերուկ բռնել. забѣга́ть за́йцемъ աշխատել հաճոյանալ, խորամանկութիւն բանեցնել. -ячина ի. 1, նապաստակի միս. 2, նապաստակենի, նապաստակի մորթ. -ячій, чья, чье ած. նապաստակի. з—ья губа́ բժ. շրթնահերձութիւն (վերին շրթունքի հերձուած). з—ья капу́ста կամ трава́ բս. Sedum telephium, թանթրռնիկ կամ գնդաւոր ախլեփիոն (ռոզոլեգու). з. ко́рень, բս. Asarum europaeum, ութեր կամ Ասարիոն (մրուանաակ, կաղմորէ). з—ья кровца́, բս. Hypericum perforatum, հասարակ պտղղակ (որոհուեղ, արեւուկի, խնձորածաղիկ, հիպերիկոն, ռմ. ...). з—ьи ла́пки ա, բս. Trifolium arvense, դաշտի առուոյտ (եռերնուկ, երեքնուկ. ը, խոզաճնդ... քունքերի վերայ կամ աչքերի մօտերը (ծնունդից). з—ья но́жка ա. За́ячьи ла́пки ա. з. холодо́къ, Asparagus officinalis, հասարակ ծնեբեկ. з—ья соль բս. Oxalis Acetosella, հասարակ թթու առուոյտ (գառնակաղնջիկ). -ячинъ ա. բս. Polyporus squamosus, թեփա-

Збру́я, -йный ա. Сбру́я, -йный. [ւոր սնկիկ:

Зва́ніе չ. 1, կանչելը, կոչելը. կոչ, հրաւէր. 2, կոչում, աստիճան, դիրք, դասակարգ. купе́ческое, духо́вное з.; жить по своему́ з—ію.

Зва́ный բյ. ած. հրաւիրուած, կանչուած. з—ые го́сти; з. обѣ́дъ հրաւիրաճաշ, հանդիսաւոր ճաշկերոյթ. -тельный падёжъ քերկ. կոչական հոլով:

Звать (зову́ -вёшь -ву́тъ) ն. 1, կանչել, կոչել, ձայնել. անուանել. з. къ кому́, кого́ на по́мощь մէկին օգնութեան կանչել. какъ тебя́ зову́тъ? անունդ ինչ է. 2, կոչել, հրաւիրել. з. въ го́сти հիւր կանչել: з. къ обѣ́ду, на обѣ́дъ ճաշի հրաւիրել. з. на сва́дьбу հարսանիքի հրաւիրել:

Звено́ չ. (յ. звéнья, ьевъ) 1, օղ, օղակ (շղթայի). 2, առհ. անդամ, մաս (ամբողջի). з. осетри́ны մի կտոր մորէ. -ицо́, -(ё)нышко նւզ. ա. Звено́.

Звенѣ́ть (-ню́ -ня́тъ) չ. ծլնգալ, զրնգալ, հնչել, զօղանջել. звеня́тъ колоко́льчики; о́кна звеня́тъ պատուհանները զօղում են. у меня́ звеня́тъ въ уша́хъ ականջներս խշխշում են:

Звѣнарёвъ, а, о ած. ժամկոչի, մզկոսւ. -на́риха ի. ժամկոչի, մզկոսւ կինը. -на́рь, я́ ա. ժամկոչ, 'մզզոփ'. *շատախօս, շաղակրատող:

Звоне́цъ, нца́ ա. 1, բօժօժ, պատրիկ զանգակ. 2, բս. Rhinanthus, աքլորըրըուկ. з. боло́тный, բս. Campanula patula, խրձնացեալ զանգակիկ:

Звони́ть (-ню́ -ня́тъ) ն. և չ. զանգահարել. զանգակը տալ. з. къ обѣ́днѣ պատարագի զանգակը տալ. з. на пожа́ръ հրդեհի զանգակը տալ. звоно́къ не звони́тъ զանգակը չէ տալիս, չէ բանում, խափանուած է. 2, о чёмъ ռմկ. մի բան տարփողել, տարածել:

Звонки́ *ա. յ. բս.* Aquilegia vulgaris, *հասարակ արծուամագիլ*:

Зво́нкій *ած.* *արահնչիւն, քաղցրահնչիւն, պարզահնչիւն, զիլ.* з—ая моне́та *հնչիւն դրամ* (*պղինձէ, արծաթէ, ոսկէ*):

Зво́нкость *է.* *քաղցրահնչիւնութիւն, արահնչիւնութիւն, պարզութիւն, թափ ձայնի*:

Звоно́къ, нка́ *ա.* -но́чекъ, чка *նւզ.* *զանգակ.* столо́вый, электри́ческій з.; дать з. *զանգահարել, զանգակը քաշել*:

Звонъ *ա.* *ձայն, հնչիւն, զօղանջիւն, զրնգոց, ծլնգոց.* колоко́льный з.; з. колоколо́въ *զանգահարութիւն.* кра́сный з. *զանգակակախոց.* з. въ уша́хъ *ականջների խշշոց, խշխշոց*:

Звýкнуть *տ.* Звуча́ть; -ково́й *ած.* *ձայնի, հըն-*[*չիւնի*:

Звукомѣ́ръ *ա.* *ֆիզ.* *հնչիւնաչափ.* -подража́ніе *չ.* *հնչիւնային նմանութիւն, հնչիւնարարութիւն.* -подража́тель *ա.* *հնչիւնարար* (*որ վարպետութեամբ այլեայլ կենդանիների ձայները, թռչունների կանչերը, ծիծաղն եւն վերարտադրում է*). -подража́тельный *ած.* *հնչիւնարարութեան*:

Звукъ *ա.* *հնչիւն, ձայն.* согла́сіе звýковъ *ներդաշնակութիւն հնչիւնների*:

Звуча́ніе *չ.* *հնչելը.* -ча́ть (-чý -ча́тъ), -кнуть *չ.* *հնչել.* -чность *է.* *պարզութիւն, քաղցրահնչիւնութիւն, զլութիւն.* з. го́лоса, -чный *ած.* *արահնչիւն, քաղցրահնչիւն, զիլ*:

Звѣзда́ *է.* (*յ.* звѣ́зды *արտս.* звёзды) 1, *աստղ.* неподви́жная, блудя́щая, поля́рная з.; у́тренняя, вечéрняя з.; путевáя з. *ուղեցոյց աստղ.* 2, *աստղ* (*աստղաձև, աստղանման զարդեր, եւն*). 3, *աստղ* (*շքանշան*). 4,* *աստղ, բախտ, արև.* з. моя́ закати́лась *իմ աստղը թեքուել է.* -здáстый *ած.* *աստղաշատ, շատաստղ*:

Звѣзди́ть 1, (—, -зди́тъ) *չ.* *դէմ.* *երևալ* (*աստղերի մասին*), *աստղափայլել, աստղերով ծածկուել.* 2,* (-зжý -здя́тъ) *ն.* *տանեց քաշուելու երեսին տալ* (*ճշմարտութիւնը*). -зди́ца *է.* *եկղ.* *աստղաձև նշխարախափան, նշխարախափ* (*յոյն եկեղեցու*):

Звѣ́здка *է.* *նւզ.* (*արտս.* звёздка) *աստղիկ.* -здный *ած.* (*արտս.* звёзд—) *աստղի, աստղա—, աստղային.* з. блескъ; з—ое нéбо *աստղափայլ երկինք.* -здови́къ, á *ա.* *տ.* 'Астра; -здово́й *ած.* *աստղա—, աստղային*:

Звѣздогля́дъ *ա.* 1, *կնդ.* Uranoscopus, *աստղադէտ* (*ձուկ մի*). 2, *ապուշ, ապուշի պէս նայող, 'ագռաւներ բռնող'.* 3, *կտկլ.* *աստղաբաշխ, աստղագէտ.* -нéсный *ած.* *աստղալից, աստղերով ծածկուած.* -обрáзный, -подóбный *ած.* *աստղաձև, աստղանման.* -поклóнникъ *ա.* *աստղապաշտ.* -цвѣ́тъ *ա.* *տ.* 'Астра; -чётный, -чётство, -чётъ *տ.* Астрологи́ческій, -лóгія, -лóгъ.

Звѣ́здочка *է.* *նւզ.* (*արտս.* звёз—) 1, *աստղիկ.* 2, *աստղիկ, աստղանիշ* (*). 3, *բս.* Stellaria Holostea, *մեծածաղիկ աստղիկ*:

Звѣ́здочникъ *ա.* 1, *Դպր.* *աստղաբաշխ.* 2, *տ.* 'Астра; -дочница *է.* *բս.* Stellaria, *աստղիկ*[*ծաղիկ*]*ը.* -дочный *ած.* *աստղա—, աստղիկի.* з. мохъ, *բս.* Mnium undulatum, *աստղամամուռ.* з—ая травá *բս.* Alchemilla vulgaris, *հասարակ զայլթաթ.* з. цвѣтъ *տ.* Звѣздоцвѣ́тъ; з. кáмень *տ.* Звѣ́здочникъ 1.

Звѣздчáтикъ *ա.* -дчáтка *է.* 1, *կնդ.* Astraea punctifera, *աստղակերպ կորալիոն* 2, *բս.* *տ.* Звѣ́здочница; -дчáтый *ած.* *աստղազարդ*:

Звѣрёкъ, рькá, -рёчокъ, чкá *ա.* *նւզ.* *գազանիկ, պստիկ գազան.* -ри́на *է.* 1, *գազանի միս.* 2, *յւնլ.* *մի ահագին գազան, 'ջանավար'.* -ри́нецъ, нца *ա.* *գազանանոց.* -ри́ный *ած.* *գազանի, գազանային.* з. рёвъ; з. слѣдъ; з. ловъ; з—ая пóдать *հարկ, տուրք, որ վճարում էին գազանների մորթիներով*:

Звѣробóй, -бóйникъ *ա.* *բս.* *ա,* Hypericum perforatum, *հասարակ պատպատուկ* (*արահուճ, արեւուրիկ, խնձոր ծաղիկ, հիպերիկոն, ան. ...*). *բ,* Hysopus officinalis, *զոպա, մըշտրկ.* *գ,* Caltha palustris, *ցինդ, ոսկեծաղիկ* (*վաղինակ*). *դ,* з. кáменный, Polypodium vulgare, *շատատուփ, կճուճ* (*պատպատիճ*). -бóйный *ած.* *հասարակ պատպատուկի.* з—ыя растéнія, Hypericineae, *Հիպերիկոններ*:

Звѣрови́дный *տ.* Звѣрообрáзный.

Звѣрóкъ, ркá *տ.* Звѣрёкъ.

Звѣролóвный *ած.* *գազանորսութեան.* -лóвство *չ.* *գազանորսութիւն.* -лóвъ *ա.* *գազանորս, գազանների որսորդ.* -обрáзный *ած.* 1, *գազանակերպ, գազանատեսք.* 2, *դաժան, վայրագ.* -подóбный *ած.* *գազանանման.* -поклóнникъ *ա.* *կենդա-*[*նապաշտ*:

Звѣрóчекъ, чка *տ.* Звѣрёчекъ.

Звѣ́рскій *ած.* *գազանային, գազանաբարոյ, վայրագ, անագորոյն.* з. постýпокъ; Звѣ́рски *մ.* *գազանաբար, վայրագաբար, անգթութեամբ, անագորոյն կերպով.* -ство *չ.* 1, *գազանային բնութիւն.* 2,* *գազանութիւն, վայրագութիւն, անագորոյնութիւն.* -ствовать (-ствую -ютъ) *չ.* *գազանութիւն, վայրագութիւն անել. գազանաբար, վայրագութեամբ վարուել, գործել*:

Звѣрь *ա.* 1, *գազան, 'ջանավար'.* хи́щные звѣ́ри *յափշտակող կենդանիներ.* пушны́е звѣ́ри *մուշտակաւոր կենդանիներ.* 2,* *գազան, գազանաբարոյ, վայրագ, անագորոյն, անգութ մարդ.* э́то з., а не человѣ́къ.

Звѣрьё, ья́ *չ.* *հաւ.* 1, *վայրենի գազաններ, գիշատիչներ* (*մեծ գայլեր*). 2, *վայրենի գազանների մորթեր*:

Звя́кать, -кнуть 1, *շաչել, զրնգալ, ծլնգալ.* 2, *'գուբը տալ', զառանցել*:

Зга *է.* *մթութիւն, խաւար* (*գործծկ.* не, ни *բառեր. մասնիկներով, օր.*) ни зги не видáть *ոչինչ չէ կարելի տեսնել, այնպէս մութն է, որ մատներդ մարդու աչք կոխես, չի տեսնել.* онъ зги не ви́дитъ *նա կատարեալ կոյր է*:

Зда́ніе *չ.* *շինութիւն, շէնք, տուն*:

Зда́ть (зи́жду -ждешь -ждутъ) *ն.* *հիմնել, շինել, ստեղծել*:

Здви́женье *ռմկ.* *տ.* Воздви́женіе.

Здорóваться (-ваюсь -ются), позд— *անդր.* съ кѣмъ *մէկին բարևել, ողջունել.* мы ужé поздорóвались.

Здоровéнный *ած.* *խիստ առողջ, քաջառողջ, վիթխարի, ուժեղ, առոյգ.* -(ó)веньки́й (-вéнекъ, нька, о) *ած.* *բաւականին առողջ, ողջ առողջ.* -вёхонекъ, -вёшенекъ, нька, о *ած.* *կատարելապէս առողջ*: Здоровёхонько, -вёшенько *մ.* *կատարեալ առողջութեամբ*:

Здорóвиться (—, -вится) *չ.* *դէմ.* *ողջ, առողջ լինել.* сегóдня мнѣ что-то не здорóвится *այսօր փոքր ինչ տկար եմ, քէֆս լաւ չէ.* каковó здорóвится? *քէֆդ* (*քէֆներդ*) *ո՞նց է*:

Здорóво *մ.* 1, *ողջ, առողջ.* з. -ли вы живёте?

դուք առողջ էք. 2, ողջոյն, բարև քեզ, ձեզ. з. брáтцы! з. ребя́та! 3, (здóрово) լաւ, խիստ, դորա դու պատուհասեցիր. за э́то ему́ з. достáнется.

Здо||рóвость է. առողջութիւն, առողջ յատկութիւն, դրութիւն. **-рóвый** ած. 1, առողջ, ողջ առողջ, ‘սաղ‘. бу́дьте здорóвы! ողջ եղէք, ողջ լերուք (առում են հրաժեշտի ժամանակ). 2, առողջակազմ, պնդակազմ, ամրակազմ. 3, առողջարար, փրկարար, փրկաւէտ, օգտակար. з. вóздухъ, кли́матъ; **-рóвье** չ. առողջութիւն, ողջութիւն, ‘սաղութիւն‘. дай Богъ ему́ з—ья! Աստուած նորան կեանք տայ. на з.! անուշ, հալալ (առում են օր. ճաշելիս). ѣшь на з. կեր, ‘հալալ ըլի‘. пить за чьё здорóвье մէկի կենացը խմել. за вáше з.! ձեր կենացը. **-рóвьице** մեղմ. տ. Здорóвье; **-ровѣ́ть**, поз—, չ. առողջանալ, առողջ, քաջառողջ դառնալ. **-ровя́къ**, à ա. խիստ առողջ, խիստ առողջակազմ մարդ:

Здрáвица է. 1, կենաց բաժակ, գաւաթ. 2, կենաց. пить за чью з—у մէկի կենացը խմել:

Здрá||віе չ. ողջութիւն, առողջութիւն. пьёмъ за з. Государя; з. желáемъ! ողջութիւն ենք մաղթում (առում են զինուորները պահներին). **-во** մ. 1, տ. Здорóво; 2,* խոհեմութեամբ, զգօնութեամբ, խելացի, կանոնաւոր կերպով:

Здраво||мы́сліе չ. առողջամտութիւն, առողջ դատողութիւն, հասկացողութիւն, զգօնութիւն, խելացիութիւն. **-мы́слящій** ած. առողջամիտ, ըզգօն, խելացի, ներհուն:

Здрáвствовать (-ствую -ютъ) չ. ողջ լինել, ողջ, առողջ փառօք ապրել: Здрáвствуй, -ствуйте ողջոյն քեզ, ձեզ, ողջ լեր, լերուք:

Здрáвый ած. 1, ողջ, առողջ. 2,* առողջ, խելացի, զգօն. з. разсу́докъ; з—ое сужде́ніе; сдѣлать что вопреки́ з—ому смы́слу լուրջ բանականութեան դէմ մի բան գործել:

Здѣ||сь մ. այստեղ, աստ. **-шній** ած. այստեղի, տեղական:

Зé||бра է. կնդ. Equus Zebra, վագրաձի. **-бровый** ած. վագրաձիու [մորթից]:

Зелéйникъ ա. 1, խոտերով բժշկութիւն անող. 2, խոտաբան, անկարան:

Зе||ленéніе չ. կանաչ գոյնով ներկելը, դեղելը. **-лёненькій** ած. կանաչաւուն **-ленёхонькій, -ленёшенькій** ած. բոլորովին կանաչ, խիստ կանաչ:

Зеле||ни́ка է. բս. Taxus baccata գեղձի կամ կարմրածառ (գենի? մահեկ?) **-ни́стый** ած. գրեթէ կանաչ:

Зеле||ни́ть (-ню́ -ня́тъ), заз—, поз—, ն. կանաչ ներկել, կանաչ դեղել, ծեփել. **-ни́ца** է. բս. ա, Lycopodium complanatum, գետնամուշկ մի. բ, տ. Зелени́ка; **-ни́чка** է. կնդ. Motacilla flava, դեղին խաղտանիկ (տուտրածիկ, խաշնահաւ):

Зе||лённóй ած. կանաչու, կանաչեղէնի. з—ая лáвка; з. ры́нокъ կանաչեղէնի շուկայ. **-лено** մ. կանաչագոյն, կանաչ գոյնի:

Зелено вáтость է. կանաչաւունութիւն. **-вáтый** ած. կանաչաւուն. **-голубóй** ած. կանաչ կապտագոյն. **-жёлтый** ած. կանաչ դեղնագոյն. **-крáсный** ած. կանաչ կարմրագոյն:

Зе||лёность է. կանաչութիւն, կանաչ գոյն. **-ленщи́къ**, á ա. **-ленщи́ца** է. կանաչավաճառ, -ուհի, կանաչեղէն ծախող այր, կին. **-лёный** ած. 1, կանաչ. з. столъ խաղի սեղան. 2, կանաչ, խակ. зéлено говори́ть խակ խակ խօսել. зéлено жить չափաւորութեամբ ապրել, փարթամ կեանք վարել:

Зé||лень է. 1, կանաչ, կանաչութիւն, կանաչ գոյն. 2, կանաչեղէն. огорóдная, полевáя. з.; **-ленѣ́ть**, заз—, поз— չ կանաչանալ, կանաչ դառնալ, կանաչել. **-ся** չ. կանաչին տալ (որոշ հեռաւորութիւնից):

Зé||ліе, -лье չ. 1, բոյս, տունկ, խոտ. огорóдное з. կանաչեղէն. 2, դեղ, դարման. отъ смéрти нѣтъ зéлья մահից ազատուելու դեղ, դարման չկայ. 3, Թունաւոր խոտ. *Թոյն, *դառնութիւն, *չարութիւն. «знáю, что зéлье дѣвка, а люблю́».

Зéльтерская водá զէլտէրեան ջուր:

Земéлька է. պստիկ հող, մի կտոր հող:

Зе||мéльность է. հողատիրութիւն. **-мéльный** ած. հողային, հողատիրական. з—ая крѣ́пость հողատիրական մուրհակ. з. банкъ.

Зéмецъ, мца ա. 1, զէմստվօյի (зéмство) անդամ. 2, հողատէր, կալուածատէր. 3, հողային կապալառու:

Земле||би́тный ած. 1, հող ծեծելու, նստեցնելու. 2, ծեծած, պնդացրած հողից. з—ая стѣнá.

Земле||вáтость է. հողակերպութիւն, հողանմանութիւն. **-вáтый, -ви́дный** ած. հողակերպ, հողային, հողանման. **-владѣ́лецъ**, льца ա. **-владѣ́лица** է. հողատէր, -տիրուհի, կալուածատէր, -տիրուհի (հմմ. Помѣ́щикъ, -щица); **-владѣ́льческій** ած. հողատիրական, կալուածատիրական. **-владѣ́ніе** չ. հողատիրութիւն, կալուածատիրութիւն. **-владѣ́тель, -владѣ́тельница** տ. Землевладѣ́лецъ, -дѣ́лица; **-владѣ́тельный** ած. հողատիրական, կալուածատիրական. **-вóзный** ած. հողակիր, հող կրող. з—ая тáчка; **-вóзчикъ, -вóзъ** ա. հողակիր [մշակ]. **-вѣдѣ́ніе** չ. հողագիտութիւն:

Земле||дѣ́лецъ, льца ա. երկրագործ, հողագործ. ‘ռանչպար‘. **-дѣ́лица** է. երկրագործի կին, գեղջկուհի. **-дѣ́ліе** չ. երկրագործութիւն. հողագործութիւն. **-дѣлъ** տ. Землед̀ѣлецъ; **-дѣ́льничать** չ. երկրագործութիւն, հողագործութիւն անել. **-дѣ́льный** ած. երկրագործութեան, -ծական, հողագործութեան, -ծական. **-дѣ́льческій** ած. երկրագործութեան, -ծական, հողագործութեան, -ծական. з—ія орýдія; з—ая шкóла.

Землекóпный ած. հող փորելու, պեղելու:

Землекóпъ ա. հող փորող, հող պեղող:

Земле||мѣ́ріе չ. հողաչափութիւն, հողաչափական գիտութիւն. **-мѣ́рка** է. կնդ. հողաչափ[թիթեռնիկ]ը. **-мѣ́рный** ած. հողաչափութեան, -փական. з—ое учи́лище; з—ое иску́сство; **-мѣ́рша** է. հողաչափի կինը. **-мѣ́ръ** ա. հողաչափ. **-нóсный** ած. հող կրելու. з. мѣшóкъ.

Земле||описáніе չ. երկրագրութիւն, աշխարհագրութիւն. **-описáтель** ա. երկրագիր, աշխարհագիր. **-описáтельный** ած. երկրագրութեան, -գրական, աշխարհագրութեան, -գրական:

Земленá||шество, -шецъ տ. Землед̀ѣліе, -дѣлецъ.

Землерóйка է. կնդ. Sorex araneus, որձնչակ (նրբակիթ մուկ). з. водянáя, S. jodiens, ջրային մկնչակ:

Землетрясéніе չ. երկրաշարժ, -ժութիւն:

Земле||удобрéніе չ. հողապարարտութիւն, հողը պարարտացնելը, աղբելը, ‘փէյնելը‘. **-удобря́ющій** բյ. ած. հողապարարտ. з—ія срéдства.

Землечерпá||льный, -тельный ած. հողահան, հող դուրս ածող, հող դուրս տուող. з—ая маши́на.

Земли́стый ած. 1, հողակերպ, հողանման. 2, հողային, հողոտ, հող պարունակող։

Зем|ли́ца ի. 1, պստիկ հող, հողի կտոր. 2, մի փոքրիկ երկիր, տէրութիւն. **-ли́шка** ի. նխտ. խօսքում, վատ, անբերրի հող։

Земля́ ի. 1, երկիր, երկրագունդ, աշխարհ. не отъ з—й сей այս աշխարհից չէ. 2, ցամաք (հակադրութեամբ ջրի). 3, երկիր, «հող», տէրութիւն. непріятельская земля́; 4, հող, գետին. невоздѣ́ланная з.; па́хатная з.; гли́нистая з.; насыпна́я з. ածովի հող. онъ упа́лъ на зе́млю նա գետին գլորուեցաւ, գետնի վերայ վայր ընկաւ. 5, հող, կալուածք, «մուլք». казённыя зе́мли: наслѣ́дственная з.; 6, եկ. սլաւ. այբբենի մէջ զ (3) տառը։ բակից։

Земля́къ, а́ ա. «համշիրակ», համերկրացի, երկ-

Земля|ни́ка ի. բս. Fragaria vesca, ելակ, խմորուկ (մորի. բծամորի, գետնաթութ). **-ни́ковка** ի. ելակի (մորու) օշարակ. **-ни́стый** ա. Землянистый; **-ни́чна** նւզ. ա. Земляника; **-ни́чникъ** ա. 1, ելակի (մորու) թփուկ. 2, ելակի օշարակ կամ շարապ. 3, ելակի թաղ, ածու. **-ни́чный** ած. ելակի, ելակային, մորու. з. за́пахъ; з—ое варе́нье.

Зем|ля́нка ի. խրճիթ, հիւղ. **-мяно́й** ած. հողի, հողից, գետնի. з—а́я рабо́та; з—а́я на́сыпь հողակոյտ. з. червь — дождево́й червь (տ. Дождево́й).

Зем|лячёкъ, чка́ ա. մեղմ. հայրենակից, «համշիրակիկ». **-ля́чество** չ. 1, համերկրացիութիւն, համշիրակութիւն. 2, համերկրացիներ, համշիրակներ ընկերութիւն. կապակցութիւն. **-ля́чка** ի. համերկրացուհի, «համշիրակուհի»։

Зе́мно չ. մինչև գետին, մինչև հող։

Земново́дный ած. 1, հողից և ջրից բաղկացած. 2, կնդ. երկակենցաղ (թէ ցամաքի վերայ և թէ ջրում ապրող). з—ое живо́тное երկակենցաղ կենդանի։

Земно́й ած. 1, երկրի. з. шаръ երկրագունդ. з—а́я ось երկրագնդի առանցքը. з. покло́нъ խորին երկրպագութիւն, ծնրադրութիւն. 2, երկրային, երկրաւոր, աշխարհային, աշխարհիկ. з—ыя бла́га: з—а́я жизнь.

Земноро́дный ած. երկրածին, հողածին։

Зе́мскій ած. 1, հողային, կալուածային. з—ія пови́нности; з. сборъ; 2, գաւառային, վիճակային, երկրի. з—ая стра́жа վիճակային պահակախումբ. з—ія учрежде́нія վիճակային տնտեսական-վարչական հիմնարկութիւններ (տ. Зе́мство 2); губе́рнское з—ое собра́ніе նահանգական զէմստվօյի ժողով. уѣ́здное з—ое собра́ніе գաւառային զէմստվօյի ժողով. з—ая шко́ла զէմստվօյի ուսումնարան. з. врачъ զէմստվօյի բժիշկ. з. испра́вникъ գաւառային ոստիկանապետ (այժմ կոչվ. уѣ́здный и.); з—ая да́вность վաղեմականութիւն (տասնամեայ). з. нача́льникъ վիճակապետ (ցեղական ազնուական, որ նահանգապետից ընտրւում, իսկ ներքին գործոց մինիստրից հաստատւում է և ունի գիւղական համայնքների վերայ ընդարձակ դատական, բայց նաև ոստիկանական իրաւունքներ։ Նորան կարելի է անուանել նաև) վիճակային դատաւոր։

Зе́мство չ. 1, հողագործական կալուածատիրական դասակարգեր, ազգաբնակութիւն. 2, զէմստվօ. (Եւրոպական Ռուսիայի 36 նահանգներում հաստատուած նահանգային և գաւառային վարչական հիմնարկութիւններ, որոնք բաղկացած են նահանգի ազնուական դասակարգի, քաղաքների և գիւղական համայնքների ներկայացուցիչներից և հոգում են ազգաբնակութեան տնտեսական կարիքները, մասամբ նաև և ուսումնարական և առողջապահական խնդիրները։ Զէմստվօներ հիմնուեցան 1864թ. յունվ. 1-ին։ Իսկ 1890թ. յունվ. 12-ի հրովարտակը զգալի կերպով սահմանափակում է զէմստվօների իրաւունքները, ազնուական դասակարգին և տէրունական պաշտօնեաներին վարչական գործերում մեծ արտօնութիւններ յատկացներով և նահանգապետների կողմից մեծ հսկողութիւն սահմաններով)։

Зе|ни́тъ ա. (արբ.) աստղը, զէնիթ, գագաթնակէտ, վերին կէտ (բարձրագոյն կէտ երկնքում, որ գտնւում է ուղիղ դիտողի գլխի վերայ. նորա հակառակ կէտը կոչւում է нади́ръ); **-ни́тный** ած. զէնիթի։

Зеоли́тъ ա. հնք. հալաքար։

Зерёнчатый ած. 1, մեծահատիկ. 2, հատիկի նման, հատիկանման։

Зе́р|кало չ. (յ. зеркала́, а́лъ) հայելի. **-(зе́р)ка́льный** ած. 1, հայելու. з. заво́дъ; з—ое стекло́: 2, հայելակերպ. հայելու նման. з—ая пове́рхность воды́; **-кальце** չ. նւզ. պստիկ հայելի. **-(зе́р)ка́льщикъ** ա. հայելագործ։

Зе́рликъ ա. բս. Polypodium fragrans, հոտաւէտ, սիբիրական շատատուի կամ կճուճ (պտապայինճ)։

Зер|ни́стость ի. մեծահատիկութիւն, խոշորահատիկութիւն. **-ни́стый** ած. 1, հատիկաւոր. 2, մեծահատիկ, խոշորահատիկ. з—ая икра́; **-ни́ть** (-ню́ -ни́ть) ն. հրետն. հատիկաւորել (վառօդի շաղախը հատիկներ դարձնել). зернённый по́рохъ.

Зер|но́ չ. (յ. зёрна, зёренъ) հատ, հատիկ. пшени́чное, ячме́нное з.: бурми́тскія зёрна Որմուզեան խոշոր մարգարիտներ. купи́ для куръ з—а́ հաւերի համար կուտ գնիր. **-нови́дный** ած. հատակերպ, հատիկակերպ։

Зер|нови́къ, а́ ա. բս. սերմնարան. **-но́вка** ի. կնդ. Bruchus granarius, սերմնաճճի. **-ново́й** ած. հատիկի, հատիկաւոր. з. хлѣбъ չ'աղացած հացահատիկ. з. червь հացահատիկների որդ։

-Зерно|но́сный ած. հատաբեր. **-обра́зный, -подо́бный** ած. հատակերպ, հատիկակերպ. **-храни́лище** չ. շտեմարան. **-я́дный** ած. հատակեր, հատիկակեր։

Зёрнышко չ. նւզ. պստիկ հատ, հատիկ, սերմիկ։

Зернь ի. 1, հատիկ, հացահատիկ. 2, նարդի (խաղ մի)։

Зерца́ло չ. 1, եկ. սլ. հայելի. 2, զերցալ, օրէնական, դատական հայելի (պետական պաշտօնատան սեղանի վերայ դրած հատուածակողմը (при́зма) արծուով և Պետրոս Մեծի հրովարտակներով)։

Зе|фи́рный ած. զեփիւռի. **-фи́ръ** ա. զեփիւռ։

Зигза́ги ա. յ. (գերմ.) ծուռումուռ, օձապտոյտ գծեր, ոլորաններ, պտոյտներ։

Зиж|де́ніе չ. հիմնելը, շինելը, ստեղծելը. **-ди́тель** ա. **-ди́тельница** ի. հիմնող, հիմնարկու, -կիչ, շինող, ստեղծող այր, կին. **-ди́тельный** ած. ըստեղծիչ, արարչական. з—ая десни́ца; **-ди́ть** (зи́ждится, зи́ждился; սխալ ձևեր_են) ա. Зда́ть.

Зи|мá *ի.* *ձմեռ։* Зимóю *մ.* *ձմեռը.* **-мница** *ի.* 1, *ձմերային տաղաւարան, խրճիթ՝ հիւղ.* 2, *ձըմերան բույն, գնդան։*

Зú|мній *ած.* *ձմեռնային, ձմրան.* з—ее плáтье; з—яя дорóга; з. путь; з—яя квартúра *ձմրանոց.* стать на з—ія квартúры *ձըմրանոց մտնել.* **-мовáльный** *ած.* *ձմրան, ձմեռն անցկացրած* (*բոյսերի, վանդակում պահուող թռչուններին մասին*). **-мовáніе** *չ.* *ձմեռելը, ձըմեռն անցկացնելը.* **-мовáть** (-мýю -ютъ) *չ.* *ձըմեռել, ձմեռն անցկացնել.* онъ знáетъ, гдѣ рáки зимýютъ *նա իր օգուտը լաւ է հասկանում, նա գիտէ, թէ որտեղից շահ անի.* **-мóвка** *ի.* 1, *տ.* Зимовáніе; 2, *տ.* Зимóвьё 1; **-мóвникъ** *ա.* *ձմրան խրճիթ. ձմրան փարախ, ձմրավայր.* **-мóвьё, ья** *և* ья *չ.* 1, *ձմրավայր, ձմրանոցք* (*հա-կակը տ.* Гнѣздóвьё); 2, *հիւղ, խրճիթ հովիւնե-րի համար որսորդների։*

Зимозимéтръ *ա.* (*յն.*) *խմորաչափ, եռալու, խըմորուելու աստիճանը չափելու գործիք։*

Зимолётъ *ա.* *կնդ.* Falco buteo, *մկնարագէ։*

Зú|морóдокъ, дка *ա.* *կնդ.* Alcedo ispida, *ալ-կիոն* (*ծղնի*). **-мóю** *մ.* *տ.* Зимá.

Зимсъ *ա.* (*գերմ.*) *փորուածք, ատախտակի ափին քաշած ակօս, որի մէջ ամրացնում են հարկան տախտակը։* [*լոշ* (*ազնկատակ փիփերթ*)։

Зинзивéй *ա.* *բս.* Malva silvestris, *վայրի մա-*

Зинзýбель *ա.* (*գերմ.*) *նեղ, ակօսաքաշ խարտա-բուք մի* (*'ռանդա'*)։

Зúнька *ի.* *կնդ.* Parus minor, *փոքր երաշ-*

Зúнуть *տ.* Зіять. [*տահաւ։*

Зипýнъ *ա.* (*թուրք.*) **-пунúшко** *ա.* *նվստ.* **-пýничикъ** *նւզ.* *զիպուն* (*մի տեսակ կարճ, բաճկոն չինա-կանի*)։

Зіяніе *չ.* *բերանը բացելը, բաց անելը։*

Зіять (-ю́ю -я́ютъ), зúнуть *չ.* *բերանը, երախը բացել, բաց անել.* зіяющая пасть *բացած, բաց արած բերան, երախ։*

Зла|къ *ա.* *բոյս, խոտ, տունկ. խոտեղէն, կա-նաչեղէն.* **-новый** *ած.* *խոտի, բոյսի, կանաչեղէնի։*

Златáрь *ա.* *եկ.* *սլ.* *ոսկեգործ։*

Злáтикъ *ա.* *կնդ.* Zeus faber, *արեձուկ, հա-*

Злáто *եկ.* *սլ.* *տ.* Зóлото. [*յելաձուկ։*

Злато|вéрхій *տ.* Златоглáвый; **-вúдный** *ած.* *ոսկեկերպ, ոսկենման, ոսկեգոյն.* **-влáсъ** *ա.* *բս.* Chrysocoma, *ոսկէ մազը.* **-влáсый** *ած.* *ոսկեհեր, ոսկեգոյն մազերով.* **-глáвый** *ած.* *ոսկեգմբէթ* (*եկեղեցի, տաճար*). **-зáрный** *ած.* *ոսկեփայլ.* з—ое

Златóй *տ.* Золотóй. [сóлнце.

Мѣ|диплави́льный *-ծ. պղինձ հալող, պղինձ հալելու.* м. завóдъ; **-диплави́льщикъ** *-. պղինձ հալող.* **-диплавлéнiе** *ւ. պղինձ հալելը.* **-дистый** *-ծ.* **1**, *պղնձակերպ, պղնձանման.* **2**, *պղնձային, պղնձախառն.* **-дникъ** *-. պղնձագործ.* **-дническiй** *-ծ. պղնձագործի.* **-дничество** *ւ. պղնձագործութիւն.* **-днооплави́льный** *ա.* Мѣдиплави́льный; **-дноцвѣ́тный** *-ծ. պղնձագոյն.* **-дный** *-ծ. պղնձի, պղնձէ, պղնձից.* м—ыя дéньги; м—ая посýда; м—ая рудá; м. рудни́къ; *м. лобъ *երեսը պինդ, անամօթ անձ.* **-дь** *է.* **1**, *Տնր.* Cuprum, Aes cyprium, *պղինձ.* м. крáсная, жёлтая; **2**, *պղնձէ դրամ.* **3**, *հ-+. պղնձէ ամաններ, պղնձէ իրեր.* **-дя́нистый**

ած. պղնձաշատ. **-дяница** է. կնդ. Anguis fragilis, սղոցկուկ, կուրօձ. **-дянка** է. կնդ. ա, Pelias chersea, պղնձօձ. բ, Buprestis, շքեղ կողակէզ (միջատ). **-дяный** ա. Мѣдный.

Мѣ|леніе չ. կաւճելը, կաւիճ քսելը. **-ливать, -лить** (-лю -лятъ), нам—, пом—, ն. կաւճել, կաւիճ քսել. **-ся** անդր. կաւճոտուիլ, կաւճով ծածկուիլ. **-ловатый** ած. կաւճախառն. **-ловидный** ած. կաւճակերպ, կաւճանման. **-ловой** ած. կաւճի, կաւճային, կաւճոտ. **-локъ**, лка́ նւզ. կաւիճ, կաւճի կտոր. *играть на мѣлокъ պարտքով [թուղթ] խաղալ. **-лъ** ա. Տնք Creta, կաւիճ։

Мѣ|на է. փոխելը, փոխարկելը, փոխում, փոխանակութիւն. **-нивать** ա. Мѣнять; **-новой** ած. փոխարկութեան, փոխարէնը վերցնող, առնող. м—ая торговля փոխավաճառութիւն. **-новщикъ**, а́ ա. **-новщица** է. փոխանակող, փոխառևտրական, -ուհի, հատավաճառ, -ուհի. **-новщичій**, ья, ье ած. փոխառևտրականի, -կանական. **-ня́ла** ա. հատավաճառ, դրամափոխ, 'զառափ'. **-ня́льный** ած. հատավաճառութեան, դրամափոխութեան. м—ая лавка; **-ня́льщикъ, -ня́льщица** ա. Мѣновщикъ, -вщица; **-ня́ніе** չ. 1, փոխելը, փոխարկելը. 2, դրամը մանրելը, դրամափոխութիւն. **-ня́ть** ն. 1, փոխել, փոխարկել, м. бѣльё; м. религію, мѣсто; м. свой образъ жизни; м. свой мнѣнія; м. товаръ на товаръ ապրանքն ապրանքի հետ փոխել. 2, մանրել (դրամը), 'խուրդա անել'. м. ассигнаціи на серебро թղթադրամը արծաթի փոխել. **-ся**, пом—, անդր. փոխուիլ, փոփոխուիլ. моды мѣняются; м. въ лицѣ; м. взглядами, словами հայեացքների, խօսքերի փոխանակութիւն ունենալ։

Мѣ|ра է. 1, չափ, քանակութիւն. *какою м—ою мѣришь, такою и тебѣ отмѣрится; въ этихъ стихахъ нѣтъ м—ы; питейная, хлѣбная м.; сверхъ мѣры չափից դուրս, չափազանց. въ мѣру չափով, ըստ չափու, ըստ պահանջի. это не въ мѣру այդ չափին համապատասխան չէ, (շորերի մասին) լաւ չէ նստում, չէ սազում. наблюдать мѣру въ пищѣ; по крайней мѣрѣ գոնեա, ամենաքիչը, առնուազը. всему есть мѣра ամէն բան չափ ու սահման ունի. превышать мѣру չափից անցնել. по м—ѣ возможности որչափ կարելի է. 2, միջոց. побудительная м. ստիպողական միջոց. предварительная м. նախազգուշական, ժամանակաւոր միջոց, կարգադրութիւն. принять мѣры միջոցներ ձեռք առնել. **-ривать, ся** ա. Мѣрить, ся; **-рило** չ. չափ, չափիչ. **-рильный** ա. Мѣрительный; **-ритель** ա. չափող. **-рительный** ած. չափելու, չափը, քանակութիւնն իմանալու. **-рить** (-рю -рятъ), см—, изм—, ն. չափել. м. поле; м. хлѣбъ; м. аршиномъ, ведромъ; м. на свой аршинъ իր վրայ դնել. **-ся** անդր. съ кѣмъ մէկի հետ չափուիլ, մէկի հետ իր ոյժը, կարողութիւնը չափել. **-рка** է. չափ, չափիչ. всё ставить подъ одну мѣрку; снимать съ кого м—у մէկի [շորի, կօշկի ևն] չափը վերցնել, մէկի վերայ շոր, կօշիկ ևն ձևել. **-рно** մ. չափով. **-рность** չ. չափաւորութիւն. **-рный** ած. չափաւոր, որոշ չափով. м—ая рыба համապատասխան մեծութեամբ ձուկ. м—ая бутылка չափաշիշ. м—ыми шагами չափաւոր քայլերով. **-ропріятіе** չ. միջոց. строгія м—ія; **-рочка** նւզ. ա. Мѣрка; **-рщикъ** ա. չափող. **-ряльщикъ** ա. **-ряльщица** է. չափող. **-ряніе** չ. չափելը. **-ритель** ա. Мѣрщикъ; **-рять** (-ряю -ютъ), **ся** ա. Мѣрить, ся.

Мѣ|сивный ած. խառնարար. **-сиво** չ. **-сивцо** նւզ. խառնուրդ, խառնարդ, խառըն կեր (հաւերի և անասունների). **-силка** է. հունցելու թիակ. **-сильный** ած. հունցելու. **-сильщикъ** ա. **-сильщица** է. հունցող այր, կին. **-сить** (-шу́ -сятъ), зам—, разм—, см—, ն. 1, հունցել, շաղախել (խմորը). 2, տրորել, ճմռել, թրել, կոխել (կաւ). м. грязь ցեխոտ ճանապարհով ման գալ. **-ска** է. 1, հունցելը, շաղախելը. 2, ճմռելը, տրորելը, կոխելը։

Мѣ|стечко չ. 1, նւզ. պստիկ տեղ. доходное, тёпленькое м. արդիւնաբեր, տաք տեղ. 2, տեղ, ագարակ, դաստակերտ, աւան. **-стить** (-щу́ -стятъ), пом—, ն. տեղ տալ, տեղաւորել, զետեղել, պարունակել. **-ся** անդր. տեղաւորուիլ, զետեղուիլ. **-стничаться** չ. տեղրանկութեան, առաջնակարգութեան համար մրցել. **-стишко** նխտ. ա. Мѣсто; **-стничество** չ. 1, բարձր ու պատուի, առաջնութեան իրաւունք. 2, բարձր ու պատուի պայքար, մրցութիւն (նախնի ռուս ազնուականների). **-стность** է. տեղ, վայր, դիրք. **-стный** ած. տեղական, տեղային. м. судъ, м—ые законы; м—ыя войска; м—ое вино; **-сто** չ. 1, տեղ, վայր, կողմ, տարածութիւն. гористое, ровное м.; отхожее м. արտաքնոց. святыя мѣста ուխտատեղեր, նուիրական վայրեր. это не у мѣста այդ անտեղի, անհամ է. вы найдёте его въ такомъ-то м—ѣ; въ которомъ м—ѣ чувствуете вы боль? быть убитымъ на м—ѣ տեղն ու տեղը սպանուել. я бы не желалъ быть на его м—ѣ; это самое трудное м. въ концертѣ; м. свиданія; дать кому м. մէկին տեղ տալ. не сходя съ м—а տեղից չշարժուելով. 2, տեղ, պաշտօն, ծառայութիւն. искать м—а; доходное м. արդիւնաւոր տեղ. судебное м. դատաստանատուն, ատեան. присутственное м. պետական պաշտօնատուն, ատեան. онъ безъ мѣста, не у мѣста նա առանց տեղի, առանց պաշտօնի է. онъ не на своёмъ м—ѣ նա իր տեղին, պաշտօնին անարժան է. мѣстами մ. տեղ տեղ. градъ былъ только мѣстами.

Мѣсто|блюститель ա. տեղապահ, տեղակալ, փոխանորդ. **-жительство** չ. բնակութեան տեղ, բնակավայր. **-именіе** չ. քերկ. դերանուն. **-нахожденіе** չ. տեղ (հանածոյի), հանքատեղ. **-описаніе** չ. տեղագրութիւն. **-описательный** ած. տեղագրական. **-положеніе** չ. տեղադրութիւն. м. лагеря; **-пребываніе** չ. բնակութեան, կացութեան տեղ. **-рожденіе** չ. 1, ծննդավայր. 2, հանքատեղ, հանք, բոյն։

Мѣ|сяцесловный ած. ամսացոյցի, օրացոյցի. **-сяцесловъ** ա. ամսացոյց, օրացոյց. **-сяцъ** ա. 1, լուսին, լուսնեակ. новый, молодой, полный м.; медовый м. մեղրալուսին. 2, ամիս. разъ въ м. ամիսը մի անգամ.

ка́ждый м. *ամէն ամիս.* **-сячина** *է. ամսա-պաշար, ամսական պարէն.* **-сячно** *Ֆէւ. լու-սինը փայլում է.* на дворѣ м.; **-сячное,** аго *չ. ամսական, դաշտան* (*կնոջ, աղջկայ*). **-сячный** *ած.* **1,** *լուսնի, լուսնա—.* м. свѣтъ; м—ая ночь *լուսնեակ գիշեր.* **2,** *ամսա—, ամսի, ամ-սական.* м—ое жа́лованіе; м. срокъ; м—ое очище́ніе *տ.* Мѣ́сячное; м—ая трава́ *բս.* Campanula sibirica, *սիբիրական զանգակիկ։*

Мѣ|тá *է.* **1,** *Թիրախ, նշան.* **2,** *նպատակ, դիտաւորութիւն.* **-тить** (-чу -тятъ) *չ.* **1,** что *մի բանի վերայ նշան դնել.* м. бѣльё; **2,** во что *մի բանի նշան դնել.* м. медвѣ́дю въ го́лову; м. въ цѣль; *м. во, на кого́, что *մէկին, մի բանի աչք անկել.* онъ мѣ́титъ въ генера́лы *նա նկրտում է գեներալ դառնալ.* онъ мѣ́титъ на э́ту до́лжность; **2,** на кого́ *մէկին ակնարկել, մէկի վերայ ակնարկութիւն անել.* говоря́ э́то, онъ мѣ́тилъ на извѣ́стное лицо́; **-тка** *է.* **1,** *նշան, նիշ* (*մի բանի վերայ դրած, յօրինած*). наложе́ніе мѣ́токъ; **2,** *տ.* Мѣ́ченіе; **-ткій** (-токъ -тка, о) *ած. քաջ նշանառու, անվրէպ նշանառու.* онъ м. стрѣло́къ; м—ое ружьё *խիստ ուղիղ դիպցնող հրացան.* **-тко** *Ֆ. ճշտութեամբ, անվրէպ, առանց վրիպելու.* стрѣля́ть м.; **-ткость** *է. հմտութիւն նշանառութեան մէջ, քաջ նշանառութիւն.* **-точка** *նւզ. տ.* Мѣтка 1; **-точникъ** *ա.* **-точница** *է. նշաններ դնող, նշաններ յօրինող* (*օր. ճերմակեղէնի վերայ*) *այր, կին.* **-точный** *ած. նշան դնելու, նշան յօրինելու, նշանագրութեան.* м—ыя черни́ла.

Мѣ|ховóй *ած.* **1,** *մուշտակի*(*ց*), *մուշտակա—.* м. воротни́къ *մուշտակէ օձիք.* м—ая ша́пка *մուշտակէ գլխարկ.* м. това́ръ *մուշտակեղէն.* **2,** *փուքսի.* **-ховщи́къ,** а́ *ա.* **-ховщи́ца** *է.* **1.** *մուշտակավաճառ, մորթեղէններ ծախող այր, կին.* **2,** *մուշտակներ կարող, 'քուրքչի' այր, կին. ակպարծ.* **-ховщи́чій,** ья, ье *ած. մուշտակավաճառի. 'քուրքչու'.* **-хъ** *ա.* **1,** (*յ.* мѣха́, о́въ) *մուշտակ, մորթ*(*ի*). ли́сій, со-бо́лій, бобро́вый м.; торгова́ть м—а́ми; **2,** (*յ.* мѣхи́, о́въ) *տիկ հանած մորթ, տիկ, տիկ-ճոր.* кузне́чный м. *դարբնի փուքս.* разду-ва́льный, раздува́тельный, ручно́й м. *փուքս, ձեռնափուքս։*

Мѣ|ченіе *չ.* **1,** *նշան դնելը* (*օր. ճերմակեղէնի վերայ*). **2,** *նշանառութիւն, նշան դնելը* (*հրացանաձգութեան ժամանակ*). **-ченый** *ած. նշանած, նշան դրած.* м—ыя ка́рты.

Мѣ|шáлка *է. խառնիչ, խառնելու փայտ, գործիք.* **-шани́на** *է. խառնած բան, խառ-նուրդ.* **-шáніе** *չ. խառնելը.* м. дровъ въ пе́чкѣ; **-шáть,** зам—, см—, перем—, ном—, *չ.* **1,** *խառնել.* м. ка́рты; м. цеме́нтъ въ твори́лѣ; м. дрова́ въ пе́чкѣ; м. вино́ съ водо́ю; **3,** *շփոթել* (*երկու միմեանց հետ*). **3,** *չ.* кому́ *մէկին խանգարել.* **-ся** **1,** *ներգ. խառնուել, շփոթուել.* м. въ слова́хъ; ма́сло не мѣша́ется съ водо́ю; **2,** *ներգ.* (вмѣ-ша́ться) *մի բանի մէջ խառնուել, մի բանի մի-ջամտել.* м. въ чужі́я дѣла́; **3,** *չ. ցնորուել, զժուել.* м. въ умѣ́ *խելքը կորցնել։*

Мѣшéніе *չ. շաղախելը, տրորելը, կոխելը։*

Мѣ|шéтчатый *ած. պարկաձև.* **-шё-чекъ,** чка *տ.* Мѣшо́чекъ; **-шéчникъ** *ա. պարկագործ, պարկավաճառ.* **-шё́чный** *ած. պարկի. ջուալի.* м—ая мука́.

Мѣшивать *տ.* Мѣси́ть *և* Мѣшивать.

Мѣш|каніе *չ. յապաղելը, ուշանալը, յա-մելը, յապաղում.* **-кать,** зам—, пром—, *չ. յապաղել, ուշանալ,* (*գր.*) *յամել։*

Мѣшковá|тость *է.* **1,** *անհամ լայնու-թիւն, պարկանմանութիւն* (*զգեստի*). **2,** *դան-դաղութիւն, անարիութիւն, 'թամբալութիւն'.* **-тый** *ած.* **1,** (*զգեստի մասին*) *անհամ լայն, պարկանման.* **2,** (*մարդու մասին*) *դանդաղ, անա-րի, 'թամբալ'։*

Мѣшкови́на *է. հաստ կտաւ, որից պար-կեր են կարում, պարկացու կտաւ։*

Мѣшкот|но *Ֆ. դանդաղութեամբ.* **-ность** *է. դանդաղութիւն, դանդաղկոտութիւն.* **-ный** *ած. դանդաղ, դանդաղկոտ, 'ջանջալ'։*

Мѣ|шóкъ, шка́ *ա.* **-шóчекъ,** чка *նւզ.* **1,** *պարկ, 'ջուալ'.* ши́ла въ мѣшкѣ́ не утаи́шь (*առծ.*). на нёмъ пла́тье сиди́тъ *мѣш-ко́мъ *նորա շորը շատ լայն, պարկանման է.* **2,** *կախուղ մորճերից հիւսած քթոց.* **3,** * *անճռնի, անշնորհք մարդ.* э́то настоя́щій м—о́къ.

Мѣща|ни́нъ *ա.* (*յ.* мѣща́не, -нъ), **-нка́** *է. մեշչան, -ուհի* (*մէջ գիւղիական, ստորին դասի քաղաքացի այր, կին*). **-нскій** *ած. մեշչանի, -նական.* **-нство** *չ. մեշչանութիւն, մեշչաններ։*

Мя́|гкій (-гокъ -гка́, о) *ած.* (*արտս.* мя́хк—) **1,** *փափուկ, կակուղ.* м—ая посте́ль; м—ая говя́дина; м—іе во́лосы; м—ое же-лѣ́зо; **2,** * *փափուկ, մեղմ, դիւրահամբոյր.* м. человѣ́къ, м—ое се́рдце; **-гко** *Ֆ. մեղմաբար։*

Мягко|вáтость *չ. թեթև փափկութիւն, կակղութիւն,* *մեղմութիւն.* **-вáтый** *ած. փափ-կուոն, բաւականին փափուկ, կակուղ.* **-кóжій** *ած. կնդ. փափկամորթ, կակղամորթ.* **-нрáвіе** *չ. քաղցրաբարոյութիւն.* **-нрáвный** *ած. քաղ-ցրաբարոյ, հեզաբարոյ.* -(о́)**нько** *մնղմ. տ.* Мя́гко; **-пёрыя** ры́бы, *կնդ.* Anacanthini, *Կակղաթեւեր.* **-сердéчно** *Ֆ. բարեսրտութեամբ, կարեկցաբար.* **-сердéчный** *ած. բարեսիրտ, փափկասիրտ, կարեկից սրտով, նուրբ զգացում-ներով.* **-сéрдіе** *չ. բարեսրտութիւն, մեղմ, կարեկից սիրտ ունենալը.* **-сéрдость** *է. տ.* Мягкосе́рдіе; **-сéрдый** *տ.* Мягкосерде́ч-ный.

Мя́гкость *է. փափկութիւն, կակղութիւն.* * *մեղմութիւն.* м. нра́ва *հեզահամբոյրութիւն։*

Мягко|тѣ́лость *է. կակղամորթութիւն. փափուկ, նուրբ մորթ.* **-тѣ́лъ** *ա. կնդ.* Mollus-cus, *կակղամորթ.* **-тѣ́лый** *ած. փափկամար-մին, կակղամարմին, փափկամորթ, փափուկ կա-շով. կակղամիս* (*պտուղ*), м—ыя живо́тныя *կնդ.* Mollusca, *Կակղամորթներ կմ Թուլատարր-ներ.* **-шéрстный,** **-шéрстый** *ած. փա-փուկ, կակուղ բրդով։*

Мя́г|че *ած. և Ֆ. բաղդտ. աւելի փափուկ, աւելի մեղմ.* **-чéніе** *չ. փափկացնելը, կակղաց-նելը.* **-чи́тельность** *փափկացնող, կակղաց-նող յատկութիւն.* **-чи́тельный** *ած. փափ-կացնող, -ցուցիչ, կակղացնող, -ցուցիչ.* м. пла́-стырь; **-чи́ть** (-чу́ -ча́тъ), вы́м—, см—, *չ. փափկացնել, կակղացնել.* **-ся** *ներգ. փափկա-նալ, կակղանալ. գիջել.* **-чѣ́ть,** пом—, *չ. փափ-կանալ, կակղանալ։*

Мяз|rá, -róвый *տ.* Мезrá, -róвый; **-дрá, -дрить** *տ.* Мездрá, -дрить.

Мя|кúна *է. յարգ, յարդի մղեղ.* **-кúнникъ** *ա.* **-кúнница** *է. յարդի կլապան, մարագ.* **-кúнный** *ած. մղեղի, յարդի.* **-кишекъ,** шка *նւզ.* **-кишъ** *ա. նացի փափուկ մասը։*

Мя́|клость *է. փափկութիւն. կակղութիւն.* **-клый** *ած. փափուկ, փափկացած, կակուղ, կակղացած.* **-кнуть** отм—, разм—, см—, *չ. փափկանալ, կակղանալ.* **-конькій** *ած. մնղմ. փափլիկ.* **-котный** *ած. կակուղ, փափուկ. կենդ. կակղամորթ.* **-коть** *է. որ և է բանի փափուկ մաս.* м. спины; *պտուղի միսը.* **-кóхонькій** *ած. խիստ փափուկ, խիստ կակուղ։*

Мя́|лица, -лка *է.* **-ло** *չ. կտաւատը ծեծելու գործիք, ծեծան.* **-льный** *ած. ծեծող, ջրջրող, տրորող.* **-льня** *է. որ և է բան ծեծելու, ջրջրելու, տրորելու տեղ.* **-льщикъ** *ա.* **-льщица** *է. մի բան (օր. կտաւատ) ծեծող, ջրջրող այր, կին։*

Мя́м|леніе *չ.* **1,** *ծամը, կամաց ծամելը.* **2,** *ծամելը, ծամծմելը (խօսքը).* **-лить** (-лю -лятъ) *չ.* **1,** *ծամը, կամաց ծամել.* **2,** *ծամել, ծամծըմել (խօսքը), դանդաղ կերպով ասել, խօսել, գործել.* **-ля** *հ-ր. դանդաղկոտ, ծոյլ, 'Թամբալ', ալարկոտ այր, կին։*

Мя|сúстость *է. մսոտութիւն, մարմնեղութիւն, մսաշատութիւն.* **-сúстый** *ած. մսոտ, մսեղ, մարմնեղ.* **-сúшко** *չ. նխտ. վատ, անպիտան միս.* **-сúще** *չ. յեռլ. ահագին, մեծ միս, մսի կտոր.* **-снúкъ,** *á ա. մսավաճառ, 'ղասաբ'.* **-снúческій** *տ.* Мяснúчій; **-снúчество** *չ. մսավաճառութիւն, 'ղասաբութիւն'.* **-снúчиха** *է. մսավաճառի, 'ղասաբի' կին.* **-снúчій,** ья, ье *ած. մսավաճառի, 'ղասաբի'.* **-снóй** *ած. մսի, մսային.* м—ыя чáсти тѣла; м—áя пúща *կմ* м я с н ó е, óго *չ. մսեղէն, մսէ կերակուր.* м—áя лáвка; м. цвѣтъ *մսի գոյն.* **-со** *չ. միս.* бѣлое м. *հորթի կմ հաւի միս.* дúкое м. *աւելորդ միս.* ни рыба, ни м. *ոչ այս է և ոչ այն.* **-совúдный** *ած. մսակերպ, մսանման, մսատես։*

Мясо|пýстіе *չ. տ.* Мясопýстъ; **-пýстный** *ած. մսապաս.* м—ая недѣля *մսապաս շաբաթ (մեծ պասի նախորդ շաբաթը, երբ միս ուտելը արգելուած է).* **-пýстъ** *ա. եկղ. մսի պաս, մսի պահեցողութիւն. Նաւակատիք.* **-ѣдéніе** *չ. մսակերութիւն, միս ուտելը.* **-ѣдный** *ած.* **1,** *միս ուտելու, մսակերութեան.* м—ая недѣля; **2,** *մսակեր.* м—ыя живóтныя; **-ѣдъ** *ա. եկղ.* **-ядéніе** *չ.* **-ястіе** *չ. մսի ուտիք, ժամանակ, երբ միս ուտելը արգելուած չէ։*

Мястú (-тý -тёшь -тýтъ) *ն. յուզել, խըռովեցնել.* стрáсти мятýтъ дýшу; **-ся** *ներբ.* **1,** *յուզուիլ, խռով(ու)իլ.* „...мятýтся язычники" *Զմէ խռովեցան հեթանոսք (Գործք Առաք. 4_{25}).* **2,** *չ. դէս ու գէն ընկնիլ, ցրուիլ. ցիրուցան լինել.* хлóпья мятýтся *ձիւնի փաթիլները Թափթփում են.* всё въ ýжасѣ мятётся.

Мяцó *նւզ. տ.* Мя́со.

Мя́та *է. բս.* Mentha, *անանուխ.* пéречная *կամ* англíйская м., M. piperita, *պղպեղահամ անանուխ.* кудря́вая, курчáвая м. M. crispa, *գանգրաւոր անանուխ։*

Мятé|жество *չ. խռովարարութիւն.* **-жливость** *է. խռովասիրութիւն, հակառակասիրութիւն.* **-жливый** *ած. խռովասէր, հակառակասէր, ամբարիշտ.* **-жникъ** *ա.* **-жница** *է. ապստամբ, -ուհի, խռովարար, -ուհի.* **-жничать** *չ. ապստամբուիլ, խռովութիւն յարուցանել.* **-жническій** *ած. խռովարարութեան, ապստամբական.* **-жничество** *չ. խռովարարութիւն, ապստամբողութիւն.* **-жничій,** ья, ье *տ.* Мятéжническій; **-жный** *ած. խռովութեան, ապստամբութեան.* м. духъ; м—ая толпá *խռովուած, յուզուած ամբոխ.* м—ое врéмя *խռովայոյզ ժամանակ.* **-жъ,** *á ա. ապստամբութիւն, խռովութիւն, շփոթ.* м я т е ж и́ *յ. խռովութիւններ, շփոթութիւններ։*

Мятé|листый *ած. ջրային, ջրի, 'Թիփու'.* **-лица -ль** *է. ձիւնախառն հողմ, բուք, 'Թիփի'.* **-льный** *ած. ջրի, 'Թիփու'։*

Мя́тіе *չ.* **1,** *ծեծելը, ջրջրելը (կտաւատը).* **2,** *ճմլելը. տրորելը, կոխելը, շաղախելը (հողը)։*

Мят|лúка *բս.* Poa prataensis, *հասարակ դաշտախոտ.* **-ликовыя** растéнія, *ազբխոտներ։*

[м. зáпахъ.

Мя́тный *ած. անանուխի, -խային.* м. чай;

Мятý *տ.* Мястú.

Мя|ть (мну, мнутъ), см—, *ն.* **1,** *ջրջրել, ծեծել (կտաւատը).* **2,** *ճմլտել, ճմռթկել.* м. постéль; не мнúте плáтья; **3,** *ճմլել, տրորել, կլոճորել, ոտնատակ տալ, ճմռել, կոխել.* м. ногáми глúну; скотúна мнётъ травý; **-ся** **1,** *ներբ. շփոթուիլ, շշկլուիլ, վախուորուիլ.* **2,** *չ. տատանուիլ.* дóлго мя́лся, но наконéцъ согласúлся; **-тьё,** ья́, *տ.* Мя́тіе; м. глúны ногáми.

Мяý|канье *չ. մլաւելը, մլաւիւն, մլաւոց (կատուի).* **-кать, -кнуть** *չ. մլաւել.* **-чить** (-чу -чатъ) *տ.* Мяýкать.

Мяхýнка *է. բս.* Physalis Alkekengi, *յակոբուկ։*

Мя|чевóй *ած. գնդակի, գնդա—, գնդակա—.* м—áя игрá; **-чикъ** *նւզ.* **-чúшко** *ա. նխտ.* **-чúще** *ա. յեռլ.* **-чъ,** *á ա. գնդակ, 'թուփ'.* игрá въ м. *գնդակախաղ, 'թուփթախաղ'։*

Мv|рница *տ.* Мúрница; **-рный** *տ.* Мúрный 3; **-ро** *տ.* Мúро.

Мvровар... *տ.* Мúровар...

Мvронос... *տ.* Миронос...

Мvропомаз... *տ.* Миропомаз...

Мvроточ... *տ.* Мироточ...

Мvрохранúтельный *տ.* Мирох...

Н.

Н, н *ռուսաց այբբենի տասն և չորսերորդ տառն է և հնչւում է ինչպէս հայոց Ն-ն։*

На **і,** *նխդ. պահանջում է հայցական և ներգոյական հոլով։* **А,** на *հայցական հոլովով նշանակում է.* 1, *(շարժողութիւն ցոյց տալով բայերից յետոյ (դէպի ուր. դէպի՝ վրայ)*

վերայ, գէպի, 'ի, յ. сѣсть на стулъ աթոռի վերայ նստել. лечь на постéль անկողնի վերայ պառկել. выйти на ýлицу փողոց դուրս գալ. звать на свáдьбу հարսանիքի հրաւիրել. иттѝ на слýжбу ծառայութեան, պաշտօնի գնալ. взять что на себя մի բան իւր վերայ առնել. взлѣзть нá стѣну պատի վերայ բարձրանալ. повѣсить сáблю нá стѣну սուսերը պատից կախել. брóситься комý на шéю մէկի վզովն ընկնել. отвѣчáть на письмó նամակին պատասխանել. 2, ցոյց է տալիս ժամանակ, տեւողութիւն, օր. на слѣдующій день հետեւեալ օրը. нá два гóда երկու տարով. 3, ցոյց է տալիս գին, արժողութիւն, չափ, օր. закупѝть хлѣба нá пять рублéй հինգ ռուբլու հաց գնել. на цѣлый пáлецъ шѝре մի ամբողջ մատնաչափ լայն. покупáть на вѣсъ քաշով առնել, գնել. игрáть на дéньги փողով խաղալ. 4, համար, յօգուտ, 'ի նպաստ. рабóтать на помѣщика; завѣщáть своё имýщество на нѝщихъ, на цéрковь իւր ստացուածքը կտակել յօգուտ աղքատների, եկեղեցուն. на что тебѣ ѳто? на зло емý 'ի հեճուկս նորա, նորան հակառակ. Б, на նախդրական հոլովով ցոյց է տալիս. տեղ (ուր, որտեղ, ինչ բանի վերայ), ժամ, ժամանակ (երբ, ինչ ժամանակ, օր.) сидѣть на стýлѣ աթոռի վերայ նստել (նստած լինել). быть на свáдьбѣ հարսանիքում լինել, գտնուել. со слезáми на глазáхъ արտասուքը աչքերին. купѝть что на рынкѣ շուկայում մի բան գնել. писáть на бумáгѣ թղթի վերայ գրել. быть на слýжбѣ ծառայութեան մէջ լինել. быть на рабóтѣ գործի, աշխատանքի վերայ լինել. нестѝ ребёнка на рукáхъ երեխային ձեռքերի վերայ կրել. женѝться на вдовѣ այրու հետ ամուսնանալ. на стáрости лѣтъ ծերութեան ժամանակ. на ѳтой, на бýдущей недѣлѣ այս, եկող շաբաթ. на дняхъ օրերս, այս մի երկու օրուայ մէջ. II. ձգ. առհա, ահա, առ քեզ. на, возьмѝ! нá, ѳто тебѣ на вóдку; вотъ тебѣ на! առհա թէ ինչ, 'այ քեզ օյին':

—NB. **На** միանալով բայերի հետ 'ի միջի այլոց նշանակում է. 1, գործողութիւն մի բանի վերեւից, մի բանի վերայ, օր. наклеѝть վրան կպցնել. наступѝть на что մի բան կոխել, մի բանի վերայ ոտք դնել. 2, գործողութեան սաստկութիւն. набросáть մեծ քանակութեամբ գցել, կիտել. навалѝть մեծ քանակութեամբ ածել, թափել, կիտել. 3, (-ся վերջացող բայերի հետ) գործողութեան լիակատարութիւն, օր. насмотрѣться ցյագ նայել, այնքան նայել, որ մարգ կշտանայ. нагуля́ться ցյագ, ցյօգնութիւն զբօսնել:

На|алты́нничать տ. Алты́нничать; **-арка́нить** տ. Аркáнить; **-а́хаться** հոր. շատ ախ քաշել, շատ ախ ու վախ քաշել, հառաչել:

Наба́|вить (-влю -вять), **ся** տ. Набавля́ть, ся; **-вка** է. **-вле́ніе, -вливаніе** ։. **1**, աւելացնելը, վրան դնելը. **2**, յաւելում. **-вливать, -вля́ть**, -бáвить ն. աւելացնել, վրան դնել. **-вочка** է. պստիկ յաւելում. **-вочный** ած. յաւելման. н—ыя дéньги յաւելագումար:

Наба́г|реніе, -риваніе ։. բագորով շատ ձուկ որսալը. **-ривать, -ри́ть** (-рю́ -ря́тъ) ն. բագորով (багóръ) շատ ձուկ որսալ:

Набалагу́рить (-рю -рятъ) ։. շատ դուարճալի, սրախ բաներ պատմել, շատ կատակներ, հանաքներ անել:

Набаламу́|ченіе, -чиваніе ։. շփոթեցնելը, շուարեցնելը, խառնաշփոթելը, -փխտորելը. **-чивать, -тить** (-чу -тятъ) ն. պղտորել, անհիմն խօսքերով խռովեցնել, շփոթեցնել, շուարեցնել, խառնաշփոթել, խառնափթորել:

Набалда́|чникъ ա. **-чничекъ**, чка նւզ. **-шникъ** ա. **-шничекъ**, чка նւզ. ձեռնափայտի, գաւազանի գլուխ, գլխի կերտուածք:

Набалова́ть (-лу́ю -ютъ), **ся** տ. Нашалѝть, ся.

Наба́лты|ваніе ։. **1**, յիմարաբար, անհաճ կերպով խօսելը, 'դուրս տալը', շաղակրատելը. **2**, խառնելը, հարելը. **3**, չարախօսելը. **-вать**, наболтáть ն. **1**, յիմարաբար, անհաճ կերպով խօսել, 'դուրս տալ', շաղակրատել. **2**, մի բան հեղուկի (օր. ձուաները կաթի) հետ խառնելով հարել. **3**, на когó մէկի վերայ չարախօսել:

Набальза|миро́ва́ніе, -миро́ва́ть, ся տ. Бальзамѝровáніе, -мѝровáть, ся; **-миро́вываніе, миро́вывать, ся** տ. Набальзамѝровáніе, -мѝровáть, ся.

На|ба́ля́сничать ։. շատ հանաքներ անել, շատ զուարճալի բաներ պատմել. **-бараба́нить** (-ню -нятъ) ն. երկար, շատ թմբկահարել. **-бара́хтаться** տ. Барáхтаться; **-ба́рышничать** ։. շահագիտութեամբ, շահչիութեամբ հարստանալ, հարստութիւն դիզել:

Наба́|тить (-чу -тятъ) ։. նաբաթ տալ, զանգակ տալով, փող հնչելով ժողովրդին հաւաքել, կուտել. **-тный** ած. նաբաթի. н. кóлоколъ; о. ударъ; **-тчикъ** ա. նաբաթ խփող. **-тъ** ա. (տճկ.) նաբաթ (զանգահարութիւն, փողհարութիւն են, որ ժողովրդին ահ և է կարևոր դէպքի առթիւ հաւաքում է). бить, удáрить въ н. նաբաթ տալ:

Набедёрникъ տ. Чапрáкъ.

Набе́дренникъ ա. բարձապան, կոնքեր (քառանկիւնի զենջակ քահանայապետական զգեստաւորութեան):

Набез|дѣ́льничать ։. շատ փչութիւններ, անզգամութիւններ, սրիկայութիւններ անել. **-зако́нничать** ։. շատ անօրէն, անիրաւ բաներ բանել:

Набекре́нь մ. թեք, շեղ (գլխարկի մասին). заломѝть шáпку на б. գլխարկը շեղ դնել:

На́бере|жная, ой է. գետափեայ կամ ծովափեայ փողոց. **-жный** ած. գետափեայ, ծովափեայ:

Набесѣ́доваться (-дуюсь -ются) ։. երկար զրոյց անել, խօսել:

Наби|ва́льщикъ ա. **-ва́льщица** է. նախշնակ և նման բաներ լցնող այր, կին. **-ва́ніе** ։. **1**, լցնելը (օր. նկրշնակ, կենդանիների մորթ). **2**, նախշելը, դաջելը (կտաւեղէն են). **3**, շրջանակելը (տակառը). **-ва́тель, -ва́тельница** տ. Набивáльщикъ, -льщица; **-ва́ть**, -(й)ть ն. **1**, խփել, զարկել, ցցել, անկել (մեծ քանակութեամբ). н. сваи; набѝть гвоздéй въ стѣну պատի մէջ շատ մեխեր խփել. н. вóйлокомъ թաղիքով պատել. н. óбручи

на бочку *տակառի վերայ շրջաններ քշել, զարկել*. н. шины на колёса; **2,** *լցնել*. н. матрацъ волосомъ, н. трубку табакомъ *չիբուխը թութունով լցնել*. н. погребъ льдомъ; н. карманъ, брюхо; вѣтеръ набиваетъ снѣгъ въ сѣни; *н. себѣ чѣмъ голову *մի բան մտապահել, գիտակցել մի բան անել*. *н. кому въ уши *մէկի ականջները խլացնել, 'գլուխը տանել'*. *ребёнку набили голову безполезными правилами; **3,** *նաշխել, դաջել, նաշխ յօրինել*. н. ситецъ; **4,** *մեծ քանակութեամբ մորթել, մորթոտել, սպանել, կոտորել*. мясники набили много скота; охотникъ набилъ много дичи; **5,** *հարել, ճմլել*. сѣдло набило спину у лошади; н. оскомину *ատամ առնել (խակ մրգեր ուտելուց)*. н. цѣну *գինը բարձրացնել*. *н. руку *ձեռքը վարժել*. **-ся** *-ն. ч.* **1,** *մէկի վզին կպչել, մէկին խնդիրքներով, առաջարկութիւններով ձանձրացնել*. н. на непріятность *անախորժութեանց հանդիպել*. **2,** *կիտուել, մեծ բազմութեամբ հաւաքուել*. народу набивается въ церковь гибель *անհամար բազմութիւն է հաւաքուած եկեղեցի*. въ сѣняхъ набилось много снѣгу; **-вка** *է. ж.* Набиваніе; **-вной** *-ն.* **1,** *մի բանի վրայ քշած, զարկած (շրջանակ)*. н—ая цѣна *խիստ բարձրացրած գին*. **2,** *լցրած*. **3,** *նաշխ յօրինելու, դաջելու*. н—ая краска; н. узоръ [*օր. կտաւեղէնի վերայ*] *յօրինած նաշխ*. **3,** *խփելու, զարկելու, ցցելու*:

Наби|раніе *չ.* **1,** *հաւաքելը, ժողովելը*. **2,** *ծծելը, իր մէջ քաշելը*. **3,** *տպագր. շարելը*. **-ратель** *-*. **-рательница** *է. հաւաքող, ժողովող այր, կին*. **-рать,** набрать *ն.* **1,** *հաւաքել, ժողովել*. я много набралъ грибовъ; н. въ долгъ *պարտք վերցնել*. н. рекрутъ, войско; н. подписчиковъ; **2,** *ծծել, իր մէջ քաշել*. **3,** *տպագր. շարել*. н. газетный листъ; **-ся 1,** *-ն. ч. հաւաքուել, ժողովուել, կիտուել*. гости набираются; вода набирается въ яму; **2,** *չ.* чего *մի բան ստանալ, մի բան իւրացնել*. н. ума разума *խելքի գալ, խելօքանալ, զգաստանալ*. н. дурныхъ привычекъ; отъ кого онъ набрался такихъ идей? н. смѣлости *ժպիրհ դառնալ, յանդգնել*. **-рка** *է. ж.* Набираніе.

На|битіе *չ. լցնելը*. **-бить** (-бью -ютъ; -бей), **ся** *ж.* Набивать, ся; **-битый** *բ. -ն. լցրած. քշած*. н. обручъ *մի բանի (օր. տակառի) վերայ քշած, զարկած շրջանակ*. *н. дуракъ *յիմարների թագաւոր*. **-блеваніе, -блевать** *ж.* Блеваніе, -вать; **-блеять** Блеять.

Набле|ваніе *չ. կեղտոտելը*. **-блевать** (-блюю -ютъ) *չ. բալորովին կեղտոտել (փսխելով)*:

Наблю|датель *-*. **-дательница** *է. դէտ, դիտող, զննող, 'տնտղող', հսկող այր, կին*. **-дательность** *է. դիտելու, զննելու կարողութիւն. ուշադրութիւն*. **-дательный** *-ն.* **1,** *դիտող, զննող, 'տնտղող', դէտ, ուշադիր*. н. умъ; **2,** *դիտելու, զննելու, հսկելու*. н. постъ; н—ая цѣпь; **-дать,** -сти *ն.* **1,** *դիտել, զննել, 'տնտղել'*. н. природу, теченіе свѣтилъ небесныхъ; **2,** *պահել, պահպանել*. н. постъ *պաս պահել*. н. мѣру *չափ պահել* о. законъ, правосудіе; **3,** за кѣмъ, за чѣмъ *մէկի, մի բանի վերայ հսկել*. н. за дѣтьми, за порядкомъ, за работами; **-деніе** *չ.* **1,** *դիտելը, զննելը, 'տնտղելը', հսկելը*. *պահելը*. **2,** *դիտողութիւն, զննութիւն, հսկողութիւն*. астрономическія н—ія. [*խուփ*:

Наблюдникъ *-. սպասատեղի խուփ*,

Наблюсти (-ду -дутъ) *ж.* Наблюдать.

Набобъ *-.* (*որբ.*) *նաբաբ (կառավարի հնդկաստանի մահմեդական իշխաններում*. *Նա որ Հնդկաստանից մեծ հարստութիւններով վերադարձել է*):

Набога|щать, -тить (-щу -тятъ) *ն. հարստացնել, հարուստ դարձնել*. **-ся** *-ն. ч. հարստանալ*. **-щеніе** *չ. հարստացնելը, հարստանալը*:

Набоечка *նւզ. ж.* Набойка.

Набо|жество *չ. ж.* Набожность.

Набожиться (-жусь -жатся) *չ. շատ երդւել, ստապատչէ երդուել*:

Набож|ничаніе *չ. բարեպաշտ ձեւանալը*. **-ничать** *չ. բարեպաշտ ձեւանալ*. **-ничество** *ж.* Набожничаніе; **-но** *մ. բարեպաշտութեամբ*. **-ность** *է. բարեպաշտութիւն, կրօնասիրութիւն*. **-ный** *-ն. բարեպաշտ, կրօնասէր, աղօթասէր, պաշտօնասէր*:

Набой *-. մակոյկի կողքին զարկած տախտակ*. **-йка** *է.* **1,** *լցրած բան*. **2,** *ի՞նչ, ալ՝ ինչով որ մի բան լցնում են*. **3,** *չիթ, չթեղէն*. **-йникъ** *-.* [*օր. գնդակը մղելու*] *ձող, ճիպոտ*. **-йный** *-ն.* набой *-ի*. **-йчатый** *-ն. նաշխաւոր, նաշխ անեցող*. н—ое платье *չիթ (չթեայ) շոր*. **-йщикъ** *-*. **-йщица** *է. ա, նկարչականներ լցնող, բ, կտաւեղէն նաշխող, դաջող այր, կին*. **-йщичій,** ья, ье *-ն. նկարչականներ լցնողի. կտաւեղէն նաշխողի*: [*զանելու*:

Набокій *-ն. կողքի վերայ թեքուած, շեղ*.

Наболотный *-ն. ճահճային, ճահճուտի*:

Наболта|ніе *չ. խառնելը, հարելը*. **-ть** *ж.* Набалтывать.

Наболь|шая, шей *է.* **-шій,** аго *-. ամենամեծ, աւագ, գլխաւոր, մեծաւոր*. „я осиротѣлъ рано и не имѣлъ надъ собою набольшаго“.

Набол|ѣвшій, -лый *բ. -ն. խիստ զգայուն, գերզգայիկ, հիւանդոտ*. **-ніе** *չ. խիստ հիւանդանալը, զգայուն, գերզգայիկ դառնալը*. **-ть** *չ.* **1,** *ցաւել*. палецъ наболѣлъ; **2,** *սիրտը ցաւելուց մաշուել, զգայուն դառնալ*. сердце наболѣло отъ горести.

Наборазжи|ваніе *չ. շատ ակօսներ քաշելը*. **-вать,** набороздить *ն. շատ ակօսներ քաշել*:

Набо|ристый *-ն.* **1,** *բազմածալ, ծալքաւոր*. **2,** *շատ բովանդակող, ծծող*. **-рка** *է.* **1,** *տպագր. գրաշարութիւն*. **2,** *ատաղձ. գրուագ*. **-рная,** ой *է. գրաշարանոց*. **-рный** *-ն. գրաշարական, -ութեան*. н—ая доска; **2,** *գրուագած, զանազան մասերից յօրինած*. н. полъ, н. паркетъ. [разживать.

Набороздить (-зжу -здятъ) *ж.* Набо-

Набор|онить (-ню -нятъ), **-нова-** (-ную -ютъ) *ն. որոշ տարածութիւն ... նել, ցաքանել պրծնել*:

Набо|рщикъ *-.* **1,** *գրաշար*. **2,** *զ... բաղրող, զինուորներ կամ ուհ. մարզիկ ... րող*. **-рщица** *է.* **1,** *գրաշարուհի*. **2,** *... կմ զինուորագրողի կին*. **-рщичій,** ья, ...

գրաշարի. գինուորագրողի. **-ръ** ա. **1,** ա. Набираніе; **2,** գինուորագրութիւն. н. рекрутъ; **3,** տպագր. գրաշարութիւն. շարուածք. оттискъ съ н—а շարուածքի հանուածը, տպածը. **4,** կուտակութիւն. н. фразъ, словъ; **5,** շարք, ծառայածու. полный н. инструментовъ для какого-либо дѣла.

На|браживать, -брести, -бресть չ. на кого, на что պատահմամբ (գնալիս) մէկին, մի բանի հանդիպել. охотникъ набрёлъ въ лѣсу на медвѣдя; **-браковать** (-кую -ютъ) ն. յու ընտրել, ջոկել. **-браниться** (-нюсь -нятся) չ. սաստիկ, շատ հայհոյել. **-браніе** ա. Набираніе.

Набрасы|ваніе չ. ձգելը, նետելը. н. тѣни ստուերագծելը. **-ватель** ա. **-ватель-ница** է. մի բան ձգող, նետող այր, կին. **-вать** ն. **I.** (набросать) 1, մեծ քանակութեամբ ձգել, գցել, նետել, ածել, կիտել, դիզել. 2, շտապով ստուերագծել, ուրուագծել. н. карандашомъ проектъ орнамента; *наскоро н. на бумагѣ свои мысли շտապով իւր մտքերը գրի առնել, ուրուագրել. *онъ только набросалъ эту поэму նա միայն ուրուագծել է այդ պօէման. **II.** (набросить) արագ, շտապով ձգել, գցել, նետել. н. на себя плащъ պատմուճանը ուսերին գցել, հագնել. н. на кого тѣнь, подозрѣніе մէկի վերայ ստուեր, կասկած ձգել. **-ся** ներ. на кого, на что մէկի, մի բանի վերայ ընկնել, նետուել, յարձակուել. собаки набросились на зайца; н. на фрукты մրգերի վրայ ընկնել, ագահաբար ուտել։

На|брать (-беру -рутъ; -бери), **ся** ա. Набирать, ся; **-бреденіе** չ. պատահաբար (գնալիս) հանդիպելը. **-бредить** (-жу -дятъ) ն. զառանցել. ‘դել առել‘. **-брести**, **-бресть** (-еду -дутъ) ա. Набраживать.

На|бритвенникъ ա. ածելու պատեան, տուփ, ‘բուն‘. **-брить** (-брею -ютъ; -брей) ն. **I,** ածելել, սափրել. **2,** ածելի քաշելով զատել, աշխատել, վաստակել։

Набро|дить (-жу -одятъ), -бресть չ. **I,** մեծ բազմութեամբ հաւաքուել, կիտուել, խմբուել. **2,** պատահմամբ (գնալիս) հանդիպել. **-ся** չ. երկար ման գալուց դադրել, վաստակել, ‘բէ-զարել‘. **-дный** ած. զանազան տեղերից ժողովուած, ‘ալով հաւաքած‘: н—ые люди; **-дъ** ա. **I,** մեծ բազմութեամբ հաւաքուիլը, կիտուիլը. **2,** պատահմամբ հանդիպելը. **3,** խառնամուռ ամբոխ, ‘ալով հաւաքած‘ մարդիկ։

Набронз|ировать, ся, -зовать, ся ա. Бронзировать, ся, -зовать, ся.

Набро|саніе չ. մի բանի վերայ, ձգելը, նետելը. **-сать, ся, -сить** (-шу -сятъ), **ся** ա. Набрасывать, ся; **-сокъ**, ска ա. ուրուագիծ, շրջագիծ, ստուերագիծ. предварительный н. сочиненія շարադրութեան նախագիծը. это лишь н.; **-шеніе** չ. դէն ձգելը, դէն գցելը, դէն շպրտելը։

Набрусникъ ա. սրոցարան, սրոցի, յեսանի պատեան, բուն։

Набры|зганіе, -згиваніе չ. սրսկելը, թափելը, ցայտեցնելը, ցանելը մի բանի վերայ. **-згивать, -згать** ն. մի բանի վերայ սրսկել, թափել, ցանել, շաղ տալ, ցայտեցնել։

Набрюз|жаніе, -жать ա. Брюзжаніе, -жать; **-ся** չ. դադարել քրթմնջելուց, փնթփնթալուց, տրտնջալուց։

Набрюшникъ ա. փորի կապիչ, փորկապ։

Набунтовать (-тую -ютъ) չ. խռովել, ապստամբուել. **-ся** չ. ցոյց, ցոյցնութիւն արած է խռովութեան մասնակցել։

На|буравить (-влю -вятъ) ն. շատ անցքեր գայլիկոնել, գայլիկոնով ծակել. **-ся** չ. ցոյցնութիւն գայլիկոնել, ծակել. **-бурять** (рю -рятъ) ն. գայլիկոնել, ծակել (շատ ապառաժոտ տեղեր, գետինը)։

Набу|хать, ся ա. Бухать, ся; **-хлость** է. ուռածութիւն. **-хлый** ած. ուռած, փքուած. **-хнуть** ա. Бухнуть II

Набу|тить (-чу -тятъ) ա. Набучивать; **-бученіе** չ. պատի հիմքը պատրաստելը. **-чивать**, -тить ն. պատի հիմքը պատրաստել։

На|бушевать (-шую -ютъ) չ. **I,** մեծ, կատաղի աղմուկ բարձրացնել. **-ся** չ. ‘նստիլ‘, կատաղութիւնից դադարել. **-буянить** (-ню -нятъ) չ. աղմուկ, կռիւ, ‘դալմաղալ‘ բարձրացնել, անկարգութիւն անել։

Набѣ|ганіе չ. **I,** [վազելիս, ընթանալիս] յանկարծ պատահիլը, հանդիպիլը. **2,** ամէն կողմից գալը, հաւաքուիլը, խմբուիլը. **-гать**, -жать չ **I,** на что [վազելիս, ընթանալիս] յանկարծ պատահել, հանդիպել մի բանի. лодка набѣжала на камень նաւակը քարին դիպաւ, քարի վրայ նստեց. **2,** на кого մէկի յանկարծ հասնել. собаки набѣжали на зайца; **3,** ամէն կողմից վազելով հաւաքուել, խմբուել. **-(ѣ)гать** չ. **I,** վազելով մրսել, պարտանալ, **2,** ա. Набѣгивать; **-ся** չ. շատ վազելուց, դէս ու դէն վազվզելուց դադարել, հոգնել ընկնել. **-гиваніе** չ. խառն ձուն վարժեցնելը. **-гивать**, -гать ն. խառն ձուն վարժեցնել, սովորեցնել. **-бѣглый** ած. միասին հաւաքուած, խմբուած, խառնուած. **-гъ** ա. **I,** զարկ, զարկ տալը. н. вѣтра; **2,** յարձակում, ասպատակութիւն. непріятельскій, разбойническій н.; татары дѣлали н—и на Польшу; пираты производятъ н—и на берега.

На|бѣдокурить ա. Бѣдокурить.

Набѣ|жаніе, -жать ա. Набѣганіе, -гать; **-жка** է. ա. Набѣгиваніе.

Набѣ|леніе, -ливаніе չ. սպիտակեցնելը, սպիտակ ծեփելը, սպիտակ շպարելը. **-ливать, -лить** (-лю -бѣлятъ) ն. **I,** սպիտակեցնել, սպիտակ ծեփել. **2,** սպիտակ շպարել, ներկել. **-ся** ներ. սպիտակ շպարուել, մարմնին սպիտակ շպար քսել. **-ло** ։. մաքուր, յստակ. переписать н. մաքուր, յստակ արտագրել։

Набѣ|ситься (-шусь -сятся) **-сноваться** (-нуюсь -ются) ներ. խիստ կատաղել, խիստ, սաստիկ կատաղի, մոլեգին բաներ բանել։ [սակ փրփրուկ (ձուկ)։

Навага է. կով. Cadus callarius, մի տե-

Нава|дить (-жу -дятъ) ա Наваждать; **-дникъ** ա. **-дница** է. **I,** շարախօս, -ուհի. **2.** ստորիչ, գայթակղիչ, փորձիչ այր, կին. **-ждать**, -дить ն. **I,** շարախօսել, ամբաստանել. **2,** кого на что մէկին սադրել, ‘դրել‘ մի բան անելու. մէկին գայթակղեցնել, մոլորեցնել. меня наваждаетъ (դէւ.) սատանան առաջս է մտել. **-жденіе** չ. **I,** սադրանք, փորձութիւն, գայթակղութիւն. дьявольское н.; **2,**

ցնորք, մտախարութիւն, մտապատրանք. **3,** չարախօսութիւն, ամբաստանութիւն։

На‖вáживаніе չ. մեծ քանակութեամբ կրելը, կրելը. **-вáживать,** -возить, -везтú **1,** ն. մեծ քանակութեամբ կրել, բերել, կրելով կրել. на базáръ навезли овсá и сѣна; **2,** չ. на что գնալիս, ընթանալիս մի բանի դիպչիլ, մի բանի վրայ ընկնիլ. на кáмень.

Навáжій, ья, ье ած. навáга ձկան։

Навá‖ксить տ. Вáксить և Навáкшивать; **-кшеніе, -кшиваніе** չ. վաքսելը, ներկելը (կօշիկները). **-кшивать** տ. Вáксить.

Навалáндаться չ. **1,** երկար, շատ թափառել, թրև գալ. **2,** съ кѣмъ, съ чѣмъ մէկի համար, մի բանի վերայ չարչարուիլ։

Нава‖лéніе, -ливаніе չ. հաւաքելը, կիտելը, դիզելը.. **-ливать, -лúть 1,** ն. մեծ քանակութեամբ ածել, հաւաքել, կիտել, դիզել, կուտակել. н. снопóвъ на токъ; н. кýчу солóмы; н. дровъ на телѣгу սայլը փայտով բարձել. на негó навалили трýдную должность նրա վզին մեծ բեռ են դրել. **2,** ն. տանել, վարել, քշել. **3,** չ. կիտուիլ, հաւաքուիլ, խռնուիլ. нарóду прóпасть навалило անհամար, անթիւ բազմութիւն հաւաքուեց. **-ся 1,** ածգր. թափուիլ, կիտուիլ. въ колóдезь навалилось мнóго землú; **2,** վրայ ընկնիլ, վրայ պրծնել. съ голодýхи на хлѣбъ н.; на негó всѣ навалились; н. на слѣдъ звѣря որսկենդանու հետքը նշմարել, գտնել. **3,** յենուիլ. не навáливайтесь на меня; **-лúть** (-лю -лятъ), **ся** տ. Валúть, ся և Навáливать, ся; **-лка** է. **1,** հաւաքելը, կիտելը, թեղ անելը. կոյտ, շեղջ, թեղ. **2,** պատահմամբ ձեռք բերած բրել. **-лочка** է. նւզ. պստիկ կոյտ, շեղջ, թեղ. **-лъ** ա. **1,** տ. Навáлка; **2,** կիտուածք, դէզ, միասին ածած խառնափնթոր բաներ. **-льный** ած. կիտած, կուտակած, թեղ տրած, հաւաքած. н—ая землá տիղմ, տղմահող. н. долгъ ակամայ (ուրիշի փոխարէն յանձն առած) պարտք։

Навальсировáться (-рýюсь -ются) ածգր. խիստ երկար վալ'սել, վալ'ս պարել.

Навá‖льщикъ ա. **-льщица** է. բարձող, բեռնող այր, կին։

Нава‖ля́кіе չ. **1,** միմեանց վերայ ձգելը, ածելը, թափելը, կիտելը (մեծ քանակութեամբ). **2,** շտապով, մի կերպ անելը, շինելը, խզմզելը. **-ля́ть** ն. **1,** միմեանց վերայ ձգել, նետել, թափել, թափթփել, կիտել. **2,** շտապով, մի կերպ անել, շինել, խզմզել. **3,** գլորելով, թաւալելով շինել, պատրաստել. **-ся** ածգր. երկար ժամանակ շատ ու մուռ գալ, թաւալուիլ, այս կողքի, այն կողքի վերայ ընկնիլ (անկողնում)։

На‖вáра է. **1,** եփուող կերակուրի քափ, կեղտոտ փրփուր. **2,** լափ (շների)։

Наварáксать տ. Варáксать.

Навá‖риваніе չ. **1,** եփելը, պատրաստելը. **2,** զօդելը, եռացնելով կպցնելը. **-ривать, -рúть** (-рю -рятъ) ն. **1,** եփել, պատրաստել (մեծ քանակութեամբ). **2,** զօդել, եռացնելով միմեանց հետ կպցնել. н. желѣзо, сталь; **-рка** է. **1,** տ. Навáриваніе; **2,** զօդուածք. երկաթէ իրին եռացմամբ կպցրած բան. **-рнóй** ած. զօդած, կպցրած. **-рный** ած. **1,** ճնդարար (պարունի մասին). не жúрны щи, да навáрны; **2,** տ. Наварнóй; **-ръ** ա. **1,** տ. Навáриваніе; **2,** տ. Навáра 1; **3,** տ. Навáрка 2; **4,** բուլիօն, 'մսաջուր', 'խաշու'։

Навáстри‖ваніе չ. սրելը, յեստնելը. **-вать,** навострúть ն. **1,** սրել, յեստնել. н. ножъ; **2,** * կրթել, հրահանգել. н. кулакú կռուի պատրաստուիլ. н. рýку ձեռքը վարժեցնել, հրահանգել. н. ýши ականջները սրել. н. лы́жи 'կծիկը դնել', 'պոկ տալ'. **-ся** ածգր. վարժուիլ, հրահանգուիլ։

Навáщи‖ваніе տ. Вощéніе; **-ватель** ա. **-вательница** է. մոմող, մոմ քսող այր, կին. **-вать** տ. Вощúть.]

Наве‖дéніе չ. **1,** տալը, քսելը (գոյն, ներկ). **2,** քաշելը, ձգելը (կամուրջ). **3,** ուղղելը (թնդանօթը, հեռադիտակը). **4,** справóкъ տեղեկութիւններ հաւաքելը. **5,** փիլ. եզրակացութիւն, մակածութիւն. **-дý** տ. Навестú.

Наве‖зéніе չ. կրելը, բերելը, (սայլով, գրաստով). **-зтú** (-зý -зýтъ), **ся, сь** տ. Навозúть, ся և Навáживать, ся.

Навер‖бовáть, -бóвывать տ. Вербовáть.

Навер‖гáніе չ. ձգելը, նետելը, ածելը, թափելը (մի բանի վերայ). **-гáть, -гнуть** ն. ձգել, նետել, ածել, թափել (մի բանի վերայ). **-жéніе** տ. Навергáніе.

Навернýть, (**ся**) **1,** տ. Навёртывать, ся; **2,** что на что մի բան միւսին դիպցնել, միւսին զարկել. держú правѣе, а то навернёшь на пень; э́то на то же навернётъ այդ միևնոյն բանն է դուրս գալիս։

На‖верстáніе չ. վերադարձնելը, յետ ըստանալը, փոխարինելը. **-вёрстывать, -верстáть** ն. վերադարձնել (վնասը, կորուստը), յետ ստանալ, փոխարինել. н. потéрянное врéмя կորցրած ժամանակը աշխատելով վերադարձնել։

Навёртка է. **1,** փաթաթելը, կծկելը. **2,** մայր պտուտակ. **3,** կնդ. մի տեսակ խեցեմորթ։

Навертопрá‖шить, -шивать տ. Вертопрáшить, -шивать.

На‖вёртываніе չ. փաթաթելը, կծկելը. **-вёртывать** -вертѣть, -вернýть ն. փաթաթել, պատատել, կծկել. **-вёртываться,** -вернýться **1,** ածգր. փաթաթուիլ, պատատուիլ, կծկուիլ. **2,** չ. երևալ, յայտնուիլ, անակնկալ կերպով պատահել, գալ, հանդիպել. покупáтели навёртываются մուշտարիները գալիս, հաւաքուում են. навернýлся гость յանկարծակի մի հիւր եկաւ, յայտնուեց. слёзы навернýлись на егó глазáхъ; **-вертѣть** (-рчý -тятъ) տ. Навёртывать և Навéрчивать; **-ся** ածգր. երկար ժամանակ պտտուիլ, պտոյտ գալ։

На‖верхý մ. վերև, վերևում. онъ живётъ н.; **-вéрхъ** մ. վերև. пойдёмте н.

Навéр‖чиваніе չ. ծակելը, գայլիկոնելը, 'բուրղուելը'. **-чивать,** -тѣть ն. ծակել, գայլիկոնել, 'բուրղուել'։

Навеселúть (-лю -лятъ) ն. ուրախացնել, զուարճացնել. **-ся** ածգր. երկար, լաւ ուրախանալ, զուարճանալ։

Нáвеселѣ մ. ուրախ, զուարթ, լաւ 'գցած', խմած, 'կատարը տաք', 'քէֆը քօք'։

Навестú (-ведý -дýтъ; անց. -вёлъ -велá, ó; հրմ. -дú), **ся** տ. Наводúть, ся.

Навечéріе չ. նախատօնակ. н. Рожде-

ства́ Христо́ва *Ծննդեան հրաշալեաց, Թաթաւում, խուճապ:*

На́взничь *Տ. մէջքի վերայ, երեսը դէպի վեր.* упа́сть н. *մէջքի վերայ վայր ընկնել, փռուել* (*Հակը ա.* Ницъ *և* Ничко́мъ).

Навзры́дъ *Տ. հեկեկալով, հեծկլտալով.* пла́кать н. [*մանով.* купи́ть арбу́зъ н.

Навзрѣ́зъ *Տ. կտրելու և տեսնելու պայ-*

Навзря́чь *Տ. տեսնելով, նայելով, մտիկ տալով.* н. стрѣля́ть *տեսնելով նշան դնելու, լավ նայելով հրացան արձակել:*

На|вива́льный *-ծ. փաթաթելու, կծկելու.* **-вива́льня** *է. փիլակ, կարժառ.* **-вива́льщикъ** *-.* **-вива́льщица** *է. փաթաթող, կծկող այր, կին.* **-вива́ніе** *չ.* **1.** *փաթաթելը, կծկելը.* **2,** *ոլորելը, ոլորելով հիւսելը.* **-вива́ть,** -ви́ть *ъ.* **1,** *փաթաթել, պատատել, կծկել.* н. шёлкъ на мотýшку; **2,** *ոլորել, հիւսել.* **3,** возъ сѣ́на, телѣ́гу сѣ́номъ *սայլը խոտով բարձել, սայլի վերայ խոտ բարձել.* **-ви́вка** *է.* **1,** *փաթաթելը, կծկելը.* **2,** *մի բանի վերայ փաթաթածը, կծկածը.* **3,** *հիւսած, ոլորած բան.* **-вивно́й** *-ծ.* **1,** *փաթաթելու, կծկելու.* **2,** *փաթաթած, կծկած.* **-ви́въ** *-. ա.* Нави́вка 1.

Навига|ціо́нный *-ծ.* **1,** *նաւագնացութեան, նաւարկութեան.* **2,** *նաւավարութեան.* **-ція** *է.* (*լա*). **1,** *նաւագնացութիւն, նաւարկութիւն.* **2,** *նաւավարութիւն, նաւավարական գիտութիւն:*

Навида́ться *չ.* чего́ *մի բանի նայելուց կշտանալ, մի բանի ց'յագ նայել, մտիկ տալ:*

Навизжа́ть (-зжу́ -жа́тъ) *ъ. շատ ա-նալ, ճղճղալ, ճչել, ճռճռալ.* н. ýши *մարդու ականջները խլացնել.* **-ся** *չ. անընդհատ, երկար ճչալ, փնչալ, ճղճղալ, ճչել, ճռճռալ:*

Навин|ти́ть (-чу́ -ти́тъ), **ся** *ա.* Нави́нчивать, ся; **-че́ніе, -чива́ніе** *չ. ամրացնելը, անցկացնելը* (*պտուտակի վերայ*). **2,** *ծակելը* (*պտուտակով*). **-чива́ть,** -ти́ть *ъ.* **1,** *ամրացնել, անցկացնել* (*պտուտակի վերայ*). **2,** *ծակել* (*պտուտակով*):

На|вира́ть, -вра́ть *ъ. շատ սուտ բաներ ասել, պատմել.* н. мно́го вздо́ру; н. на кого́ *մէկին ամբաստանել, զրպարտել.* **ся** *-ъгг. շատ-փաղանց շատ սուտ խօսել:*

На|виса́ніе *չ. կախուիլը, Թեքուիլը, ծռուիլը, Թեքութիւն* (*պատի*). **-са́ть** -ви́снуть *չ. Թեքուիլ, չեղուիլ, ծռուիլ, առաջակարկառիլ* (*պատի մասին*). скала́ нави́сла надъ мо́ремъ *ժայռը ծովի վերայ քիւ է կազմել.* облака́ нави́сли въ во́здухѣ *ամպերը կիտուել են երկընքում.* **-ви́слость** *է. կախութիւն.* **-ви́слый** *-ծ. Թեքուած, կախուած, կախ ընկած, առաջակարկառ* (*օր. պատ, ժայռ*). н—ыя бро́ви *Թանձր, խիտ յօնքեր, 'ունքեր'.* **-ви́снуть** *ա.* Нависа́ть; **-ви́съ** *է. քիւ, կախ ընկած բան, մաս.* **-висѣ́ть** (-шý -ся́тъ) *չ. կարճ ժամանակ կախուիլ, կախուած, կախ ընկած մնալ.* не мно́го шу́ба нави́сла, ýкрали *մուշտակն երկար ժամանակ չմնաց կախուած,* (*որովհետև*) *գողացան.* **-ся** *-ъгг. բաւական երկար կախուած, կախ ընկած մնալ:*

На|ви́тіе *ա.* Навива́ніе; **-(на́—) вить** *է. ա.* Нави́вка 2; **-ви́ть** (-вью́ -вью́тъ; -ве́й) *ա.* Навива́ть.

Навла́|женіе, -жива́ніе *չ. Թացելը, Թրջելը, Թրմելը.* **-жива́ть, -жить** (-жу -жа́ть) *ъ. Թացել, Թրջել, տամկացնել, Թրմել:*

На|влека́ніе *ա.* Навлече́ніе, **-влека́тель** *-.* **-влека́тельница** *է. պատճառ. իր գլխին չարիք, փորձանք եւն բերող այր, կին.* **-влека́ть,** -вле́чь *ъ. իր գլխին մի վատ բան, փորձանք բերել, վատ բանի ենթարկուել.* н. на себя́ гнѣвъ Бо́жій *Աստուծոյ բարկութեանն արժանանալ.* э́тотъ посту́покъ навлёкъ на него́ всеóбщее презрѣ́ніе *այդ արարմունքը նրան ընդհանուր արհամարհանք բերեց.* н. на себя́ стыдъ и позóръ *ամօթի և ծաղրանաց ենթարկուել.* н. на себя́ насмѣ́шки *ծաղրի ենթարկուել.* **-влече́ніе** *չ. իր գլխին մի վատ բան, փորձանք եւն բերելը.* **-вле́чь** (-влекý -чёшь -кýтъ) *ա.* Навлека́ть.

На|води́ть (-ожý -óдятъ), -вести́ *ъ.* **1,** *տանել,* (*գր.*) *ածել, վարել, բերել.* онъ навёлъ ихъ на заса́ду *նա նոցա դարանի մէջ գցեց.* н. на слѣдъ *հետքը ցոյց տալ, տանել կանգնեցնել հետքի վերայ.* н. кого́-то на таку́ю мысль *մէկի մէջ այս ինչ միտքը յղացնել, մէկին այս ինչ մտքի բերել.* **2,** на кого́ что *մէկի վերայ մի բան *ձգել, մէկին մի բան պատճառել.* н. на кого́ страхъ *մէկի վերայ ահ, երկիւղ ձգել.* н. на кого́ ску́ку *մէկին ձանձրութիւն պատճառել.* н. тоску́, грусть на се́рдце *մէկի սրտին Թախիծ, տրտմութիւն պատճառել.* э́то наво́дитъ на меня́ сонъ *այդ ինձ վերայ քուն է բերում.* н. на кого́ подозрѣ́ніе *մէկի վերայ կասկած ձգել.* **3.** *մեծ քանակութեամբ բերել, հաւաքել.* онъ навёлъ ко мнѣ гостéй; **4,** *ուղղել* (*հրացանը, դիտակը*). **5,** *մի բանի վերայ մի բան քաշել, քսել, մի բանով ծածկել, մի բանի գոյն, փայլ եւն տալ.* н. во́рсу на сукнó *մահուդին խաւ տալ.* н. лакъ *լաքը* (*վեռնիկ*) *քսել.* н. лоскъ на что *մի բանի փայլ, ողորկութիւն տալ.* н. мостъ *կամուրջ քաշել, կամուրջ գցել.* н. спра́вку о комъ-либо, о чёмъ *մէկի, մի բանի մասին տեղեկութիւն հաւաքել.* н. свои́ убы́тки *իր վնասները փոխարինել, իր վնասների փոխարէնը յետ ստանալ.* **-во́дка** *է. ա.* Наведе́ніе; н. мо́ста *կամուրջ քաշելը, կամուրջ ձգելը:*

Наво|дне́ніе *չ.* **1,** *հեղեղելը, ողողելը.* **2,** *հեղեղ, ողող.* **-дни́ть** (-ню́ -ня́тъ), **ся** *ա.* Наводня́ть, ся.

Наво́дный *-ծ. քաշելու, ձգելու.* н. мостъ *շարժական կամուրջ* (*որ կարելի է քաշել, ապա վերցնել*):

Навод|ня́ть, -ни́ть *ъ.* **1,** *հեղեղել, ողողել.* рѣка́ наводни́ла поля́; **2,** * *հեղեղել, լցնել.* несмѣ́тная толпа́ наводни́ла равни́ну.

Наво́|дчикъ *-. տանող, քաշող.* н. мо́ста *կամուրջ քաշող.* н. ла́ка *լաքը քսող.* н. орýдія *զօր. հրանօթը նշանին ուղղող.* **-дчица** *է. ներկ, գոյն եւն տւող կինարմատ.* **-дъ** *-. ա.* Наведе́ніе.

Навожде́ніе *չ. փորձութիւն, գայթակղութիւն, չար հրապուրանք.* бѣсóвское, дьявóльское, дéмонское н. (*հմմ.* Наважде́ніе).

I. **Наво́зить I,** (-вóжу -зятъ), ун—, *ъ.* [*հողը*] *պարարտացնել, աղբել, 'փէյինել':*

II. **Наво|зи́ть** (-жý -зятъ) *ա.* Нава́живать; **-ся** *-ъгг.* **1,** *չափից դուրս խնդալ, չա-*

բաճճիութիւն, սանձարձակութիւն անել. **2**, съ кѣмъ մէկի համար չարչարուիլ։

Навóз|ка է. մեծ քանակութեամբ կրելը, բերելը, կիտելը։

Навó|зникъ ա. **1**, Թրքակեր, աղբար, ապուտ. Թրիք կրող. **2**, կնդ. Geotrupes stercorarius, կոյագնդիկ. **3**, ապուտած, Թրքով պարարած, աղբած հող. **-зный** ած. **1**, անասունի աղբի, Թրքի, ապուտի, 'փէյինի'. н—зая кýча, жи́жа; н. жукъ տ. Навóзникъ 2; **2**, այլ և այլ տեղերից բերած, կրած, կիտած. **-зня** է. Թրքանոց, ապուտանոց, աղբարանոց. **-зъ** ա. **1**, անասունի աղբ, Թրիք, ապուտ, աղբար. **2**, տ. Навезéніе.

На|вóй ա. ոստայնանկի (ջուլհակի) դազգահի գլանը, որի վերայ փաթաթւում է առէջքը (оснóва); **-вóйникъ** ա. որ և է բան փաթաթելու փայտ. **-вóйничекъ**, чка ա. Նւզ. բս. Convolvulus, պատատուկ. **-вóйня** է. ճախարակի գլանը (валъ у вóрота), որի վերայ Թոկը փաթաթւում է։

Наво|лáкиваніе չ. **1**, մեծ քանակութեամբ կրելը, կիտելը (քարշ տալով). **2**, ծածկելը, քօղելը. **-лáкивать**, -лочи́ть, -лóчь ն. **1**, մեծ քանակութեամբ կրել, բերել, կիտել, (քարշ տալով). **2**. ծածկել, քօղել. нá небѣ наволокло́ երկինքն ամպել, ամպերով ծածկուել է. -(нá—)**лока** է. երես (բարձի, լհէքի եւն). подýшечныя н—и; -(нá)**локъ** ա. գետափեայ դաշտ, որ գետի վարարած ժամանակ հեղեղւում է. **-лочи́ть** (-чý -óчатъ) տ. Наволáкивать, և Волочи́ть; -(нá—)**лочка** Նւզ. տ. Нáволока; -(нá-)**лочный** ած. բարձի, 'լհէքի' եւն երեսի. **-лóчный** ած. ծածկելու, ծածկուող, քօղուող. н- ыя сѣ́ти Թռչուններ որսալու վարմ. н. илъ հեղեղից բերած տիղմ. н—ыя озёра հեղեղից գոյացած լճեր. **-лóчь** (-локý -чёшь -кýтъ; անց. -лóкъ -клá, ó) տ. Наволáкивать

На|вони́ть չ. գարշահոտութիւն արձակել։

Навопи́ть (-плю́ -пя́тъ) չ. խիստ բարձր աղաղակել, գոռալ, խիստ բարձր ողբալ, վայնասուն, սուգ ու շիւան բարձրացնել. **-ся** չ. ց'յօգնութիւն աղաղակել գոռալ, ոռնալ. աղաղակելուց յոգնիլ, դադարել։

Наво|ра́живаніе չ. **1**. կախարդութիւն, անելը, գուշակելը. **2**, կախարդելը, հմայելը. **-ра́живать**, -рожи́ть ն. **1**, կախարդութիւն անել, գուշակել. **2**, կախարդել, հմայել. **3**, կախարդութիւն, հմայութիւն անելով աշխատել, 'դաւդել', վաստակել, հարստանալ։

Наво|ра́чиваніе չ. տ. ստորև բայը. **-ра́чивать**, -роти́ть ն. **1**, դարձնելով տապալեցնել, բարձրացնել. **2**, միմեանց վերայ ածել, կիտել, դիզել. **3**, մի բանի դիպցնել, մի բանի վերայ գցել (դարձնելիս)։

Наворова́ть (-ру́ю -ютъ) ն. գողանալ, գողանալով դիզել, կիտել։

Навоpo|жéніе, -жи́ть (жý -жáтъ) տ. Навора́живаніе, -живать.

Навороти́ть (чý -тятъ), **ся** տ. Навора́чивать, ся.

Навóрсить տ. Вóрсить.

Наворча́ть (-чý -ча́тъ) տ. Ворча́ть; **-ся** չ. ց'յօգնութիւն քրթմնջել, փնթփնթալ։

Навоскова́ть (-кýю -ютъ) ն. մոմել, մոմով պատել, մոմով շփել, մոմ քսել։

Наво|стрéніе չ. սրելը, յեսանելը. **-стри́ть** (-рю́ -я́тъ) տ. Нава́стривать.

Наво|щéніе, -щи́ть (-щý -щáтъ) տ. Нава́щиваніе, -вать.

На|вра́ть (-врý -рýтъ) տ. Врать և Навира́ть; **-ся 1**, ներգ. շատ սուտ բաներ պատմել։

Навреди́ть (-жý -дя́тъ) ն. շատ, ստորին վնասել, մեծ վնաս հասցնել։ [դժուար Թէ։

Навря́дъ, н. ли Տ. հազիւ, հազիւ Թէ,

Навсегдá Տ. ընդմիշտ, յաւիտեան. разъ н. մի անգամ ընդմիշտ։

Нáвскáчь տ. Вскачь.

Навстрѣ́чу Տ. ընդառաջ. итти́ комý н. մէկին ընդառաջել։

Навы́воротъ Տ. տակառը դէպի վեր, հակառակ, 'Թարս'. надѣ́ть шýбу н.; онъ всё дѣ́лаетъ н. ամէն բան նա Թարս է անում, ամէն բանի մէջ Թարսուել է։

Навы́йникъ ա. վզպատեան, վզկապ։

Навы|кáніе չ. սովորելը, ընտելանալը, վարժուիլը. **-кáть, -кнуть** չ. սովորել, վարժուիլ, ընտելանալ, ունակութիւն, հմտութիւն ձեռք բերել. **-клый** ած. սովորած, վարժուած, քաջավարժ. **-кнуть** տ Навыка́ть; -(нá-)**къ** ա. ունակութիւն վարժութեամբ ձեռք բերած հմտութիւն. имѣ́ть н. въ закóнахъ օրէնքներին հմուտ լինել։

Навы́летъ Տ. ընդԹափ, մի կողմից զարկած և միւս կողմից դուրս ելած. онъ рáненъ въ грудь н. գնդակը նորա կրծքից անցել է։

На|вы́носъ Տ. բաց Թողնելու, մաս մաս ծախելու պայմանով։

Навы́рѣзъ Տ. ցանկացած տեղը, կարելու պայմանով (օր. միս գնելիս). *кáждое слóво н. ամէն մի խօսքը չափած ու կշռած է։

Навы́ться (-вóюсь -ются) չ. երկար ոռնալ, կաղկանձել, լալ։ [вы́клый.

Навы́|чка է. տ. Нáвыкъ; **-чный** տ. На-

Навью́|чéніе, -чиваніе չ. բարձելը, բեռնելը (գրաստը). **-чивать, -чить** (-чу -чатъ) ն. բարձել, բեռնել, բեռնաւորել (գրաստը). **-ся** ներգ. բեռնուիլ, բեռնաւորուիլ. **-чка** է. տ. Навью́ченіе.

На|вѣва́ніе չ. բերելը, կիտելը, հաւաքելը (փչելով). **-вѣва́тель** ա. **-вѣва́тельница** է. բերող (փչելով), գցող այր, կին. **-вѣва́ть**, -вѣ́ять ն. բերել, հաւաքել, կիտել (փչելով). вѣ́теръ навѣ́ялъ снѣ́жные сугрóбы; вѣтерóкъ навѣва́етъ прохла́ду; э́та мýзыка *навѣ́яла на меня́ грусть այդ երաժշտութիւնը ինձ վերայ տխրութիւն բերեց, ձգեց։

Навѣ́|даніе, -дать, ся տ. Навѣ́дываніе, -дывать, ся; **-дываніе** չ. տեղեկանալը, հարցնելը, իմանալը. **-дывать, -дать** ն. այցելել. **-ся** չ. о чёмъ մի բանի մասին հարցնել, տեղեկանալ. навѣ́дайтесь о моёмъ дѣ́лѣ у секретаря́.

На|вѣ́иваніе չ. մեծ քանակութեամբ քամելը, էրնելը. **-вѣ́ивать** -вѣ́ять ն. մեծ քանակութեամբ քամել, էրնել (հացահատիկ)։

На|вѣ́ки, -вѣ́къ Տ. ընդմիշտ, յաւիտեան. разстá́ться съ кѣмъ н.

Навѣ́р|но, -ное Տ. անշուշտ, անկասկած, հաստատապէս. н. сказа́ть не могý; я н. придý; **-ня́къ, -някá, -нýю** Տ. անշուշտ,

ամփոփված, ամէնքէրայ, առանց վրիպելու, հաւաստիապէս. я прійду́ н—яка́.

Навѣ́|сецъ, сца նւզ. տ. Навѣ́съ; **-сить** (-шу -сятъ), **ся** տ. Навѣ́шивать, ся; **-сна** ի. 1, տ. Навѣ́шеніе; 2, քաշ. միանգամից քաշած, կշռած ապրանք. 3, ծղխնի (дверна́я пе́тля); **-сный** ած. 1, կախուող, կախած. 2, ծածկոցի, ծածկոյթի, յարկի. 3, թեք, շեղ, խոտորնակ:

Навѣсти́ть (-щу́ -стя́тъ) տ. Навѣща́ть.

Навѣ́съ ա. 1, ժամանակաւորապէս շինած յարկ, ծածկոյթ, ծածկոց, հովանոց. обши́рный н., родъ сара́я; н. для хране́нія гребны́хъ судо́въ; н. для телѣ́гъ; 2, ամպհովանի (օր. գահի վերայ յօրինած). 3, քիւ (օր. ժայռի). թեք, շեղ ծածկոց, ծածկոյթ:

Навѣ́|тки, токъ ի. յ. [կողմնակի, խուլ] ակնարկութիւն. ко́шку бьютъ, а невѣ́сткѣ н. даю́тъ (առծ.) կուժ քեզ ասեմ, կալայ դու իմացիր. **-тливый** ած. չարախորհուրդ, բամբասասէր, չար լեզուի տէր. **-тникъ** ա. **-тница** ի. ամբաստանող, չարախօս, զրպարտիչ, նենգ, չարամիտ այր, կին. **-тничать** չ. բամբասել, ամբաստանել. չարախօսել, զրպարտել. **-тническій**, **-тничій**, ья ье ած. ամբաստանողական, չարախօսութեան. **-тный** ած. նենգ, չարամիտ, ամբաստանութեան:

Навѣ́тренный ած. քամուն դարձած. н—ая сторона́.

Навѣ́|тчикъ, **-тчица** տ. Навѣ́тникъ, -тница; **-тъ** ա. ամբաստանութիւն, չարախօսութիւն, զրպարտութիւն, նենգութիւն:

Навѣ́чно մ. ընդմիշտ, յաւիտեան:

Навѣ́|шаніе տ. Навѣ́шеніе; **-шать** տ. Навѣ́шивать; **-шеніе**, **-шиваніе** չ. կախելը, կախ տալը. **-шивать**, -шать, -сить ն. 1. կախել (навѣ́шать = բազմութեամբ կախել, կախոտել). н картины на́ стѣ́ны պատկերները պատերից կախել. 2, կախել, ամրացնել. н. дверь դուռը ծղխնիների վերայ ամրացնել:

Навѣ́|щаніе չ. այցելում, այցելութիւն. **-ща́тель** ա. **-ща́тельница** ի. այցելու, այցելութիւն անող այր, կին. **-ща́ть**, -сти́ть ն. այցելել, տեսութեան գնալ. навѣща́йте насъ поча́ще; **-щу́** տ. Навѣсти́ть. [-ва́ть, ся.

Навѣ́|яніе -ять, ся տ. Навѣва́ніе,

Проиг|рáніе չ. տարուելը, տանել տալը (խաղում). **-рáть, ся** տ. Проúгрывать, ся; **-рываніе** տ. Проиграніе; **-рывать**, -рáть **1,** ն. փորձի համար խաղալ, ածել. п. концéртъ на скри́пкѣ; **2,** չ. որոշ ժամանակ անընդհատ խաղալ, խաղալով անցկացնել. нерадúвый ученúкъ проигрáлъ клáссное врéмя въ садý; онú -рáли всю ночь; **3,** ն. տարուել, տանել տալ. п. дѣ́ло, заклáдъ, сражéніе; я -рáлъ емý въ кáрты сто рублéй; **4,** չ. տուժել, կորցնել, վնասուել, վնաս, զեան կրել, քաշել. своéю опромéтчивостію онъ мнóго -рываетъ во мнѣ́ніи пýблики—հասարակութեան առաջ (կամ աչքում) շատ բան է կորցնում. **-ся** —կր. տանել տալ (խաղի մէջ իր ունեցածը). -(прó-)**рышный** ած. խաղի մէջ տարուած. կորուսի, զենի, վնասի. -(прó-)**рышъ** ա. թղթախաղում տարուած փող. վընաս, կորուստ, զեան. быть въ п—ѣ տարուած լինել:

Пройдó|ха հոգ. խորամանկ, գծուծ մարդ, սրիկայ, սղուեստարարայ, անզգամ մարդ. **-шество** չ. խորամանկութիւն, գծծութիւն, կծծիութիւն, սղուեստարարայութիւն:

Произ|ведéніе չ. **1,** արտադրելը, տալը. **2,** արդասիք, արտադրութիւն, արդիւնք, բերք. п. прирóды, умá; п—ія промы́шленности; п—ія землú երկրիս բերքերը. платúть п—іями пóчвы բերքերով վճարել. **2,** արդասիք, գործ, աշխատութիւն. п—ія велúкихъ худóжниковъ; литератýрныя п—ія; э́то лýчшее п. э́того писáтеля; худóжественное п.; геніáльное п.; **3,** *թւբ.* արտադրեալ (բազմապատկութեան). **-вестú**, **-вéсть** (-ведý -дýтъ; *անց.* -вёлъ -велá, ó; *հրմ.* -ведú) տ. Производúть; **-водúтель** ա. **-водúтельница** ի. արտադրող, ծնող, մի բան անող, կատարող այր, կին. п. постpóйки, рабóтъ; **-водúтельность** ի. արդասաւորութիւն, արտադրողութիւն. **-водúтельный** ած. արդասաւոր, արտադրող, արդիւնաւոր, բերրի. п—ая пóчва; п—ая сúла արտադրող ոյժ. **-водúть** (-ожý -óдятъ; -дú), -вестú, -вéсть ն. **1,** արտադրել, տալ, բերել. странá э́та -вóдитъ зóлото; э́та землá -вóдитъ мнóго овсá; п. на свѣтъ ծնել, լոյս աշխարհ բերել. э́тотъ худóжникъ не -водúлъ ничегó прекрáснѣе э́той картúны; **2,** անել, կատարել, գործել. п. преобразовáнія, перемѣ́ны; п. рабóты; п. уплáты վճարել. п. óпыты փորձեր անել. э́то извѣ́стіе -велó на негó сúльное впечатлѣ́ніе — արաւ կամ գործեց. ничтóжныя причúны -вóдятъ чáсто большíе перевóроты — առաջացնում են, առաջ են բերում. войнá -вóдитъ большíя бѣ́дствія — առաջացնում կամ պատճառում է. п. дѣ́ло въ судѣ́ դատարանում գործ վարել. п. тя́жебное, уголóвное дѣ́ло դանգատ, քրէական գործ վարել. п. слѣ́дствіе քննութիւն կատարել. п. давлéніе ճնշում գործել. п. раздѣ́лъ բաժանել. п. смотръ войскáмъ զօրքերին նայել, զօրահանդէս անել. **3,** առաջ բերել, ածանցել, առաջացած, սերուած համարել. онъ -вóдитъ свой родъ отъ знаменúтыхъ прéдковъ նա իրան նշանաւոր նախահայրերի ժառանգ է համարում. э́то слóво -вóдятъ отъ грéческаго кóрня այդ բառը յունարէն արմատից ածանցուած են համարում. **4,** բարձրացնել (պաշտօնի մէջ). п. въ генерáлы գեներալութեան աստիճան տալ. п. въ слѣ́дующій чинъ հետեւեալ աստիճանը տալ. егó -велú въ офицéры նորան սպայութեան աստիճան են տուել. **-вóдный** ած. քերկ. ածանցական, ածանցուած. **-вóдство** չ. **1,** արտադրութիւն, արդիւնաբերութիւն. անելը, պատրաստելը. п. свекловúчнаго сáхара; п. превышáетъ потреблéніе; п. шёлковыхъ ткáней п. рабóтъ աշխատանքներ անելը, կատարելը. п. слѣ́дствія քննութիւն անելը կամ կատարելը. п. тя́жебнаго дѣ́ла դանգատ վարելը. п. óбыска խուզարկելը, -կում. **2,** ածանցում (բառերի). **3,** բարձրացնելը (պաշտօնի մէջ). п. въ чинъ աստիճան տալը:

Произ|волéніе չ. բարի կամք, բարեհաճութիւն, յօժարութիւն. **-вóлить** (-лю -лятъ) տ. Произволя́ть; **-вóлъ** ա. բարի կամք, բարեհաճութիւն, բարեհայեցողութիւն. քմահաճութիւն, կամայականութիւն. остáвить на п. судьбы́; **-вóльно** մ. քմահաճութեամբ, կամայական եղանակով. **-вóльность** ի. կամայականութիւն. **-вóльный** ած. պատահական. կամայական, քմահաճ. п—ое распоряжéніе; **-воля́ть**, -вóлить չ. հաճել, բարեհաճել, թոյլատրել, յօժարել, համաձայնուել:

Произ|несéніе չ. ասելը, արտասանելը. ճառելը. **-нестú**, **-нéсть** (-сý -сýтъ; *անց.* -нёсъ -слá, ó; *հրմ.* -сú), **-носúть** (-ношý -óсятъ: -сú) ն. արտասանել, ասել, ճառել. п. рѣчь, приговóръ; п. я́вственно словá; п. угрóзы, богохýльства, непристóйныя словá; **-ношéніе** չ. **1,** ասելը. արտասանելը. **2,** արտասանութիւն, առոգանութիւն. у негó хорóшее п.; **-ношý** տ. Произносúть.

Произойтú (-зойдý -дýтъ; *անց.* -зошёлъ -шлá, ó; *հրմ.* -йдú) տ. Происходúть.

Произра|стáніе չ. բուսնելը, աճելը, մեծանալը. **-стáть**, -стú չ. բուսնել, աճել, մեծանալ. **-стéніе** չ. **1,** բուսնելը. աճելը. **2,** բոյս, տունկ. **-стú** (-стý -тýтъ; *անց.* -рóсъ -рослá, ó; *հրմ.* -стú) տ. Произрастáть; **-стúть** (-щý -стя́тъ) ն. աճեցնել. բուսցնել.

Произрож|дáть ն. ծնել, արտադրել. **-ся** —կր. ծնուել, գոյանալ, առաջ գալ. **-дéніе** չ. ծնունդ, արտադրութիւն. արդիւնք:

Прóйма ի. ծակ, անցք, բացուածք (որ կ է բանի միջից). вдѣвáть сéрьги въ п—ы գինտերն ականջների ծակերից անցկացնել:

Проиме|новáніе չ. **1,** անուանելը, կոչելը, յորջորջելը. **2,** մականուն, ածելորդ ա-

նուն. **-новáть** (-нýю -ютъ), **ся** տ. Проименóвывать, ся; **-нóвываніе** չ. անուանե-լը, կոչելը, յորջորջելը. **-нóвывать**, -новáть ն. անուանել, անուն, մականուն տալ, դնել. **-ся** անդր. իւրն իրան ով և է անուն կամ մակա-նուն տալ, դնել։

Пройму́ տ. Проня́ть.

Про|искáть (-ищý -ищутъ: -щи́) տ. Прои́скивать ն. **-и́скиваніе** չ. **1,** որոնելը, փնտռելը, պտռելը (որոշ ժամանակամիջոց). **2,** որոգայթներ լարելը, ներգութիւն բանեցնելը. **-и́скивать**, -искáть ն. որոնել, փնտռել, պտռել. չ. որոգայթներ լարել, ներգութիւն բա-նեցնել. **-искъ** ա. (մուլ. յ. прóиски) որո-գայթ(ներ), բանսարկութիւն(ներ), մեքենայու-թիւն(ներ)։

Проис|текáніе տ. Происте́ченіе; **-текáть**, -тéчь չ. բխել, սկիզբն առնել. *ծագել, առաջանալ, առաջ գալ. *всѣ егó не-счáстія -текáютъ отъ тогó, что...; **-те-чéніе** չ. բխելը. բխում, սկիզբն առնելը, ա-ռաջանալը. **-тéчь** (-текý -чёшь -кýтъ; անց. -тёкъ -теклá, ó; հրմ. -теки́) տ. Происте-кáть.

Про|исходи́ть (-хожý -óдятъ; -ди́), -изойти́ չ. **1,** առաջ գալ, առաջանալ, գոյանալ. ѳта болѣ́знь -исхóдитъ отъ простýды; мнóго вели́кихъ откры́тій -изошлó отъ слýчая; отъ ѳтого мóжетъ п. убы́токъ; свѣтъ -исхóдитъ отъ сóлнца; **2,** առաջա-նալ, առաջ գալ, պատահել, տեղի ունենալ. въ ѳтой прови́нціи -изошли́ безпоря́дки; вчерá -исходи́ли вы́боры; -изошлó земле-трясéніе; въ нёмъ -изошлá большáя пе-ремѣ́на; **3,** ծագել, սերուել, ծնուել. онъ происхóдитъ отъ знамени́таго рóда; отъ ѳтого брáка -изошлó стóлько-то дѣтéй; **-исхождéніе** չ. սկիզբ, առաջ գալը. գոյա-նալը. ծագում. п. ѳтого обы́чая неизвѣ́стно; онъ армяни́нъ по п—ію; человѣ́къ знáт-наго п—ія; слóво, п. котóраго неиз-вѣ́стно; **-исшéствіе** չ. դէպք, պատահմունք, պատահար. несчáстное п.

Пройти́ (-ойдý -йдýтъ; անց. -шéлъ -шлá, ó; հրմ. -йди́) տ. Прóисходи́ть; **-ся** անդր. շրջել, շրջան անել. пройдёмтесь по сáду; онъ прошёлся по кóмнатѣ; **-сь** տ. Прохáживаться.

Про|каже́нникъ ա. բորոտ, ուրուկ. **-каже́нный** ած. բորոտ. **-кáжу** տ. Про-кáзить; **-кáза** ի. **1,** բժ. lepra, բոր, բորո-տութիւն, ուրկութիւն. слонóвая п. փղաբոր, փղային բորոտութիւն. **2,** բս. Lichen, [ծառա]-քոս, ծառաքոս. **3,** (մուլ. յ. прокáзы) տ. ատո-րև. **-кáзить** (-жу -зятъ; -зь), напр—, չ. չարութիւն, չարաճճիութիւն, ստահակութիւն անել, խեղկա բաներ բանել. **-кáзливый** ած. չար, չարաճճի, ստահակ. **-кáзникъ** ա. **1,** չար, չարաճճի, ստահակ մարդ. **2,** տ. Про-кáза 2; **-кáзница** ի. չար, չարաճճի, ստա-հակ կին. **-кáзничать**, напр—, տ. Про-кáзить; **-кáзный** ած. բորոտ. **-кáзы** ի. յ. չարութիւններ, չարաճճիութիւններ, ստահա-կութիւն, 'գժութիւններ'. надѣ́лать п—зъ.

Про|кáливаніе չ. տաքացնելը, շիկացնե-լը, կարմրեցնելը (երկաթը). **-кáливать**, **-кали́ть** (-лю́ -ля́тъ) ն. տաքացնել, շիկա-ցնել, կարմրեցնել (երկաթը)։

Про|кáлываніе չ. ծակելը, խոցելը. **-кáлывать**, -колóть ն. ծակել, խոցել։

Прокаля́кать չ. մի քանի ժամանակ խօսել, զրոյց անել, (ժամանակը) զրոյց անելով անցկացնել։

Про|кáпчиваніе չ. լաւ մխելը. **-кáп-чивать**, -копти́ть ն. լաւ, բառ հարկին մը-խել, ծխի մէջ պահելով չորացնել։

Про|кáпываніе չ. կաթելով միջից անցնելը. **-кáпывать** **1,** (-кáпать) չ. կա-թել (միջից), կաթելով անցնել. **2,** (-копáть) ն. փորել. п. канáлъ; որոշ ժամանակ փորել, պեղել. **-ся** անդր. փորելով անցնել։

Прокараýл|ивать, -лить (-лю -лятъ) ն. **1,** որոշ ժամանակ հսկել, 'զարաւուլ քաշել'. **2,** что մի բան հսկելիս, 'զարաւուլ քաշելիս' չնկատել, աչքից բաց թողնել։

Прокáркать չ. որոշ ժամանակ չարա-նակ կռչել, կզզալ։

Про|кáрмливаніе չ. կերակրելը, բը-ռելը. **-кáрмливать**, -корми́ть ն. **1,** որոշ ժամանակ կերակրել, բռել. **2,** զործադրել, սպառել (կերակուրը, բուսը, խոտը). **-ся** ան-դր. իւրն իրան կերակրել, ապրել. однóй го-ловѣ́ не трýдно п.

Про|катáть տ. Прокáтывать; **-ся** անդր. **1,** մի քանի ժամանակ շրջագայել, գնալ, զբօսնել (կառքով). **2,** շատ առնել տալ (ձուա-ներ գլորելիս). **-кати́ть** (-качý -áтятъ), **ся** տ. Прокáтывать, ся: **-кáтка** ի. **1,** գլանե-լը, գլանելով քաշելը, կոելը (մետաղեղէնը). **2,** զբօսնելը, ման գալը (կառքով). **-кáтный** ած. **1,** գլորելու. **2,** գլանելու, (մետաղեղէնը) քա-շելու. **3,** վարձելու, վարձի, 'քրեհի'. п—ая плáта վարձագին, 'քրեհ'. **-кáтъ** ա. **1,** տ. Прокáтка և Прокáтываніе; **2,** վարձ, 'քրեհ'. взять на п. կամ напрокáтъ վարձով. 'քրե-հով' վերցնել. **3,** գցած տախտակներ, որոնց վերայով ձեռնատայլակը անց են կացնում. **4,** թեք մակերևոյթ, որի վերայով շաքարի շարա-պը վազում է. **5,** տպ. տախտակներից շինած յատակ, փայտը, որի վերայով ծանրութիւններ են գլորում. **-кáтываніе** չ. տ. ատորև բաղ. **-кáтывать**, -катáть, -кати́ть ն. **1,** գլո-րել, 'թօլ անել'. дѣ́ти весь вéчеръ прока-тáли я́йца; **2,** գլանել. прáчка цѣ́лый день бѣльё прокатáла; **3,** գլանել, քաշել (մետա-ղեղէն). **4,** որոշ ժամանակ զբօսեցնել. ման ա-ծել (կառքով). онъ прокати́лъ меня́ въ своéй карéтѣ; *п. на ворóныхъ սևացնել (քուէարկութեան ժամանակ). **5,** կառքի վերայ ծախսել, 'մսխել' (շատ փող). **-ся** անդր. **1,** գլորուել, գլորուելով մօտից անցնել, առաջ ան-ցնել. **2,** զբօսնել, ման գալ (կառքով)։

Про|качáть, -кáчивать ն. **1,** մի քա-նի ժամանակ ճօճել, ճլօրք զցել. **2,** ռմկ. ծախ-սել, 'մսխել', վատնել (փող). **-ся** անդր. մի քա-նի ժամանակ ճօճուել, ճլօրք ընկնել. **-качý** տ. Прокати́ть. [քեր

Прокá|шивать, -коси́ть ն. հնձել, հա-

Прокá|шливать, -шлять **1,** չ. մի քանի ժամանակ հազալ. **2,** (**-шлянуть**) ն. հազալով զուրս թքել. **-ся** անդր. հազալով դուրս թքել, (կոկորդը) մաքրել։

Проква́|сить (-а́шу -сятъ), **ся** ա. Проква́шивать, ся; **-шеніе, -шиваніе** չ. թթուեցնելը, խմորելը, կծուեցնելը, քացախեցնելը. **-шивать**, -сить ն. թթուեցնել, խմորեցնել, կծուեցնել, քացախեցնել. **-ся** չէզ. թթուել, խմորուել, կծուել, քացախել։

I. **Про|ки́дывать, -кида́ть** ն. **1,** մի բանի միջից կամ վերայով ձգել, նետել. **2,** սխալ ձգել, ձգելիս վրիպել։

II. **Про|ки́дывать**, -ки́нуть ն. **1,** գցել (համրիչի վերայ). **2,** Թղթխ. աջ ու ձախ ձգել, բաժանել. **-ся** չէզ. սխալ ձգել, ձգելիս վրիպել, սխալուել. սխալ դիպչել, սխալ զարկել։

Проки́менъ ա. (յն.) եկղ. համառօտ տուն, երգ Սուրբ գրքից, որ երգւում է ճաշոցից առաջ և ցոյց է տալիս ընթերցանութեան բովանդակութիւնը։

Проки́нуть, ся ա. Проки́дывать, ся II.

Проки|па́ніе չ. լաւ եփուելը, եռալը. **-па́ть**, -пѣ́ть չ. լաւ, բատ հարկին եփուել, եռալ. **-пѣ́лый** է. ած. լաւ եփուած, եռացած. **-пѣ́ть** (-плю́ -пя́тъ) ա. Прокипа́ть; **-пяти́ть** (-пячу́ -тя́тъ) ն. լաւ, բատ հարկին եփել, եռացնել. **-ся** ա. Прокипа́ть.

Про|киса́ніе չ. թթուելը, կծուելը. **-киса́ть**, -ки́снуть չ. թթուել, կծուել. **-кисе́ль** ի. թեթև թթուութիւն, թեթև կծուութիւն. **-ки́слый** ած. թթուած, կծուած. **-ки́снуть** (անց. -ки́съ -сла, о) ա. Прокиса́ть.

Про|кла́дина ի. խառորնակի գցած գերան. **-кла́дка** ի. **1,** ա. Прокла́дываніе; **2,** երկու իրերի մէջ, արանքում դրած բան. տպագր. փաքրիկ քառակուսի. **-кладно́й** ած. երկու իրերի մէջ, արանքում դնելու. п—а́я бума́га փաթաթելու թուղթ. **-кладу́** ա. Прокла́сть; **-кла́дываніе** չ. **1,** երկու իրերի մէջ, արանքում դնելը. **2,** հաշուելը, գցելը (համրիչի վերայ). **3,** բացելը, անցկացնելը (ճանապարհ). I. **-кла́дывать**, -кла́сть, -ложи́ть ն. 1, երկու իրերի մէջ, արանքում դնել, միջադրել. п. кни́гу бѣ́лыми листа́ми մէջէմէջ գրքում սպիտակ (չգրած) թերթեր դնել. 2, հաշուել, գցել (համրիչի վերայ). 3, նշաններ անել, նշաններ դնել. 4, հաշուելիս բաց թողնել, պակաս հաշուել. II. **-кла́дывать**, -ложи́ть ն. բացել, անցկացնել. п. доро́гу; п. доро́гу въ лѣсу́; п. но́вую у́лицу; *п. себѣ́ доро́гу къ по́честямъ.

Проклажа́ться չէզ. զբօսանքի և խրախուսութեան անձնատուր լինել, քէֆ անել, հանգստանալ։

Проклама́|ці́йка նւզ. **-ці́я** ի. (լտ.) պրօկլամացիա, հանդիսաւոր, հրապարակական յայտարարութիւն, ազդարարութիւն։

Прокла́сть (-кладу́ -ду́тъ; անց. -кла́лъ -ла, о; հրմ. -ди́) ա. Прокла́дывать I.

Про|клева́ніе չ. կտցով ծակելը. **-клева́ть** (-клюю́ -ю́тъ), **ся** ա. Проклёвывать, ся; **-клёвываніе** ա. Проклева́ніе; **-клёвывать**, -клева́ть, -клю́нуть ն. կտցով, կտցահարելով ծակել. **-ся** չէզ. ձուից դուրս գալ (ձուն կտցով ծակելով)։

Про|кле́иваніе չ. սոսնձապատելը. **-кле́ивать, -кле́ить** (-кле́ю -ятъ) ն. սոսնձապատել. **-кле́йка** ի. ա. Прокле́иваніе.

Прокли́кать (-чу -чутъ) **1,** ն. բարձրայն յայտարարել, քարոզել. **2,** չ. մի քանի ժամանակ կանչել, կոչել, աղաղակել։

Про|клина́ніе չ. **1,** անիծելը. նզովելը, բանադրելը. **2,** անէծք, նզովք. **-клина́тель** ա. **-клина́тельница** ի. անիծիչ, անիծող, նզովող այր, կին. **-клина́ть**, -кля́сть ն. **1,** անիծել. да бу́детъ онъ про́клятъ անիծուի՛ նա. **2,** եկղ. նզովել, բանադրել։

Прокли́|нивать, -ни́ть (-ню -нятъ) ն. սեպով, սեպերով ճեղքել, ճղել։

Проклю́нуть, ся ա. Проклёвывать, [ся.

Прокля́|сть (-ну́ -ну́тъ; -ни́) ա. Проклина́ть; **-тіе** չ. անէծք, նզովք, բանադրանք, բանադրութիւն. церко́вное п.; **-тый** ած. անիծեալ, անիծուած, նզովեալ, նզովուած.

Про|ко́вывать, -кова́ть (-кую́ -ю́тъ) ն. կռելիս ծակել. **2,** լաւ, բատ հարկին կռել, դարբնել. **3,** որոշ ժամանակ կռել, դարբնել. **4,** տէ՛ղ. բոլորովին սառեցնել, սառչել. прудъ прокова́ло.

Проко|вы́риваніе չ. փորելով, քչփորելով ծակելը. **-вы́ривать, -выря́ть** ն. փորելով. քչփորելով ծակել, ճեղքել։

Прокозы́|ривать, -ря́ть ն. Թղթխ. կօզըր խաղալ. **-ря́ться** չէզ. **1,** իր բոլոր կօզըրները տանել տալ. **2,** ռմկ. իր բոլոր փողերը տանել տալ։

Проко|ла́чивать, -лоти́ть (-лочу́ -о́тятъ) ն. **1,** զարկելով մացնել, անցկացնել. **2,** զարկելով, ծեծելով մաքրել (չորեղէնը)։

Проколо́ть (-колю́ -ко́лютъ; -ли́) ա. Прока́лывать.

Проколу́|пывать, -пать ն. փորելով, քչփորելով ծակել, ճեղքել։

Проко́лъ ա. **1,** ծակելը, խոցելը. **2,** ծակած, խոցած տեղ, վէրք։

Проконопа́|тить (-чу -тятъ) ա. Проконопа́чивать; **-чиваніе** չ. լաւ, բատ հարկին խծուծելը, խծուծով գոցելը, կալնելը. փակելը. **-чивать**, -тить ն. լաւ, բատ հարկին խծուծել, ծխուծով գոցել, փակել, կալնել։

Проко́н|сулъ ա. փոխ-հիւպատոս, անթհիւպատոս, փոխանակ բդեշխի. **-сульскій** ած. փոխ-հիւպատոսի, -սական, անթհիւպատոսի, -սական. **-сульство** չ. փոխ-հիւպատոսութիւն, անթհիւպատոսութիւն։

Про|копа́ть ա. Прока́пывать 2; **-ся** չէզ. դանդաղ կերպով անել, գործել, ուշացնել. онъ до́лго прокопа́лся съ э́той рабо́той; **-ко́пный** ած. միջից փորած, ծակած։

Прокоп|ти́ть (-чу́ -тя́тъ) ա. Прока́пчивать; **-тѣ́лый** ած. լաւ, բատ հարկին մրխած, մխով, ծխով չորացրած. **-тѣ́ть** չ. լաւ, բատ հարկին մխուել, ծխի, մխի մէջ չորանալ. **-че́ніе** չ. լաւ, բատ հարկին մխելը, ծխի, մրխի մէջ չորացնելը։

Проко́пъ ա. **1,** միջից փորելը, անցկացնելը. **2,** որ և է տեղի միջից փորած, անցկացրած փոս, խրամ. **3,** ստորերկրեայ անցք, գետնուղի։

Про|корми́ть (-млю́ -ко́рмятъ), **ся** ա. Прока́рмливать, ся; **-ко́рмка** ի. **-кормле́ніе** չ. կերակրելը, կերակրում. սնունդ, պարէն. **-ко́рмъ** ա. **1,** ա. Прокормле́ніе; **2,** կերակրի, սննդի ծախս։

Прокорпѣть (-плю́ -пя́тъ) չ. надъ чѣмъ *որոշ ժամանակ աշխատութեամբ մի բանով զբաղուել, մի բանի վերայ աշխատել։*

Прокоси́ть (-шу́ -ко́сятъ) ն. **1,** *որոշ ժամանակ հնձել, հարել.* **2,** *հնձել, հարել (որոշ տարածութիւն)։*

Проко|чёвывать, -чева́ть (-чу́ю -ютъ) չ. *որոշ ժամանակ ւր և է տեղ մնալ, անցկացնել (Թափառականների, խաշնարածների մասին)։*

Прокоше́ніе չ. *հնձելը, հարելը։*

Про|краду́сь տ. Прокра́стьcя; **-кра́дываніе** չ. *ծածուկ, աննկատելի կերպով անցնելը, սպրդելը.* **-кра́дываться**, -кра́сться չ. *ծածուկ, աննկատելի կերպով անցնել, սպրդել, մտնել մի տեղ, մի բանի մէջ.* п. въ домъ.

Прокра́сить (-а́шу -сятъ) տ. Прокра́шивать.

Прокра́сться (-аду́сь -ду́тся; -ди́сь) տ. Прокра́дываться.

Прокрахма́|леніе չ. *կրախմալելը, օսլայելը, նշշաելը.* **-лить** (-лю -лятъ) ն. *կրախմալել, օսլայել, նշշաել։*

Прокра́|шиваніе չ. *դեղելը, ներկելը.* **-шивать**, -сить ն. **1,** *դեղել, ներկել.* **2,** *դեղելով, ներկելով անցկացնել (որոշ ժամանակ)։*

Про|кри́кивать, -крича́ть ն. **1,** *աղաղակելով յայտարարել, տարփողել, 'շու անել'.* **2,** *մի քանի ժամանակ աղաղակել.* **-кри́кнуть** չ. *ճչել, ծուալ, ճիչ արձակել։*

Прокрои́ть (-рою́ -я́тъ) ն. **1,** го́лову *գլուխը ջարդել, ճզմել.* **2,** *որոշ ժամանակ ձևել։*

Про|крыва́ть, -кры́ть (-кро́ю -ютъ) *նկրչ.* տ. Грунтова́ть.

Прокурату́ра ի. (լտ.) *պրօկուրօրական, դատախազական մարմին, վարչութիւն։*

Проку́|риваніе չ. տ. *ստորև բայը.* **-ривать, -ри́ть** (-рю́ -рятъ) ն. **1,** *լաւ, բոլոր կողմերն ծխել (ծխաննելիքով).* **2,** *ծխելով ծախսել, վատնել (շատ փող).* **3,** *մի քանի ժամանակ ծխել, քաշել (ծխախոտ)։*

Прокуроле́сить (-шу -сятъ) չ. *մի քանի ժամանակ չարաճճիութիւն, սատանայութիւն անել։*

Прокуро́|рская, ой ի. *դատախազի սենեակ, դատախազարան.* **-рскій** ած. *պրօկուրօրի, -րական, դատախազի, -զական.* п. надзо́ръ; **-рство** չ. *պրօկուրօրութիւն, դատախազութիւն.* **-рша** ի. *պրօկուրօրի, դատախազի կին.* **-ръ** ա. (լտ.) *պրօկուրօր, դատախազ։*

Про|куса́ніе չ. *կծելով, խածնելով կտրելը.* **-куса́ть, -куси́ть** (-шу́ -у́сятъ) տ. Проку́сывать; **-ку́сываніе** տ. Прокуса́ніе; **-ку́сывать**, -куса́ть, -куси́ть ն. *կծելով, խածնելով կտրել, փրցնել։*

Проку|ти́ть (-чу́ -тятъ) ն. *վատնել, փչացնել (զեղխութեամբ, քէֆ անելով).* **-ся** ներգ. *շնորհիւ զեղխութեան, խրախուսիրութեան սնանկանալ, տնանկանալ.* **-чиваніе** չ. *զեղխութեամբ, խրախուսիրութեամբ վատնելը, փչացնելը։*

Прокъ ա. **1,** *շահ, օգուտ, 'խէր'. յաջողութիւն.* отъ э́того про́ку не бу́детъ; что въ э́томъ про́ку? итти́ въ п. *օգուտ, շահ բերել, յաջողուել.* чужо́е добро́ въ п. нейдётъ (*առծ*). **2,** *պաշար, պաշէն.* запасти́сь въ п. *պաշար անենել, պարենաւորուել։*

Про|лага́ть, -ложи́ть տ. Прокла́дывать II.

Прола́|за տ. Пройдо́ха; **-зить** (-жу -зятъ), **-зничать** չ. *սողալ, սողալով, խորամանկութեամբ աշխատել մի բան շահել, ստանալ.* **-зъ** ա. **1,** *անցք, ծակ, որի միջից սողալով անցնում են.* **2,** տ. Прола́за.

Прола́ко|мить (-млю -мятъ) ն. *քաղցրեղէնի, անուշեղէնի վերայ ծախսել, 'մսխել'.* **-мленіе** չ. *քաղցրեղէնի, անուշեղէնի վերայ ծախսելը, 'մսխելը'։*

Про|ла́мываніе չ. *ծակելը, ճեղքելը, ծակելով, ճեղքելով բացելը.* **-ла́мывать**, -лома́ть, -ломи́ть ն. *ծակել, ճեղքել, ծակելով բացել, (ծակ, անցք, դուռ, պատուհան) կտրել.* п. окно́ въ стѣнѣ́; п. отве́рстіе; п. лёдъ; п. стѣ́ну, что́бы сдѣ́лать дверь; п. полъ; п. го́лову *գլուխը պատռել.* **-ла́мываться**, -ломи́ться ներգ. *կոտրուել, փլչել, փուլ գալ, խորտակուել.* полъ проломи́лся; лёдъ подъ нимъ проломи́лся; э́тотъ полъ такъ нагружёнъ, что мо́жетъ п—ми́ться.

Прола́щивать, -лощи́ть ն. *լաւ, բոլոր հարկերն կոկել, ողորկել, յղկել։*

Прола́ять (-ла́ю -ютъ) չ. *որոշ ժամանակ հաչել, հաչելով անցկացնել (օր. ամբողջ գիշերը)։*

Про|лега́ніе չ. տ. *ստորև բայը.* **-лега́ть**, -ле́чь չ. *տարածուել, անցնել (բառ երկարութեան).* доро́га пролега́ла че́резъ лѣсъ *ճանապարհը անցնում էր անտառի միջով.* **-лежа́лый** բյ. ած. *փտատած, փչացած (երկար ընկած մնալուց).* **-лежа́ть** տ. Проле́живать; **-лежень**, жня ա. *երկար պառկելուց առաջացած վէրք.* **-ле́живать**, -лежа́ть **1,** չ. *որոշ ժամանակ պառկած, ընկած մնալ.* я цѣ́лый день пролежа́лъ въ посте́ли; два го́да пролежа́вшій лѣсъ *երկու տարի ընկած մնացած ատաղձ.* **2,** ն. бока́ *երկար պառկելով կողքերը ցաւեցնել, փտտել։*

Пролета́ніе չ. *թռչելով մօտից, կշտից անցնելը։*

Пролета|рія́тъ ա. (լտ.) *պրօլէտարիատ, աղքատ, որն աշխատող որն ուտող քաղաքացի դասակարգ.* у́мственный п. *մտաւոր պրօլէտարիատ.* **-рій**, ія ա. (լտ.) *պրօլէտար, աղքատ, որն աշխատող որն ուտող քաղաքացի։*

Про|лета́ть, -летѣ́ть չ. **1,** *թռչելով անցնել.* пу́ля пролетѣ́ла ми́мо са́мой его́ щеки́; **2,** *արագութեամբ, աննկատելի կերպով անցնել (ժամանակի մասին).* **-лётка** ի. *մի տեսակ կառք.* **-лётный** ած. *թռչելով անցնող.* *վազանցիկ, արագաթափ.* п—ыя пти́цы *տարափոխիկ թռչուններ.* **-лётъ** ա. **1,** *թռչելը, թռչելով անցնելը.* побыва́ть гдѣ п—омъ *անցնելիս ւր և է տեղ կարճ ժամանակ մնալ.* на п. տ. Напролётъ; **2,** *անցք, ծակ, բացուածք (միջանցիկ).* *ճրտրգ. պարապ, դատարկ տեղ, տարածութիւն.* п. ме́жду ба́лками *գերանների հեռաւորութիւնը միմեանցից.* **-летѣ́ть** (-чу́ -тя́тъ) տ. Пролета́ть.

Проле́|чивать, ся, -чи́ть, ся տ. Проле́чивать, ся, -чи́ть, ся.

Пролечу́ տ. Пролетѣ́ть և Пролечи́ть.

Про|ливáніе չ. *թափելը*. **-ливáть, -лúть** ն. *թափել*, (գր.) *հեղուլ*. п. винó нá полъ; п. кровь за отéчество; п. о комъ слёзы; *п. на когó гнѣвъ *բարկութիւնը մէկի գլխին թափել*. *п. свѣтъ на что *մի բանի վերայ լոյս սփռել, մի բան լուսաբանել, պարզաբանել*. онъ прóлилъ большóй свѣтъ на ѐто дѣло; **-ся** -ն-тр. *հոսել, թափուել, տարածուել*. **-ливнóй** -ѐ. дождь *հեղեղ, տարափ, ջաղր, 'սէլաւ'*. **-лúвъ** -. *աշխ. նեղուց*:

Пролú|зывать, -зáть (-жý -жутъ; -жú) ն. **1**, *լեզել. լեզելով մաքրել*. **2**, *մի քանի ժամանակ լեզել*:

Про|лúтіе չ. *թափելը*. п. крóви *արիւնհեղութիւն*. **-лúть** (-лью́ -ю́тъ; -лéй), **ся** *տ*. Проливáть, ся.

Проловúть (-влю́ -лóвятъ) ն. *որսչ ժամանակ որսալ, 'բռնել'*. п. рыбу; п. птицъ, насѣкóмыхъ.

I. **Прологъ** -. (*յն.*) **1**, *նախերգան* (*մեզ դրամատիկական չարագրութեան*). **2**, (прóлогъ) *եկղ. տօնական մատեան*: [*վէպ*:

II. **Прологъ** -. *ձոր, հովիտ, լեռնահո-*

Проло|жéніе *տ*. Проклáдываніе; п. нóвой дорóги *նոր ճանապարհ անցկացնելը*. **-жúть** (-жý -жатъ) *տ*. Проклáдывать.

Про|ломáніе չ. *ծակելը, բացելը*. **-ломáть** *տ*. Проламывать; **-ломúть** (-млю́ -óмятъ), **ся** *տ*. Проламывать, ся; **лóмка** է. *անցք, ծակ*. **-лóмный** -ѐ. **1**, *անցքի, ծակի. ծակած, բացած*, **2**, *ծակելու, ճեղքելու, բացելու*. **-лóмъ** -. **1**, *ծակելը, ճեղքելը, բացելը*. на п. *տ*. Напролóмъ; иттú на п. *զօռով, ետ մի դարձելքէ չնայելով առաջ գնալ, ճանապարհ բացել*. **2**, *ճեղք, ծակ, անցք, պատռուածք*, (պատի) *խրամատ, ճեղքած, պատռած տեղ*. сдѣлать п. въ стѣнѣ *պատը խրամատել, պատի մէջ ճեղք, խրամատ բացել*. бить п. *ճեղքել, ծակել*. п. головы́ *գլխի պատռուածք*: [щивать.

Пролощúть (-щý -щатъ) *տ*. Проло-

Прóлубь *ուղ*. *տ*. Прóрубь.

Про|лы́сина է. *ազն. բաց, լերկ տեղ* (*օր. գլխի երկարած թեթև ճաղատութիւն, մազաթափ տեղ մուշտակի, պատառակ. պատի վերայ տեղ, ուր գաջը պակաս է եկել ևլն*):

Пролью *տ*. Пролúть.

Про|лѣзáніе չ. *սողալով անցնելը*. **-лѣзáть, -лѣзть** (-зу -зутъ; *անց*. -лѣзъ -зла, о; -зь) չ. *սողալով անցնել, ներս կենալ*. п. сквозь рѣшётку.

Пролѣнúться (-нюсь -нятся) չ. *մի քանի ժամանակ ծուլանալ, յուլանալ, ծուլութիւն, յուլութիւն, պերգութիւն անել*:

Пролѣ|сна է. *բս*. Mercurialis, *կմշաբուկ*. **-сóкъ**, ска -. **-сóчекъ**, чка *նւզ*. *տ*. Прóсѣка.

Пролѣ|чиваніе չ. *բժշկութեան, պաշտպանութեան վերայ ծախսելը*. **-чивать, -чúть** (-чý -чатъ) ն. **1**, *մի քանի ժամանակ բժշկել, պաշտպանել* (*հիւանդին*). **2**, *բժշկութեան, պաշտպանութեան, բժշկի ու դեղորայքի վերայ ծախսել*. **-ся** -ն-тр. *մի քանի ժամանակ բժշկուել, պաշտպանուել*:

Пролю|бéзничать չ. *մի քանի ժամանակ սիրալիրութիւններ անել*. **-бовáться** (-бýюсь -ютсся) չ. *մի քանի ժամանակ զուարճանալ, հրճուել, հրճուանքով նայել*:

Промá|зывать, -зать (-жу -жутъ; -жь) ն. *խցել, օծել, ծեփել*:

Про|мáлчиваніе չ. *լռելը*. **-мáлчивать, -молчáть** չ. *լռել, լռութիւն պահպանել*:

Про|мáлывать, -молóть ն. **1**, *աղալ. աղալ պրծնել*. **2**, *վայրապար 'դուրս տալ', շաղակրատել*:

Проманéжиться (-жусь -жатся) -ն-тр. *մի քանի ժամանակ պճնամոլիլ, կոտրտուիլ, քրքջուիլ*:

Промá|нивать, -нúть (-ню́ -нятъ) ն. *մի քանի ժամանակ յուսադրել, սուտ յոյսերով խաբել*: [*տանել, կեղտոտել, ապականել*:

Промарáть ն. *մի քանի ժամանակ աղ-*

Промаршировáть (-рýю -ютъ) չ. *զօր. անցնել*:

Про|мáтываніе չ. *վատնում, վատնելը*. **-мáтывать, -мотáть** ն. **1**, *վատնել*. п. своё имѣніе; онъ промотáлъ своё состояніе на актрúсъ; **2**, *մի քանի ժամանակ* [*թել*] *կծկել, կծկելով անցկացնել*. **-ся** -ն-тр. *սնանկանալ, 'քանդուիլ', 'տնաքանդ ըլլլ'* (*ստացուածքը վատնելով*):

Промá|хивать, -хáть, -хнýть ն. **1**, *հովհարելով քշել, վանել, հալածել, ցրել*. **2**, *ուղ. վատնել*. **3**, *քշելով անցնել* (*որոշ տարածութիւն*). **4**, չ. мúмо чегó *մի բանի մօտից, 'կշտից' արագ անցնել*. **-ся** -ն-тр. *վրիպել, սխալուել, չադրկել* (*նպատակին*). онъ вы́стрѣлилъ въ меня́ изъ револьвера, но промахнýлся; **-(прó-)хъ** -. *սխալ հարուած, վրիպում. աահ. սխալ, անյաջողութիւն*. дать, сдѣлать п. *սխալուել, վրիպել, նպատակին չըդիպցնել*. онъ не п. *նա միամիտ մարդ չէ, նա խարտաշ պատաղ չէ*. ни рáзу не дать п—у *երբէք չվրիպել*:

Про|мáчивать, -мочúть ն. **1**, *թացել, թրջել*. п. нóги; **2**, *բոլորովին թացել, թրջել, ջուր կարեցնել*. дождь -мочúлъ меня́ до костéй; дождь насквóзь -мочúлъ мою́ шинéль; *п. гóрло *ծարաւը կոտրել, 'բողազը թացել', 'թաց անել'*:

Промáшка է. *տ*. Прóмахъ.

Промáяться (-мáюсь -ются) -ն-тр. *չարչարուել, տանջուել, նահատակուել* (*մի քանի ժամանակ*):

Промаúчить *տ*. Маúчить.

Проме|длéніе չ. *ուշանալը, ուշացում, յապաղում*. **-длúвать, -длúть** (-лю -лятъ) չ. *ուշանալ, յապաղել, 'կետանալ'*. п. въ дорóгѣ.

Промé|жду ն-тр. (*սեռկ. և գործիակ. հոլ.*) *մէջ, միջև*. п. двухъ огнéй; п. горъ; п. нúми; **-жность** է. *միջոց, արանք*. п. мéжду бровя́ми; **-жýтокъ**, тка -. **-жýточекъ**, чка *նւզ*. *միջոց* [*միջի*] *տարածութիւն, հեռաւորութիւն*. мéжду деревя́нными строéніями оставля́ются -жýтки; п. врéмени, раздѣля́ющій ѐти двѣ эпóхи; въ ѐтотъ п. случúлось мнóго происшéствій; **-жýточный** -ѐ. *միջանկեալ, միջա—*. п—ое пространство; п—ая стѣ-

на́; **-жъ** *ш.* Проме́жду; «возьми́ дуби́ну п. ногъ, вотъ тебѣ́ и конь бу́детъ!»

Промель|ка́ть *չ.* **1,** *մի քանի ժամանակ, երբեմն փայլել, պսպղալ, պլպլալ.* **2,** *և* **-кну́ть** *չ. փայլակի պէս անցնել, յանկարծ փայլել, երեւալ և անյայտանալ, չքանալ։*

Про|мерза́ніе *չ. բոլորովին սառչելը, սառելով կարելը.* **-мерза́ть,** -мёрзнуть *չ. բոլորովին սառչել, սառելով կարել.* **-мёрзлый** *ած. բոլորովին սառած, սառելով կարած.* **-мёрзнуть** (*անց.* -мёрзъ -зла, о) *ш.* Промерза́ть. [*սմեռել*։

Проме́ссъ *ա.* (*ֆր.*) *վճռէ. պարտէս, խոս-*

Про|мести́, -ме́сть (-мету́ -ту́тъ; *անց.* -мёлъ -ла́, о́; -ти́) *ш.* Промета́ть I; **-мета́ніе** *չ.* **1,** *ավելը, սրբելը, մաքրելը.* **2,** *ш.* Промётываніе; **-мета́ть** *ն.* **I.** (-мести́, -ме́сть) *ավել, սրբել, մաքրել.* **II.** *ш.* Промётывать; **-метну́ть** *ш.* Промётывать; **-мётываніе** *չ.* пе́тель *կոճակների ծակերը կարելը.* **-мётывать,** -мета́ть, -метну́ть *ն.* **1,** *ձգել, գցել, նետել (մինչեւ).* п. сквозь гро́хотъ *խարբալել, 'խախալել'.* **2,** *կարել (կոճակների ծակերը)*։

Промечта́ть *չ.* о чёмъ *մի բանի մասին մի քանի ժամանակ երազել, մտածել, խորհել*։ [*մանել աչքերը ճպել*։

Проми|га́ть, -гну́ть *չ. մի քանի ժա-*

Проми́ловаться (-лу́юсь -ю́тся) *ն. կր. հնց. մեղանչել*։

Про|мина́ть, -мя́ть *ն.* **1,** *լաւ տրորել, շաղախել (կաւը).* **2,** *ծեծել, քրքրել (կտաւատը).* **3,** *ման ածել (ձիուն).* **-ся** *ն. կր. շարժուել, ման գալ*։

Промо́з|глость *է. փտածութիւն, հոտածութիւն. 'ծխածութիւն'.* **-глый** *բ. ած. փտած, հոտած, փչացած (մեղեղէն), կծուած, 'ծխած' (իւղ),* **-гнуть** *չ. փտել, հոտել, փչանալ. կծուել, 'ծխել'.*

Промо́|ина *է.* **-й** *ա.* **1,** *ջրից ողողուած, քանդուած տեղ, խոռոչ.* **2,** *սառցի մէջ բացուած ծակ, անցք.* **-йный** *ած. ջրից ողողուած, քանդուած*։

Промо|ка́ніе *չ. թացուիլը, թրջուիլը.* **-ка́ть,** -кнуть *չ. բոլորովին թրջուել, թացուել, ջուր կարել.* п. отъ дождя́; п. до косте́й; **-клый** *բ. ած. բոլորովին թրջուած, թացուած, ջուր կարած.* **-кнуть** (*անց.* -мо́къ -кла, о) *ш.* Промока́ть.

Промо|ла́чивать, -лоти́ть *ն.* **1,** *մի քանի ժամանակ կա(լ)սել.* **2,** *բոլորը կա(լ)սել*։

Промо́лвить (-влю -вятъ) *ն. ասել, արտասանել.* **-ся** *ն. կր. բերնից անզգուշաբար խօսք դուրս թռցնել*։

Промоли́ться (-лю́сь -лятся) *չ. աղօթել, աղօթելով անցկացնել (որոշ ժամանակ)*։

Промолоти́ть (-очу́ -о́тятъ) *ш.* Промола́чивать.

Промоло́ть (-мелю́ -е́лютъ; -ели́) *ш.* Прома́лывать.

Промолча́ть *ш.* Прома́лчивать.

Промо́лъ *ա. աղալը (աղունը)*։

Промо|ра́живать, -ро́зить *ն. բոլորովին սառցնել*։

Промори́ть (-рю́ -ря́тъ) *ն. որոշ ժամանակ քաղցած թողնել, քաղցից, սովից սատակեցնել.* п. безъ обѣ́да *առանց ճաշի, քաղցած թողնել.* п. на рабо́тѣ *քաղցած աշխատեցնել, բանեցնել.* **2,*** *երկար ժամանակ սպասել տալ*։ [мора́живать.

Проморо́зить (-о́жу -зятъ) *ш.* Про-

Промота́ть, ся *ш.* Прома́тывать, ся.

Промо|че́ніе *չ. թացելը, թրջելը.* **-чи́ть** (-чу́ -чатъ) *ш.* Прома́чивать.

Прому́чить (-чу -чатъ) *ն. մի քանի ժամանակ չարչարել, տանջել.* **-ся** *ն. կր. մի քանի ժամանակ չարչարուել, տանջուել*։

Промуштрова́ть (-ру́ю -ю́тъ) *ն. բռն. խստութեամբ կրթել, վարժել, հրահանգել*։

Промча́ть *ն. արագ տանել, սլացնել. անցկացնել, 'թռցնել'.* **-ся** *ն. կր. արագ գնալ, անցնել, սլանալ*։

Промы|ва́льный *ած. լուանալու[ն ծառայող].* **-ва́льня** *է. լուացարան (հանքածոյի).* **-ва́льщикъ** *ա. լուացող, լուացարար (հանքածոյի).* п. зо́лота; **-ва́ніе** *չ. լուանալը. լուացում.* **-ва́тельное,** аго *չ. ш.* Клисти́ръ 1; **-ва́тельный** *ш.* Промыва́льный; **-ва́ть,** -(ы́)ть *ն.* **1,** *լուանալ, մաքրել.* п. руду́; п. глава́; **2,** (*ջրի մասին*) *ողողել, քանդել, քանդել, տանել.* во́да промы́ла плоти́ну; **-вка** *է. լուանալը, լուացում, մաքրելը, -քում.* п. рудъ; п. ше́рсти; **-вно́й** *ած. լուանալու. լուացած. ջրից ողողուած, քանդուած, տարուած.* **-вочный** *ш.* Промыва́льный.

Промы́каться (-ка́юсь -ю́тся *և* -чусь -чутся) *ն. կր.* **1,** *դէս ու դէն թափառել, քարշ գալ.* **2,** *ողորմելի կերպով ապրել, 'խօսք գնալ'*։

Про́мыселъ, сла *ա. զբաղմունք, արհեստ, 'փէշակ'.* ры́бный п. *ձկնորսութիւն.* звѣри́ный п. *որսորդութիւն.* го́рный п. *հանքագործութիւն.* соляно́й п. *աղագործութիւն*։

Промысли́те|ль *ա. նախախնամող (Աստուած).* **-льный** *ած. նախախնամական*։

Про|мы́слить (-шлю -слятъ) *ш.* Промышля́ть 3; **-мыслово́й, -мысло́вый** *ած. արհեստագիտական, արհեստագործական, արհեստի, -տայի.* промысло́вое свидѣ́тельство *արհեստագիտական, -գործական վկայական.* промысло́вое заведе́ніе *արհեստագիտանոց, արհեստագործանոց*։

Про́мыслъ *ա. նախախնամութիւն.* *ш.* Провиде́ніе. [мыва́ть.

Промы́ть (-мо́ю -ютъ; -мо́й) *ш.* Про-

Промы́|шленникъ *ա. արհեստաւոր, արհեստագէտ, 'փէշակար', արդիւնաբերող (ձկներ, որսորդ, առևտրականներ).* **-шленность** *է. արհեստագիտութիւն, արհեստագործութիւն, արդիւնաբերութիւն.* фабри́чная, заво́дская п. *գործարանական արհեստագիտութիւն, -գործութիւն.* хлопча́то-бума́жная п. *բամբակագործութիւն.* **-шленный** *ած.* **1,** *արհեստագործ, արհեստագէտ. արդիւնաբերական, -քաղ.* п. наро́дъ; п. го́родъ; **2,** *ուշիմաւոր, խորամանկ, ճարպիկ.* **-шля́ть 1,** *չ.* чѣмъ *մի գործով, արհեստով պարապել, զբաղուել.* п. ры́бою *ձկնորսութիւն անել.* п. ди́чью *որսորդութիւն անել.* п. изво́зомъ *սայլապանութիւն անել.* п. контраба́ндою *մաքսանենգութեամբ պարապել.* **2,** *չ.* о комъ, о чёмъ *մէկի, մի բանի մասին հոգալ, հոգս քաշել.* **3,** (-слитъ)

ն. что *աշխատել, վաստակել, ճարել, հայթայթել*. п. себѣ хлѣба *իւր օրական պարէնը հայթայթել*:

Промѣ|на է. ա. Промѣнъ; **-нивание** չ. *փոխում, փոխանակում, փոխելը, փոխանակելը*. **-нивать**, -нять ն. *փոխել, փոխանակել*. п. старую посуду на новую; п. картину на книги; **-ся** փ-էր. чѣмъ *մի բան միմեանց հետ, միմեանց մէջ փոխել*. мы промѣнялись лошадьми; **-нный** ած. *փոխելու, փոխանակելու*. **-нщикъ** ա. **-нщица** է. *դրամափոխ, լումայափոխ այր, կին, սեղանաւոր, -ուհի, 'գասաւփ'*. **-нъ** ա. **1**, *փոխելը, -խում, փոխանակելը, -կում, փոխանակութիւն*. п. одной вещи на другую; съ меня взяли столько-то за п.; п. безъ придачи, ухо на ухо *փոխել. փոխանակել առանց որ և է աւելորդ բան վճարելու*. **2**, *փոխավճար, լումայաշահ*. **-нять, ся** ա. Промѣнивать, ся.

Промѣ|ривание չ. *չափելը*. **-ривать**, **-рить** (-рю -рятъ), -рять ն. *չափել (խորութիւնը)*. **-ся** ան-էր. *սխալուել (չափելիս)*. **-рный** ած. *չափելու, չափման*. п. шестъ; **-ръ** ա. *չափելը, չափում*. **2**, *սխալ (չափի, չափելիս եղած)*. **-рять** (-ряю -ютъ), **ся** ա. Промѣривать, ся.

Промѣ|шивать, -сить (-шу -ѣсятъ), **-шать** ն. *լաւ շաղախել, խառնել*:

Промѣш|кивать, -кать չ. *մի քանի ժամանակ ուշանալ, յապաղել*. онъ промѣшкалъ въ пути.

Промякнуть չ. *փափկել, փափկանալ, կակղել, կակղանալ (բոլորովին)*:

Промять (-мну -утъ; -мни), **ся** ա. Проминать, ся. [*մլաւել, նուալ*:

Промяукать չ. *մի քանի ժամանակ*

Пронаши|вание չ. *կրելով մաշելը, ծակելը (հագուստը)*. **-вать**, проносить ն. **1**, *հագնել, կրել (որոշ ժամանակ)*. **2**, *հագնելով. կրելով մաշել, ծակել, քրքրել (հագուստը)*:

Пронести (-су -сутъ; *անց*. -нёсъ -сла, ó; *հրմ*. -си), **ся** ա. Проносить, ся II.

Прон|зание չ. *խոցելը, խոցում, ծակելը, -կում*. **-зать**, -зить ն. *խոցել. ծակել*. п. кинжаломъ; п. насквозь *միջից ծակելով անցնել*. **-зительно** մ. *սուր, ականջ ծակելով*. **-зительность** է. *ականջ ծակելը, սրութիւն, սաստկութիւն, զլութիւն (ձայնի)*. **-зительный** ած. *սուր, սաստիկ, ականջ ծակող, զիլ*. обладать п—ымъ голосомъ; п—ые крики; **-зить** (-жу -зятъ) ա. Пронзать.

Про|низать (-ижу -ижутъ; -жи) ա. Пронизывать; **-низывание** չ. *շարելը, յեռուլը*. **-низывать**, -низать ն. **1**, *շարել, յեռուլ*. п. жемчугомъ *մարգարտազարդել*. **2**, *շարելով անցկացնել (որոշ ժամանակ)*. **-низь** է. *ասլուեր, շարելու բան*:

Проник|кание չ. *անցնելը, ներս մտնելը, թափանցելը*. **-кать**, -кнуть ն. *անցնել (միջից, ընդմէջ)*. [*ներս*] *մտնել, թափանցել*. свѣтъ проникаетъ сквозь стекло, сквозь занавѣски; вода проникла во второй этажъ; п. въ глубь [*կմ* глубину] страны *երկրի խորքը մտնել*. **2**,* *խորատեսուել, իմանալ, խելամուտ լինել*. п. чьё-либо намѣренiе; воззрѣнiе начинающее п—кать въ умы *մտքերին միջամուխ եղող, մտքերը գրաւող հայեացք*. п. въ будущее *ապագային խելամուտ լինել*. **-ся** ան-էր. чѣмъ *մի բանով ազդուել*. п. истиною ученiя; п. чувствомъ долга; **-кновение** չ. *թափանցելը, -ցում*. **հասկանալը, հասկացողութիւն, խելամտութիւն*. **-кновенность** է. **խորատեսութիւն, խելամտութիւն*:

Про|нимать, -нять ն. **1**, *ծակել*. **2**, *ազդել, ներգործել*. меня морозъ, голодъ пронимаетъ *ես մրսում եմ (կամ ցուրտը ջանս է ընկել), ես քաղցած եմ*. меня дрожь пронимаетъ *ես դողացնում եմ*. **3**, *զգալ, խելքի բերել, ուղղել (պատժելով)*. его не проймёшь.

Прони|цаемость է. *թափանցելիութիւն*. **-цаемый** ած. *թափանցիկ. թափանցելի*. **-цание** չ. *թափանցում, թափանցելը*. **-цательность** է. *թափանցողութիւն (մտքի), սրամտութիւն, նրբամտութիւն, կորովամտութիւն, լրջամտութիւն, զգաստութիւն*. **-цательный** ած. *թափանցող, սուր. սրամիտ, նրբամիտ, կորովամիտ, լրջամիտ, զգաստ*. п. взоръ, умъ; **-цать, ся** ա. Проникать, ся.

I. **Проносить** (*ապռն*. -ношу -носятъ; -си) ա. Пронашивать.

II. **Про|носить** (*ներկյ* -шу -носятъ; -си), -нести ն. **1**, *տանել, [տանելով] անցկացնել*. мимо нашихъ оконъ пронесли гробъ; п. слухъ, молву о чёмъ *մի բանի մասին լուր տարածել*. Господи, пронеси это горе *Տէր, հեռացրու այդ աղէտը*. **2**, դէմ. *լուծել, 'դուրս գնալ'*. его проноситъ, пронесло; **3**, *պատառել, խորտակել, քակել, քանդել, տանել*. плотину пронесло водою; **-ся** ան-էր. **1**, *արագութեամբ անցնել, անցկենալ, սլանալ*. лошадь пронеслась мимо насъ; **2**, *տարածուել*. пронёсся слухъ; **-носный** ած. և пронóсное, аго չ. *լուծողական, մաքրողական*:

Пронунцiаменто չ. (*իսպ*.) *պրօնունցիամենտօ (խռովարարական ցոյց կառավարութեան դէմ. ևս ցոյց որ և է կուսակցութեան պարագլխի, երեսփոխանի կամ պետական անձի դէմ)*:

Проны|ра հ-ր. *խորամանկ, խարդախ, բանսարկու, աղուեսաբարոյ մարդ, *'ճիզուիտ'*. **-ривать**, -рнуть չ. *սուզուիլ, խորասուզուիլ, ընկղմուիլ*. **-рить** (-рю -рятъ) չ. *խորամանկութիւն, խարդախութիւն, նենգութիւն անել (որ և է նպատակով)*. **-рливость** է. *նենգութիւն, խորամանկութիւն, բանսարկութիւն. *'ճիզուիտութիւն'*. **-рливый** ած. *նենգ, խորամանկ, խարդախ, բանսարկու, *'ճիզուիտ'*. **-рнуть** ա. Пронырывать; **-рство** չ. *խորամանկութիւն, խարդախութիւն, նենգութիւն, բանսարկութիւն*. **-рствовать** (-вую -ютъ) ա. Пронырить.

Пронѣжиться (-жусь -жатся) ան-էր. *մի քանի ժամանակ իւր անձը գրգել, գգուել, փայփայել (օր. անկողնում պառկած մնալով)*:

Пронюх|ивать, -хать ն. **1**, *հոտառութեամբ, գաղտնաբար իմանալ, տեղեկանալ*. онъ пронюхалъ, что его хотятъ поколотить; **2**, *քթախոտի, 'բռնօթու' վերայ ծախսել, 'մսխել'*. п. поживу.

Пронянчить (-чу -чать) ն. кого́, **-ся** -ներգ. съ кѣмъ *պահել, խնամել, մեծացնել (մանկանը)*: [нима́ть.

Проня́ть (-ойму́ -му́тъ; -йми́) տ. Про-

Прообра|зова́тель ա. **-зова́тельница** է. *ապագան նշանակող, գուշակող (այլաբանօրէն)*. **-зова́тельный** ած. *ապագան նշանակող, գուշակող*. **-зо́вывать, -зова́ть** (-зу́ю -ютъ) ն. *ապագան նշանակել, պատկերացնել, գուշակել (այլաբանօրէն)*. закла́ніе ветхозавѣ́тнаго пасха́льнаго а́гнца прообразо́вывало распя́тіе Іису́са Христа́ на крестѣ́; **-(о́бра)зъ** ա. *նշան (ապագայի). նախատիպ*: [*կացնել (որոշ ժամանակ)*:

Прообѣ́дать չ. *ճաշել. ճաշելով անց-*

I. **Прoора́ть** (-орю́ -о́рютъ; -ори́) ն. **1**, *վարել, հերկել, ակօսներ քաշել (հողի մի-ջից)*. **2**, *վարել. հերկել[ով անցկացնել]* (*որոշ ժամանակ*):

II. **Прoора́ть** (-ору́ -ру́тъ; -ори́) չ. *աղաղակել, ճչալ[ով անցկացնել]* (*որոշ ժամանակ*):

Прoо́хать չ. *ախ քաշել, ախ ու վախ քաշել, հառաչել[ով անցկացնել]* (*որոշ ժամանակ*):

Пропа́вшій ած. *կորած*. э́то п—ія де́ньги.

Пропага́н|да է. (*նոր լա.*) *պրոպագանդա, տարածում, ջանք տարածելու (նոր ուսում, կարծիք)*. **-ди́ровать** (-рую -ютъ) ն. *պրոպագանդա անել, տարածել, աշխատել տարածել, քարոզել (նոր ուսում, կարծիք)*. п. идéю третéйскаго судá; **-ди́стъ** ա. **-ди́стка** է. *պրոպագանդա անող, տարածող (նոր ուսում, կարծիք) այր, կին*:

I. **Про|пада́ть,** -па́сть չ. **1**, *կորչել, աներևութանալ, չքանալ*. у меня́ пропа́ла соба́ка; всё пропа́ло *ամէն բան կորած է*. куда́ пропа́ли мои́ перча́тки? онъ пропа́лъ изъ глазъ, и́зъ виду; пропа́ли мои́ труды́ и де́ньги; онъ пропа́лъ въ толпѣ́; **2**, *կորչել, փչանալ, ապականուել, կործանուել, ոչնչանալ*. цвѣты́ пропа́ли отъ моро́за; у меня́ пропа́ло за нимъ сто рублéй *նա հարիւր ռուբլիս կերաւ*. пиши́ пропа́ло *ասածի գրիր*. пропа́лъ я, пропа́ла моя́ голу́бушка; пропади́ онъ про́падомъ *փչանայ նա, գրողը նրան տանի*: [*ընկնել, գլորուել*:

II. **Пропа́дать** չ. *մի տեղից միւս տեղ*

Про|паду́ տ. Пропа́сть; **-па́жа** է. **1**, *կորչելը, կորուստ*. **2**, *կորած իր*:

Пропаза́ть (-жу́ -зя́тъ) ն. *ակօսել, ակօսաձև փորել*: [*խել՝ (խմիչքների վերայ*):

Про|па́ивать, -пои́ть ն. *ծախսել, ՙմը-*

Про|па́лывать, -полза́ть, -ползти́ չ. *սողալ, սողալով անցնել (մի բանի միջից)*:

Пропаля́ть (-лю́ -ля́тъ) ն. *հրացան, հրազէն արձակել, արաքացնել (որոշ ժամանակ)*:

на **Пропалу́ю** տ. Напропалу́ю.

Пропа́лы|ваніе չ. *փխաելը, քաղելը, քաղհանելը*. **-вать,** прополо́ть ն. *փխաել, քաղել, քաղհանել*:

Пропа́ры|ваніе չ. *քակելը, ճղելը, պատռելը*. **-вать,** пропоро́ть ն. *քակել, ճղել, պատռել*:

Пропасова́ть տ. Пасова́ть.

Пропасти́ (-су́ -су́тъ; -си́) ն. *որոշ ժամանակ արածացնել (անասուններին)*:

I. **Пропа́сть** (-паду́ -ду́тъ; *անց.* -па́лъ -ла, о; -ди́) տ. Пропада́ть.

II. **Про́пасть** է. **1**, *անդունդ, վիհ*. горá окруженá глубóкими пропастя́ми; быть на краю́ п—и *կործանման անդնդի ափին գտնուել*. картёжная игрá есть п., поглоти́вшая мнóго состоя́ній; бездóнная п.; **2**, *անթիւ, անհամար բազմութիւն, քանակութիւն*. п. нарóда; п. дѣлъ; онъ издержа́лъ п. дéнегъ; у негó п. дéнегъ, врагóвъ, заня́тій; тфу п.! *թէւհ, անիծեալ*:

Пропа́|хиваніе չ. *լաւ, բաւ հարկին վարելը, հերկելը*. **-хивать, -ха́ть** (-шу́ -а́шутъ; -ши́) ն. **1**, *լաւ, բաւ հարկին վարել, հերկել*. **2**, *վարելով, հերկելով անցնել, անցկացնել (որոշ ժամանակ)*. **-шка** է. *լաւ, բաւ հարկին վարելը, -քում, հերկելը, -կում*. **-шникъ** ա. *ձեռնատոր (որով օր. ասնկերի շարքերն ակօսում են)*:

Пропа́щій ած. *կորստեան մատ. կորած*. **անուղղայ*. онъ п. человѣ́къ; п. трудъ.

Пропедéвтика է. (*յն.*) *նախապատրաստութիւն, նախապատրաստական գիտութիւն*:

Пропе|ка́ніе չ. *լաւ, բաւ հարկին եփելը, թխելը*. **-ка́ть,** -(é)чь ն. **1**. *լաւ, բաւ հարկին եփել, թխել*. **2**, *եփել, թխել (որոշ ժամանակ)*. **-ся** -ներգ. *լաւ, բաւ հարկին եփուել, թխուել*: [пира́ть.

Пропере́ть (-пру́ -ру́тъ; -при́) տ. Про-

Пропеча́тать ն. **1**, *տպել, տպելով անցնել, անցկացնել (որոշ ժամանակ)*. **2**, *տպել. տպելով հրատարակել, պարբերական մամուլի մէջ հրապարակ հանել*:

Про|печéніе չ. *լաւ, բաւ հարկին թխելը, եփելը*. **-пéчь** (-пеку́ -чёшь -ку́тъ; *անց.* -пёкъ -кла́, о́; -ки́), **ся** տ. Пропека́ть, ся.

Пропи|ва́ніе չ. *խմելը, խմելու, խմիչքների վերայ ծախսելը, վատնելը*. **-ва́ть,** -(и́)ть ն. *խմել, խմելու, խմիչքների վերայ ծախսել, վատնել*. онъ пропи́лъ всѣ свои́ дéньги; онъ пропи́лъ своё пла́тье *նա իր զգեստը գինու վերայ ծախսել է*. *онъ пропи́лъ свой умъ *նա խմելուց խելքը կորցրել է*. **-ся** -ներգ. *իր բոլոր կարողութիւնը խմել, խմելով սնանկանալ*:

Пропи́ли|ваніе չ. *միջից սղոցելը, խարտոցելը*. **-вать,** -ть ն. **1**, *միջից սղոցել կամ խարտոցել*. **2**, *սղոցելով կամ խարտոցելով անցկացնել (որոշ ժամանակ)*:

Пропили́кать տ. Пили́кать.

Пропина́|торъ ա. *կալուածատէր, որ բացառիկ իրաւունք ունի օղի քաշելու և վաճառելու պատրաստելու*. **-ціóнное** пра́во *կմ* **-ція** է. (*լա.*) *իսկ. բացառիկ իրաւունք որ և է կալուածքի օղի քաշելու և վաճառելու պատրաստելու* [(*միջից*):

Про|пира́ть, -перéть ն. *խթել. խոթել*

Про|пирова́ть (-ру́ю -ютъ) **1**, չ. *կերուխումով անցկացնել (որոշ ժամանակ)*. **2**. ն. *կերուխումի վերայ ծախսել, վատնել*. **-пи́ршествова́ть** (-пи́ршествую -ютъ) ն. և չ. *մի քանի ժամանակ քէֆ անել, կերուխումով անցկացնել, խրախճանալ*:

Про|писа́ніе չ. գրելը, պատուիրելը (դեղ, դարման). **-писа́ть** (-шу́ -шутъ; -ши́), **ся** ա. Прописывать, ся; **-пи́ска** է. 1, ցուցակագրում, -գրութիւն. 2, վաւերացում (անցաթղթի). 3, ցուցակագրելիս բաց թողած բան. **-пиcко́й** ած. 1, չցուցակագրած, բաց թողած. 2, п—а́я бу́ква գլխատառ. **-пи́сываніе** ա. Прописа́ніе; **-пи́сывать**, -писа́ть ն. 1, նկարագրել, մեկնել (հանգամանօրէն). п. ходъ дѣ́ла; 2, ցուցակագրել. п. па́спортъ անցաթուղթը ցուցակագրել (ոստիկանատանը), վաւերացնել տալ (հիւպատոսարանում). 3, գրել, պատուիրել. п. лѣка́рство; 4, գրել, գրելով անցկացնել (որոշ ժամանակ). я цѣ́лый день прописа́лъ; 5, ցուցակագրելիս բաց թողնել. **-ся** ան. ցուցակագրուել. **-пись** է. պատճէն (վայելչագրութեան օրինակ, կաղապար). написа́ть п—ью տառերով (և ոչ թէ թուանշաններով) գրել, տառագրել:

Про|пита́ніе չ. սնունդ, կերակուր, պարէն, ապրուստ. доста́вить кому́ п. մէկի համար ապրուստ ճարել. сни́скивать себѣ́ п. իր օրական պարէնը ճարել, հայթայթել. **-пита́ть, ся** ա. Пропи́тывать, ся; **-пи́тываніе** չ. ծծեցնելը. *արւեստ.* տոգորելը, տոգորում. п. де́рева փայտի տոգորումը (օր. պղպջածծմբներով, երկաթ պահելու նպատակով). **-пи́тывать**, -пита́ть ն. 1, կերակրել, սնուցանել. 2, ծծեցնել, ծծել տալ. *արւեստ.* տոգորել. **-ся** ան. 1, կերակրուել, սնուել. 2, ծծել (իր մէջ), տոգորուել:

Пропи́ть (-пью́ -ю́тъ; -пе́й), **ся** ա. Пропива́ть, ся.

Пропи́|хивать, -ха́ть, -хну́ть ն. ներս խոթել, ներս կոխել, ներս խցկել, ներս խոթել. **-ся** ան. ներս խոթուել, ներս կոխուել, ներս խցկուել:

Пропишу́ ա. Прописа́ть.

Пропища́ть (-щу́ -ща́тъ) 1, չ. ճղղալ, ճչճչալ, ճւճւալ (որոշ ժամանակ). 2, ն. ճղճղալով, ճւճւալով ասել, յայտնել: [ժամանակ):

Пропла́вать չ. լողալ կամ նաւել (որոշ

Пропла́кать (-пла́чу -чуть; -чь) չ. լալ, լաց լինել (որոշ ժամանակ):

Пропле|та́ть, -сти́ (-ту́ -ту́тъ; *անց.* -ѣлъ -ла́, о́; -ти́) ն. ներհիւսել, մի բանի հետ. մէջ հիւսել: [չել, թափառել:

Проплута́ть չ. մի քանի ժամանակ շըր-

Про|плыва́ть, -плы́ть (-плыву́ -ву́тъ; -ыви́) չ. լողալով կամ նաւելով անցնել. мнѣ случа́лось п. бо́лѣе версты́.

Про|пля́сывать, -пляса́ть (-яшу́ -я́шутъ; -ши́) 1, չ. պարել, կաքաւել (որոշ ժամանակ). 2, ն. պարել պրծնել, կաքաւել պրծնել (եր և է պար, կաքաւ):

Пропов*ѣ*|даніе չ. քարոզելը, -զում. **-дать** ա. Пропов*ѣ*дывать; **-дникъ** ա. քարոզող, -զիչ. **-днически** մ. քարոզչի պէս. **-дническій** ած. քարոզչի, -զչական. **-дничество** չ. քարոզչութիւն, քարոզչի պաշտօն. **-дно́й, -дный** ած. քարոզի. **-довать** (-дую -ютъ) ա. Пропов*ѣ*дывать; **-дываніе** ա. Пропов*ѣ*даніе; **-дывать**, -дать ն. քարոզել. п. сло́во Бо́жье; **-(про́повѣ)дь** է. (*ժ. սեռ.* пропов*ѣ*дей) քարոզ:

Про|по́й ա. խնջոյքի, կերուխումի վերայ ծախսելը, ՙմսխելը՚, վատնելը. **-по́ить** (-пою́ -я́тъ) ա. Пропа́ивать; **-по́йца** հոր. իր բոլոր ստացուածքը խմող այր, կին, հարբեցող:

Пропо|ла́скиваніе չ. թեթև կերպով ողողելը (լուացքը). **-ла́скивать**, -лоска́ть ն. թեթև կերպով ողողել (լուացքը):

Пропол|за́ть ա. Пропа́лзывать; **-(о́л)-зать** չ. որոշ ժամանակ սողալ. **-зти́** (-зу́ -зу́тъ; -зи́) ա. Пропа́лзывать.

Прополоска́ть (-щу́ -о́щутъ; -щи́) ն. 1, ողողելով անցնել, անցկացնել (որոշ ժամանակ). 2, ա. Пропола́скивать.

Пропо́ло́ть (-лю́ -о́лютъ; -ли́) ա. Пропа́лывать. [նամել, քաղհանել (որոշ ժամանակ):

Пропо́льзовать (-зую -ютъ) ն. խը-

Пропоро́ть (-рю́ -о́рютъ; -ри́) ա. Пропа́рывать. [տել (կարկատը):

Пропороши́ть (-шу́ -ша́тъ) ն. փոշո-

Пропорхну́ть չ. թռչելով, ճախրելով անցնել, անցկենալ:

Пропор|ціона́льно մ. համեմատաբար, համահաւասարաբար, համաչափաբար, համեմատ, համապատասխան կերպով. **-ціона́льность** է. համեմատականութիւն, համաչափութիւն, համահաւասարութիւն, համապատասխանութիւն. **-ціона́льный** ած. համեմատ, համեմատական, համահաւասար, համաչափ, համապատասխան. сре́дняя п—ая ли́нія միջին համեմատականը. наказа́нія должны́ быть пропорціона́льны преступле́ніямъ պատիժը յանցանքին պէտք է համապատասխան լինի. **-ція** է. (*լտ.*) 1, համաչափութիւն, համեմատութիւն. յարաբերութիւն. *պեր.* п. зда́нія շինութեան [տանձերի մասերի] համաչափութիւնը. 3, *թւբ.* պատշաճ. арифмети́ческая, геометри́ческая п.

Пропости́ть (-щу́ -стя́тъ -сти́) չ., **-ся** ան. պահել, պաս պահել (որոշ ժամանակ):

Пропот*ѣ́*|ніе չ. որոշ ժամանակ քրտնելը. լաւ, բառ հարկին քրտնելը. **-ть** չ. որոշ ժամանակ քրտնել. լաւ, բառ հարկին քրտնել. на́до, что́бы больно́й пропотѣ́лъ.

Про|пою́ ա. Пропо́ить և Пропѣ́ть; **-пру́** ա. Проперѐть. [րոշ ժամանակ):

Пропры́гать չ. թռչել, թռչկոտել (ո-

Пропря́сть (-яду́ -ду́тъ; -ди́) ն. որոշ ժամանակ մանել, (գր.) նիւթել:

Пропуделя́ть չ. *որս.* վրիպել, չկպցնել:

Пропу|ска́ніе չ. թողնելը. բաց թողնելը. **-ска́ть**, -сти́ть ն. 1, թողնել որ անցնի, որ հասի, բաց թողնել. насъ пропусти́ли че́резъ заста́ву; п. сою́зныя войска́ че́резъ свою́ зе́млю; п. во́ду въ ровъ; 2, բաց թողնել, ձեռքից բաց թողնել, թողնել որ անցնի. п. удо́бный слу́чай; п. вре́мя посѣ́ва; п. срокъ апелля́ціи; 3, բաց թողնել, զուրս ձգել. я пропусти́лъ нѣ́сколько словъ въ моёмъ письмѣ́; на́до п—сти́ть э́ту фра́зу; *п. что ми́мо ушей մի բան չլսելու դնել. п—сти́те э́ту ску́чную главу́ и чита́йте да́лѣе; 3, քամել. п. бульо́нъ че́резъ си́то; п. жи́дкость сквозь сѣ́рую бума́гу; 4, իր միջից անցկացնել, բաց թողնել. бума́га п—ска́етъ черни́ла; стекло́ пропуска́етъ свѣ́тъ; ко́жа не п—ска́етъ во-

дй; **5,** *թողտուել.* ценаура не п—стила моей статьи; **-скной** *-ь.* *բաց թողնող, անցկացնող.* п. видъ *անցագիր.* п—ая бумага *ծծող ական թուղթ.* п—ая способность линiи *երկաթուղային գծի գնացքաանցութեան կարողութիւնը.* **-(про-)скъ** *-.* **1,** *բաց թողնելը, թողնելը որ անցնի, թոյլատրութիւն անցնելու.* **2,** *բաց թողած տեղ, մաս.* п. въ наборѣ *տպագ. շարուածքի մէջ բաց թողած տեղ.* **3,** *անցագիր.* **-стить** (-щу -устятъ; -сти) *ա.* Пропускать.

Пропутешествовать (-вую -ютъ) **1,** *չ.* *ճանապարհորդել, ճանապարհորդելով անցկացնել (որոշ ժամանակ).* **2,** *ն.* *ճանապարհորդելիս ծախսել, «մսխել» (փող)։*

Про|пущать *ռմկ.* *ա.* Пропускать; **-щенiе** *չ.* *թողնելը. բաց թողնելը.* **-щу** *ա.* Пропустить.

Про|пью *ա.* Пропить; **-пьянствовать** (-вую -ютъ) *չ.* *խմել, հարբեցողութիւն անել, խմելով, հարբեցողութիւն անելով անցկացնել (որոշ ժամանակ)։*

Про|пѣвать, -пѣть (-пою -ютъ; -пой) *ն.* **1,** *երգել վերջացնել, պրծնել.* **2,** *երգելով անցնել, անցկացնել (որոշ ժամանակ)։*

Прорабо|тывать, -тать *չ.* *աշխատել, բանել, աշխատելով, բանելով անցնել, անցկացնել (որոշ ժամանակ)։*

Прора|станiе *չ.* *ծլելը, բողբոջելը.* **-стать, -сти** (-сту -стутъ; *անց.* -росъ -сла, о; -сти) *չ.* **1,** *ծլել, բողբոջել.* рожь въ скирдахъ проросла; картофель проросъ отъ сырости; **2,** *մի բանի միջից բուսնել, դուրս գչել.* трава проросла сквозь дорогу; **-щать, -стить** *ն.* *բուսցնել, ծլեցնել։*

Про|рва *է.* **1,** *նոր, ուղիղ հուն (գետի հունից բացուած).* **2,*** *գռեհ.* *անզուսպ, վիհ.* **3,** *հոլ.* *անկուշտ, անկշտում, որկրամոլ.* **-рвать** (-рву -вутъ; -рви) *ա.* Прорывать I.

Проревѣть (-ву -вутъ; -ви) *չ.* **1,** *ոռնալ, աղաղակել.* **2,** *բառա(ն)չել, մռնչել։*

Проредактировать (-рую -ютъ) *ն.* *խմբագրել։*

Прореч|канiе *չ.* *նախագուշակելը, մարգարէանալը.* **-катель** *-.* **-кательница** *է.* *նախագուշակող այր, կին. մարգարէ, -ուհի.* **-кать,** -(е)чь, -щи *ն.* *նախագուշակել, մարգարէանալ։*

Проректоръ *-.* *փոխ ռեկտոր։*

Проре|ченiе *չ.* *նախագուշակում, -կութիւն, մարգարէութիւն.* **-(е)чь, -(е)щь** (-ку -чешь -кутъ) *ա.* Прорекать.

Прoржа|вина *է.* *ժանգից կերուած, ծակուած տեղ.* **-вѣть** *չ.* *ժանգից ուտուել, ծակուել։*

Прoржать (-ржу -жутъ; -ржи) *չ.* **1,** *որոշ ժամանակ վրնջել, խրխնջալ, խնչել.* **2,** *բարձր վրնջել, խրխնջալ, խնչել։*

Прори|совывать, -совать (-сую -ютъ) *ն.* **1,** *ընդթափ նկարել, ընդթափ կաղապարել. «ծայրանկարել» (նուրբ թղթի կամ ապակու վերայ, թուղթը կամ ապակին կաղապարի հետ միասին լոյսի դէմ պահելով).* **2,** *նկարել, նկարելով անցնել, անցկացնել (որոշ ժամանակ* **-(н)сь** *է.* *ընդթափ նկարած կաղապար, «ծայրանկար»։*

Прори|цалище *չ.* *պատգամատան, պատգամի տաճար, մեհեան.* **-цанiе** *չ.* *գուշակելը, -կում. մարգարէանալը, -ցում.* **-цатель** *-.* **-цательница** *է.* *գուշակող, մարգարէանող այր, կին.* **-цательный** *-ь.* *գուշակութեան, մարգարէական.* **-цать** *չ.* *գուշակել, մարգարէանալ։* [յետաձգութիւն։

Пророгацiя *է.* (*լտ.*) *իրաւ.* *յետաձգում,*

Пророкъ *-.* *մարգարէ.* пророку нѣтъ славы въ отчизнѣ *մարգարէն իր գաւառում պատիւ չունի։*

Пророни́ть (-ню -нятъ) *ն.* *վայր գցել.* *կորցնել.* не п. слова *բերանը չբացել, ոչ մի խօսք չասել, չարտասանել, լռել։*

Про|ростанiе, -ростать *ա.* Прорастанiе, -стать; **-ростъ** *-.* **1,** *վերաճող վէրք, կարած տեղ ծառի բնի վերայ.* **2,** *բս.* Elatine, *երաշինեկմ ալաաին.* **-рость, -рось** *է.* *ճարպաշերտ մսի մէջ։*

Проро|чески *մ.* *մարգարէաբար.* **-ческiй** *-ь.* *մարգարէի, -րէների, մարգարէական.* **-чественный** *-ь.* *մարգարէական, -րէութեան.* **-чество** *չ.* *մարգարէութիւն.* исполненiе пророчествъ; **-чествованiе** *չ.* *մարգարէանալը.* **-чествовать** (-вую -ютъ) *չ.* *մարգարէանալ.* **-чить** (-чу -чатъ), напр— *ն.* *մարգարէանալ, գուշակել.* **-чица** *է.* *մարգարէուհի։*

Пророю *ա.* Прорыть.

Прору|бáнiе *չ.* *կտրելը, կտրելով ծակելը.* **-бать, -бить** (-блю -убятъ; -би) *ն.* *կտրել, կտրելով ծակել.* п. окно въ стѣнѣ *պատի մէջ պատուհան կտրել կամ բացել.* п. просѣку въ лѣсу *անտառի մէջ տեղ բացել (ծառերը կտրելով).* **-ся** *-ետ.* *ռզմ.* *թշնամու շարքերը ճեղքել, սուրը ձեռքին անցնել թշնամու շարքերից.* **-бка** *է.* *կտրելը, կտրելը.* **-(про-)бь** *է.* *սառցի մէջ կտրած, բացած անցք, ծակ։*

Прору́ха *է.* *սխալ, սխալանք, վրիպում.* и на старуху бываетъ п. (*առծ.*) *ծերութիւնն էլ անսխալական չէ։*

